# ՉԱՐԻՔԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ



Գեհենի Առաքել

ՊԻՏԻ ՊԱՐՏՎԻ, ՊԻՏԻ ՄԵՌՆԻ ԿԵՂԾԻՔԸ
ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ, ՈՐ ԱՊՐԻ ՄԵՐ
ԺՈՂՈՎՈՒՐԴԸ:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

« Մեռիր այնպես, որ մահդ անգամ ծառայի
ՀԱՅՐԵՆԻՔԻԴ...»:
« Հայրենիքներն ապրում են
հայրենասիրությամբ, մեռնում հայրենասիրության
պակասի պատճառով... »:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

« Մինչև որ չկարողանանք ներքին թշնամին
սպանել, անկարելի է, որ արտաքին թշնամուց
ազատվել կարողանանք »:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

« Ներքին թշնամին զինակիցն է ու եղբայրը
արտաքին թշնամու »:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

« Չկան անտականք ազգեր,
բայց հայ տականքը կմնա անմրցելի »:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

# ՉԱՐԻՔԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

## Փաստագրություն

**Գեհենի Առաքել**

GEHENI ARAQEL © 2016
ԳԵՀԵՆԻ ԱՌԱՔԵԼ © 2016

**Խմբագրության կողմից**

Գեհենի Առաքելի այս գիրքը թվով տասնիններորդ գիրքն է, որն իր տեսակով եզակի է ու անգնահատելի: Եթե հաշվենք, որ տեղեկատվական ու փաստագրական առումով եզակի է վերջին տարիների հայկական գրականության, պատմության և փաստագրության մեջ: Պատահական չէ, որ ինքը՝ հեղինակը, նշում է, որ սա « Ձեռնարկ » է, ոչ թե գիրք:

Եթե հաշվի առնենք, որ քաղաքակիրթ հասարակությունում, մամուլում տեղ գտած բոլոր հոդվածներն ու նյութերը հավաքվում են, և կազմվում է ժամանակագրական ու փաստագրական մի հանրագիտարան, որը հնարավորություն է տալիս պատմաբաններին ու լրագրողներին օգտվել այդ ձեռնարկից:

Այնպես որ, Գեննի Առաքելի այս վերջին աշխատանքը՝ որպես փաստագրական շտեմարան գալիս է լրացնելու եկող սերունդների գիտելիքները: Այս ձեռնարկը հնարավորություն է տալիս ընթերցասեր հասարակությանը իրազեկվել մեր ժամանակաշրջանում կատավող փաստերին ու իրադարձություններին:

Խմբագրության կողմից
2016 Թ. Երեւան

# ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔԸ

Նախապես ներողություն եմ խնդրում ընթերցողներից, որովհետև այս գրքում արտահայտված մտքերը հնարավոր է կրկնվեն նույնությամբ. սա մտածված է արված, ինչպես ասում են. «Կրկնությունը գիտության մայրն է»: Այս մտքերի կրկնությունը հնարավորություն է տալիս ընթերցողին «սեփականաշնորհել» ու յուրացնել ասվածը, հոգեբանական ներգործությամբ ամրապնդել ներկայացված միտքը՝ որպես սեփական միտք ու կարծիք:

Չնայած նրան, որ շրջապատում ու իրականության մեջ ականատեսն ու վկան ենք դառնում ինքներս: Եվ բախվելով իրականությանն ու կրկնվող մտքերին՝ հասկանում ենք, որ դա իրական է, որ չենք նկատել կամ ուշադրության կենտրոնում չենք պահել: Փաստագրությունը, որը ներկայացված է գրքում, արտացոլում է այն իրականությունը, որով ապրում է ներկա սերունդը, սակայն միավորելով այդ ամենը մեկ կազմի տակ, պատկերվում է ոչ միայն ներկան, այլև անցյալն ու անգամ ապագան: Ներկան ոչ միայն անցյալի շարունակությունն է, այլև ապագայի, քանի որ անցյալից է սկսվում ներկան:

Վերլուծելով ներկան՝ կարող ենք մտովի հասնել այնտեղ, որտեղից սկիզբ առավ այն, ինչ կոչվում է Չարիքի Իշխանություն:

Ապագա սերունդների համար պատկերելով ներկան՝ նրանց հնարավորություն ենք տալիս չկրկնել այն սխալները, որոնք կրկնեցին մեր հայրերն ու պապերը: Հոգեկան վիճակները արտահայտվում են ժամանակի պայմաններից՝ անկախ նրանից՝ մարդը զբաղվում է քաղաքականությամբ, թե ոչ: Հիշեցնեմ, որ գիրքը քաղաքականության հետ կապ չունի, քանի որ ներկայացնում է ներկայի փաստագրությունը, իսկ նշված փաստագրությունը պարզ բան է, որ պահանջում է անփոփոխ ներկայացնել ոչ միայն տեղ-

անուններն ու ժամանակահատվածը, այլև անձանց անուն-ազգանունները: « Զարիքի իշխանություն » գիրքը հոգեբանական մի ձեռնարկ է, որը հնարավորություն է տալիս սթափ վերլուծել ու ընկալել այն արատավոր երևույթները, որոնք շրջապատում են մեզ, որում ապրում ենք մենք: Չնայած ներկայացնելով ներկա իրավիճակը` փորձել ենք զերծ մնալ վերլուծություններից ու բացահայտումներից, որպեսզի ինքը` ընթերցողը, կարողանա տարբերել շրջապատում կատարվող երևույթները: Փաստերը, որոնք ներկայացված են ձեռնարկում, հնարավորություն են տալիս ինքնուրյուն գտնել ճշմարտության և ստի եզրերը, որ քսանհինգ տարիներին խառնվել են իրար ու դարձել անհասկանալի մի բան, որը կոչվում է Անտեղյակություն ու Անտարբերություն:

Հենց այս անտարբերության եզրը գտնելով` մարդ կարող է ինքնուրույն մտածել ու որոշումներ կայացնել, ոչ միայն ներկայի ու անցյալի մասին, այլև ապագայի, որը կառուցելու է ինքը, ինչպես պատվիրել էր մեծ զորավար ու փիլիսոփա Գարեգին Նժդեհը:

Ձեռնարկում տեղ են գտել նաև Հայ Մեծերի պատվիրաններն ու խոսքերը, որոնք ոչ միայն փիլիսոփայական արվեստի գոհարներ են, այլև լուսավոր կյանքի ուղեցույց ու բանալի:

Ձեռնարկում ներկայացված է ժամանակի իրական պատկերը, իրական հերոսները` իրենց բացասական ու դրական կերպարներով, իրենց մտքերն ու ապրումները: Այստեղ, այս գրքի հերոսը հենց ընթերցողն է, ով ապրում է այն միջավայրում, որը պատկերված է:

« Զարիքի Իշխանություն » գիրքը ոչ միայն հեղինակի միտքն է ու ժամանակի իրականությունը, այլև ժողովրդական ցասումի ու պայքարի վկան: Սա մեկ կաթիլ է այն հսկա տառապանքի օվկիանից. որը ներկայացված է այս հուշագրությունում, սա ժողովրդի անցյալի ու ներկայի մի մասն է, որը հետագայում փորձ-

ելու են ջնջել ոչ միայն պատմությունից, այլև ժողովրդի հիշողությունից, ինչպես արեցին Չարիքի Իշխանության հպատակները:

Բժիշկ - Հոգեբան Գեհենի Առաքել 2016

**« Կարող են ստիպել, որ ասես ցանկացած բան, ցանկացած, բայց չեն ստիպի, որ հավատաս դրան »:**
**Ջորջ Օրուել**

**« Գողը որ տանից լինի, եզն երդիկից կհանե »:**
**— « Ծառի որդը իրանից չլինի, հազար տարի կապրե »:**
**— « Մեր գողն մեր տանից է, մեր որդն մեր ջանիցն է...»:**
**Րաֆֆի**

**« Ամեն ոք, ով երբևէ հռչակել է բռնությունը իր մեթոդը, անխախտորեն պիտի ընտրի սուտը որպես իր սկզբունք »**
**Ալեքսանդր Սոլժենիցին**

# ԱՌԱՋԱԲԱՆ

***Who controls the past, controls the future,***
***Who controls the present controls the past***
***George Orwell « 1984»***

Ամենուրեք և ամեն տեղ Հայաստանը դարձել է նզովյալ մի վայր, որտեղ մարդիկ միայն տառապում են ու ոչնչացվում: Սակայն, այստեղ ժամանակին արևը ավելի պայծառ էր ժպտում, ու մարդիկ ջերմ էին ու առատաձեռն: Իզուր չէին այն անվանում՝ « Солнечная и гостеприимная Армения »: Իսկ հիմա ի՞նչ է մնացել այդ արևաշող ու հյուրընկալ երկրից. մնացել է միայն այս բառն ու « նոստալգիայն » հիշողությունները: Երիտասարդ սերունդն անգամ չգիտի այս բառերի իմաստը:

Հայաստանի մայրաքաղաք Երևանը ժամանակին համարվում էր « վարդագույն քարերի ու հուշարձանների քաղաք, երգող շատրվանների ու հազարավոր ցայտաղբյուրների, ծառ ու ծաղկունքի քաղաք, մշակույթի ու արվեստի, արդյունաբերության ու գիտության քաղաք, ջերմության, սիրո և հյուրընկալության քաղաք »: Իսկ հիմա նախկին փառքից ոչինչ չի մնացել. իսպառ ջնջեցին ամեն ինչ, լուսավոր ոչինչ չմնաց ժողովրդի համար, նույնիսկ տրամվայների պողպատյա գծերը ջնջեցին, որպեսզի մոռացվի ամենը՝ անգամ մարդկանց հիշողություններից: Իսկ փոխարենը մնացին նախկին հանցագործներն ու սրիկաները, որոնց ժամանակին կոչում էին « սպեկուլյանտ », չարչի ու գող:

Մի ժամանակ հասարակությունը նրանց ծաղրում էր ու արհամ-

արհում. անտեսված մի տեսակ էին, որոնք ոչինչ չեն ստեղծում, նրանց անգամ իրենց զավակներն էին ատում, որովհետև հասկանում էին, որ գող ու չարչի լինելն այդ հասարակության մեջ անպատվաբեր էր: Ժողովուրդը լավ գիտեր, որ այդ արատավոր տեսակը վտանգավոր է, միշտ փորձում էր զերծ մնալ՝ արհամարհելով ու անտեսելով նրանց որպես մարդ: Անգամ կաշառակերներըն ու քծնողները տեղ չունեին այդ հասարակության մեջ: Չարչիների ու « սպեկուլյանտների » գործը հասարակությունն անվանում էր « բոշայություն »: « Բոշաների » տեսակի մասին անգամ գրել է վիպասան Րաֆֆին, կարծում եմ կարիք չկա խորանալ, չնայած այդ « բոշաների » խմբին էին պատկանում նաև Խաչագողերը, որոնք սրբապիղծ էին ու ազգադավ: Չասեք թե՝ մեր օրերում Խաչագողեր չկան:

Կարող եք համոզվել՝ նույնիսկ Կաթողիկոս Գարեգին Բ-ն է հենց այդ Խաչագողերից: Հենց այդ « Խաչագող » հոգևորականներն են, որոնք Աստծո անունը տալով՝ թալանում են ժողովրդին սփյուռքում ու հայրենիքում, ամենուր: Ասացե՛ք, արդյոք կարելի՞ է հանդուրժել, երբ աստվածապիղծ հոգևորական կոչվածն իր պիղծ շուրթերով Հիսուս Քրիստոսի անունն է տալիս: Մի՞թե « կաթողիկոս » կոչված սրիկան, որի խիղճն ու գութն անգամ չի շարժվում՝ տեսնելով հազարավոր տառապյալ հավատացիալների վիճակը: Ի՞նչ է, դա Խաչագողություն չէ, ավելի ճիշտ սատանայի հպատակ է, քան ժողովրդի հոգևոր հովիվը: ***( « Անաստված երկրում բնակվի՛ր, բայց անօրեն երկրում մի բնակվիր », այդպես է հայերի խրատը, որ և եղել է սովորական առած: Արդարև, մեծ հիմարություն է բնակվել մի երկրում, ուր օրենքը, իրավունքը, արդարությունը ոտքի տակ են ընկած, ուր զորեղը տիրում է անզորին, ուր հարուստը արծաթի զորությամբ կատարում է յուր կամքի ամենա զարհուրելի բաղձանքները...»: 220 Րաֆֆի )***

Հենց այդ աստվածապիղծ խաչագողերը, որոնք որպես քաղաքական ու ռազմական գործիչներ, հոգևորական ու մտավորական, ոստիկան ու կուսակցական ելան իրենց խոռոչներից ու սկսեցին թալանել ու քերթել ժողովրդի կաշին, ապականելով անգամ անցյալի լուսավոր էջերը: Այդ աղբը, որոնք ժամանակին անտեսված էին հասարակության կողմից, եկան իշխանության: ( ***« Խաբեբաների կարգը գնալով ընդարձակվում էր, և նրանք օրըստօրե նոր անդամներ էին գտնում: Նրանք տարածվեցան երկրագնդի ա՜յն անկյունները, ուր ավելի տիրում էր մտավոր խավարը, ո՜ւր քրիստոնեությունը գտնվում էր մռայլոտ հեթանոսության մեջ »: Րաֆֆի Խաչ. Հ 165*** ) Ինչպես ասում էր անգլիացի գրող Ջորջ Օրուելը. « ԽՈԶԵՐԸ ԵԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ », ու ծաղկազարդ երկիրը դարձավ խոզանոց՝ « свинярник »:
Հայրենասիրական ճառերն ու ամպագոռգոռ խոսքերը, որոնցով առաջնորդվում էին, ավելի լավ է պատկերված Ջորջ Օրուելի « Անասնաֆերման» գրքում: Եվ իզուր չէր, որ անգրագիտությունը պետք է հասցներ այն բանին, որ ժողովրդի մեծ մասը պետք է ոչխարների պես կրկնեին. « Ավելի լավ է չորս ոտքի վրա, քան երկու »: Ու քսան տարի այդ կեցվածքով ապրեցինք, սերունդ մեծացրեցինք, որոնք « ռաբիզությունը » դարձրեցին ոչ միայն սկզբունք, այլև ապրելակերպ ու անգամ գաղափարախոսություն:
Հայրենասիրությունն ավարտեց իր դարաշրջանը՝ տեղը զիջելով քաղքենի, տխմար ու ազգադավ սրիկաներին, որոնք երկիրն ու ժողովրդին դարձրեցին միայն շահույթ ստանալու գործիք: Գործիք իշխանավորների ձեռքին, քանի որ ժամանակ է գալիս, երբ գործիքը դեն են նետում, որպես անպիտան մի իր, այդպես էլ ժողովրդին շահագործում են, օգտագործում ու հետո դեն նետում: Այդպես վարվեցին ազատամարտիկների հետ, այդպես են վարվում մեր զինվորների հետ, ու այդպես են վարվելու եկող սերունդ-

ների հետ: Դա նշանակում է «ազգային գենոֆոնդի» ոչնչացում, քանի որ կրթական համակարգը, սուտ հերոսություն քարոզող պատանի երկրապահները ոչ թե պետության ու հասարակության համար սերունդ են դաստիարակում, այլ ենիչերների մի ոհմակ: Եթե պետությունն ու եկեղեցին չեն կարողանում պաշտպանել մեր հաշմանդամ ու սահմանին կանգնած զինվորին, ապա ժողովուրդը պետք է հասկանա, որ այդ կառույցները հակաժողովրդական են ու պարտավոր է ամեն գնով հեռացնել նրանց իշխանությունից: Վերջին քառօրյա պատերազմն ապացուցեց, որ թշնամին ոչ միայն ճակատային գծում է, այլև իշխանության բարձրադիր ու միջին օղակներում, որ թշնամին ընդդիմության մեջ է ու անվտանգության համակարգում, որ թշնամին անտարբերություն ցուցաբերող մեծահարուստների մեջ է, թշնամին մեր դասալիք իշխանավորների մեջ է ու հանցագործ բարքերը որդեգրած բարերարների ու բարեգործների մեջ է, որ մեր մեղքերի համար չպետք է ուր իշ մեղավորներ փնտրել, որ պատերազմի հիմնական մեղավորը մեր իշխանավորներն են, որոնք քսան տարիներ շարունակ թալանել են ու կողոպտել բանակին ու ժողովրդին: ***(«Ի՞նչ անեն հայերը, ի՞նչ հող ածեն իրանց գլխներին, մի՞թե առանց ուսումի, առանց գիտության և առանց լուսավորության մարդ կարո՞ղ է կատարյալ մարդ լինել, յուր օգուտը ճանաչել, յուր վնասը հեռացնել, յուր ազգը սիրել և յուր հայրենիքը պաշտել»: Րաֆֆի 181 )*** Թշնամին մեր իշխանավորներն են, որ մեր վզին նորից փաթաթելու են «ՆՈՐ ԲԻՇՔԵԿԻ» խայտառակ զինադադարը, որը հազարավոր պատանիների մահվան պատճառ է դառնում: Նորից անավարտ պատերազմ՝ եկող սերունդների գլխին: Ադրբեջանում Իլհամ Ալիևի ռեժիմը որդեգրել է Հայկական գործելաոճը՝ այնտեղ բանակում նույն վիճակն է, ինչ մեզ մոտ, նորից խոշտանգվում են ու զոհվում չքավոր ընտանիքների

զավակները, նորից « հոշոտիչները » նույն իշխանավորներն են, կնշանակի՝ ադրբեջանցիք նույնպես խնդիրներ ունեն ոչնչացնելու իրենց ներքին թշնամուն: Իսկ գիտե՞ք, որ հենց այդ « հոշոտիչնե-րը » համագործակցում են իրար հետ, որպեսզի իրենց իշխան-ությունը ձգձգեն, իզուր չէ, որ նրանք հաշտության եզրեր չեն ցանկանում գտնել, որովհետև պատերազմն օգտագործում են որպես զսպաշապիկ՝ երկու ժողովրդների համար: Իրենց իշխ-անությունը պահելու համար նրանք պատրաստ են սեփական ժողովուրդին գնդակահարել ու ոչնչացնել, ու գործով առաջին անգամը չէ, որ հաստատել են դա:

Իզուր չէր, որ Բերձորի սպանդը կազմակերպված էր ՀՀ ու Արցախի իշխանավորների կողմից: Եթե դիտելու լինենք այդ դեպքերի տեսագրությունը, կտեսնենք, որ Բերձորում Արցախի « էլիտար » գումարտակներն էին զինված թռչող տեսանկարահա-նող սարքերով ու դիպուկահարներով, մինչդեռ սահմանագծին մետաղական պահածոների դատարկ տուփերն են հանդիսանում որպես ազդանշանային համակարգը: Եթե հաշվի առնենք, որ շարժազդանշանային ժամանակակից « դեդեկտորները » կարող էին տեղադրվել ողջ սահմանագծի երկայնքով, որպեսզի խուսա-փեինք արտաքին թշնամու հետախույզներից: Սակայն ինչու՞ դրամ ծախսել, երբ այդ գումարով կարելի է երփներանգ ծաղ-իկներ նվիրել սեփական գեղեցկուհուն, դե գույնզգույն թելավար-տիքները չհաշված:

***( « Խեղճ հայեր, բավական չէ, որ ուրիշները կողոպտում են ձեզ, և ձեր գլխավորները, ձեր իշխանները՝ ձեր մարմնին ցեցեն դարձել...»: Րաֆֆի )*** Սակայն շատերը տեղյակ չեն, որ Ապրիլյան պատերազմից դեռևս մեկ տարի առաջ « Ադրբեջանի պաշտպա-նության նախարար Զաքիր Հասանովը հայտարարել էր, որ ՄՈՏ ՕՐԵՐԻՆ ջախջախիչ հարված է հասցնելու հայկական կողմին.. »

( *http://blognews.am/arm/news/323311/01.12.2015 19:46 Զաքիր Հասանովը հայտարարել է, որ ՄՈՏ ՕՐԵՐԻՆ ցախջախիչ հարված է հասցնելու հայկական կողմին* ) Իսկ ինչպես միշտ մեր թալանչիները փոխարենը միջոցներ ձեռք առնեին շարունակում էին թալանել բանակը: Չհաշված որ քսան տարի շարունակ թալանել էին: Իսկ ամենազավեշտային այն փաստն էր, որ իմ մի բարձրաստիճան պաշտոնաթող գնդապետ բարեկամներից մեկը պրնդում էր, որ Ապրիլյան պատերազմից վեց ամիս առաջ իրենց հավաստի աղբյուրներից տեղկացրել են, որ Թուրքիայից Սիրիայի « Դաիշների » հազար հոգանոց խումբը ցանկանում է Վրաստանի վրայով անցնել Ադրբեջան: Գնդապետը ճշտված ինֆորմացիան հայտնել է ՀՀ ԱԱԾ ծառայություններին, իսկ նրան պատասխանել են « Մեզ ինչ, դա մեզ չի վերաբերվում »: Նա ստիպված է լինում իր կապերի միջոցով տհազանգել Վրաստանի անվտանգության մարմիններին, որոնք ամիջապես կանխում են նրանց մուտքը Վրաստան: Սակայն մահմեդական մահապարտ վարձկանների մի մասը Ղրիմի վրայով հասնում է Ադրբեջան, ձեռքի հետ Ղ տհաբեկչական գործողություն են իրականացնում Ղրիմում: Վարձկանների մի զգալի մասը հասնում է Ադրբեջան իսկ այտեղ Ղ Ապրիլին մասնակցում են հայերի դեմ հարձակմանը: Ինչպես տեսնում ենք հայկական անվտանգության ծառայությունները ու բանակային հետախուզությունը ոչինչ չի ձեռնարկել կանխելու Ադրբեջանի « հանկարծակի » հարվածը: Չնայած որ ՊՆ պաշտոնյանները մամուլում ներկայացնում են թե իբր հայկական հետախուզությունը տեղյակ է եղել ադրբեջանական ուժերի կուտակումներից: Ինչպե՞ս են տեղյակ եղել, երբ առաջնագծում չեն եղել բավարար քանակի զինամթերք, երբ մեր զինվորները ստիպված են եղել քահերով ու քարերով պաշտպանվել: Չնայած որ մամուլում ներկայացրեցին,

որ գեներալ Խաչատուրովը մի քանի պաշտոնյաներ հետ բիլիարդ խաղալուց է եղել, երբ նրան զեկուցել են Ադրբեջանցիների հարձակման մասին: Նա ուղղակի զեկուցող սպային վռնդել է, որպեսզի չլսի նրա զեկույցը: *( http://galatv.am/hy/news/149119/ Խաչատուրովն՝ իր բիլիարդ խաղալու եւ հարձակման համար տեղեկացված լինելու մասին )* Փաստերը համոզիչ էին, որովհետև Խաչատուրովը առաջին անգամը չէ, որ հանցանք է գործում, հաջորդում կներկայացնեմ դրանցից մեկը: Այն որ Գեներալ Խաչատուրովը ու Մովսես Հակոբյանը երբեք բանակի մասին չեն զբաղվել դա ապացուցեց Ապրիլյան պատերազմի տարածքային և մարդկային կորուստները: Նույն գնդապետը պատմում էր, որ Ապրիլյան պատերազմից մեկ ամիս առաջ, Ռուսաստանից ռազմական օդաչուների մի խումբ է ժամանել Արցախ, իբր գալիս են իրենց զոհված ընկերոջ գերեզմանին: Ռուս օդաչուների ոչ պաշտոնական այցը տարօրինակ կասկածելի է եղել, որովհետև նրանք մի քանի օր թափառել են Արցախում ու վերադարձել են առանց այցելելու իրենց « զոհված » ընկերոջ գերեզմանին: Բացառված չէր, որ հենց այդ խումբը հետախուզելու նպատակով է հայտնվել Արցախում, ցանկանալով ճշտել հայկական կողմի հակաօդային պաշտպանությունը: Ինչպես գիտենք Ապրիլյան պատերազմում Ադրբեջանական խոցված ուղղաթիռներից ոչ մեկ չի խոցվել հայկական հակաօդային ուժերի կողմից: Խոցված ուղղաթիռները եղել են միայն առաջնագծում կանգնած մեր զինվորների շնորհիվ, որոնք նռնականետով են ցած գցել ռազմական ուղղաթիռները: Իսկ հայկական հակահետախուզությունը այնքան անզոր է, որ ոչ միայն Ռուսական հետախույզներին չեն կարողանում բացահայտել, այլև Թուրքական « Գորշ գայլերին » որոնք գալիս են ու լուսանկարվում Կաթողիկոս կոչեցյալ Գարեգին Բ-ի հետ ու անգամ վարչապետ Տիգրան Սար-

գսյանի հետ, չհաշված նրանց ուտուշ խմուշները, ու այդքանից հետո ինչ -որ բան հայտարարելը, որ ունենք ԱԱԾ ու հետախուզական վարչություն ուղղակի ծիծաղելի է: *( Վարչապետը, կաթողիկոսը և գորշ գայլը 22 Հունվարի 2014, 22:03 [http://www.lragir.am/index/arm/0/country/62786/93913](http://www.lragir.am/index/arm/0/country/62786/93913) ) ( Թուրքագետ Հակոբ Չաքրյանը պատմում է « գորշ գայլերի » և թուրք ազգայնամոլի հետ հանդիպման մասին [http://168.am/2014/01/23/321238.html](http://168.am/2014/01/23/321238.html) 14:43 23 |Հունվար 2014 )*

Չնայած դրանք փաստացի կան, սակայն ներկայացումներ բեմականացնելու համար է, « Հորինովի Տեռորիստներ » որսալու: Դրա մասին կասեմ ավելի ուշ: Ապրիլյան պատերազմը բացահայտեց Չարիքի Իշխանության ոչ միայն թալանած ու կողոպտած փաստերի մասին այլև ստի ու կեղծիքի: Քանիհզ տարվա մեջ, հայկական կողմը չկարողացավ ականապատել պաշտպանական գիծը: Ինչպես է, որ ապրիլյան պատերազմի ժամանակ տեսանք որ թշնամու ոչ մի տեխնիկա չպայթեց այդ ականների վրա, նույնիսկ մեր զինվորների նկարահանած կադրերից երևում է, որ Ադրբեջանի գրոհայինները առանց խոչնդոտների են հասել մեր դիրքապահներին, երբ պետք է, որ ամբողջ առաջնագիծը ականապատված լիներ: Եթե հաշվենք, որ ընդամենը տնային պայմաններում հնարավոր է պատրաստել պաշտպանական ուղղորդված գործողության հակահետևակային ականներ՝ կենդանի ուժի ու ռազմական տեխնիկայի համար: *( ԽՍՀՄ արտադրության ՄՕՆ-50 բէկորային, ուղղորդված գործողության հակահետևակայինական )* Ինչպես տեսնում ենք թշնամին չի հանդիպել ոչ մի ականի, միակ խոչընդոտը եղել են մեր առաջնագծի զինվորները: Ո՞չ ինժեներապաշտպանական կառույցները ո՞չ Էլ ականապատված տարածքները: Քան տարուց ավելի պահածոների դատարկ տուփերն են եղել մեր սահմանային ազդանշա-

նային համակարգը: Այն որ Հայկական բանակը ոչնչացնելու համար հարկավոր չէ ադրբեջանական բանակը, այլ բավական է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ուսումնարանից դուրս եկած ենիչերները, որոնք ներսից են ոչնչացնում մեր բանակի զինվորներին: Ոչնչացնում են ավելի դաժան ու սարսափելի եղանակով, քան կարող էր անել ադրբեջանցին:
( *http://shabat.am/am/article/90841/90841.html Փոխգնդապետին մեղադրանք է առաջադրվել՝ մեկ այլ փոխգնդապետի քիթը կոտրելու համար 12 Հոկտեմբեր, 2016 18:26* ) Զարիքի իշխանությունը միայն ստով կերակրել է ժողովրդին իբր ունենք ամուր ու հուսալի պաշտպանություն, հզոր և մարտունակ բանակ: Իրականում դա դատարկ խոսքեր են ու անորակ սուտ: Սակայն եթե հաշվենք որ այդ ոչ միայն դավաճանություն է այլև Ոճրագործություն: ( « **Ինքնագոհությունը մի աչքանի հրեշ է, որը տեսնում է միայն դրականն ու արհամարում բացասականը** »: **Րաֆֆի** ) Ոչ միայն մեր գեներալներն ու գերագույն գլխավոր Զարիքն են դավաճան, այլ ամբողջ համակարգը վերից վար: ( *ՍԱՀՄԱՆ ՀՍԿՈՂ ԶՈՐԱՄԱՍԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ՄԵՂԱԴՐՎՈՒՄ Է ԼՐՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՕԳՏԻՆ January 8th, 2016* )
*http://4news.am/2016/01/սահման-հսկող-զորամասի-հետախուզությա/*
Ինչ վերաբերում է ԴԱՀԿ-ի պետ Միհրան Պողոսյանի « Պանամայի բիզնեսներն ու միլիոնավոր դոլարների կողոպուտը » գործին՝ դա պետական դավաճանություն է, սակայն իշխանությունները, փաստացի, կոծկում են հանցանքը:
( *http://hetq.am/arm/news/66918/panaman-nvatchats-hay-generaly.-mihran-poxosyani-ofshorayin-ynkerutyunnery-ev-hashivnery-shvey-carakan-bankerum.html 09:30, 4 ապրիլի, 2016* ) Տեսնում եք նիմակի անդամներից Խոսրով Հարությունյանի խոսքն ու գործը, կարծում եմ ավելի լավ համեմատություն չէր գտնվի:

Հանցանքները քողարկողներից մեկը պետության անվտանգությունն ապահովող ԱԱԾ կոչված հանցագործների ոհմակն է, որոնք զբաղված են միայն « փիուկարըսով », փոխարենը բացահայտեին ու վնասազերծեին իսկական հանցագործներին, նրանք ներկայացումներ են բեմադրում, իբր թե աշխատում են: Մինչդեռ պետության անվտանգությունն ավելի առաջնակարգ հարց է, քան թե նախագահի եղբայրն ու մտերիմները, որոնք ներքաշված են պետական դավաճանության մեջ: Այդ պատճառով արդարության ու պետության անվտանգությունով պետք է զբաղվեն ոչ թե պետական ու պաշտոնական կառույցները, այլ ժողովուրդը՝ աշխարհազորն ու ռազմադաշտային նոր դատարանը՝ նոր կազմով: Պետական դավաճանության մեջ մեղադրվող բոլոր հանցագործներին՝ սկսած Գագիկ ու Խոսրով Հարությունյաններից, Հովիկ ( Մուկ) Աբրահամյանից, վերջացրած Աղվան Հովսեփյանով ու Բակո Սահակյանով: ( *[http://www.aravot.am/2016/08/17/727125/](http://www.aravot.am/2016/08/17/727125/) « Փորձել են քողարկել ահաբեկչությունը». Խոսրով Հարությունյանը՝ « Սասնա ծռերին» աջակցողների մասին 18 հուլիսի, 2016 թ* ) Թշնամիները շատ են ու բազմաշերտ՝ Գագիկ Ջհանգիրյան, Արթուր Աղաբեկյան, Խաչատուր Սուքիասյան ու Թոխմախի Միհր, Արմեն Ջավենի Սարգսյանն ու ուժային կառույցների բոլոր գեներալները: Կնշանակի, որ Գարեգին Նժդեհի ասած խոսքը արդիական է ու ուղղված է մեզ. « **ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄԻՆ ԶԻՆԱԿԻՑ Է ՈՒ ԵՂԲԱՅՐ ԱՐՏԱՔԻՆ ԹՇՆԱՄՈՒՆ** »: « **ՄԻՆՉԵՒ ՈՐ ՉԿԱՐՈՂԱՆԱՆՔ ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄ- ՈՒՆ ՍՊԱՆԵԼ, ԱՆԿԱՐԵԼԻ Է, ՈՐ ԱՐՏԱՔԻՆ ԹՇՆԱՄՈՒՑ ԱԶԱՏՎԵԼ ԿԱՐՈՂԱՆԱՆՔ** »: **ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ**

# ՉԱՐԻՔԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

*« Ով վերահսկում է անցյալը,*
*վերահսկում է ապագան.*
*Ով վերահսկում է ներկան,*
*վերահսկում է անցյալը »:*
***Ջորջ Օրուել***

Չարիքի իշխանություն... Շատերը չեն պատկերացնում, թե այդ բառի իմաստը որն է, կամ ինչումն է կայանում այդ իշխանության ուժն ու հնարավորությունը: « Չարիքի իշխանության » մասին պատկերացում կազմելու համար, հարկավոր է ետադարձ հայացք նետել մեր ոչ վաղ անցյալի պատմությանը, կարծում եմ շատերի հիշողության մեջ մնացել է տառապանքի ու տանջանքի այն խորը բացված վերքը, որը կարծես թե չի սպիանում: ( ***« Չարիքը թաքցնելը կամ ուրանալը նման է թույլ տալուն, որ վերքը արյունահոսի՝ առանց վիրակապելու այն »: Հռոմի Պապ Ֆրանցիսկոս*** ) Ինչու՞ են նոր սերունդները զարմացած կարդում իմ ներկայացրած փաստագրությունը, կարծես թե ֆանտաստիկ է թվում, բայց չէ որ նրանց ծնողներն ականատես են եղել այն ամենին, ինչ ներկայացնում եմ. դրանք այն փաստերն են, որոնք փորձում են ջնջել մարդկանց ու ականատեսների հիշողություններից: Իսկ ինչու՞ է դա արվում, որովհետև շատ հանցագործներ, որոնք հայտնվել են բարձրունքում, ունեն կեղտոտ անցյալ և ջնջելով այն, կարող են վերափոխել ներկան: « Չարիքի իշխանություն », այս վերնագիրը հենց այնպես չէ ընտրված, որովհետև այս փաստագրություններն ապացուցելու են այս բառի

իմաստն ու պատկերը: Տապալելով Խորհրդային կայսրությունը, ստեղծեցինք ոչ թե պետություն, այլ մի համակենտրոնացման ճամբար, որի անունը Հայաստանի Հանրապետություն է, ավելի ճիշտ` Չարիքի իշխանություն:

Չարիքի իշխանությունում առհասարակ գերիշխում են կեղտա- րյունները, որոնց մասին հետագայում կանդրադառնամ` ավելի մանրամասն ներկայացնելով: ( **Մենք չունենք ազնվականություն, առաջնորդներ, ղեկավարներ**: **Մեր ունեցածը վաճառականութ- յուն ու հոգևորականություն են Վաճառականությունն աղբ է, իսկ հոգևորականությունը միշտ դեմ է անհատի ազատությանը**: **Նրանք, ովքեր պատասխանատու են մեր անվտանգության համար, հանցագործ ավազակախումբ են: Րաֆֆի** )

« Չարիքի իշխանության » պարզ նկարագիրը տվել է անգլիացի գրող Ջորջ Օրուելը, որի գրքերն արգելված գրականություն են համարվում հենց բռնակալության ռեժիմում հեծեծող պետության մեջ: « Հեծեծող » նկատի ունեմ ոչ միայն ժողովրդին, այլև պետ- ությանը, որովհետև պետական համակարգը տառապում է բա- ռիս բուն իմաստով: **Վախը, Խաբեությունը, Անհաբեկչությու- նը, Խոշտանգումը, Նվաստացումն ու Արհամարհանքը** հանդիսանում են պետական կառավարման միջոց, իսկ ոստիկա- նությունը` քրեական տարրերի հետ ձեռք ձեռքի տված, այդ թվում դատարաններն ու հոգևորականությունը, « մարիոնետ » կուսակցությունները հանդիսանում այդ Բռնակալ համակարգի գործիքը: Առհասարակ, այդ ամենը ոչ միայն Հայաստանում է, այլև Ադրբեջանում ու մնացած երկրներում, որտեղ իշխում են Բռնակալները, անկախ նրանց մաշկի գույնից ու հավատքից:

Բռնակալները, առաջին հերթին սկսում են ջնջել իրենց մութ ու արյունոտ անցյալը: Այո, հենց այդ անցյալն է, որը հանդիսանում է բռնակալի « **Աքիլլեսյան գարշապարը** », որովհետև ինքը

հասել է այդ չակերտավոր հաջողություններին միայն արյան սանդուղքով: ( « **Ինքնիշխաններից շատերը, բռնակալությամբ յուրացնելով իշխանությունը, սկսում են միշտ խոսել ժողովրդի անունից »: Սիմոն Բոլիվար** )

Միայն չասեք՝ թե մեզ մոտ ո՛չ Քոչարյանը, ու ոչ էլ Սերժ Սարգսյանն այդ սանդուղքով չեն շարժվել: Ի գիտություն քչերի, ինչպես ասացի, նրանք արել են ամեն հնարավորինն ու անհնարինը, որպեսզի ջնջեն իրենց մութ ու արյունոտ անցած ճանապարհը: *( 14/04/1992- ին Դեռ այն ժամանակ, ՀՀՇ-ն ու Արցախում նրա երդվյալ հավատարիմներ Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը ցանկալի չէին համարում նրա մուտքը քաղաքականություն: Նրա նման մտավորականը պոտենցիալ վտանգ էր Արցախի հարցը իշխանության հասնելու նպատակով խաղարկող « Ղարաբաղ » կոմիտեի համար: 33 տարեկան, երբ քունքին արձակված կրակոցը վերջ դրեց այդ կարճ, բայց պայծառ կյանքին, որն անջնջելի հետք է թողել Արցախյան շարժման պատմության մեջ:*
*https://hywikipedia.org/wiki/Արթուր_Մկրտչյան_(քաղաքական_գործիչ* )

Իզուր չէր, որ Վազգեն Սարգսյանն ու ամբողջ ՀՀՇ-ն, որը կազմված էր Խորհրդային « ԿԳԲ-ի » գործակալներից ու լրտեսներից, պետք է Ղարաբաղում ունենային իրենց գործընկերները՝ նույն « ԿԳԲ»-ի կադրերից, որոնցից էին Ռոբերտ Քոչարյանը, Զորի Բալայանը, Սերժ Սարգսյանը, իսկ քիչ ավելի ուշ Սեյրան Օհանյանը, բացառված չի նաև վերջերս ժողովրդին հայտնություն դարձած Վիտալիկ Բալասանյանը: Բավական է միայն նայել այդ մարդկանց կենսագրության ջնջված էջերը, ու ամեն ինչ պարզ է դառնում: Հիշենք, որ Խորհրդային համակարգում այդ մարդիկ զբաղեցրել են պետական բարձր պաշտոններ ու կառավարել բազմահազարանոց կոլեկտիվ ունեցող հիմնարկ ձեռնարկություններ կամ զորամասեր: ( Օրինակ՝ ինչպես Սեյրան Օհանյանը )

Եվ իզուր չէր, որ մտավորականները, ովքեր աչքի են ընկել Խորհրդային համակարգում, եղել են ակտիվ կուսակցական գործիչներ: ( *Նկատի ունեմ Կոմկուսի « պարտյական » տոմսը, որը Զորի Գայկովիչն իր բարձի տակն է պահում:* ) Կարելի է նշել այն փաստը, որ մեր մտավորականների մեջ եղել են մարդիկ, որոնք չեն եղել Կոմունիստական Կուսակցության անդամներ, այդպիսիներին հալածել ու ոչնչացրել է համակարգը: Իզուր չէր, որ Չարենցին ու Պարույր Սևակին ոչնչացրեցին, Հովհաննես Շիրազը հոգեկան էր համարվում ու խելագար. դա « Չեկիստական » համակարգի գործելաոճն էր, որովհետև Խորհրդային համակարգը « որակման » հարցում մեծ վարպետ էր:

Իզուր չէր, որ « Չեկիստները », տեղ զբաղեցնելով իշխանության բուրգի վերևում, պետք է որդեգրեին իրենց հոգեհարազատ « Բոլշևիզմի » Կոմունիստական Դիկտատուրայի ամենակարևոր գործելաոճը՝ **Բռնությունն ու Անհանդուրժողականությունը:** ( *Ձերժինսկի, Ստալին, Բերա,* « **На белый террор мы ответим красным террором** » **В. И. Ленин** ) Պատահական չէր, որ Շանթ Հարությունյանին ու շատ « ակտիվիստների » « ԿԳԲ »-ի կառափնարաններում հոգեմետ ներարկումներով խելագարության կամ էլ ինքնասպանության են հասցնում, չհաշված նրանց ընտանիքների հանդեպ իրականացրած անհանդուրժողականությունն ու խոշտանգումները: Այնպես որ, Ֆիզիկական ու բարոյահոգեբանական խոչընդոտներ ստեղծելով, նրանց ճնշում են ու հոգեկան հիվանդի, կամ էլ ինչպես ասացի ինքնասպանության են հասցնում: Օրինակները շատ են, սակայն կնշեմ Նաիրի Հունանյանին ու ազատամարտիկ հետախույզ՝ Արցախյան պատերազմի հերոս՝ Սողոմոն Քոչարյանին, որոնց ընտանիքները դարձան ոճրագործ դահիճների զոհը:

( **« Վազգենին պաշտպանողները կամ իսկական ԿԳԲ-ականներ են կամ էլ անգետ դդումներ»**: **Արծրունի Ավետիսյան Քահանա**

**Ազատամարտիկ © 2015** ) Ինչ վերաբերում է իշխանավորների արյունոտ անցյալին, դրանք շատ են, կարծում եմ երկար կլիներ թվարկել, սակայն « **Ազգադավը** » պատմավեպում մանրամասն ներկայացված է նրանց գործած ոճիրների մասին։ Այստեղ միայն կնշեմ մեկ փաստագրություն։ Լեռնային Ղարաբաղի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի սպանությունը, որի ետևում կանգնած էին ՀՀՇ-ի ղեկավարները, հանձինս Արցախում գտնըվող Ռոբերտ Քոչարյանի ու Սերժիկ Նարիմանովի։ ( Սարգսյանի ) ( *http://www.louysworld.com/archives/22408 Ո՞վ և ինչու՞ սպանեց ԼՂՀ առաջին նախագահ Արթուր Մկրտչյանին janvier 31, 2013* ) Հայաստանի իշխանություններն այդ երկու գործակալների միջոցով ոչնչացրեցին Արթուր Մկրտչյանին, որպեսզի Արցախում կարողանային զավթել իշխանությունը։ Իզուր չէր, որ Արթուր Մկրտչյանի թեկնածությանը դեմ գնացողները միայն Ռոբերտ Քոչարյանն էր ու Սերժ Սարգսյանը, այդ ժամանակվա տեսագրություններից դա հստակ երևում էր։ Իսկ Արցախում իշխանությունը զավթելուց հետո, Վազգեն Սարգսյանն իր հանցակից ընկերների համար ճանապարհ բացեց դեպի Հայաստանի բարձրագույն իշխանություն, հաշվի չառնելով, որ նրանք Հայաստանի քաղաքացիություն ու անգամ գրանցում չունեին և չէին կարող պետական կամ միջին օղակներում աշխատել։ (« **Մեր պատմությունը լեցուն է դավաճանության փաստերով**։ **Պարսիկների, հույների, արաբների, սելջուկների կամ մոնղոլների բանակները մեզ նվաճելուց առաջնորդվել են միշտ հայի ղեկավարությամբ**։ **Հայերը միշտ կռվել են թշնամու հետ ուս-ուսի սեփական ժողովրդի դեմ»: Րաֆֆի** ) Ու զարմանալին այն է, որ Արցախյան պատերազմին մասնակցած շատ սփյուռքահայեր տասնամյակներ հետո անգամ չկարողացան Հայաստանի անձնագիր կամ քաղաքացիություն ստանալ։ Ի՞նչ եք կարծում, ինչու՞

այս մասին բոլորը իմանալով լռեցին, նույնիսկ փաստագրություն ու հիշատակում չկա: ԿԳԲ -ի գործակալներն արյունոտ ձեռքերով էին ճանապարհ բացում դեպի Հայաստանի բարձրագույն իշխանություն: Եթե հաշվի առնենք, որ Խորհրդային համակարգն իրենից ներկայացնում էր մի մեծ « ԳՈՒԼԱԳ », ավելի պարզ ասած՝ մի Բռնակալ կայսրություն, որտեղ « Չեկիստները » կամակատարություն էին անում, ու իզուր չէր, որ նրանք Խորհրդային Կայսրության տապալվելուց շատ ավելի առաջ օգտագործելով իրենց ուժը, պետք է փորձեին վերափոխվել ու դառնալ Դեմոկրատ: Դրա մասին գրել եմ բազմիցս, ռուս անվանի երգիչ Իգոր Տալկովն իր « Մետամորֆա 2 ( Метаморфоза 2 ) » երգում ասում էր: ( **Только в отведь, в чем беда: Перестроить можно рожу, ну а душу-никогда**. ) Դժբախտությունն ինչումն է. Մռութը (ռեխը, սփաթը) ձևափոխել կարելի է, իսկ հոգին՝ երբեք: ) (*Կներեք երևի թարգմանությունը անհաջող ստացվեց, սակայն իմաստը սա է:*) Ու « կոմսոմոլը » դարձավ Նժդեհական, նույն երգի մեջ հետևյալ տողերը հետաքրքիր են. « **Комсомолец из горкома снял значок с Шароголовым и напялил модный крест.** » Այդպես, « կոմսոմոլի » կրծքանշանը փոխվեց խաչով, ու մոռացավ նա իր անցյալը, մոռացանք նաև մենք, ու դա էր, որ պետք է դառնար մեր գլխին աղետ: « Չեկիստների » տասնամյակների արյունոտ դասերը սերտաճածները լավ գիտեին կացնահարել հայ սպաներին, գնդակահարել հերոսներին, լավ գիտեին՝ ինչպես խոշտանգել մտավորականներին, իրենց համակարգի մասին խոսողներին ու բարձրաձայնողներին անհետք կորցնել Սիբիրի աքսորավայրերում, կամ էլ ավտովթարի զոհ դարձնել: ( « **Փնտրեք հայի սուրն այնտեղ որտեղ հայի արյուն է թափվել** »: **Րաֆֆի** ) Խորհրդային տարիներին համակարգն օգտագործում էր քրեական աշխարհի հեղինակություններին ու

անգամ թաղային գրպանահատներին, որոնք հանդիսանում էին համակարգի վերջին էշելոնը: Մի քանի գրքերում ներկայացրել եմ, որ Խորհրդային համակարգում գործող Կարեն Սերոբի Դեմիրճյանը նույնպես « Գիշատիչ ոհմակի » մաս է կազմել: Նրա ձեռքերը պակաս արյունոտ չեն, իզուր չէր, որ Հայաստանի ու Արցախի Ազգային հերոսներից շատերը Կոմունիստական Կուսակցության անդամներ են կամ էլ քրեական տարրեր, իրենց կեղտոտ ու արյունոտ անցյալով, սակայն այդ մասին արգելված է անգամ մտածել, էլ ուր մնաց խոսել ու բարձրաձայնել: Վազգեն Սարգսյան, Նիկոլայ Ռիժկով, Կարեն Դեմիրճյան, որոնք հանդիսանում են Կոմունիստական Կուսակցության անդամ ու Խորհրդային « ԿԳԲ »-ի գործակալներ: Դե Վազգեն Սարգսյանին կարելի է առանձնացնել, որովհետև նա « Կոմսոմոլ » էր, չհասցրեց Կոմունիստ լիներ, սակայն « շիզոֆրենիկ » վիճակը լիովին համապատասխանում էր այն չափանիշներին, որոնք ունեին ԿԳԲ –ի շարքային « ՍՏՈՒԿԱՉՆԵՐԸ », այսինքն՝ գործ տվողները: Վազգեն Սարգսյանն իշխանության բուրգը զավթելուց հետո, զգաց իշխանության համը, նրա ընտանիքի անդամները սերտ կապված էին քրեական աշխարհի հետ, անգամ քրեականների սեղանների զարդն էին, նույնիսկ նրա մայրն ու հայրը կապված էին հանցագործ աշխարհի հետ, *( Այս մասին առհասարակ չեն հիշատակում: )* Նրա հայրը՝ Զավեն Սարգսյանը, իր պատկառելի հասակին թույլ էր տալիս իրեն « քաշ գալ » դեռահաս օրիորդների հետ: Այս ամենը նորություն չէ, քանի որ Արարատի ու Դավալուի բնակիչները տեսել են ու լավ գիտեն, թե ինչ են ներկայացնում այդ անբարոյականների ընտանիքը: ( *« Ինչպես Ջուզեպպե Գարիբալդին, այնպես էլ Վազգեն Սարգսյանը իր մարտական ընկերների համար կմնա որպես մի թանկ հասկացություն և անմոռաց մեր բոլորի հիշողության մեջ »:*

*Արցախյան ազատամարտի «մասնակից», գրականագետ Վարդան Դևրիկյան © )* Մի խոսքով, հարցը Վազգենի ընտանիքը չէ, այլ ընդհանուր բնույթի այս օրինակը բերեցի՝ ներկայացնելու միայն վերին իշխանությունում գտնվող քաղաքական այրերի ու քրեական հեղինակությունների՝ քավոր, բարեկամ, խնամիական կապերի ու սերտաճման երևույթը: Ինչպես ասում են գովազդում. «Երկուսը մեկում»: (*«**ԸՆՏԱՆԵԿԱՆ ՔԱՎՈՐ-ԽՆԱՄԻԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ, ՊԵՏՔ Է ՎԵՐ ԴԱՍԵԼ ԵՐԿՐԻ ՇԱՀԻՑ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀԻՑ**»: **ԱՐՄԵՆ ՋԱՎԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ 2015** © )*

Իսկ Կարեն Դեմիրճյանի երկրպագուներին հայտնեմ, որ կայարանցի հայտնի հեղինակություն Փայլակ Սիմոնյանը՝ «Փայլակ», որը ժամանակին եղել է «Գվարդիականների» ղեկավար, այդ «Գվաղիականները» իրենցից ներկայացնում էին քրեական տարրեր, որոնց «ԿԳԲ»-ն ստեղծել էր հատուկ նպատակով, որպեսզի պետպատվերի շրջանակում ոչնչացնեն աքսորավայրերից վերադարձող քրեական հեղինակություններին կամ էլ քաղաքականներին՝ որոնք պետությանը անհանգստացնում էին: Չնայած «Գվարդիականները» իրենց առաքելությունը կատարելուց հետո ոչնչացվեցին նույն «ԿԳԲ»-ի գործակալների կողմից, իսկ Փայլակը մնաց, դառնալով քրեական հեղինակություն, սակայն նա ուղղորդվում էր անձամբ՝ Կարեն Սերոբիչի կողմից: Չեմ խորանա այս պատմության մեջ, որովհետև «Ազգադավ» գրքում ներկայացված է այս ամենը: Միայն այն նշեմ, որ նախկին «Գվարդիական» Փայլակն իրեն թույլ էր տալիս անգամ «Կալաշնիկով» ավտոմատով շրջել, երբ մարդը մեկ գրպանի ծալովի դանակի համար կարող էր աքսորվել երկարաժամկետ տաժանակիր աշխատանքի՝ Սիբիրի անծայրածիր Տայգաներ: Իսկ Կարեն Սերոբիչի հովանավորյալ «Փայլակին» անտեսում էին, որովհետև Կարեն Սերոբիչի արյունոտ գործերը նա էր անում:

Մի խոսքով, Քրեականների ու Իշխանավորների համագործակցության ավանդույթը փոխանցվեց «ԿԳԲ»-ի գործակալ ՀՀՇ-ականներին, նրանք էլ իրենց հերթին փոխանցեցին իրենց հաջորդողներին: Իզուր չէր, որ Ներքին գործերի նախարար նշանակվելուց հետո, Վանո Սիրադեղյանը հեռուստատեսությամբ հայտարարեց. «**Որ հանրապետությունում Գողն էլ է ինքը, Բոզն էլ**»: *(Մի կարևոր փաստագրություն, այդ ժամանակ Երևանում հաճախակի էին դարձել գիշերային ավտոմատային կրակահերթերը, որն ահաբեկում ու խուճապի մեջ էր պահում բնակչությանը, չհաշված զինված մարդկանց կողմից առևանգվող մեքենաները: Պարզվում է, ՀՀՇ-ի ղեկավարների կողմից էր կազմակերպված այդ ներկայացումը, ու այդ սցենարի մեջ օգտագործվել են անգամ Լևոն Տեր-Պետրոսյանի թիկնազորում գտնվող աֆղանական պատերազմի վետերանները, այդ թվում՝ «ասֆալտի ֆիդայիններ» խմբեր, որոնք անմիջական Վազգեն Սարգսյանի հրամանով էին գործում: Վանո Սիրադեղյանը Ներքին գործերի նախարար նշանակվելուց հետո այդ ամենը դադարեց, արդյունքում՝ ժողովուրդը շնորհակալ էր, որ գոնե կրակահերթերը պակասել են: )* Վանո Սիրադեղյանը սկսեց ցուցադրական հալածել հանցագործ աշխարհի երևելիներին, քանի որ այդպես նա հնարավորություն էր ստանում խաղադրույքները մեծացնել: Օրինակ՝ կազմակերպվում էր ինչ-որ գողություն, հետո Վանոն կանչում էր թաղային հեղինակությանը ու պատվիրում՝ մեղմ ասած՝ պարզել ու ներկայացնել հանցագործին: Քանի որ դա նշանակում էր մատնել կամ «ծախել», որը քրեական չգրված օրենքով շատ ծանր մեղք է, այն էլ մահվան ելքով, ուստի, ազատվելու համար կաշառում էին Վանոյին, որպեսզի տվյալ գործը փակեին, ու ամեն շաբաթ մի այդպիսի գործի առիթով Վանո Սիրադեղյանին մուծվում էին 20-50 հազար դոլար:

Այդ հեշտ գումար աշխատելու պահը նրա ախորժակն ավելի էր բացում, սակայն դատարկում էր քրեականների գրպանը: Շատերըստիպված էին հեռանալ Ռուսաստան կամ ԱՄՆ, սակայն Վանոն նույնիսկ նրանց հարազատների միջոցով էր գումար պոկում: Ինչպես ասում էին՝ Վանոն Պետական « ռեկետի » առաջամարտիկներից էր, իհարկե Վազգեն Սարգսյանից հետո: Չնայած գտնվեցին Քրեական հեղինակություններ, որոնք Վանոյի հետ կարողացան համագործակցել, « Գրզոն »՝ Խաչատուր Սուքիասյանը, բարեխոսողի դերում էր հանդես գալիս, իհարկե՝ իր « փայը » պոկելով:
ՀՀՇ իշխանավորները Հայաստանի կոլտնտեսական շուկաներում վարձակալված տարածքները տրամադրում էին միայն քրեական հեղինակություններին, որոնք գյուղացիների բերքը խլում էին ու վերավաճառում, ստանալով ավելի մեծ շահույթ, քան գյուղացին, որը դժվարությամբ աճեցրել ու դժվարությամբ բերել է քաղաք վաճառելու: Քրեականներին էր հանձնված նաև փողոցային տարադրամի փոխանակման մենաշնորհը: Չհաշված այն ալան –թալանը, ինչ արվում էր հիմնարկ ձեռնարկություններ սեփականաշնորհելուց հետո: Քրեականները հեշտությամբ կարողանում էին ձեռք բերել կրպակներ, բենզինի փողոցային վաճառքը ու այլ եկամտաբեր ճյուղեր: Քրեականների ու « ԿԳԲ »-ի համագործակցությունն արագ եկամուտ էր բերում, չհաշված, որ ամրապնդվում էր նրանց դիրքերը: ( **« Յուրաքանչյուր տգետ՝ լինի պարոն, թե իշխան, կարող է եւ պետք է դասվի խաժամուժի դասին »: Սերվանտես** ) Իշխանությունները Քրեականներին օգտագործում էին, անգամ Գաղափարի մարտիկներին՝ հետագայում նաև ազատամարտիկներին ոչնչացման գործում: Դրա մասին մի ծավալուն փաստագրություն է թողել իմ ընկերներից մեկը՝ Արցախյան պատերազմի լրագրող ազատամարտիկ Վ.

Հովհաննիսյանն իր «Ասֆալտի ֆիդայինները» հոդվածում, որը կարծում եմ արժեքավոր է իր տեսակով ու բնույթով: Ազատամարտիկների ոչնչացման բանաձևը հայտնաբերել եմ Վազգեն Սարգսյանի հուշագրություններում, փաստ, որը հաստատվեց վերջերս կատարված հետազոտության մեջ. «**Հերոսները պետք է զոհվեն պատերազմի դաշտում, հակառակ դեպքում, նրանք անտանելի են դառնում**»: (**Վազգեն Սարգսյան Վիքիպեդիա**)

Իզուր չէր, որ քրեական անցյալ ունեցող բեռնատարի վարորդին՝ այս դեպքում «Կռազի շոֆեռ» Մանվել Գրիգորյանին, դարձնեին գեներալ ու Արցախի հերոս: Մինչդեռ, մենք ունեցել ենք բարձրաստիճան ազնիվ գնդապետներ, որոնք Արցախյան ողջ պատերազմին մասնակցելուց հետո էլ՝ ոչ մի աստղ չավելացավ նրանց ուսադիրներին: Իսկ այդ «փնթի» ու անտառաճանաչ եզին, բառիս բուն իմաստով, դարձրեցին գեներալ մայոր, որն ընդամենը չորրորդ դասարան էլ չի ավարտել՝ գրել- կարդալ անգամ չգիտի, չհաշված նրա պատգամավորական ու մի շարք տիտղոսները: Չնայած միայն Մանվելը չէ, որ անգրագետ ու ապուշ է, այլ Հայաստանի գեներալների 99 տոկոսը նրա պես փնթի է ու հաստագլուխ:

Կրկին հիշեցնեմ, որ «փնթիները» տիտղոսներ շատ են սիրում: Այն, որ Մանվելը պետք է դառնար Արցախի հերոս, զարմանալի չէր, քանի որ ինչպես նշեցի՝ Հերոսի կոչմանն արժանացել են, «ԿԳԲ»-ի գործակալները կամ քրեական տարրերը, ինչպես՝ Մանվելն է: Վիտալի Բալասանյանի Արցախի հերոսի լինելու փաստը ոչինչ չի հուշում... Իշխանությունները հենց Մանվելի ու Վիտալի Բալասանյանների ձեռքերով պետք է ոչնչացնեն՝ իրենց համար վտանգ ներկայացնող գաղափարական մարտիկներին: (*http://www.aravot.am/2016/09/05/732216/ «Սպառնալիքով ստիպում են Ժիրայր Սեֆիլյանի դեմ ցուցմունք տալ». Ալեք Ենիգոմշյան 17:14* |

*Սեպտեմբեր 5 2016 )* Իզուր չէր, որ «Սասնա ծռերի» հետ բանակցությունների ժամանակ Վիտալի Բալասանյանը հաստատեց, որ իսկապես արժանի է «հերոս» կոչվելուն: Հիշեցնեմ նրա արտասանած բառերը «Սասնա ծռերի» հասցեին. «Ո՞վ են նրանք... Հանցագործ Տեռորիստ...» *(Արա չեք յուում հետ դարձ, ուզում եք գնաք «պլեն» ընկնեք, գնացեք. Վիտալի Բալասանյանը լրագրողներին. Տեսանյութ: ( [http://openblog.am/?p=14394](http://openblog.am/?p=14394) )* Տեսնու՞մ եք, Արցախյան պատերազմի ժամանակ նույն որակումն էին տալիս ԿԳԲ -ի գործակալները ու թիկունքից ոչնչացնում ազատամարտիկներին: Նրանց համար Մոնթե Մելքոնյանը միշտ կմնա որպես ԱՍԱԼԱ-ի «տեռորիստ» ու հանցագործ, որ Սամվելի ու Վիտալի Բալասանյանի միջև տարբերություն դնել հնարավոր չէ, երկուսը նույն սանրի կտավն են: Իզուր չէր, որ «Ազգային Անվտանգություն» կուսակցության միակ անդամ Գառնիկ Իսագուլյանը, որը ԿԳԲ -ի գործակալ է, խոստովանելով, որ Վիտալի Բալասանյանը ո՛չ միայն իր ընկերն է, այլև ծառայել են միասին ու կիսում են նույն գաղափարները: *( [http://www.aravot.am/2016/07/29/721526/](http://www.aravot.am/2016/07/29/721526/) Իսագուլյանը խոսում է դրսի ուժերի մասին, որոնք, ըստ նրա՝ կառավարում են «Սասնա ծռերը» 15:58 | Հուլիս 29 2016 )*
Այդ էր պատճառը, որ Պավել Մանուկյանը, Արա Խանդոյանը ու «Սասնա ծռերի» մյուս տղաներն ահաբեկիչ են ու հարկավոր է նրանց ոչնչացնել: Իզուր չէր, որ «ԿԳԲ»-ի գործակալների համար մեկ թշնամին՝ դա Գաղափարը կրող տղաներն են, դրա համար Պավել Մանուկյանին կրակել են հակաօդային մեծ տրամաչափի գնդացիրից: Չհաշված նրան, որ պահանջել են բժիշկներին անդամահատել ու հաշմանդամ դարձնել Պավլիկին: ***(«ԲԺՇԿԻՆ ՊԱՐՏԱԴՐԵԼ ԵՆ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿՏՐԵԼ ՊԱՎԼԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՈՏՔԵՐԸ» Zhanna Alexanya.***

***( [https://web.facebook.com/zhanna.alexanyan/posts/1052726658114913](https://web.facebook.com/zhanna.alexanyan/posts/1052726658114913) )***
« Կռազի շոֆեռ» Մանվել Գրիգորյանի քրեական անցյալի մասին ողջ Էջմիածինը գիտի, սակայն ինչպես ասացի, նրանք չեն սիրում հիշել իրենց անցյալը, այդ պատճառով Էլ նոր գեներալական անցյալ են գրում: Մի օրինակ, Մանվելի հայրը` Մեկտոռը, կոլտնտեսության հովիվն է եղել ու հոր հուղարկավորության ժամանակ, բազմահազարանոց ներկաների առջև նրա համագյուղացիներից մեկը, ով ցանկացել է բարի խոսքով հիշել հանգուցյալին` նշելով, որ հանգուցյալի հետ չոբանություն են արել միասին: Փաստորեն, այդ « չոբան » բառը ճակատագրական եղավ միամիտ գյուղացու համար: Հուղարկավորությունից հետո նրան ծեծեցին ու խոշտանգեցին` Մանվելի հրամանով: («**Ամենամահացու վտանգը քնի մեջ խոսելն է, այդ դեպքում անհնար է ինքնավերահսկումը »: Ջորջ Օրուելի** ) Ինչպես տեսնում ենք, կեղտարյունները վախենում են իրենց անցյալից ու պատժում են նրանց, ովքեր հիշեցնում են նրանց այդ մասին: *( « Մանվելին վիրավորողը վիրավորում է բոլոր նրանց, ովքեր կռվել են և այդպիսի հայտարարություններ անողը թուրք է »: Պատգամավոր Առաքել Մովսեսյան` Ծմայս © )* Այն որ Սեյրան Սարոյանը հայտարարում է, « Իմ հերը շատ փող ուներ, դրա համար Էլ ես լավ եմ ապրում »: Գալիս է ապացուցելու, որ իրենք անգամ ամաչում են իրենց հայրերի ով լինելուց: *( Իմ հերը շատ փող ուներ, դրա համար Էլ ես լավ եմ ապրում Սեյրան 4 сент. 2016 г. Սեյրան Սարոյան [https://www.youtube.com/watch?v=1cAVIjJ1EwU](https://www.youtube.com/watch?v=1cAVIjJ1EwU) )* Սարոյան Սեյրանի հայրը` Ֆիրդուս Սարոյանը եղել է հասարակ գյուղացի, նա ոչնչով աչքի չի ընկել, չհաշված, որ նա եղել է Էջմիածնի կամավորական ջոկատի կամավորական: Սակայն եթե հայրը նորմալ մարդ լիներ, վաղուց կսաստեր իր փնթի ու անգրագետ թուլին, չնրայած հնարավ-

որ է, որ հայրը նրա պես է: Ինչպես գրել եմ բազմիցս, հիշեցնեմ կրկին, որ հենց այդ Փնթիների ու կեղտարյունների տեսակն է, որ դառնում է **Բռնակալ Ռեժիմի** գործիքը: Հենց այդ Փնթիներն էին, որ 1996 թվականի սեպտեմբերի 25-ին Վազգեն Սարգսյանի կողմից իրականացված Ռազմական հեղաշրջում իրականացնողը, այդ օրը Երկրապահը և հայկական բանակը կրակեց ժողովրդի վրա: ( *https://www.youtube.com/watch?v=qA03ESQr0v0 ԱԶԳԱԴԱՎԸ . Վազգեն Սարգսյան 1996 Թ* )

Սեյրան Սարոյան, Մանվել Գրիգորյան, Արթուր Աղաբեկյան, Աշոտ Աղաբաբյան, «Ծմայսը»՝ Առաքել Մովսեսյան ու մնացած Փնթիները, որոնք գեներալական ուսադիրներ են կրում կամ էլ պատգամավորական մանդատ ու իշխանական բուրգում են հայտնվել արյան ու արցունքի՝ հազարավոր ընտանիքների դժբախտության վրայով ու այդ ամենով հանդերձ պետք է վերափոխեին ու գրեին իրենց նոր կենսագրությունը, որտեղ իրենք փայլելու են հերոսացած կերպարով: Պատահական չէ, որ Հեղինե Նաղդալյանը, Հովիկ Աբրահամյանը, Դավիթ Զաղոյանը, Լֆիկ Ալեքսանյանն ու ԵԿՄ-ի քրմուհի՝ Արզիկ Մխիթարյանը, և շատ փնթիներ պետք է հայտարարեին, որ իրենք կռվել են Արցախյան պատերազմում, այն էլ Ծահումյանում, ու իրենց մեդալները Մանվելի մեքենայի «բառդաչոկում» դրած է: ( *http://arm-times.com/hy/read/84661 Հերմինե Նաղդալյանի կենսագրությունը խմբագրվել է. նա էլ չի համարվում ԼՂ պատերազմի մասնակից* )

(«**ԵԿՄ-ն մեր ազգային հրաշափառ տաճարն է, իսկ Մանվել Գրիգորյանն այդ տաճարի ոչ թե քուրմը, այլ քրմապետը**»: **ԼՂՀ ԵԿՄ-ի ՔՐՄՈՒՀԻ, ԱԺ պատգամավոր Արզիկ Մխիթարյան 18/05/2016** 11:00 http://shamshyan.com/hy/article/2016/05/18/85436/ )

Ինչպես տեսնում եք, փնթի կեղտարյունները գրում են իրենց սեփական կենսագրությունը, ավելի ճիշտ, նրանք անտառաճան-

աչ են ու դրա համար էլ օգտագործում են մտավորական կոչվածներին՝ Հրանտ Մաթևոսյանին, Մերուժան Տեր-Գուլանյանին, Վարդան Դևրիկյանին, Հակոբ Հակոբյանին, Արշակ Զաքարյանին, Գագիկ Ծամշյաններն ու հետույքամտուկ շատ ուրիշներին:
( *[http://hraparak.am/?p=89008&l=am%2F](http://hraparak.am/?p=89008&l=am%2F) 17:06 - 29 / Սեպտեմբեր / 2015 Ըստ Արշակի՝ Ղարաբաղում « սմերծելնիկների մի ջոկատ կա », որտեղ կռվում են միայն պաշտոնյաների տղաները* )
Հենց այդ աղբակույտերի միջոցով է, որ ոճրագործը դառնում է սպարապետ, իսկ մարդասպանը զորավար, դե մնացած փնթի հերոսների մասին չասենք: Իզուր չէ, որ անտառաճանաչ փնթի Կռազի շոֆեռը իր անձնական օգտագործման Երկրապահին է օգտագործում սեփական գովքը երգելու համար, ինչ-որ հուշագրեր է ստորագրում նախարարությունների հետ, իրականում, ինչպես ասացի, այդ ապուշն անգամ ստորագրել չգիտի, հետո ԵԿՄ-ի վկայականներ ու մեդալներ է բաժանում իրեն մեծարողներին: Նույնիսկ իր փնթի տեսակով հուշամեդալ է շնորհել Զորավար Անդրանիկ Օզանյանին: Պատկերացնու՞մ եք իր ոչնչությունով մեդալ տալ Ազգային հերոսին, ու չգտնվեց գեթ մի մարդ, որը նրա երեսին ասեր... « Ա՜յ եզ, դու ո՞վ ես, որ ծաղրում ես Ազգային Հերոսի հիշատակը »: ( « **Հերոսը պիտի լինի ազգի ցավերի բալասանը** »: **Պավլիկ Մանուկյան**
( [http://galatv.am/hy/news/160686/](http://galatv.am/hy/news/160686/) ) Ու տգետ մտավորականները, սրբապիղծ հոգևորականներն ու քաղաքական աղբը զվարճանում էր և ծափահարում: Լացելու բան է, ո՛չ թե ծիծաղելու...
Մի խոսքով, Փնթի կռազի շոֆեռը ցանկանում է իր հերոսական կերպարը փոխանցել սերունդներին, դրա համար իր մասին ֆիլմեր է նկարել տալիս, գրքեր են գրվում հետույքամտուկ մտավորականների կողմից՝ ինչ-որ ճանապարհորդություններ ու ուխտագնացություններ կազմակերպելով:

(**Ինչու՞ եմ միշտ շեշտում Փնթի կռացի շոֆեռը բառը, որպեսզի ավելի լավ ընկալեք ու ընդունեք այն ճշմարտությունը, որը կա իրականում, այս բառերը պետք է փոխանցել սերունդներին, որպեսզի իմանան ճիշտը: ԳՀ.ԱՌ**)
Գիտեք ծիծաղելին այն էր, որ Փնթի Տիկոզը (Ախիջիայլոց, դա նրա անունն է, որովհետև նրա մայրը՝ Նազիկը, նրան Տիկոզ է ասել: ) Ուրեմն այդ ապուշը, որն անգամ Երուսաղեմի տեղը չի իմացել ու չգիտի, որ այնտեղ ապրում են հրեաներ ու հանկարծ դասախոսություն է կարդում Երուսաղեմի հայկական համայնքի առջև: Պատկերացնու՞մ եք, որ «**նախահարձակ**» բառի իմաստը չհասկացող հաստագլուխ ե՛զը դասախոսություն է կարդում: Մարդը տարրական կրթություն չունի, բայց դե դասախոսություն է կարդում, հետո էլ սերունդ է կրթում, ինչպես ասում էր Սեյրան Օհանյանը. «**Երկրապահները շարունակում են մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակության գործը**»:
(Սեյրան Օհանյան)
*(* *[http://armenpress.am/arm/news/804761/erkrapahnery-sharunakum-en-matax-serndi-hayrenasirakan.html](http://armenpress.am/arm/news/804761/erkrapahnery-sharunakum-en-matax-serndi-hayrenasirakan.html)* *)*
Ախիջիայլոց, ես միշտ ասել եմ, որ եռասերունդ պատանի երկրապահները դառնալու են ենիչերիներ՝ Մանվելի գլխավորությամբ: Ու գիտե՞ք ամենազարմանալին այն է, որ բոլորը՝ իմանալով, որ նա տգետ է ու փնթի, այդուհանդերձ, խոնարհվում են նրա առջև, ինչպես սրբի, իզուր չէր նա Երուսաղեմ գնացել, քանի որ ենիչերի համար «Հաջի» դառնալը երազանք է: Ու ամենակարևորներից մեկը, որի ինչ-որ Գոռ Վարդանյան անունով երևույթ կազմակերպում է Դուքենդոյի ամենամյա մրցաշարերեր ԵԿՄ-ի ենիչերի՝ Մանվել Գրիգորյանի պատվին: *(Ճիշտ ասած, Գոռ Վարդանյանին միայն այս մրցաշարի համար չէ, որ մեղադրում եմ հանցագործության մեջ, այլ իր նկարահանած թրիլերների, որտեղ*

*իրար են բռնաբարում ու սպանում, փողական ու հանցագործ աշխարհի կեղտը շաղ տալիս հեռուստաէկրաններով: Այդքանից հետո այդ ապուշը հայտարարում է, որ սերունդներին է կրթում, փնթի Մանվելի պես անտառաճանաչ ու տգետ « վարժապետ », որը սերունդ է փչացնում է:* ) ( **« Դժբախտություն է սակայն, երբ դաստիարակիչն ինքը ևս կարիք ունի դաստիարակության »: Գարեգին Նժդեհ** )

Ըստ ավանդույթի՝ այդպիսի մրցաշարեր կազմակերպվում են զոհված հերոսների հիշատակին, սակայն այս փնթին այնքան տգետ է, որ չգիտի էլ՝ ինչ անի, որպեսզի իր հերոսության մասին խոսեն ամենուր: ( *Չնայած նա կենդանի լեշ է, որը մեռած է, բայց թաղված չէ:* ) Կռազի շոֆեռը նույնիսկ չի մոռացել իր ոչ-լոտ քավոր Վազգենի տեսանյութն էլ տեղադրել են համացանց-ում, որտեղ ասում է. « Մանվել, դու հերոս ես »: ( **« Փառասիրութ-յունն ալ տեսակ մը անոթություն է, զոր դրամով կը կշտացունեն մարդերը** »: **Հակոբ Պարոնյան** )

Իհարկե, հերոսություն է, ազատամարտիկներին ծեծելն ու սպա-նելը: Որովհետև այդ ոճրագործությունը քո նախաձեռնությամբ էր, կազմակերպվել, իզուր չէր, որ ազատամարտիկներին խոշտ-անգողներին գեներալի տիտղոսներ էր շնորհում: Չարիքի երկ-րում ազատամարտիկ սպանելը հերոսություն է, պատահական չէր, որ Մոնթեին սպանողը հերոսացավ, Արթուր Մկրտչյանի սպանողը դարձավ նախագահ, Սողոմոն Քոչարյանին սպանողը նույնպես հերոսացավ: Դե քրեական գործիչ Գևորգ Սարգսյանի՝ « Զունգլի » մասին չասեմ, որն Արցախյան ազատամարտի մաս-նակից 52-ամյա Վարդան Թումանյանին ծեծելով սպանեց: « Զունգլին » արդարացրին ու ազատեցին:

*( http://vostan.am/news/view/83537.html Զունգլին ազատ են արձակել աքսուրդ եզրակացությամբ. « Ժամանակ » 10 Ապրիլի 2015, 08:45 )*

Իզուր չէր, որ ԿԳԲ-ի կառափնարաններում հարյուրավոր ազատամարտիկների խոշտանգեցին քո հրամանով: ( « **Վազգեն Սարգսյանը հենց որպես « ռազմական առաջնորդ » ստեղծվել է, որպեսզի Մովսես Գորգիսյանը կամ Վիտյա Այվազյանը չդառնան հայկական ջոկատների ղեկավար »: « Ազատամտություն » օրաթերթ « Ազգային գաղափար » ամսագիր** )

Իզուր չէր « Սասնա ծռերի » վրա կրակող ՊՊԾ-ի գնդապետին հերոսի փառքով թաղեցին, չհաշված, որ անկախության 25 -ամյակի առիթով Գերագույն Չարիքը նրան հետմահու պարգևատրեց « Արիության » մեդալով: ( *Այդքանից հետո էլ հայտարարում են, թե ոստիկանության մահացած գնդապետ Արթուր Վանոյանը եղել է ազատամարտիկ ու մասնակցել է անգամ ապրիլյան պատերազմին: ( http://www.aravot.am/2016/10/17/816816/ «Այն 3 ոստիկանները, որոնք զոհվել են, մարդ չե՞ն» 14:30 | Հոկտեմբեր 17 2016* )

Դրան գումարած Գեներալ Լևոն Երանոսյանին ու իր հանցագործ եղբորը՝ Լեոնիկ Երանոսյանին, որոնց մասնագիտությունը ոճրագործությունն է ու բազմիցս դա ապացուցել է: ( *http://arm-times.com/hy/article/91051 06/08/2016* )

*Լեոնիկ Երանոսյանի ուշագրավ անցյալը. հարբած դեբոշներ բանակում, սպանելու սպառնալիքներ 06/08/2016* ) Պատահական չէ, որ Լևոն Երանոսյանը նույնպես ԵԿՄ-ի անդամ է, նա Մանվել Գրիգորյանի հետ է սկսել ազատամարտիկ սպանելն ու խոշտանգելը՝ չհաշված ժողովրդին ահաբեկելն ու ծեծելը: Այդ երկրում ժողովրդին խոշտանգելն ու սպանելը հերոսություն է, դրա համար Ազգադավը սպարապետ դարձավ, իսկ նրա ոճրագործ ընկերներն ու սանիկները՝ հերոսներ: (« **Հերոսը պետք է ականջալուր լինի ժողովրդի ըմբոստությանը, և ոչ թե դառնա չարիքի իշխանության դուդուկ-խոսափողը կամ ինչպես կասեին մեր մեծերը, գայլ կանչող շունը »: Պավլիկ Մանուկյան, 2016** )

Մարտի մեկը կազմակերպած Ռոբերտ Քոչարյանն ու Լևոն Տեր-Պետրոսյանը հերոսացան, Փաշինյանն ու Ջհանգիրյանը, Աղվան Հովսեփյանը, Գագիկ Հարությունյանն ու Հովիկ Աբրահամյանը նույնպես: (*Հայաստանի Անկախության 25-ամյակին կապակցությամբ Սերժ Ազատիչն անձամբ Գագիկ Հարությունյանին պարգևատրեց «Տիգրան Մեծ» շքանշանով: 2016*) Ինչպես տեսնում եք, հերոսացան մարդիկ, ովքեր թալանեցին երկիրն ու կողոպտեցին ժողովրդին՝ Խոսրով Հարությունյանը, Հրանտ Բագրատյանը՝ դե քեզ ու եղբայրներիդ էլ չհաշված:

Գիտեք շատերն ասում են, թե Վազգենը սատկել, գնացել է, ինչու՞ ես նրա ուրվականի հետ կռիվ տալիս: Մենակ դուք հարցրեք Արմեն Զավենի Սարգսյանին, նա իր հենց այնպես չէր Արցախյան պատերազմի հերոս Արկադի Տեր-Թադևոսյանին ասել. «Արթնացի՛ր մղձավանջից, Կոմանդո՛ս. Վազգենը չկա, բաց նրանց, ում «խմբավորում» ես որակել, նրանք իմ համար Վազգեններ են»: (*24 Օգոստոս 2013 Արմեն «Սարգսյան Յուրաքանչյուրը Վազգեն Սարգսյան է»: [http://168.am/2013/08/24/266978.html#](http://168.am/2013/08/24/266978.html#) (5 мар. 2013 г.)*)

Սանվելը հայտարարել էր «Սասնա ծռերին» որ. «**Էսօր ով հելնում ա Սերժի դեմ, հելնում ա Վազգենի դեմ**»: (**2016 ©**)

Ամենակարևորը, որ չարիքի իշխանությունը պաշտպանված է օրենքով ու անգամ սահմանադրությամբ: Ինչպես կասեր Փնթի Կռազի շոֆեռը, «**Համ չագուչն ա Ձեր ձեռքը, համ մեխը, համ նալը, ոնց ուզում եք արեք, մենք ձեր կողքին ենք**»: (*Սանվել Գրիգորյան* [http://168.am/2015/02/13/456546.html](http://168.am/2015/02/13/456546.html))

Իսկ ահաբեկությունն ու բռնությունը ոչ միայն խրախուսվում է, այլև հանդիսանում է պետական կառավարման կարևոր բաղադրիչներից մեկը, որովհետև իշխանությունը պահելու համար իրենց հարկավոր են ամուր հիմքեր, դրա համար փոխելով շատ

ռին: ՌԷ այդպես իրար տակ են փորում, իրար վրա են գործ սարքում, իրարից են գողանում ու թալանում, չհաշված քծնանքն ու հետույք մտնելը... Մի խոսքով մի **հասարակաց** տուն՝ իրենց ներքին կեղտոտ խոհանոցով: Այդ հասարակաց ծառայությունը այնքան նեխած է ու փտած, որ « Սասնա ծռերը » « Կռազով » էին գրավել ՊՊԾ հսկա գունդը, այն էլ քսանհինգ հոգով: Իսկ տղաների հայտնաբերած « **Կամասուտրա** » ժամացույցը ՊՊԾ -ի հրամանատարի առանձնասենյակում հենց այնպես չէր հայտնվել, քանի որ, ինչպես ասացի, այդ « հրեշտակների » Հասարակաց տունը այդ ժամային գրաֆիկով էր աշխատում՝ ժամը մեկ իրենք հա՛մ շինում են, հա՛մ էլ շինվում: Շների պես շնանում են, ինչպես գրված է Աստծո պատվիրանում: Շնանում են իրար հետ, որպեսզի իրենց **կեղտարյուն** տեսակը բազմանա ու բարգավաճի: ( [http://shabat.am/am/article/99192/99192.html](http://shabat.am/am/article/99192/99192.html) *Ռոբերտ Քոչարյանը երեկ ևս մեկ անգամ պապիկ է դարձել. «Հրապարակ»17 Նոյեմբեր, 2016 07:35* )

Քանի որ խոսեցինք Աստծո պատվիրաններից, ուրեմն հիշենք պատվիրաններից մեկը, « **Մի ստի՛ր** »... Հենց այս պատվիրանը նկատի ունեմ, երբ ոստիկանապետ Վովա Գասպարյանը, ով միշտ ներկայանում է Գերագույն գլխավոր հրամանատարին ու ստում, իբր թե իրենք վնասազերծել են ինչ-որ բանդա, որը սպառնում էր տապալել **միապետ նախագահին** ու այդպես սուտ զեկույցով ներկայացնում, որ ինքն ավելի հավատարիմ է իր ծառայության մեջ, քան ԱԱԾ-ն ու մնացած ուժային կառույցները: Ակնկալելով, որ **Տերը** մի երկու խոսք կքաշխի իրեն, որպեսզի շարունակի իր աշխատանքը: Իսկ մյուս ուժային կառույցների ղեկավարները նույնպես իրենց հերթին, այդ պատվիրանը որպես դրոշակ օգտագործելով, ներկայանում են շեֆին ու զեկուցում նույն ոճով նույն մտքերով ու հանգավորությամբ:

Այսպես բոլոր ուժային կառույցները, մեկը մյուսի տակն է փորում ու գործ տալիս: Առհասարակ այն, որ ստում են, դրա մասին **Գերագույն Տերը** չգիտի, սակայն, որ իրար տակ են քանդում, դրանից նա լավ տեղյակ է, քանզի աշխատանքային երկար փորձ, այնուամենայնիվ ունի: Սակայն այս ներքին զըզվրտոցը նրան ձեռնտու է, որովհետև գիտի, որ բոլորը վախենում են իրենց պաշտոնը կորցնելուց ու ամեն ինչի պատրաստ են, միայն թե երկարաձգեն իրենց ծառայությունը: Այդ պատճառով Էլ ներքին գզվրտոցը առանձին և մեծ գումարներ կորզելու հնարավորություն է տալիս նրան, բավական է ԱԱԾ-ի անունից մեկ դժգոհություն ներկայացնի ոստիկանապետին, նա անմիջապես զգաստանում է ու հասկանում, որ պետք է ավելին վճարի, որպեսզի **Տիրոջ** ներողամտությունը հայցի, իսկ դատախազության կողմից ներկայացված փաստը հնարավորություն է տալիս Շեֆին, որպեսզի ԱԱԾ-ի պետը գա կրիկին մուծվելու: Այդպես մուծվում են՝ մեկը մեկի գլխին սարքելով, տակը փորելով ու քանդելով: Այդպես են բոլոր ծառայությունները՝ Մաքսայինում ու Հարկայինում, դատարանում ու Քննչականում:
Այնպես, որ, մի կարծեք, թե այնտեղ ամեն ինչ հարթ է, ինչպես տեսաք բավականին կնճռոտված է ու քայքայված:
Չարիքի իշխանությունը ամեն ինչի պատրաստ է՝ զինելով ոչ միայն իրեն պաշտպանող ներքին գործերին այլև քրեաօլիգարխիկ իշխանավորների թիկնազորին, որոնք կազմված են հենց քրեական տարրերից: Նորից եմ կրկնում, որ քրեականների ու օրենքի պաշտպանների միությունը բավականին հզորացնում է **Ռեժիմի** դիրքերը: Այդ ամենը ոչ միայն հայրենիքում է կատարվում, այլև սփյուռքում՝ հայկական միություններում ու համայնքներում: Հայ Առաքելական եկեղեցու հոգևորականների **խմբավորումները** աշխատում են Չարիքի իշխանության համ-

ար: **Խմբավորում** բառը հենց այնպես չնշեցի, որովհետև այդ սևազգեստ վերարավորների ոչ միայն հագուստն է սև, այլև հոգին ու գործերը: Նկատի չունեմ բարեկիրթ հոգևորականներին, քանի որ բարեկիրթ ու ազնիվ հոգևորականներին ազատում են իրենց պաշտոնից: Ինչպես եղավ Հոլանդիայում հոգևոր ծառայություն մատուցող Տեր Արմեն Մելքոնյանի և շատ ուրիշ հոգևորակաների հետ, ում ճանաչում եմ, որոնք կարգալույծ են եղել հենց այդ **Սևազգեստ Խմբավորման** ամենագլխավոր խմբապետ Գարեգին -Բ կաթողիկոսի կողմից:

Հենց նրա շնորհիվ է, որ սրբապղծությունը թափանցել է Հայ Առաքելական եկեղեցի: Չնայած դրանից բավական ժամանակ առաջ ՀՀՇ -ի վարչության անդամ՝ անգամ ՀՀՇ նախագահի քահանա Տեր Հուսիկ Լազարյանը արդեն կազմավորել էր կուսակցական սևազգեստ քահանաների մի բանակ, որը առաջնորդվելու էր աստվածապիղծ իրենց գործունեությամբ՝ պղծել ոչ միայն Հայ Առաքելական եկեղեցին այլև հավատը: Չնայած այդ աստվածապիղծ հոգևորականները բոլոր դարաշրջաններում էլ եղել են ու միշտ կազմել են Չարիքի իշխանության մասնիկը: *( Հաջորդում կներկայացնեմ Րաֆֆու ճշմարիտ խոսքերը: )* Սակայն խորհրդային ժամանակահատվածում հասարակությունը կրթված էր ու գրագետ, դրա համար էլ նրանց վրա ուշադրություն դարձնող չկար: Իսկ մասսայական **տգիտության** պայմաններում նրանք հնարավորություն ունեցան ելնել ընդերքից ու մոլորեցնել միամիտ ու անգրագետ մարդկանց: ( **« ԿՐՈՆԸ և ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԿ ԿՇԵՌՔԻ ԵՐԿՈՒ ՆԺԱՐՆԵՐ ԵՆ, ԵԹԵ ԲԱՐՁ Է ՄԵԿԸ, ԱՊԱ ՑԱԾՐ Է ՄՅՈՒՍԸ »: Արթուր Շոպենհաուեր** ) Այնպես որ, հայ Առաքելական եկեղեցին ոչ միայն հեռացավ Աստծո պատվիրաններից, այլև դարձավ **հասարակաց տուն**: Սամուլում անգամ աղաղակում էին, որ Սյունաց Թեմը դարձել

է հասարակաց տուն՝ իրենց անբարոյական ղեկավարներով՝ Թեմի Փոխառաջնորդ՝ Հայր վարդապետ Հակոբյանով ու «հավատացյալ բարերար» ոճրագործ մարզպետ Սուրիկ Խաչատրյանով: ( *Սյունյաց Թեմում աղետ է. Թեմի Փոխառաջնորդը առաջնորդարանը «պոռնկանոց» է դարձրել* *http://hayeli.am/article/264789* *Սուրեն Խաչատրյանը «Լիսկան» հայտարարել է, որ երեսունից ավելի եկեղեցի է կառուցել: Նույնիսկ իր որդու անունով Մատուռ՝ ( http://hetq.am/arm/news/64990/syuniqi-nor-ekexecinery-kam-surik-khachatryani-astvatsahatcho-gortsy-na-ordu-anunov-matur-e-karu-cel.html Մատուռ մարզպետի որդու անունով:* ) Իսկ Շիրակի թեմի ոստիկանապետի պարտականությունները կատարող՝ Միքայել Եպիսկոպոս Աջապահյանը, ով մարդկանց սիաբեկում է, բռնել տալիս, հայհոյում ու պատվազրկում: ( *http://www.asparez.amgumri-hy/qim_qardashyan_gyumrium_hy/ «Սա եկեղեցի է, ապո՞ւշ եք դուք». Աջապահյանը՝ Քարդաշյանների ուղեկցողներին 11 Ապրիլ, 2015 18:04* ) Արցախի թեմի խմբապետ՝ Պարգև Սրբազանը իզուր չէր, որ հատուկ Բերձորի ոճրագործության կազմակերպիչներին իր հայրապետական օրհնությունն էր տվել ու ճանապարհել՝ դիմավորելու Սեֆիլյանին ու նրա համախոհներին, ովքեր այդ հողի ազատագրության համար կռված, արցախյան պատերազմի ազատամարտիկներ էին: Պարգև սրբազանը ոչ միայն այդքանով չհագեցավ, անգամ Արցախում ծեծված պատգամավորներին մեղադրեց ու սադրանքների ենթարկեց՝ հայտարարելով. «**Ով քրիստոնյա չի, նա հայ չի**»: ( *http://blognews.am/arm/news/266076/ov-qristonya-che-hay-che.html* ) Այդպիսով, նա արդարացնում էր իր բանդայի գործելաոճը: Իսկ այն, որ այդ փնթի ապուշը Մանվելի ու Բակո Սահակյանի հետ է նույն սեղանին նստում, հաց կիսում, բերում է այն համոզման, որ նրա ձեռքերն ու հոգին ևս արյունոտ են: Չի բացառվում, որ Արցախի պատգամավոր Հայկ

Խամամիրյանին ծեծողները Պարգև «սրբազանի» օրհնությունն են ստացել և գործն անելուց առաջ, չհաշված Արցախի իր հանցակից եղբայրներին՝ Արթուր Աղաբեկյանին ու Օգանովսկի Սամվելին (Սամվել Կարապետյան) որոնց հետ վայելում է ժողովրդի արյունն քրտինքը: *( http://www.1in.am/1538435.html ) «Ժողովրդավարական Հայրենիք»-ը դիմում է Արցախի ազատամարտի մասնակից Պարգև Սրբազանին 14:59 2015-02-02 ( Սամվել Ջամիլի Կարապետյան ԼՂՀ ՊԲ գեներալ-մայոր (2001), Արցախի հերոս )* Ապրիլյան պատերազմի զոհերի մասին ոչ մի խոսք սրբազանի կողմից, իսկ Բերձորի դեպքերը սաղրանք որակելու համար ելույթ ունեցավ հեռուստատեսությամբ: Պարգևից անցնենք Արարատյան թեմի մյուս սրբապիղծ առաջնորդ խմբապետ Նավասարդ Կճոյանին, ով գերազանցում է վեղարավոր մյուս սրբապիղծներին: Նավասարդ Կճոյանը հանդիսանում է Գարեգին Սրբապիղծի աջ ձեռքը, ինչպես ասում են՝ «Մաֆիայի ձեռքերը շատ երկար են», ուստի Գարեգինը Ամենայն Հայոց կաթողիկոս կոչվելով՝ իր ձեռքերը տարածել է ամենուր: Հաջորդը Նոր Նախիջևանի ու Ռուսիո թեմի առաջնորդ Եզրաս Արքեպիսկոպոսն է, ում վերջերս մեղադրում էին մանկապղծության մեջ, իմիջիայլոց, նա հանդիսանում է Գարեգին Բ-ի հարազատ եղբայրը: Եզրաս Արքեպիսկոպոսը նույնպես թալանչի է ու սևահոգի, իր եղբոր պես, գենետիկական տեսակի մասին գրել եմ, կարիք չկա կրկնվել: Քանի որ վերջերս տեսանյութեր տարածվեցին Ֆրանսիայում մանկապիղծ հոգևորականներից մեկի վերաբերյալ, ով խոստովանում էր, որ այլևս մանուկներ չի բռնաբարում: ( http://www.azatutyun.am/a/27641360.html Ժառանգավորաց վարժարանի սանի բռնաբարության մեջ մեղադրվող վարդապետը հեռացվել է պաշտոնից ) Իսկ այն, որ Գերմանիայի թեմի հոգևորականներն ամեն անգամ գրկաբաց դիմավորում են Սաշիկ ու Լևոն

Սարգսյաններին, ովքեր Չարիքի իշխանության դահիճներն են Գերագույն Գլխավոր դահիճից հետո: Սրբապիղծ տերտերների կողմից հայ համայնքի հավաքած ողջ գումարը տալիս են նրանց ու ճամփու դնում: Իսկ Իսպանիայի և Պորտուգալիայի ընդհանուր փոխանորդ Տեր Սասուն Ծ. Վրդ. Զմրուխտյան ու ԱՄՆ-ի սրբապիղծ թալանչիների մասին ավելորդ է խոսել, որոնք տգիտության մարմնացում են: Մի խոսքով, սրբապիղծներն իրենց առաջնորդ Գարեգին Բ-ի գլխավորությամբ մաս են կազմում Չարիքի Իշխանության, որովհետև նորից կողոպտում են, նորից բռնաբարում, նորից խոշտանգում ու հայհոյում: ( *http://asekose.am/news/11/232451-ov-e-vehapari-nerkayacoucic-baretes-tikin-bellan.html Ով է Վեհափառի ներկայացուցիչ բարետես տիկին Բելլան 2016-10-04 13:03:40* ) Իսկ ինչպես տեսնում ենք, Աստծո պատվիրաններից և ոչ մեկը չեն կատարում, սակայն Հիսուս Քրիստոսի անունը տալով սուտ երդվում են, թե շվեյցարական HSBC բանկի հաշվին հայտնված 1.1 միլիոն դոլարը բարերարի նվիրատվություն է եղել, այն էլ՝ Գարեգին Ա-ի անունով, հետո նրա մահից հետո՝ 1999 թ.-ին փոխանցվել է իր անունով: ( *http://armtimes.com/hy/article/59426* ) Իսկ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը վստահեցնում է, որ իր նախաձեռնությամբ է բացվել հաշիվը, այն էլ 2013 թվականին: Սուտ երդվում էին Տեր Հուսիկ քահանա Լազարյանը, Նավասարդ Կճոյանը, Եզրաս եպիսկոպոսը ու մնացած հոգևորականները: Իսկ այն, որ Գերագույն Գլխավոր հրամանատարը սուտ երդում էր տվել Աստվածաշնչի վրա, ոչ ոքի դա չէր անհանգստացնում: Հանցագործ ( Մուկ ) Հովիկ Աբրահամյանի սեղաններից հաց լափող հոգևորականները նրան մեծարում են, մեծարում են մեծարում են Մանվելին, Լիսկային, Մուկ Աբրահամյանին, Դոդի Գագոյին ու Գերագույն գլխավոր Չարիքին, իսկ մնացած արյունարբու ու հանց-

ագործ «բարերարներին» չհաշված: Ի՞նչ եք կարծում, արդյոք նրանք հայ ժողովրդի հովիվներն են, որոնք իրենց վրա ոչ թե հովիվի պարտականություն են վերցրել, այլ մսագործի օգնականի: (*https://www.youtube.com/watch?v=wnLlvo66Lq4*) Նրանք են, որ սրում են դաշույնն ու տալիս «**Մսագործին**», որպեսզի իրենց սև գործերը անեն:
Ու այս ամենը Աստծո՝ Հիսուս Քրիստոսի անունից են անում: («**Բայց հայոց աբեղաները մի այնպիսի խոտորնակի ընթացք տվին քրիստոնեական կրոնքին, և մի այնպիսի թույլ, ստոր, փոքրոգի դիմակի մեջ պարուրեցին նրա ազատ հայացքը, որով քրիստոնեությունը հայերի մեջ մի այլ հոգի չկարողացավ ներշնչել, քան թե այն միակ ստրկության հոգին, որ և իրոք ստացան նրանք**»: **Րաֆֆի**) Իզուր չէ, որ եկեղեցին, հավատքն ու հոգևորականը դարձան Ռեժիմին ծառայող գործիքներից մեկը: (*«Շատերը կգան իմ անունով ու կասեն, թե՝ ես եմ Քրիստոսը. Եւ շատերին կմոլորեցնեն: Բազում սուտ մարգարեներ կհայտնվեն ու շատերին կմոլորեցնեն և անօրենության շատանալու պատճառով շատ-շատերի սերը կսառչի: Հիսուս Քրիստոս (Մատթեոս 24:1-51)*
Եկեղեցաշինության այն մոլուցքը, որը դարձել է մոդայիկ, ժողովրդի բերանից կտրում են վերջին պատառն ու եկեղեցի կառուցում: «**Վանքերից ծագեց մեր երկրի կործանումը**»: (**Րաֆֆի**)
*«Ո՜վ հայրեր, ո՜վ պապեր, այս գավաթը խմում եմ, բայց առանց նվիրելու ձեր ոսկորներին: Եթե դուք այս վանքերի տեղը, որոնցով լիքն է մեր երկիրը, բերդեր շինեիք, եթե դուք սուրբ խաչի և անոթների փոխարեն, որ սպառեցին ձեր հարստությունը, զենքեր գնեիք, եթե դուք այն անուշահոտության տեղ, որ խնկվում են մեր տաճարներում, վառոդ ծխեիք, այժմ մեր երկիրը բախտավոր կլիներ: Մեր երկիրը չէին քանդի, մեր որդիքը չէին կոտո-*

*րի և մեր կանանց չէին հափշտակի... Վանքերից ծագեց մեր երկրի կործանումը, նրա՛նք խլեցին մեր սիրտը և քաջությունը, նրա՛նք ձգեցին մեզ ստրկության մեջ, սկսած այն օրից, երբ Տրդատը թողեց իր սուրը և թագը, վերցրեց խաչը և մտավ մանիա այրը՝ ճգնելու... Ո՜վ Հայոց հին աստվածներ, Ո՜վ Անահիտ, Ո՜վ վահագն, նվիրում եմ այս բաժակը Ձեր սուրբ հիշատակին, դուք փրկեցեք մեզ...՛ »: Րաֆֆի )* Սահմանային գյուղերը դատարկվում են, իսկ նրանք եկեղեցի են կառուցում: *( [http://168.am/2016/11/18/717955.html](http://168.am/2016/11/18/717955.html) 168.AM | 21:12 | Նոյեմբեր 18 2016 « Գյուղումը 3 շալվար կա, տեղ գնալուց հերթով հագնում, գնում ենք »)* Սնահավատությունն ու տգիտությունը այնքան է բազմացել, որ ժողովուրդը արդեն տերտերներին է դաշտ տանում, որպեսզի իրենց դաշտերն ու այգինները աղոթեն, որպեսզի բերքը լավ լինի, կամ ցրտահարությունից պաշտպանեն: Ժամանակին Խորհրդային Հայաստանում կար կարկուտի դեմ պայքարի ծառայություն, կարկտացրիչ կայաններ, իսկ հիմա տգետ տերտերներն են դուրս եկել այդ պարտավորությունները կատարելու համար: *( [http://armtimes.com/hy/article/83008](http://armtimes.com/hy/article/83008) ) Ծիրանը լավ է լինելու. գյուղատնտեսության նախարար ( Տեսանյութ ) 06/04/2016 16:56 ( https://www.youtube.com/watch? v=U5kIVvg3Edw )* *« Սերգո Կարապետյանը տեղյակ չի, որ ծիրանի այգիներից մեկում, որտեղ աղոթել են ցրտահարությունից խուսափելու համար ցրտահարության դեպք չի գրանցվել, իսկ նույն այգու հարեւանությամբ ծիրանենինրը ցրտահարվել են, քանի որ հոգեւորականները չեն աղոթել այդ այգում: Այդուհանդերձ գյուղատնտեսության նախարարը նորմալ է համարում, որ ցրտահարությունից առաջ օրհնում են այգիները »: )* Ինչպես միջնադարում, այնպես էլ հիմա, հենց այդ տգետ հոգևորականների պատճառով է, որ շատերը հեռանում են հայ Առաքելական եկեղեցուց:

*( http://armlur.am/502064/ Աղոթք և օրհնություն՝ այգիները ցրտահարությունից պաշտպանելու նպատակով 12:32 | Մարտ 18 2016 )* Վիպասան Րաֆֆին այնքան գեղեցիկ ու ճշմարիտ է ներկայացրել, որ ավելորդ չեմ համարում այն ներկայացնել անփոփոխ: *« Ահա այդ տեղից են սկիզբն առել հայերի մեջ բաժանմունքները կաթոլիկների, պրոտեստանտների և այլն: Երբ մի հայ մի փոքր ընդդիմացել է հայ հոգևորականի կամքին, նա, իսկույն փոխանակ քրիստոնեական եղբայրասիրությամբ նրա սիրտը ամոքելու և նրա հետ հաշտվելու՝ հրաժարեցնում է յուր եկեղեցուց, չկատարելով նրա հոգևոր պիտույքները: Եվ խղճալի հայը ճարահատյալ դիմում է դեպի մի այլ եկեղեցի, մտնում է նրա ծոցը, ընդունում է այլ անուն… և այդպես, մեր չար եկեղեցականների հիմարությամբ, ամեն տարի որքան հոգիներ կորչում են, անհետանում են և կուլ են գնում մյուս ազգերի անդնդում…»: ( 228 Րաֆֆի )* Ինչպես տեսնում եք Րաֆֆու ժամանակներից անցել է երկու դար, սակայն ոչինչ չի փոխվել՝ նույն սրբապիղծ հոգևորականները և նույն տգետ ժողովուրդը, սեփական ժողովրդին շահագործող, հալածող ու խոշտանգող տականքը, և խեղճ անպաշտպան չքավոր դասակարգը: Ամենաողբալին այն է, որ սահմանագծին կանգնած զինվորը զենք չունի, որպեսզի պաշտպանի իրեն, էլ ուր մնաց հայրենիքը: Իսկ հայկական բանակում անգամ գործում են վեղարավոր տգետների վաշտեր, որոնք զինվորներին են մոլորեցնում: *( http://armtimes.com/hy/article/71935 Զինված ուժերում ծառայություն իրականացնող հոգեւորականները կվճարվեն 14/10/2015 ՀՀ ԶՈւ հոգեւոր ծառայության առաջնորդը կստանա 300 հազար դրամ: )* Ու այն էլ միայն անապահով ընտանիքների զավակներին փորձում են հնազանդեցնել, որ Աստծո առջև մեղք կգործեն, եթե չենթարկվեն իրենց հանցագործ սպաներին:

Ու այդ զինվորների գլխին կարգված սպաները թալանչի ու հանցագործ, որոնք զինվորի հասանելիք օճառն ու շաքարն են լափում, որոնք ժամկետանց գոմեշի մսով են կերակրում մեր սահմանը պաշտպանող զինվորին: *( 10:31 - 9 / Նոյեմբեր / 2012 « Ես գոմեշի մսից իրոք տեղյակ չեմ եղել » http://www.hraparak.am/p =222 05 &l=am/es+gomeshi+msic+iroq+texyak+chem+exel )*

Ամեն ինչ սկսվում է սահմանից ու սահմանապահից, սակայն մեզ մոտ հակառակն է, ամեն ինչ սկսվում է կեղտարյունների որովայնից ու ամորձիներից: Երբ կուշտ լափած են՝ նոր կարելի է մտածել ժողովրդի մասին և առհասարակ, նրանք երբեք կուշտ չեն լինում, որովհետև ինչքան շատ են լափում, այնքան ախորժակներն ավելի է բացվում: Գիտեք ինչու՞ է բացվում, որովհետև մեղավորը մենք ենք ու մեր տգիտությունը: *( http://www.1in.am/2048043.html Գեներալիտետի դղյակները փաստ չեն, ես էլ եմ տուն սարքում. Ծարմազանով 14:33 2016-11-16 )*

Ինչպես տեսնում ենք հոգևորականները նույնպես կեղտարյուն տեսակից են, որոնք իրականացնում են Չարիքի իշխանության պատվերը՝ ժողովրդին պահելով հնազանդության ու խավարի մեջ, տգիտությունն ու սնահավատությունը դարձնելով սկզբունք: *( https://www.youtube.com/watch?v=4gUO9ricSSc « Պիտի ամաչի այն ընտանիքը, որտեղ չմկրտված երեխա կա». Միքայել Սրբազանը՝ Սարալանջի բնակիչներին 31 окт. 2016 г. )* Նրանք են, որ ամեն գնով պայքարում են, որպեսզի չթողնեն Սփյուռքը, Հայրենիքն ու Արցախը միաձուլվեն մեկ գաղափարի շուրջ: Չարիքի Իշխանության կողմից ստեղծված Սփյուռքի Նախարարությունը իր առաքելությունը կատարում է այնպես, ինչպես հարկն է: Այդ նախարարության ղեկավարի ընտրությունը պատահական չէր՝ **Բոլշևիզմի** մնացորդ Կոմսոմոլ Հրանուշ Հակոբյանը ատում է սփյուռքահայերին, նույնիսկ տարիներ առաջ

խոստովանել էր, «որ սփյուռքահայերին չպետք է թողնել Հայաստան»: Ինչպես համոզվեցինք սիրիահայերի հանդեպ նրա վերաբերմունքն ու ատելությունը բացահայտ է: Սիրիահայերի հանդեպ այդպիսի սառնասիրտ ու արհամարհական վերաբերմունք չի եղել անգամ Թուրքիայում, նույնիսկ դաշնակցականներն աչք են փակում Հրանուշի հանցանքների վրա, որովհետև իրենք էլ են նույն շաղախից շաղախված:
Հայ Առաքելական եկեղեցին ամբողջությամբ մաս է կազմում հայահալած քաղաքականությանը, ինչպես և սփյուռքի նախարարությունը: Առաքելական հոգևորական էլիտան, ինչպես միշտ, օգտվում է Չարիքի իշխանության՝ **Բռնակալի** կերակրատաշտից, սրբապիղծ հոգևորականների համար սեփական որովայնը ավելի մեծ արժեք է ներկայացնում, քան հոգու մաքրությունը, ժողովուրդն ու Աստծո պատվիրանը: Չարիքին ծառայելով՝ իրենք դառնում են ավելի վտանգավոր: (« **կրոնք ասած բանը չարաչար վնասել է մարդկությանը և առավելապես հայերը կրել են քրիստոնեության վնասը »: ՐԱՖՖԻ** )
Միայն Չարիքի իշխանությունում է հնարավոր, որ քնած ժամանակ սպանեն մի ողջ ընտանիք սեփական տան մեջ ու ոճրագործները չբացահայտվեն: (Ավետիսյանների ընտանիքի սպանդի ժամանակ) *( https://hywikipedia.org/wiki/Ավետիսյանների _ընտանիքի _սպանություն_Գյումրիում )* **Սևազգեստ Բանդայի** ղեկավար կաթողիկոս սրբապիղծը զվարճանում էր ինչ-որ եվրոպական երկրում: Ու փոխարենը ինքը բարձրաձայներ ոճիրի մասին՝ պահպանեց իր «Հայրապետական լռությունը», կարծես թե դա իրեն չէր վերաբերում: Անգամ այդ ոճրագործությանը զոհ դարձած վեց ամսական մանկիկի՝ Սերոժա Ավետիսյանի, ով մի քանի օր անց մահացավ, նրա զարհուրելի մահը չշարժեց այդպես ասած **Ծայրապետի** գութը, գոնե իր խոսքով սփոփեր

բորբոքված ժողովրդին, կամ սաստեր ոստիկանական ոհմակին, որը Գյումրիում շարունակում էր ոճրագործությունների շարքը: *( [http://www.tert.am/am/news/2015/01/19/gyumrikid/1563882](http://www.tert.am/am/news/2015/01/19/gyumrikid/1563882) Մահացել է Գյումրիի սպանդից փրկված 6–ամսական Սերյոժա Ավետիսյանը 17:24 19.01.15, [http://www.shame.am/news/view/59772.html](http://www.shame.am/news/view/59772.html) Ամենայն Հայոց կաթողիկոսը սկսում է մարդ դառնալ Հունվարի 20, 2015 )* Շիրակի թեմի առաջնորդ Միքայել Եպիսկոպոս Աջապահյանը փորձում էր արդարադատության հրեշտակ ձևանալ ու փոխարենը զսպել ոստիկաններին, նա ժողովրդին էր սպառնում ու բերանները փակել տալիս: *( [https://www.youtube.com/watch?v=wnL-lvo66Lq4](https://www.youtube.com/watch?v=wnL-lvo66Lq4) [http://www.asparez.am/gyumri-hy/qim_qardashyan_gyumrium_hy/](http://www.asparez.am/gyumri-hy/qim_qardashyan_gyumrium_hy/) « Սա եկեղեցի է, ապրՙուշ եք դուք ». Աջապահյանը՝ Քարդաշյանների ուղեկցողներին 11 Ապրիլ, 2015 18:04 )* Չարիքի իշխանությունում Արդարադատությունը, եկեղեցին ու ներքին գործերը գործում են մեկ նպատակի համար՝ **սրբապղծել** ժողովրդի հավատքը դեպի լուսավոր գաղափարներ: Նրանք են, որ պետք է հյուծեն ժողովրդին, նրանց մեջ սպանելով պայքարի ու արդարության ձգտումը: Իզուր չէ, որ եկեղեցին խուժեց դպրոց ու բանակ: Այստեղ զարմանալի է, որ եկեղեցին նույնիսկ չի փորձում արդարադատության համակարգում իր առաքելությունը իրականացնել, օրինակ քրեակատարողական հիմնարկներում, կամ հոգեբուժարանները վերցնել իր հովանավորության տակ ( մանկատները և ծերանոցները ևս ) քանի որ դատապարտյալներն ու հոգեկան հիվանդները դրա կարիքն ավելի ունեն, այդ թվում ցմահ դատապարտյալներն ու ԿԳԲ-ի կառափնարաններում խոշտանգվող ձերբակալվածները, ոչ թե դպրոցներն ու բանակը: Իսկ այն, որ իրենց առաքելությունը բանակում ձևական է, դա ակնհայտ է: Փոխարենը խավարամիտները հիշեն հարյուրավոր խեղաթյուրված ու խոշտանգված զինվորներին,

իրենք զինվորներին չոքել ու աղոթել են տալիս: Մահմեդական-ների պես չոքելն ու աղոթելը դարձնելով ավանդույթ: ( *http://www.armversion.am/2015/12/19/հայ-զինվորն-աղոթում-է-լուսա-նկարներ/#.WDCxYJ93mN0. Հայ զինվորն աղոթում է (լուսանկարներ) December 19, 2015 | 14:20* ) (*«* ***Քանի Ավետարանի ճշմարիտ լույսը չէ ծագում մեր ազգի վրա, քանի նա հայերի համար դրված է գրվանի տակ, քանի ճշգրրիտ ուսում և գիտությունը անմերձենալի են հասարակ ժողովրդին, և քանի նրանք՝ թողնելով սուրբ գրքերի ճշմարտաքարոզ վարդապետությունը, կհետևեն հայրապետական մոլորություններին — ճշմարիտ եմ ասում, ո՜րքան ժամանակ կապրեն նրանք իբրև լոկ նյութական մարմիններ, զուրկ մարդկության հոգևոր մասնից »: ՐԱՖՖԻ*** )

Ուղղակի ողբալի վիճակում ենք հայտնվել, սնահավատությունը արդեն բանակ է մտել, սպանելով մարդու ոգին: Սա սպանդ է ոչ միայն զինվորի հանդեպ, այլև սերունդների: *( « Հայոց քահանայք միշտ քարոզեցին, թե այս աշխարհս մի փուչ անցավոր աշխարհ է, որ աստված ստեղծել է մարդու համար, որպես մի բով, որի մեջ մարդը, ոսկերչի արծաթի նման, պիտի հալվի, մաշվի և զտվելով մաքրվի՝ մի նոր փառավոր կյանքի համար մահից հետո: Նրանք քարոզել են և այն առասպելական խոսքը, թե հայոց ազգի վրա լինելով մի անեծք յուր հին հոգևոր հայրերից, նրա որդիներին այս աշխարհի մեջ չկա հանգստություն, այլ նրանք պիտի հալածվին, վիշտ ու նեղություն կրեն, տնից, տեղից, հայրենիքից պիտի զրկվին, միշտ գերության մեջ, միշտ թշնամու լծի տակ պիտի լինին, որպեսզի դրանցով ապաշխարություն լինի նրանց մեղքերին և ազատվին նրանց հոգիները: «Ահա՜, այդպես, իմ սիրելի, հայոց քահանայքը՝ խոստանալով իրանց ժողովրդին մի նոր կյանք ամպերի մյուս կողմում, միշտ հեռացրել են, միշտ սառեցրել են նրանց սրտերն այս աշխարհից և թույլ չեն տվել նրանց հաստատել իր-*

*ենց համար երկրի վրա հիմնավոր կացություն, միշտ նրանց հրավիրելու դեպի երկինք: Եվ այդպիսով միշտ խոնարհություն քարոզելով, միշտ հեզություն քարոզելով, միշտ աղքատություն քարոզելով, թուլացրել են հայերի քաջազնական և աշխատասիրության հոգին »: Րաֆֆի )* Ինչու՞ հայ հոգևորական կոչվածները նույն բանը չեն անում ոստիկանների հանդեպ. որպեսզի Աստծո լույսը նրանց էլ հասնի, որպեսզի իրենց դաժանությունն ու ատելությունը չթափեն ժողովրդի գլխին: Պատահական չէր, որ Խորենացի փողոցի դեպքերի ժամանակ ոստիկանները ստիպել էին ակտիվիստներին համբուրել իրենց կոշիկները:

( *http://www.aravot.am/2016/07/19/717187/ «Ոստիկանները բերման ենթարկվածներին ստիպում էին ոստիկանների կոշիկները համբուրել». (տեսանյութ) 16:12 | Հուլիս 19 2016* ) Ինչու՞ ոչ մի հոգևորական չհայտնվեց մեղմելու կատաղած ոստիկաններին, ովքեր Աստծո պատվիրաններն էին ոտնատակ տալիս, ինչու՞ ոչ մի նվիրյալ հոգևորական չկանգնեց ժողովրդի ու ոստիկանների միջև: Ինչու՞ ոչ մի հոգևորական չգտնվեց, որպեսզի Աստծո պատվիրանը լսելով՝ մի կտոր ցամաք հաց հասցներ « Սասնա ծռերի » տղաների համար, իրենց գործը Արթուր Սարգսյանն արեց, իսկ հիմա թող ելնեն ու Արթուրին պաշտպանեն, որն իր մարդասիրությունն ավելի վեր դասեց, քան հոգևորական կոչվածն իր աստծուն: *( **« Նրանցից շատերը դեռ այն են, որոնց կխարազաներ Նազովրեցու խույսը՝ « ծույլ և նենգ ստրուկներ »: Գարեգին Նժդեհ** )* Ոստիկանների դաժանությունն ու բռնությունը անտեսեցին մեր հոգևոր հայրերը, թողեցին որ **Չարիքի իշխանության** ասկյարները կոտորեն անզեն ժողովրդին, մեկ դար առաջ էլ նույնն արեցին: *(« **Սուլթան կուզե ջնջե մըզի. Չարթնի՛ր, լաո, մոնիմ քըզի** »: )* Ի՞նչ եք կարծում երիտթուրքերի վերարտադրված գործելաոճը այստեղ էլ նույնն է ու կարիք չկա արդարա-

ցնել: Իզուր չէ, որ ոստիկանությունը զինված է գերժամանակակից միջոցներով...

Հոգևորականների մեջ չգտնվեց գեթ մեկը, ով կկանգներ ժողովրդի կողքին, կփորձեր իր հոտին առաջնորդել, ոչ թե Շիրակի Արքեպիսկոպոսի պես ոստիկանների օգնությամբ լռեցներ ժողովրդին: Նժդեհի խոսքը տեղին է, որ գիտակից ստրուկը հանցագործ է: ( « **Գիտակից ստրուկի և հանցագործի մեջ չկա տարբերություն »: Գարեգին Նժդեհ** ) Ինքներդ համոզվել եք, սակայն դեռ չեք կարող տարբերակել լավն ու վատը: Իզուր չէր, որ ոստիկանական առաջին շարքերում կանգնած էին տեսախցիկներով ոստիկանները: Իսկ գիտե՞ք, որ հենց դրանք են ավելի վտանգավոր, քան աղբբեջանական ասկյարների մեջ գտնվող գնդացրորդը: Որովհետև հենց այդ Չարիքի հպատակներն են ֆիքսում բոլորի դեմքերը, որպեսզի կարողանան պատասխանատվության ենթարկել, խոշտանգել և հաշվեհարդար տեսնել նրանց հետ: Ժամանակակից միջոցները վաղուց են օգտագործվում իրենց իշխանությունը պահելու համար, իսկ կարո՞ղ եք պատկերացնել, թե ի՞նչ գումարներ են ծախսվում միայն մեկ նկարահանող ոստիկանի վրա: Օրինակ « Sony Full HD » նկարահանող տեսախցիկը արժե 600 դոլարից ոչ պակաս, նրա վրա տեղադրված հզոր, երկարաժամ մարտկոցը արժե 450 դոլար, իրենց թռչող նկարահանող սարքերը, որից միայն մեկի արժեքը 1800 դոլար է, ոստիկանների կաշվե մեկ ձեռնոցի արժեքը 20 դոլար, մնացած միջոցներն ու հանդերձանքներն էլ չհաշվենք, որովհետև դրսից ներկրված բոլոր միջոցները՝ մեքենաներից ու հագուստից վերցրած, չափազանց թանկ հաճույք են: Առհասարակ Բռնակալներն իրենց թույլ են տալիս այս ճոխությունը, որովհետև գիտեն, որ դա իրենց մահակն է, որով կարող են պաշտպանվել:

Իսկ այս ամենը տեսնելուց հետո համեմատում ես սահմանին կանգնած անապահով ընտանիքի զավակներին, որոնք 80 ականների սակրավորի բահով զինված նվազ ու նիհար կազմվածքով, բարի հայացքով ժպտում են, պատրաստ են իրենց կյանքը զոհել հայրենիքի համար: ( *[http://www.1in.am/2046519.html#undefined.gbpl](http://www.1in.am/2046519.html#undefined.gbpl) ՊՆ-ն 50 միլիոն կվճարի 1.5 ժամ համերգ կազմակերպելու համար. armtimes.com 23:37 2016-11-13* ) Երևի շատերդ տեսել եք Խորենացի փողոցի վրա հաստագլուխ ոստիկանների Ֆիքսած դեմքերը, որոնք ատելությամբ ու զզվանքով են լցված սեփական ժողովրդի հանդեպ, արդյո՞ք դրանք հայ ժողովրդի հետ կապ ունե՞ն: Գարեգին Նժդեհի խեսքն այստեղ տեղին է. « **Տե՛ս, հայ-րերդ իրար ավելի են ատում, քան արտաքին թշնամուն** »: Բազմիցս ասել եմ, որ Չարիքի իշխանությունում բանակը սպանդանոց է, իսկ այնտեղ խոշտանգված ու սպանված զինվորների գործերը կոծկվում են ու մոռացվում: Տասնամյակներով պայքարող որդեկորույս մայրերի համար արհեստական պատնեշ է կառուցվում, որպեսզի չբացահայտվեն հանցագործներն ու գործեր կոծկողները:

Պատահական չէր, որ 2014 թվականի հուլիսի 18-ի գերագույն Չարիքի հրամանագրով ստեղծվեց Չարիքի իշխանության Քննչական կոմիտեն, որի նախագահը հենց **Չեկիստական** համակարգի ամենափորձառու հանցագործներից մեկն է՝ Աղվան Գառնիկի Հովսեփյանը: Իր մասնակցությամբ են կոծկվել ու պարտկվել հարյուրավոր ոճիրներ ու հանցագործություններ: Պաշտպանության նախարարությունը սպանված զինվորների գործերն ուղարկում է հենց Քննչական կոմիտե: Այսպես հեշտանում է, քանի որ ամեն մի ծառայություն իր վրայից պատասխանատվությունը վերցնում է՝ մատնացույց անելով նրանց, իսկ նրանք էլ իրենց հերթին մատնացույց են անում մյուսներին:

Գործը ձգվում է ու փակվում և պատասխանատուներ դժվար թե գտնվեն այս տարբերակում: *( [http://m.mamul.am/am/news /93 963](http://m.mamul.am/am/news/93963) Կուրսանտ Հայկազ Բարսեղյանի սպանության գործով նիստը հետաձգվեց. ամբաստանյալների մոտ առկա էր ստամոքսի խանգարում 16:45, 31.10.2016 )*
Իսկ ԱՄՆ իշխանությունների կողմից ստացված 132.000 ԱՄՆ դոլարը պատահական չէր տրվել Քննչական կոմիտեին: Աղվան Հովսեփյանը գիտի ինչպես կողոպտել ու անպատիժ մնալ: *( ՀՀ քննչական կոմիտեի [http://investigative.am/home.html](http://investigative.am/home.html) )*
Հայկական բանակում սպանված ու խոշտանգված զինվորների գործերը հենց այնտեղ են կորում: Եվ Աստված չանի, որ մեկը բարձրաձայնի հայոց բանակի թերությունների արատների ու սպանդի մասին: Որովհետև ինչպես փնթի Սեյրան Օհանյանն ու Արշակ Զաքարյան են ասում. « Դավաճան է՝ ով հայոց բանակին քննադատում է »: Առհասարակ **Կեղտարյունները** չեն սիրում իրենց քննադատողներին, բարձր ատյանների միջոցով կարող են մեղադրել պետական դավաճանություն մեջ, անգամ օգտագործելով օրինական ու ոչ օրինական եղանակները: Իզուր չէր, որ Սեյրան Օհանյանի կնոջ պատիվը պաշտպանող « Ծմայս » Առաքելյանը պատրաստ էր բռնաբարել ու գլխատել, նույնը Ծուշան Պետրոսյանը: *( [https://www.youtube.com/watch?v=f8epx7-K4mY](https://www.youtube.com/watch?v=f8epx7-K4mY) 1 июн. 2015 г. Առաքել Մովսիսյանը պատրաստ է գլխատել և բռնաբարել՝ հանուն Սեյրան Օհանյանի Իշխող Հանրապետական կուսակցության պատգամավոր Առաքել Մովսիսյանը սպառնում է հնարավորության դեպքում կտրել բոլոր նրանց գլուխներն, ովքեր հանդգնել են պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ընտանիքի հասցեին բացասական արտահայտություններ անել:)* Իմիջիայլոց, այդ տիկինը՝ պայծառափայլություն Ռուզաննա Խաչատրյանը, նույնպես այդ կեղտարյուն տեսակից է, դրա

մասին մի առանձին ակնարկ էի ներկայացրել, ուղղակի միայն հիշեցնեմ, որ Տիկին Ռուզաննան իր կենսագրական տվյալները համապատասխանեցրել է ինչպես գրել էի՝ միջազգային արիստոկրատական չափանիշներին: Իր հարցազրույցներից մեկում ներկայացնում է, որ ինքը Ղարաբաղի մելիքների ժառանգներից է ու իր մտավոր կարողություններն ու գիտական տիտղոսները բնական են, որովհետև ինքը արիստոկրատիայի զինանշաններից մեկն է: Որպես հոգեբան՝ չեմ կարծում, որ տիկին Ռուզաննան սխալվում է մելիքների ժառանգը լինելու հարցում, քանի որ մելիք Շահնազարը հենց այն դավաճանն էր, ով հայ ժողովրդի գլխին դարձավ ավելի մեծ չարիք, քան բնական աղետները՝ բոլոր դարերում միասին վերցրած: Ռուզաննա Խաչատրյանի ու մելիք Շահնազարի կապն ակնհայտ է, երբ նայում ենք սևազգեստ որդեկորույս մայրերին ու նրա գունազարդ ֆոտոալբոմներին: *( http://www.hayzinvor.am/26922.html ՉԿԱ ԱՎԵԼԻ ՄԵԾ ՍԽՐԱՆՔ, ՔԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ ԶՈՀԱԲԵՐՎԵԼԸ Զրույց « Ռազմական բժիշկների հայկական ասոցիացիա » հասարակական կազմակերպության նախագահ ՌՈՒԶԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ հետ: )*

Մի խոսքով ավելացնեմ այն, որ տիկին Ռուզաննան որպես ազգային Արժեք, որպես Պաշտպանության նախարարի կին ու որպես գիտնական՝ պաշտպանված է օրենքով: Օրենքը և սահմանադրությունը թույլ չեն տա ոչ մի ոտնձգություն նրա և առավել ևս իր ԿԳԲ-ի գործակալ ամուսնու հանդեպ:

# ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՉԱՐԻՔԸ

***« Մի ժողովուրդ, որի որդիները հավասար չեն օրենքի եւ մահվան առջև՝ հաղթական հայրենիք չի ունենա »:***
***Գարեգին Նժդեհ***

Մինչ Չարիքի Իշխանության հիմնասյանն անցնելը՝ կցանկանայի ներկայացնել Ջորջ Օրուելի տողերը հենց դասակարգային արատի վերաբերյալ՝ *« Արձանագրված պատմության ողջ ընթացքում կամ հավանաբար նեոլիթյան դարաշրջանի ավարտից ի վեր աշխարհում գոյություն ունեն երեք դասի մարդիկ՝ բարձր, միջին ու ցածր: Նրանք բաժանվել են բազում տարբեր եղանակներով, կրել անհամար տարբեր անուններ, ու նրանց քանակական հարաբերակցությունը, ինչպես և վերաբերմունքը միմյանց հանդեպ, տարբերվել է դարաշրջանից դարաշրջան, բայց հասարակության հիմնական կառուցվածքը երբեք չի փոխվել »:*

Դասակարգային չարիքի մասին այնքան է գրվել հայ դասականների կողմից, որին, կարծում եմ, չարժե կրկին անդրադառնալ: (**« Մի ժողովուրդ, որի որդիները հավասար չեն օրենքի եւ մահվան առջև՝ հաղթական հայրենիք չի ունենա» Գարեգին Նժդեհ:)** Միայն այն, որ միջնադարից մինչև հիմա գրվել է ու ասվել, մնացել է անօգտակար ու անիմաստ: ( *« Իմ ձեռքիս տակ ամեն դասե աղջիկ կա. բարձր դասեն, միջին դասեն և ստորին դասեն. այս երեք դասեն ալ ծախու ապրանք ունիմ. Հրամանքնիդ ձեր քսակին հետ խորհրդակցեցեք և ինծի ըսեք՝ սա դասեն կուզեմ: Հայտնի է, որ բարձր դասը շատ սուղ է, միջինն՝ նվազ սուղ և ստորինն՝*

*աժան »: Հակոբ Պարոնյան )* Ինչպես տեսնում եք ներկայացրած մեջբերումը, անգամ Հակոբ Պարոնյանն է ներկայացրել դասակարգային հասարակության տարբերություննն ու արժեքը: Դասակարգային Չարիքը հենց Չարիքի Իշխանության արմատն է: Հայաստանի Հանրապետության անկախության հետ նաև ձեռք բերեցինք դասակարգային խավերը: Դասակարգային բուրգի կառուցման մասին գրվել է, այն, որ այդ բուրգի վերին մասում հայտնվեցին փնթիները փաստ է. այդ պատճառով էլ Փնթի ոջլոտը հայտարարում էր, որ իրենք իշխանությունը ժողովրդին երբեք չեն հանձնի՝ անկախ նրանից, թե նրանք հաղթել են ընտրություններում: ( « **Այո՛, մարդկությունը կը չարչարվեր, կը նախատվեր անգութ բռնավորներու ձեռքեն և չեր գիտեր, որու երթալ և որու բողոքել »: Հակոբ Պարոնյան** )
Ավարտելով դասակարգային չարիքի թեման՝ անցնենք առաջ, քանի որ դրան անդրադարձել եմ մնացած ակնարկներում ու գրքերում: Միայն այն, որ այդ Չարիքը դարձել է բոլոր դարերում մեր ժողովրդի գլխին կրակ ու պատիժ՝ փաստ էր: Միայն Խորհրդային Հայաստանի ժամանակ էր, որ հասարակությունը հասկացավ, որ Տգիտության խավարի պայմաններում է առաջանում դասակարգային այս անդունդը, որի մասին գրել էին Ֆրիկն ու Նարեկացին, Թումանյանն ու Աղայանը (« *Հնարավոր է պատկերացնել մի հասարակություն, որտեղ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ, անձնական սեփականության ու ճոխությունների առումով, հավասարապես կբաշխվի, մինչդեռ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ կմնա փոքրաթիվ արտոնյալների ձեռքին »: Ջորջ Օրուել* )
Իզուր չեն Թումանյանի « Մի կաթիլ մեղրը», « Անխելք մարդն » ու « Չարի վերջը »: Իզուր չէր « Անահիտ » հեքիաթն ու « Երջանիկ խրճիթը »: Այն, որ չկարողացանք իմաստունների խորհուրդները սովորել, փաստ է: ( « **Հայոց պատմությունը մեզ մի բան**

**է սովորեցնում այն, որ հայը իր պատմությունից բնավ չի սովորում»: Գարեգին Նժդեհ: )**
Առհասարակ, Չարիքի իշխանությունն ունենում է իր կարգախոսներն ու թևավոր խոսքերը, որոնք էլ պետք է դառնան գաղափարային- բեկումնային՝ ոչ միայն ներկա սերունդների համար, այլև եկող: Վազգեն Սարգսյանի արտահայտած մի քանի խոսքերը դարձել են պետական գաղափարախոսություն, իսկ հեղինակն էլ դարձնելով աստվածատուր և սրբացված կուռք:
( **« Ողբերգությունն այն է, որ քչերի խելքին փչեց հարց տալ. արժե՞ր արդյոք ( եւ որքանո՞վ էր դա ընդհանրապես արդյունավետ քաղաքական տեսակետից ) կուռքի աստիճան շնորհել մի անհատի, որը համընդհանուր զզվանքի ու նողկանքի առարկա էր եղել »: « Մտորումներ « Պագոլինի »-ից հետո » գրքից՝ Արտյոմ Խաչատրյան** ) Օրինակ՝ հիշենք « *21 րդ դարը մերն է լինելու* », « *Ես այս պատերազմին տվեցի այն ամենը, ինչ կարող էի, փոխարենը ձեռք բերեցի հպարտություն* »: Ինչպես տեսնում ենք, շատերը չեն հասկանում այս բառերի իմաստը, առհասարակ մոլագարն անհեթեթություններ էր դուրս տալիս՝ ինքը ևս չիմանալով՝ ինչի մասին է խոսում. դրա մասին գրել եմ բազմիցս: ( *Ճիշտ ասած Վազգենը շեշտել է « Հպարտություն » բառը, սակայն հիշեցնեմ, որ նա երբեք հպարտություն չի ունեցել, ժողովուրդը նրանից զզվում էր, ականատեսները դա չեն մոռացել, նրան անվանում էին «* ***փրչոտ ոջլոտ*** *»:* ) Սակայն, եթե Չարիքի իշխանությունը որպես Գաղափարախոս ընտրել է Վազգենին, և ոչ անգրագետ Ֆիզկուլտուրայի դասատուին, որն անգամ « Բ-Պ-Փ-ի » ուղղագրությունը չի իմացել: Վազգեն Սարգսյանի հնչեցրած մի քանի խոսքեր անգամ մոռացվել են, կամ փորձում են ջնջել նրա կենսագրականից: Օրինակ՝ « ***Մեր դեմ խաղ չկա*** ». դա նրա կարգախոսներից ամենահայտնին էր,

որ փոչոտ « ասֆալտամարտիկներն » էին որդեգրել։ ( Ասֆալտամարտիկներ ասելով՝ նկատի ունեմ հանցագործ տարրերին, որոնց կոչում էին « ասֆալտի ֆիդային »։ Այդ բանդան, նրա կարգախոսը հնչեցնելով, կրակեց ժողովրդի վրա։ ( **« Ընդդիմությունը 100 տոկոս ձայն էլ ստանար, նրան իշխանություն տվող չկար »**։ **Վազգեն Սարգսյան 1996 թ.** )

Ու այդպես էլ արեցին. կոմսոմոլի փոխանցիկ դրոշի նման իրար են փոխանցում իշխանությունը, իրականում ու կյանքում ոչինչ չի փոխվում։ « Սպարապետի » հնչեցրած կարևոր միտքը, որը դեռ չեն ջնջել նրա կենսագրությունից։ **« Հերոսները պետք է զոհվեն պատերազմի դաշտում, հակառակ դեպքում նրանք անտանելի են դառնում »: (Վազգեն Սարգսյան Վիքիպեդիա** )

Մի՞թե այս խոսքերը նա չի ասել։ Կնշանակի՝ կեղտարյունները կանխամտածված ցանկանում են քողարկել նրա ով լինելը։ Ցանկացած խելամիտ մարդ կարող է բնութագրել այս մտքերն արտահայտած մարդուն։

*« Պետք է շարժել նրանց, հրել, պետք է կոպիտ վարվել մարդկանց հետ հենց նրանց ազատագրման բարիքի համար, ծակել նրանց աչքերը ճշմարիտով , ահավոր բռերով լույս նետել նրանց »:*

*Վիկտոր Հյուգո*

*« Մի խառնիճաղանջ ամբոխ, որ ապուշորեն զբաղված է դիտելով խավարի այս մռայլ հաղթանակները իրենց վերջալույսի փառահեղության մեջ »:*

*Վիկտոր Հյուգո*

# ԿԵՂԾԱՐՅՈՒՆՆԵՐ
# ԳՐԱԳԵՏ ՓՆԹԻՆԵՐ

***« Ազգերը ամենից շատ տառապել են և կտառապեն իրենց տականքների երեսից »***
***ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ***

Այդ փնթի կեղծարյունները օգտագործում են իրենց Չարիքի իշխանության համար կիսագրագետ փնթիներին՝ օրինակ Ծարմազանովին, Արմեն Աշոտյանին, Արթուր Բաղդասարյանին, Կարեն Ավագյանին, Մեննուա Հարությունյանին և կիսագրագետ փորձագետներին ու սոցիոլոգներին: Դե էն Քյոփակ մտավորականներին չհաշված, որոնք արդեն ժամկետանց են՝ մանավանդ « Սասնա ծռերի » մասին երգ գրող ապուշ Ռոբերտ Ամիրխանյանն ու դրա նման ծաղրածուները: « Եթե բանական որոշում կայացնեք ու զենքը վայր դնեք, ես ձեր հերոսապատման մասին երգ կգրեմ »: ( *« Զենքը վա՜յր դրեք, առաջին քայլը Դո՞ւք արեք ». Ռոբերտ Ամիրխանյանի կոչը՝ «Սասնա ծռերին » 21.07.16* *http://www.tert.am/am/news/2016/07/21/amirkhanyan/2085305* )
Ի գիտություն նրանց, ովքեր չգիտեն, ծաղրածու բառը վիրավորական բառ չէ, քանի որ միջնադարում դրանց նմաններին զանգուլակներով բազմագույն հագուստ էին հագցնում, որ պալատում « մեյմունություն » անեին իշխանների առաջ, մի խոսքով՝ պալատական ծաղրածու, որն այժմ կոչվում է հայտնի մտավորական: Չարիքի Իշխանության մեջ կարևոր դեր են կատարում հենց այդ « հայտնիները՝ » « փնթի հայտնիները », որոնք Հայաս-

տանի բնակլիմայական պայմաններում աճում են ու բազմանում, ոչ միայն իրենց տեսակով, այլև քանակով, ոճով ու լայնությամբ, ինչպես Շուշան Պետրոսյանն ու Շմայսը իրենց լայնքին տալով՝ չնայած՝ ինչքան ուղեղը փոքր է լինում, այնքան չափսերն ավելի մեծ, իսկ գարշահոտությունն ավելի շատ է լինում: Հենց այդ հայտնիները, որոնք մտավորականներից մեկ աստիճան ցածր են գտնվում, օգտվում են իրենց լափատաշտից, իհարկե, միայն ծառայություն մատուցելուց հետո: Իրենց ծառայությունն ակնհայտ է, դրա համար հաճոյախոսում են, երգում են ու գովաբանում **Բռնակալի** իշխանությունը՝ ներկայացնելով վարդագույն կամ բազմերանգ, ինչպես Օհանյանի տիկնոջ երփներանգ ծաղիկները:
Շատ հայտնիներ այս ամենով հանդերձ արդարացնում են իրենց գործելաոճն ու իրենց հայրենասիրական մեծ ոգին: Որոշ հայտնիների մոտ էլ իրենց հովանավոր Ռեժիմը դառնում է ոչ միայն նրանց սնող-կերակրող կնքահայրը, այլև աստվածն ու մարգարեն: Իզուր չէ, որ հեռուստաաստղ Նազենի Հովհաննիսյանի համար Սերժ Ազատիչը « Մովսես Մարգարե է», որը Կարմիր ծովով է գալիս, իսկ Ալլա Լևոնյանի համար էլ **Ոճրագործը Սպարապետ** է՝ այն էլ ճերմակ ձիու վրա նստած:
Այն, որ Նազենի Հովհաննիսյանի հարազատ քեռին Աշոտ Բլեյանն է, զարմանալի չէ, քանի որ ժամանակին իր քեռին Լևոն Տեր-Պետրոսյանին էր համարում մարգարե: Իսկ այն, որ Փնթի գեղցին կարող էր իր մենահամերգն ընդհատել ու Ազատիչի ուշացած տիկնոջը գովեստի խոսքեր շռայլել, արդեն վերջն էր: ( *http://armlur.am/233831/ Լավ եմ արել՝ ընդհատել եմ. Ալլա Լևոնյան. (տեսանյութ, ֆոտո) 22:00 | Սեպտեմբեր 20 2014* )
Մի խոսքով: Չնայած, ինչպես ասում են. « *Գյուղացուն ինչքան էլ եփես,ականջը հում է մնում* »: Խնդրում եմ « **գյուղացի** » ու

« **գեղացի** » բառերի վրա ուշադրություն դարձնեք, որովհետև դրանք տարբեր բաներ են: Հայտնիների թեման երկար է ու տարաբնույթ, սակայն կարևորը նրանց թողած հետագիծն է, երբ ռաբիզախառն երաժշտությունն ու ժամանակակից պոեզիան՝ աղբակույտով համեմված, հիշեցնում են թուրքական բայաթի ու մուղամ:

Ազգը պատմական անցեալն է, մի ուրոյն կաղապար, որի մէջ ձուլուել է եւ ձեւաւորուել դարերի կեանքը: ըմբռսպանալու կարողութիւնը մարդ անհատի ու մարդկային խմբակցութիւնների ամենամեծ առաւելութիւնն է ու առաքինութիւնը: Մարդը համեմապաբար գիտակից է, աւելի քան որեւ է ուրիշ կենդանի էակ երկրագնդի վրայ: Նա ընդունակ է, որոշ չափերով, քննադատելու ու գնահատելու կենսական երեւոյթները իր, մարդկային տեսակէտից, զանազանել ցանկալին ոչ-ցանկալիից եւ որոշ սահմաններում ուղղում մտցնելու իր անհատական ու խքբական կեանքի մէջ

Հովհաննես Քաջազնունի

# ԿԵՂՏԱՐՅՈՒՆ ՓՆԹԻՆԵՐ

*« Գիտակից ստրուկի և հանցագործի*
*մեջ չկա տարբերություն»:*
***ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ***

Որպեսզի ամբողջական լինի նկարագիրը՝ կցանկանայի ներկայացնել Շարքային փնթիններին, որոնք Հայտնի փնթիներից ետ են մեկ քայլով: Սակայն ընդհանրական առումով՝ տարբերությունը շատ չնչին է: Փնթիների ու կեղտարյունների առանձնահատկություններից մեկը հանդիսանում են ժամանակակից տեխնոլոգիաները, քանի որ, նրանց ասելով, քայլում են ժամանակին համընթաց ու պետք է նայվեն որպես ժամանակակից, անկախ նրանից, թե որտեղ են բնակվում՝ Հայաստանում, թե նրա սահմաններից դուրս: Այդ պատճառով է, որ « Ջիփերի՝ յաշիկների » շարասյունն է ուղեկցում նրանց, անկախ նրանից՝ « գործի » են գնում, թե հարսանիք: Փնթիների ձեռքերին պետք է անպայման « Այֆոն » հեռախոսներ լինեն, որովհետև նրանց ասելով. « Այֆոնը » ուրիշա, հետո էլ շատ թանկ ա », իսկ նրանց քշած մեքենան պետք է « Բենթլի » լինի, որովհետև « Բենթլին » է իսկական մեքենան: Նրանց հագածը « Գուչի » ու « Շանել » է՝ բրենդային ու էքսկլյուզիվ, իզուր չէ, որ Քոչարյանի հարսը՝ Սիրուշոն, « ՊՌԵԳՈՄԵՇ » բրենդային սրահներ ունի, իսկ Փնթի Անդրեն էլ՝ « Անդրենային », Անահիտ Սիմոնյանի ու Արմինկայի բրենդները չհաշված:

Որպեսզի ընթերցողների մոտ հարց չառաջանա, թե ինչու՞ եմ գրել երգչուհի Սիրուշոյի մասին, թե նա ի՞նչ կապ ունի « Չարիքի իշխանության » հետ: Մի քիչ շեղվելով թեմայից՝ կցանկ-

անայի բացատրություն ներկայացնել, քանի որ շատ կարևոր կլինի սերունդների համար: Ես կարծում եմ, որ առնվազն պետք է կույր լինել, որպեսզի չտեսնենք Միրուշոյի ամուսնու ու սկեսրոջ՝ Ռոբերտ Քոչարյանի իրականացրած ոճիրները հայ ժողովրդի հանդեպ: Նրանց կատարած բարբարոսությունը, եթե համեմատելու լինենք թաթարական հորդաների ավերածությունների հետ, ապա կհասկանանք, որ ոչ մի եղեռնագործ այդքան վնաս չի տվել մեր ազգին՝ որքան Քոչարյանի ընտանիքը:
( « **Ամենամեծ կույրը նա է, ով չի ուզում տեսնել»: Ջոնաթան Սվիֆթ** ) Միրուշոյի վերջին նկարահանած « Զարթոնք » տեսահոլովակը՝ կարծես թե ապտակ էր հայ ժողովրդի անցած ու ներկա պատմությանը: Միրուշոն տեսահոլովակում երգում է Թալեաթի մասին, այն էլ ազատամարտիկների ֆոնի վրա, սակայն ինչպես գիտենք՝ երգչուհու սկեսրայրը՝ Ռոբերտ Քոչարյանը, ոչնչով չի տարբերվում Թալեաթից, նույնիսկ կարելի էր ասել, որ ավելի արյունարբու է, քան Թալեաթը: Միրուշոյի ամուսինը՝ Սեդրակ Քոչարյանը, գալիս է փոխարինելու իր ոճրագործ հորը: Ի՞նչ եք կարծում, Միրուշոյի երեխաները չե՞ն գերազանցելու իրենց հորն ու պապուն: Միրուշոյի « լամուկները » սնվել են հայ ժողովրդի արյունով. Ոչ ոք չի կարող հերքել դա, այդ ամենի վկաներն այս տառապյալ ժողովուրդն է, սահմանին բահով կոված զինվորների գերեզմանները: Հրեշից ծնվածը չի կարող հրեշտակ լինել: *( http://www.hottv.am/entertainment /452881 Երեխայիս չեմ ուզում դարձնել հանրային և ճանաչված. Միրուշո 4 days ago 2016 )*
« Չարիքի իշխանության » մեջ հենց այդպիսի ՀՐԵՇԱՄԱՆՈՒԿՆԵՐԻ համար են ստեղծված բարենպաստ պայմաններ, չհաշված նրանց մայրերին, որոնք փայլերի ու շքեղության մեջ են ծննդաբերում իրենց **Հրեշիկներին**:

Շատերը դա անում են արտասահմանում, որովհետև կանխազգում են, որ տասնամյակների իրենց թալանածն ու լափածը, իրենց Հրեշիկների քթերից են դուրս գալու: Այնպես որ, այն փաստը, որ այդ հրեշավոր ընտանիքը եղել ու մնում է չարիք հայ ժողովրդի գլխին, դրա մասին ավելորդ է խոսել: ( *[http://operativ.am/?p=59960 Քոչարյանի ունեցվածքը ըստ ռուսական աղբյուրի 22 Հունվար, 2014 1:03](http://operativ.am/?p=59960)* ) Սակայն շարունակենք « **Կեղտարյունների** » թեման: Փնթիները յուրահատուկ ոճով են ներկայանում, անգամ խոսելն ու « դիզայնը »: Աղբանոցից ուղիղ դրախտում հայտնվեցին՝ բառիս բուն իմաստով: Ինչպես ժողովրդական խոսքն է ասում. « **Չտեսան պատից կախ, տեսան ճակատից կախ** »՝ Էլիտար հարսանիքները, « բիզնես կլասով » նրանց ճամփորդությունները, արտասահմանում ձեռք բերած առանձնատներն ու հյուրանոցները: Այդ թվում՝ նրանց շարժական ու անշարժ գույքը, ու այդ ամենի ֆոնին տիտղոսներ ու պատվոգրեր ստանալը երկրի հոգևոր առաջնորդների ու բռնակալի կողմից, համարվում է պատվաբեր: Սակայն, այդ ամենն ունենալուց հետո նրանց պակասում է ամենակարևոր երկու բան՝ ուղեղ և մարդկային արժեքներ, թեև ներկա պայմաններում այդ երկուսը միասին հարկավոր չէ, քանի որ նրանց փոխարեն ՀԱՄԱԿԱՐԳՆ է մտածում, կամ էլ համակարգիչը: Իզուր չէ, որ Փնթիներն ունեն նաև թանկարժեք ու լավագույն համակարգիչներ, նրանց համար համակարգիչը « պոռնո » նայելու համար է, կամ խաղեր խաղալու: Ազգային Ժողովի պատգամավորները հազիվ կարողացան սովորեցին « **պոռնո** » կայքեր մտնել: Փնթիների կանայք նույնպես օգտվում են ժամանակակից տեխնոլոգիաներից: Հայտնի է Հայաստանի « **Սերս շոփ օնլայն** » գնումների կայքից, հիմնականում, օգտվում են մեծահարուստ կանայք: ( *[http://life.panorama.am/hy/news/2013/10/29/arm-](http://life.panorama.am/hy/news/2013/10/29/arm-)*

*enian-sex-shop/25568 Թե ինչպես օգտվեցի հայկական sex-shop-ից (տեսանյութ) 18+ 29 հոկտեմբեր 2013 20:31* ) Վարսահարդարման, եղունգների խնամքին, ու մնացած « Սպասասրահների » այցելությունների ծառայությունների գները հասանելի չեն շարքային քաղաքացիներին, դեռ մնացած « շոփինգները » ու ծախսերը չհաշված: *( Սպասասրահ, Ֆիտնես, լողավազան, մարզասրահ, յոգա, պար, ELOU բուժական կոսմետոլոգիա, հակացելյուլիտային մերսում, մատնահարդարում: )* Չնայած Փնթիները ապրում են ցոփ ու շվայտ կյանքով, ինչպես հեքիաթներում՝ շլացուցիչ փայլերի ու շքեղության մեջ, սակայն իրականում՝ նրանք միջնադարի խավարում են, որովհետև ինչպես իրենք են ասում. « Ախպեր, կնիկը պիտի կույս լինի ու կարմիր խնձորն է պարտադիր ա »: Այդ ամենն ավելի հետաքրքիր է նկարագրել իր գրքերում և ֆիլմերում Վահրամ Սահակյանը:
« Կնիկը սրբությունա », բայց դե կենակցելուց նախնտրում են սիրուհուն, ոչ թե կնոջը: Ու այդ ամենի ֆոնին նորից ռաբիզների բայաթին է՝ Վարդանչիկն ու Արմենչիկը:
Մի խոսքով, այդ տեսակն այդպես էլ մնաց անհաս ու խակ՝ տհաս « Չիկերի » կարգավիճակում: Երբ նայենք « Չարիքի իշխանության » « կեղտարյուն կանանց», ապա տարբերությունը բավականին հետաքրքիր է ու զարմանալի, սակայն միևնույն է՝ նույն շաղախից են. Ամենալավ օրինակը՝ Հերմինե Նաղդալյանի Հանրապետական կուսակցության կանանց խումբն էր, որոնք մանուշակագույն վզկապներով ու անմոռուկներով գնացել էին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ « հարգելու », ավելի ճիշտ՝ լուսանկարվելու ու « սելֆի » անելու համար: ( *Հանրապետական կուսակցության թվով 3 հազար կին ՀՀ բոլոր մարզերից: http://galatv.am/hy/news/104672/ Նրանք «հիշում են» ու ծիծաղում* )
Ողջ աշխարհը մեզ կարեկցում է 1.5 միլիոն անմեղ նահատակ-

ների համար, իսկ նրանք՝ երջանիկ ու կուշտ բերանները բացած զվարճանում են, կարծես թե՝ իրենք հայ ժողովրդի հետ կապ չունեն: ( *https://www.youtube.com/watch?v=E05S2ypwxLc Հերմինե Նաղդալյանը՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում ՀՀԿ կանանց «ցնծության» մասին:* ) Ու ցավալին այն է, որ այդ կանանց մեջ էին դպրոցների ու մանկապարտեզների տնօրեններ, որոնց վստահված է սերունդ դաստիարակել: (« **Ո՛վ, որ տնտեսում է դպրոցների վրա, կկառուցի բանտեր** »: **Օտտո Բիսմարկ** ) Առաջին շարքերում էր « Ե. Չարենցի » անվան դպրոցի տնօրեն՝ կոմունիստ - հանրապետական Աղելաիդա Ղազարյանը, որն իր աշխատանքային կյանքում թալանեց ու կողոպտեց ոչ միայն դպրոցը, այլև այստեղ սովորող աշակերտների ծնողներին: Սերունդ դաստիարակելու գործն իրենց վրա են վերցրել այնպիսի մարդիկ, որոնք իրենք դաստիարակության կարիք ունեն: Պատահական չէ, որ Նաղեժդա Սարգսյանը, Գոռ Վարդանյանն ու « փնթի, կռացի շոֆեռը » սերունդ դաստիարակող են դարձել, դրա համար էլ նրանց պես տգետ աշակերտների ձեռքին հալածվում է ժողովուրդը: ( *http://168.am/2016/09/29/694390.html « Ո՞վ պետք է լավ ու վատ երգեցողությունը որոշի, եթե ոչ՝ Արթուր Գրիգորյանն ու Նաղեժդա Սարգսյանը ». Նաղեժդա Սարգսյան 23:01 | Սեպտեմբեր 29 2016 « Երգիչների քանի՜ սերունդ եմ դաստիարակել »: Նաղեժդա Սարգսյանը Նաղեժդա Սարգսյան* ) (« **Դժբախտություն է, սակայն, երբ դաստիարակիչն ինքը ևս կարիք ունի դաստիարակության** »: **Գարեգին Նժդեհ** ) Նաղեժդա Սարգսյանը սերունդ է դաստիարակել, դրա համար էլ այս վիճակում ենք՝ սերունդը ռաբիզ է ու տգետ: ( *Հիշեցնեմ, որ նա նույնպես « **Ծամիրամ** » կուսակցության անդամ է: Նաղեժդա Սարգսյան* ) Իգական ու արական « կեղտարյունները » առհասարակ քիչ են տարբերվում իրարից՝ նույն ռաբիզ մթնո-

յորտն է՝ « ԱրմենչիկաՆանայախառը » մուղամը, սակայն կուսության հարցում նրանք ավանդապաշտ չեն՝ ինչպես տղամարդիկ, ավելի նախընտրում են նոր, ժամանակակից միջոցներն ու արհեստական կուսաթաղանթները, « սիլիկոնե » շուրթերի ու կրծքերի մասին էլ ավելորդ է խոսել: Դե, հնարավորությունները թույլ են տալիս, անում են, հետաքրքիրն այն է, որ որոշ պաշտոնյանների երեխաներ այդ ամենն անում են Պետպատվերի շրջանակներում, քանի որ « Պատանի երկրապահի » անդամատոմս ունեն, բացի այդ էլ՝ միջնորդն ինքը՝ ԵԿՄ-ի հերոս « Զորավարն » է:

Մի զարմացեք, այդպիսի դեպք եղել է, երբ պաշտոնյայի աղջկա անունը չեմ նշել՝ հարգելի պատճառներով: Մանվել Գրիգորյանի օգնական՝ Արա Կետիկյանը, զանգահարել է պլաստիկ վիրաբույժ իմ բարեկամներից մեկին ու ԵԿՄ-ի « Զորավար, Արցախի հերոս » Մանվել Գրիգորյանի անունից պատվիրել, որ Պատանի Երկրապահի կրծքերի վիրահատությունը կատարեն պետպատվերի շրջանակում, այլապես « Զորավարը՝ Արցախի հերոսը », անձամբ կգա այդ հարցը կարգավորելու: Արա Կետիկյանի հեգնական տոնից կլինիկայի գլխավոր բժիշկը խուճապի մեջ էր ընկել: Վիրահատությունը կատարել էին առանց գումար վերցնելու: ( Իսկ Արցախյան պատերազմի վետերաններին ու Ապրիլյան պատերազմում վիրավորված մեր հաշմանդամ զինվորներին պետպատվերի շրջանակներում չեն բուժում: ( *http://shabat.am/am/article/86314/86314.html Ապրիլյան պատերազմի հետևանքով ոտնաթաթերն ու կրունկները կորցրած զինծառայողն ու ընտանիքը՝ ծայրահեղ ծանր պայմաններում. « Ժողովուրդ » 28 Սեպտեմբեր, 2016 09:47* )

Այդպիսի բաներ... Եթե Պատանի Երկրապահը կարող է « սիլիկոնե » կրծքեր ունենալ, իսկ Վովա Գասպարյանի Ոստիկանութ

յան « հրեշտակների » գումարտակի աշխատակից ( Մագա ) Մարգարիտա Կարապետյանը պատահական չէ, որ նախկինում աշխատել է « Քրեյզի » գիշերային ակումբում: ( *Ցանկացած հրապարակում դառնում է ուսումնասիրության առարկա. Աշոտ Ահարոնյանը՝ Մարգարիտա Կարապետյանի արարքի մասին | 13:41 28 Հուլիս 2016 http://168.am/2016/07/28/667672.html#.V5nVAjfYHQ4.* )
Կնշանակի, որ ամեն ինչ ճիշտ է, « Չարիքի իշխանության » աշխատանքային գրաֆիկը « **Կամասուտրա** » ժամացույցով է աշխատում: Պատահական չէ, որ Արցախի « հերոս Զորավար » Մանվելի դստերն է պատկանում Էջմիածնի Պատկանյան փողոցի վրա գտնվող « Passion » գիշերային ակումբը:
Հայաստանում բոլորը գիտեն, որ « Չարիքի իշխանությունում » գիշերային ակումբները հասարակած տներ են՝ բառիս բուն իմաստով: Կնշանակի « Զորավարի » աղջիկը դատավոր լինելուց բացի, նաև Կավատ է: ( *YouTube Մանվել Գրիգորյանի ընտանիքը վտան- գում է Էջմիածինը.* )
« Բոռոքսները », ժամանակակից « Գլամուրային պարագաները » ու միջոցները փնթի, կեղտարյուն կանանց առօրյայի հիմնական մասն է: Ու այս ամենը լղոզվում է « Փնթի » կայքերում, տարածվում է ու ապականում մթնոլորտը: Ծամշյանի մակարդակի տգետ « լրագրողներն » ու խմբագիրները ներկայացնում են Էքսկլյուզիվ հոդվածներ. «եսիմինչը կարճ շրջազգեստով ցուցադրել է իր երկար ոտքերը », կամ « լանջաբացվածքով հայտնին ցուցադրել է իր կրքոտ շուրթերը, ու եսիմ ինչը շատ կարճ « շորտով » ցուցադրել է իր կրծքերը »: Դե արի ու մի ասա. « Ա՜յ, անասուն չտեսներ, մի ժամանակ, նույնիսկ Խորհրդային տարիներին են կանայք այդպես հագնվել, ի՞նչ է չէիք նկատել կամ չե՞ք տեսել, խավարամիտ ձեր ուղեղների համար միշտ այդ ամենը նոր է »:

Ամենաիետաքրքիրը՝ վերջին տենդենցներն են, որից « կեղտար-յունները » ետ չեն մնում: Սոց-ցանցերում նորից իրենց չտես-ությունն ու տգիտությունն են ցուցադրում: « Ազնվազարմ » տե-սակը ՝ իրենք իրենց լափածը նկարում են « այֆոններով » ու գցում համացանց: Առիասարակ, « ինտեռնետի » տիրույթում նո-րից այդ աղբն է, մանավանդ « Ինստագրամում », որն արդեն իրենց պահանջներին չի համապատասխանում՝ փնտրտուքի մեջ են: Այստեղ հարկավոր է նշել այն փաստը, որ համատարած թշվառության ու ոճիրների վրա նրանք փայլում են, որովհետև նրանք սնվում են հենց այդ անապահովների ու թշվառների գրպանը մտնելով, նրանց վերջին պատառը գողանալով: Երբ ժողովուրդը սովահար է, ցրտի, աղքատության ու հիվանդութ-յան մեջ տառապում է, իսկ անապահով ընտանիքների միռու-ճար զավակներն Արցախում սահմանի վրա բահով կենաց ու մահու կռիվ են տալիս, երբ այդ զինվորների մայրերն ու հայրերը սովահար, իրենց բերանից կտրում են վերջին կոպե-կը, որպեսզի զինվորի համար ներքնաշորեր ուղարկեն կամ էլ հիգենայի պարագաններ և հանդերձանք: Ու Փնթիները այդ լափածի լուսանկարները հրապարակում են համացանցում՝ ծաղ-րելով այդ մարդկանց: Հենց այդ Փնթիներն են, որ ուշադրու-թյուն չեն դարձնում շրջապատի մարդկանց, ապրում են ջայլ-ամի պես: Այսպես, « **կեղտարյուն » խավը** նվաստացնում ու հուսալքում է իրեն կերակրող զանգվածին: *( http://shabat.am/am /article /96498/96 498.html Վլադիմիր Գասպարյանի փեսան ԱՄՆ-ում երկրորդ առանձ- նատունն է գնել. «Ժամանակ» 05 Նոյեմբեր, 2016 08:35 )* Ճիշտն ասած, զարմանալին այն է, որ անգամ հուսա-լքված ու հյուծված անասունը ջանքեր է գործադրում՝ մի ելք գտնելու դժվար իրավիճակից դուրս գալու համար, սակայն մեր ժողովուրդը ոչինչ չի ձեռնարկում:

Այս պարագայում թուրքերին մեղադրել հայոց ցեղասպանության մեջ՝ կարծում եմ անբարոյական է, երբ նույն բանը անում է մեր **Ոխերիմ Թշնամին:** ( *22-ամյա Լեւոն Սահակյանը, որին դանակահարել էր դպրոցի տնօրենը, մահացել է 21/10/2016 22:10 http://www.armtimes.com /hy/article/95661* )

Իզուր չէ, Գարեգին Նժդեհը ասել. « **ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄԻՆ ՉԻՆԱԿԻՑ Է ՈՒ ԵՂԲԱՅՐ ԱՐՏԱՔԻՆ ԹՇՆԱՄՈՒՆ** »:

առաքինի։ Իզուր չէ, որ « Չարիքի իշխանությունը » Ծամշյանի մակարդակի փնթի անգրագետներին դարձնում է լրատվական ինֆորմացիոն ծառայություն, հեռուստատեսային « Երկրի թիվ մեկ շոուն » դարձնելով « Կիսաբաց լուսամուտները »։ Փնթի կեղ-տարյունների « կիսաբաց պատուհանները » « Չարիքի իշխանութ-յան » իսկական դեմքն է, համատարած տգիտությունն ու կեղտ-արյուն խավ։ Ուղղակի ողորմելի վիճակ է, դասակարգային փըն-թիներին հավաքել են մեկտեղ ու ծաղրում են իրենց իսկ վիճ-ակը։ Տգետ հոգեբաններ ու հասարակական գործիչներ, անոր-ակ սերյալների անտաղանդ ու անգրագետ դերասաններ ու ռեժիսորներ, որոնք ոչնչով չեն տարբերվում այդ հաղորդաշար-ին հրավիրված անատամ տգետներից, նրանք նույն աղբանոց-ից դուս եկած՝ նույն կեղտարյուն խավն են, որոնց կարելի է կոչել **Մեծապատիվ մուրացկաններ**։ Իրենց փիլիսոփայական ողորմությամբ կարեկից ու խորհրդատու ձևացնելով, սակայն երևի չգիտեն, որ ժողովրդի այս վիճակի համար մեղավոր են նաև իրենք, որովհետև ինչպես կասեր մեծերից մեկը, դասակար-գային չարիքն է, որ ժողովրդին դարձրել է անատամ, վայրենի ու տգետ, որ « ՀԱՏԱԿՈՒՄ » Մաքսիմ Գորկու համանուն պիեսի հայտնված այս դասակարգը տգիտությունից է, որ իրար հոշո-տում են, տգիտությունից է, որ տառապում են։ Այդ տխմար հոգեբաններն իրենց ձևացնելով որպես փորձագետ՝ խորհուրդ են տալիս, սակայն մոռանում են, որ « **Հատակում** » հայտնվ-ածին պետք չի հոգեբանը, այլ այն պետք է Չարիքին կողմն-ակից դարձած մեծապատիվ մուրացկաններին։ Ինչու՞ են անպ-աճույճ ու ամպագոռգոռ բառերով ներկայացնում իրենց, իբր՝ իրենք այդ հասարակության մաս չեն, որովհետև իրենք նույն աղբամանի մեջ են, որովհետև ամբողջ պետությունն է քոսոտ աղբանոց։ Առհասարակ, հեռուստատեսային այդ աղբը դարձնե-

լով «Երկրի թիվ մեկ շոուն», ինքնըստինքյան համոզում է, որ իսկապես քոսոտների ապականած երկիրը հենց Չարին ծառա-յելն է, այլ ոչ թե քաղաքակիրթ հասարակություն ձևավորելը, կամ գրագետ սերունդ կրթելը: Անորակ հեռուստասերիալները նորից Չարիքին ծառայություն մատուցելու վրա են: Գոռ Վար-դանյան երևույթն իր հեռուստասերյալներով՝ ապականում է սերունդների միտքն ու հոգին: Նրա ֆիլմերում՝ բռնաբարված թույլերի ու ուժեղների պայքարում, հաղթում են միայն տգետն ու փնթին, հաղթում է մորթողը՝ ոչ թե մորթվողը: Դրա համ-ար հայկական իրականության մեջ 10-ամյա երեխան դանակա-հարել էր իր հասակակից դասընկերոջը, որովհետև նրա ասել-ով. «դասընկերոջ մաման Բոզ է»:
Պատկերացնո՞ւմ եք, արդեն տասը տարեկան երեխան «Բոզի» ու Գոռի տարբերությունը գիտի: Ի՞նչ եք կարծում՝ այդ «կիս-աբաց պատուհանները» տխմար հոգեբանները չե՞ն տեսնում... Լավ էլ տեսնում են, երբ Մանվելի, Շմայսի ու Լիսկայի պես տգետներին համարում են հերոս ու խոնարհվում են նրանց առաջ: Եթե Գոռ Վարդանյանի, Նաղեժդա Սարգսյանի, Մանվե-լների պես փնթիները սերունդ դաստիարակող լինեն, ապա երեխաները կա՛մ **ոճրագործ** կդառնան, կա՛մ էլ մարդասպան: *( [http://hartak.am/arm/n-54491](http://hartak.am/arm/n-54491) Սկանդալային «Հրեշների գայլը» ՛ֆիլ-մից անմիջապես հետո միակ հարցազրույցում Գոռ Վարդանյանը բացում է փակագծերը 2016-02-16 22:19:00 )* Շամշյանի պես տըգ-ետին ընդունում են որպես լրագրող ու կարեկից են լինում, որովհետև որբանոցի տղա է, սակայն որբանոցում կեղտարյուն-ներ նույնպես լինում են, դրանք խավարամոլների պես են՝ ամ-ենուրեք: Գագիկ Շամշյանը՝ ներկայացնում է Մանվելին, իր ան-գրագետ ուղեղի ողջ բառապաշարով՝ փորձելով կերտել «ամեն-այն հայոց զորավարի» կերպարը: Վարդան Ղևրիկյանն էլ իր

գրագետ տգիտությամբ է ներկայացնում գեներալ դարձած « Կռազի շոֆեռին »: Իսկ Արշակ Զաքարյանը՝ իր հերթին, դարձել է Մեյրան Օհանյանի ու Պաշտպանության նախարարության չհայտարարված խոսնակը, մի խոսքով՝ Օհանյանի Ծամշյանն է: Հետաքրքիր մեկ օրինակ, որպես հոգեբան, քրեագետ կցանկանայի ուշադրություն հրավիրել մեկ փաստի վրա, որը կարծում եմ օգտակար կլինի իմանալ, այսուհետև ինքներդ փորձեք նըկատել ու մեկնաբանել յուրովի: Փնթիները, առհասարակ, սիրում են ( **գրական** ) բարդ բառերից կազմված նախադասություններ ասել, չնայած այն դժվար է նրանց ուղեղի ու լեզվի համար, այնուամենայնիվ, խելոք երևալու համար՝ դժվարությամբ ու նույնիսկ սխալ արտասանելով դրանք, այդ լեզվական սխալից ստացվում է մի նոր բառ՝ անիմաստ ու ծիծաղելի: Նույն բանը կատարվում է ժամանակակից պոեզիայում ու երգերի բառերի մեջ: Հրանտ Մաթևոսյանի ու Վազգեն Սարգսյանի արտահայտած անիմաստ, բարդ բառերը դարձան ավանդույթ ու շարունակվում են մինչև հիմա: Փնթիները **բարդ բառեր** դժվարությամբ են սովորում՝ ուր մնաց արտասանելը, պատահական չէ, որ Էդուարդ Ծարմազանովը, Արմեն Աշոտյանը, Գևորգ Կոստանյանն ու Գալուստ Սահակյանը, ու մնացած փնթիներն իմաստուն երևալու համար փորձում փիլիսոփայել, անգամ Մանվել Գրիգորյանը, Մեյրան Սարոյանը, « Ծմայսը »՝ Առաքել Մովսիսյանն ու Թոխմախի Միհրը, իսկ այդ ավանդությանն են հետևում Սերժ Սարգսյանը ու Ռոբերտ Քոչարյանը նույնպես: Արդյունքում՝ սպանում ու մորթում են ոչ միայն **լեզուն,** այլև **խոսքը**:

*( Առաքել Մովսիսյան. Մեր բառապաշարի 99 %-ը ռուսական է: 11 дек. 2013 г https://www.youtube.com/watch?v=Y5Pvhxi98jI )*

Եթե « Չարիքի իշխանությունը » Վազգեն Սարգսյանին ներկայացնում է որպես Սպարապետ ու ուսուցիչ, սակայն ինչո՞ւ պա-

տանիներին չեն ասում, որ նա եղել է ընդամենը « **Ֆիզկուլտի** » դասատու, ինչպես գիտենք, Ֆիզկուլտուրնիկները գիր ու գրականությունից շատ հեռու են: Իշխանություններն անգամ թաքցնում են, որ նա բանակում չի ծառայել՝ « **շիզոՖրենիկ** » լինելու համար: Սակայն, ինչպես ասացի՝ Փնթիները խելացի երևալու համար փորձում են փիլիսոփայել, Վազգենի տեսագրություններից դա պարզ երևում է, այդ թեմայով ես գրել եմ բազմիցս: Սակայն, չակերտավոր գիտունիկները շրջապատից հեռացնում են խելացի ու գրագետ մարդկանց, որովհետև իրենք ապուշների մեջ պետք է փայլեն իրենց տեսակով:

« Չարիքի իշխանությունում » լեզուն ու խոսքը մորթելու գործը ստանձնել են նաև Ծամշյանն ու մնացած փնթի կայքերը, որոնք ամեն ինչ ներկայացնում են: Եթե « լանջաբացվածք » բառը համարում են անբարոյական, ապա կստացվի, որ մեր գրականության մեծերը՝ բոլորն անբարոյական են՝ Նար-Դոսից սկսած վերջացրած Թումանյանով:

« Չարիքի իշխանության » լրատվական կայքերն ու հեռուստաընկերությունները լեզուն ու խոսքը մորթելուց բացի, սերունդներին տգիտությամբ վարակելն է: *( Անգրագետ բառեր եւ արտահայտություններ, որոնք մտել են լեզվի մեջ՝ հիմնականում ավանակ լրագրողների կողմից 1. «Կյանքից հեռացել է այսինչը» - Գուցե ռուսերենից անմտորեն թարգմանված հիմարություն, որը չի համապատասխանում եղելությանը, քանի որ հեռացած մարդը կարող է եւ վերադառնալ, բայց տվյալ դեպքում՝ քիչ հավանական է: Եթե մարդը « կյանքից հեռացել է »՝ էդ դեպքում նորածնի մասին կարելի է գործածել « կյանքին մոտեցել է » արտահայտությունը:*

*2. « Ծեծի ենթարկել » - չկա նման արտահայտություն, կա ծեծել: Կա « պատժամիջոցների ենթարկել », ասենք: Բայց եթե կա « ծեծի են- թարկել », ուրեմն եկեք սպանելուն ասենք « մահվան ենթար-*

*կել », բռնաբարելուն՝ « բռնաբարման ենթարկել », սիրելուն՝ « սիրո ենթարկել », « կենակցման ենթարկել » եւ այլն:*
*3. « Միանշանակ « եւ « Բնականաբար » - շատ տգեղ, ոչ հայերեն բառեր, թարգմանված նորագույն ռուսերենից: 4. Արտաբերել նախադասություն եւ հետո ինքն իրեն համոզելու համար ասել «Հա՞»: Ի՞նչ հա, այ ոչխար, քեզ ով է ասել «չէ», որ դու էլ ասում ես «հա»: Սա արդեն գերագույն հիմարության նշան է եւ այն վերցված է ադրբեջանցիների ռուսերեն խոսելու եղանակից՝ "Дааа?" Եւ լրագրողական ամենամեծ էշության դրսեւորումը՝ շեշտը դնել նախադասության բոլոր բառերի վրա, առավելապես այնտեղ, որտեղ ընդհանրապես պետք չի: Ասենք՝ Հայաստանի՛ հանրապետության եւիմինչը », այծերը շեշտ են դնում « Հայաստանի » վրա: Ինչո՞ւ: Եթե, ասենք կողքին լիներ Վրաստանի՝ կարելի էր, տարբերությունը նշելու համար: Ծայրաստիճան անգրագիտության, գրքեր չկարդալու եւ չմո ընտանիքներից եկած սովորությունների արդյունք: 28.10.2016 Վահրամ Սահակյան )*

Կեղտոտ մամուլը օգտագործում են նաև Եվրոպական երկրների աչքերին « թոզ » փչելով, քանի որ նրանք ֆինանսավորում են բարեփոխումների մի շարք ծրագրեր, որոնք « Չարիքի իշխանությունը » պարտավորվել է կատարել, դրամական հոսքերը, եվրոպացի քաղաքական գործիչներին կաշառելն ու փողեր լվանալը չհաշված: Այնպես որ, Չարիքին ծառայող մամուլն իրեն արդարացնում է, իզուր չէ, որ լրատվական կայքերի պատասխանատուն՝ փեսա Միշիկն է, Գերագույն գլխավոր չարիքի աղջկա ամուսինը: Դե նա Վատիկանում ապահով նստած, իր սև գործն է անում:

Կարևոր է նշել ոչ միայն մամուլն ու լրատվությունը, այլև **Վիքիպեդիան**, որը հանդիսանում է « ինտերնետային » տեղեկատվության միջազգային հանրագիտարանը:

Այն, որ Փնթիները նվաճել են այս տիրույթը նույնպես, դա փաստ է։ Եթե նայելու լինենք Վիքիպեդիայի շտեմարանում, ապա դժվար կլինիգտնել հայ գրականության կամ արվեստի որևէ գործիչի մասին տեղեկություն, որը բավարարի հայագիտությամբ զբաղվող օտարերկրացուն։ Սակայն, պակաս փաստեր չկան Փնթիների մասին, որոնք ներկայացված են հանրագիտարանում որպես տաղանդավոր գիտնականներ ու լուսավոր հայ մտքի գոհարներ։ Օրինակ՝ Սեյրան Օհանյանի տիկնոջ՝ Ռուզաննա Խաչատրյանի էջում գրված է նրա ազնվական ծագման մասին, չհաշված նրա գիտական ու ստեղծագործական վերելքների մասին։

Նույնը Հրանուշ Հակոբյանի, Գագիկ Հարությունյանի, Հեղինե Նաղդալյանի ու մնացած աղբակույտի մասին։ Անգամ Սերժ Ազատիչի կենսագրականից հանված է նրա « Չեկիստ » լինելու փաստագրությունը։ Վիքիպեդիայում կեղծված են բոլորի կենսագրականները։

Իսկ, որ ամեն Փնթի՝ ներկայացված է համաշխարհային « ինտերնետային » հանրագիտարանում, դարձել է կարծես առանձնահատկություն։ Պատկերացնում եք, ի՞նչ կարծիք պետք է կազմեն օտարերկրացիները՝ կարդալով այդ Փնթիների մասին, հաստատ լավը չեն կարող մտածել, կմտածեն, որ տասը միլիոն հայերի մեջ չգտնվեց մեկը՝ անգամ սփյուռքում, որ հանձն առներ պատասխանատվություն վերցնելու՝ ճշմարիտը ներկայացնելու սերունդներին և օտարերկրացիներին։ Ամոթ չէ, որ մեր ազգի մեջ տականքները շատ են, ամոթ է, որ դրանց մասին չենք բարձրաձայնում ու գրում։ Վիքիպեդիայում՝ անգամ տգետ Տարոն Մարգարյանը ներկայացված է ասպետական ու հերոսական կերպարով, սակայն վերջերս՝ « **Ազգադավը** » գրքից հետո, Վիքիպեդիայի Վազգեն Սարգսյանի կենսագրականում ներկայացվեց

նրա ոճիրների մի մասը, այս առիթով կցանկանայի իմ շնորհակալական խոսքն ասել: Իսկ, որ սփյուռքում ջուր ծեծողների պակաս չկա, դա փաստ է, ու շատ հայեր հայրենիքից հեռացել են այդ ռիմակների պատճառով, սակայն ոչ մեկը ցանկություն ու համարձակություն չգտավ՝ գոնե Վիքիպեդիայում ներկայացնի ոճրագործների մասին: Արցախյան պատերազմի հերոսներից ոչ մեկ չկա Վիքիպեդիայում, Հայ ժողովրդի լուսավոր դեմքերից չկան այնտեղ, պատմաբաններն ու լրագրողները փոխարեն զբաղվեն այդ հարցով, զբաղված են « **բյարթու** » ռաբիզների հագ ու կապը ներկայացնելով: Ինչպես տեսնում ենք, « Չարիքի իշխանությունը » լվերի պես կպել է հայ ժողովրդին ու ծծում է նրա վերջին մտավոր միտքը: Ամբողջ ազգին դարձրեցին Ծամշյանի պես անիմաստ, որ անգամ լեզուն ու բառերն աղավաղեցին, սփյուռքում հանդիպած հայերին դժվարությամբ ենք հասկանում, որովհետև հայերեն խոսքը բացակայում է, փոխարենը՝ « լեքսիկոն » ու ժարգոն: Քաղաքակրթությունը ոչնչացրեցին հենց մամուլի ու հեռուստատեսության միջոցով, սուտը մատուցվեց ճիշտ, ու ճիշտն էլ՝ սուտ: Իզուր չէր, որ Բաքու փախած Վահան Մարտիրոսյանը՝ Բաքվում իր մամուլի ասուլիսի ժամանակ հայտնել էր, որ. « Միակ լրատվական ծառայություններն ադրբեջանական մամուլն է, որը կարող է ճշմարիտ ներկայացնել աշխարհին, որ Հայաստանում Չարի իշխանությունն է, որ Հայաստանում ժողովուրդը տառապում է իշխանության օթյակներում բազմած ահաբեկիչներից »: **Բռնակալ** ռեժիմն է, որը տարբեր միջոցներով ոչնչացնում է մարդկանց ենթագիտակցությունը՝ նրանց դարձնելով գիշատիչ:

Այն, որ դա Ադրբեջանի շահերին է համապատասխանում, դա փաստ է, չնայած ադրբեջանցիները նույնպես դարձել են իրենց

Բռնակալի զոհը, ու բացառված չէ՝ երկու Բռնակալներ հաճախակի հանդիպում են ու իրար հետ զվարճանում։
Համերաշխության եզրեր արդեն վաղուց գտել են, քանի որ իշխանությունը պահելու համար նրանք պատրաստ են սեփական ժողովրդին խեղդել արյան մեջ։ Օրուելին իզուր չէր ասում, որ **« Բռնակալները պատերազմում են սեփական ժողովրդի դեմ, որպեսզի պահեն իրենց իշխանությունը»։**
Այնպես որ, հավերժական իշխելու մոլուցքն ավելին արժե՝ քան ժողովրդի ճակատագիրը, սակայն ադրբեջանցիները բռնակալից չեն կարող ազատվել, ուր մնաց մենք։ Ադրբեջանում իզուր չէր, որ սահմանադրական նոր փոփոխությունների մեջ կարևոր կետը հանդիսանում է երկրի նախագահի հարցը։
*( [http://www.epress.am/2016/09/24/ադրբեջանի-նոր-սահմանադրությունը-կամ.html](http://www.epress.am/2016/09/24/ադրբեջանի-նոր-սահմանադրությունը-կամ.html) 09.24.2016 14:37 epress.am Ադրբեջանի նոր սահմանադրությունը կամրապնդի Ալիևի ընտանիքի իշխանությունը 09.24.2016 14:37 epress.am )*
Նոր Սահմանադրությամբ երկրի Գլխավոր հրամանատարը՝ նախագահը, կմնա այնքան ժամանակ, քանի պատերազմի վտանգը կա։ Այսինքն՝ Հայաստանի Լեռնային Ղարաբաղի ու Ադրբեջանի պատերազմը շարունակվելու է այնքան ժամանակ, քանի դեռ Ալիևն իշխանության ղեկին է։ Սա հնարավորություն է տալիս երկու Բռնակալներին պայմանավորվել, որպեսզի պատերազմը երբեք չավարտվի, հարկ եղած դեպքում կարող են վերսկսել այն։ Իլհամ Ալիևին ձեռնտու է իր իշխանությունը պահել, ինչպես և Սերժին, ու նրանց պայմանավորվածությունն ակնհայտ է։ Իսկ այդ փոխհրաձգությունները սահմանին ու զոհերը գալիս են համոզելու, որ պատերազմը վերսկսելու վտանգը միշտ կա.
այս դեպքում՝ երկու կողմերը տալիս են ինչ որ քանակի զոհեր ու վիրավորներ, որպեսզի լարված վիճակը պահեն, այդպիս-

ով՝ հնարավորություն տալով երկարաձգել իրենց իշխանությունը: Ինչ վերաբերում է իշխանափոխության վտանգին, դա նույնպես պայմանավորված է: Երկու պետություններում էլ շահարկվում է պատերազմի վտանգը, հանկարծ ինչ որ հարց է առաջանում իշխանափոխության կամ հեղափոխության, ապա իշխանություններն առաջ են քաշում պատերազմը վերսկսելու վտանգը: Այսպես, պատերազմը օգտագործելով որպես զսպաշապիկ՝ Բռնակալները կարող են օրենքի ողջ խստությամբ պատժել իշխանափոխության մասին բարձրաձայնողին, իզուր չէ, որ հենց այդ մամուլն ու լրատվությունները ներգրավված են այդ գործում, չմոռանանք նաև « հետույքամտոնուկ » մտավորականներ կոչվածներին:

Մի խոսքով, Ադրբեջանում նույն իրավիճակն է, ինչ մեզ մոտ, նույն պայմանավորվածությունը ձեռնատու է երկու բռնակալներին: Այն, որ Քոչարյանի ու Սերժ Սարգսյանի եղբայրները հաճախակի են Սաուդյան Արաբիայում հանդիպում Ալիևի ոչ « օֆիցիալ » բանկետներին, դա փաստ է, իրենց ջերմ հարաբերությունններն այդ պայմանավորվածության երաշխիքն է:

Սակայն վերադառնանք մեր վիճակին: « **Ծոզ** » փչելու երևույթը կարևոր է, քանի որ հենց այդ կայքերը սփյուռքում ու արտերկրներում ներկայացնում են, որ Հայաստանում ամեն ինչ լավ է ու գեղեցիկ, որ առողջապահությունն ու կրթությունն անվճար է ու բարձր մակարդակով, այսպես ասած՝ « **Եվրոստանդարտներով** »: Որ մեզ մոտ արդարադատությունն ու խոսքի ազատությունը նորից բարձր մակարդակի վրա են, մեր հասարակական կառույցներն ու քաղաքական կուսակցությունները գործում են ըստ միջազգային չափանիշների, որ մեր նախագահն ամենամեծ հումանիստն է ու գիտնականը, իսկ նրա փնթի գաճաճ կինը՝ ամենամանկասերն է, ու առաքինի կինը ողջ մոլ-

րակում, նույնիսկ գալակտիկայի մասշտաբներով:
( *http://www.azatutyun.am/a/27453254.html Արփինե Հովհաննիսյան. Արդարադատություն Հայաստանում կա 28 դեկտեմբերի 2015: Հայաստանում քաղաքական բանտարկյալներ չկան. Արփինե Հովհաննիսյան 13:31 , 29.01.16 http://www.tert.am/am/news/2016/01/29/arpinehovhannisian/1915120* )
Մի խոսքով, լրատվական աղբը « Չարիքի իշխանության » ամենահզոր զենքն է, որն օգտագործվում է միջազգային հանրությանը մոլորեցնելու համար: Դրա համար դրսում կարծում են, որ Սերժ Ազատիչը շատ լավ ու ազնիվ մարդ է, բարի է ու առաքինի: Այստեղ պետք է նորից նշեմ, անցյալի նրա կենսագրությունը, որտեղ ամեն ինչ փոխված է նույն ոճով ու երանգներով, որտեղ նրա կենսագրության Նարիմանովյան էջն առհասարակ չկա, նրա հանցանքների ու ոճիրների մասին ջնջել են, ջնջված են նաև զոհերի անունները:
« Չարիքի իշխանության » բարի դեմքն ու առաքինի կերպարը երևում են մեր հասարակական միությունների ու բազմակուսակցական խայտաբղետության ֆոնին: Չնայած, բազմագույն ու բազմազան կուսակցություններն ուղղորդվում են գորշ կուսակցության կողմից: Այն, որ դրանք « **մարիոնետ** » կուսակցություններ են, դա փաստ է, այսինքն՝ արբանյակներ, որոնք պտտվում են Հանրապետական կուսակցության առանցքում ու կատարում են նրա պատվերները: Արևմուտքին անհասկանալի է « մարիոնետ » կուսակցությունների գոյությունը, նրանք չեն կարող պատկերացնել, թե ինչպես կարող են մի շարք քաղաքական կուսակցություններ ենթարկվել մեկ կուսակցությանը: Քանի որ քաղաքակիրթ հասարակության մեջ դա բացառվում է, սակայն նրանք չեն պատկերացնում, որ ֆեոդալիզմի պայմաններում այդ չափանիշները գործում են անխափան:

Իսկ շատերի համար անհասկանալի են, թե ինչու էին հարկավոր Սահմանադրական փոփոխությունները « Չարիքի իշխանությունում »: Ինչպես կարելի ասել՝ աշխարհը փոխվում է, չափանիշները նույնպես: Այս տարբերակում ես գրել եմ Նեպոտիզմի մասին, որը կարծում եմ ավելի հասկանալի կլինի՝ կարդալով այդ ակնարկը: Սահմանադրական փոփոխությունները « Չարիքի Իշխանությունում » իրականացվեց միայն նրա համար, որպեսզի երկարաձգվի իրենց իշխանությունը, առանց ավելորդ բարդությունների: ( *http://mamul.am/am/news/93776 Սերժ Սարգսյանը ,, Սասնա ծռերի,, իր վարչապետի պաշտոնում առաջադրվելու հնարավորության մասին; Հոկտեմբերի 27 ին 2016 Al Jazeera* )
Եթե օրինակ՝ Ալինը կարող է համարվել **Բռնակալ միահեծան** կառավարող, այս դեպքում՝ Սերժիկ Ազատիչն ապահովագրված է, որովհետև նրան չեն կարող մեղադրել, որ նախագահը միահեծան կառավարում է ու, որ նա բռնակալ է: Այստեղ նա կարող է ամեն ինչ բարդել իր կուսակցության վրա, պարզաբանելով, որ իր ղեկավարած մեծամասնական կուսակցությունն իրեն տվել է իշխանավարելու ևս մի հնարավորություն:
Իսկ կոալիցիոն կառավարություն ասածով՝ նրանք « թոզ » են փչում արևմուտքի աչքերին, թե երկիրը ժողովրդավարական է, ու կոալիցիոն կառավարությունը ժողովրդի ծոցից է դուրս եկել, ոչ թե Ազատիչի « հետույքից »:
Իսկ Ազգային ժողովի մեծամասնական իշխանավարելու տարբերակը՝ հնարավորություն կտա վերարտադրել իրենց տեսակը, Նեպոտիզմի տարբերակով՝ փոխանցելով պետական իշխանությունն իրենց ժառանգներին: Արբանյակային կուսակցությունները, որոնք նույն գործելաոճով են գործում, անկախ իրենց գույնից ու կուսակցական ծրագրից՝ հիմնված են քավոր, խնամիական ու բարեկամական կապերի վրա. **Խաչասերվելով** բոլոր կուս-

ակցությունները իրար՝ դառնում են մեկ ընդհանրական: Ինչպես ասում էր Արմեն Ջավենի Սարգսյանը. «*Ընտանեկան, քավոր-խնամիական ընկերական կապերը, պետք է վեր դասել երկրի շահերից, պետության շահերից*»: (*Արմեն Ջավենի Սարգսյան 2015 © https://www.youtube.com/watch?v=Mt767GLAHak ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՊՈՂՈՎ ՊՈՉՈՎ ՉԻ ԼԻՆՈՒՄ* )

«Չարիքի իշխանությունում» խրախուսվում է կուսակցություններ հիմնելը, այսինքն՝ **ԿՈՒՍԱԿՑԱԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ** ու դրանց ծառայելը, այդպիսի բազմակուսակցական երկրում գերիշխող դերը տված է Բռնակալին, քանի որ հենց նրա պատվիրած երաժշտության տակ են պար գալիս կուսակցությունները:

Իզուր չէր, որ Կուսակցության ղեկավարները նորից հիմնում են նոր կուսակցություններ՝ խայտաբղետ ու անիմաստ անուններով: Օրինակ՝ Վարդան Օսկանյանի հիմնած «Համախմբում» Կուսակցությունը, ՕԵԿ-ի Արթուրիկ Բաղդասարյանի նախաձեռնած «Հայկական վերածնունդ» կուսակցությունը, Վահե Հովհաննիսյանի, Վիկտոր Դալլաքյանի «Շրջադարձ», Տիգրան Ուրիխանյանի «Այանս», Նիկոլ Փաշինյանի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունները, Լյուդմիլա Սարգսյանի ու ԱԺ պատգամավոր Վահան Բաբայանի նոր «Ռեֆորմիստների» կուսակցությունները, որոնք «Ծամիրամ» կուսակցության չափանիշներով են ներկայանում: Ինչպես ասում են՝ **ամեն մի փնթի՝ մեկ կուսակցություն:** Չհաշված «Ռուսաստանի հայերի միության» նախագահ՝ Արա Աբրահամյանը, որն իր նոր կուսակցությունն է հիմնում, չնայած, որ նա Հայաստանի քաղաքացի չէ: Չհաշված, խայտաբղետ նոր կուսակցությունները ոչնչով չեն տարբերվում իրարից, սակայն մոլորեցնում են երիտասարդներին, որոնք չեն կողմնորոշվում՝ թե ինչի համար են այդ կուսակցությունները:

Իշխանությունները բացի խրախուսելուց Կուսակցականաշինութ-

յունը, նաև հովանավորում են ու վճարում՝ նրանց ղեկավարների ճամփորդությունները Եվրոպական ինչ-որ համագումարների ու դասախոսությունների, ներկայացնելով, որ քաղաքական դաշտը Հայաստանում առողջ վիճակում է, հարկ եղած դեպքում էլ՝ այդ կուսակցությունը դառնում է ընդդիմություն կամ էլ իշխանամետ, այնպես որ դա ժամանակից է կախված: **( « Իշխանությունը Կուսակցությանը պետք է ոչ թե իր, այլ մեծամասնության բարեկեցության համար: Իշխանություն պետք է, որովհետև մարդկանց մեծամասնությունը թուլամորթ, երկչոտ արարածներ են, որոնք չեն կարող դիմանալ ազատությանը, չեն կարող նայել ճշմարտության աչքերին. նրանց պետք է կառավարեն և կանոնավոր ստեն նրանք, ովքեր իրենցից ուժեղ են»: Ջորջ Օրուել )**

Նորից եմ կրկնում, որ այս ամենի առկայությամբ Արևմուտքը չի կարող Ազատիչին մեղադրել Միահեծան կառավարման մեջ, որովհետև կուսակցությունը, որն ընտրվել է ժողովրդի կողմից ու մեծամասնական իրավունքով՝ հնարավորություններ ունի իշխանությունը տալ իրենց Կուսակցության Լիդերին, այս տարբերակում՝ դա կարող է լինել ոչ միայն Սերժը, այլև նաև նրա փեսա Միշիկը, Միքայել Մինասյանը: ( Միշիկ )

Բոլորը գիտեն, որ Բռնակալն օգտագործում է իր բոլոր լծակները, Արևմուտքի աչքին երևալ ինչպես դեմոկրատ նախագահ, սակայն զարմանալին այն է, որ սփյուռքում ոչ մի հասարակական գործիչ ու կառույց չփորձեցին Ազատիչին ներկայացնել որպես **Բռնակալ:**

Իսկ, թե դա ինչպես է արվում, կարծում եմ, պետք է այդքանի համար գլուխ, որպեսզի հասկանա՝ թե ինչպես են անում:

# ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
# ՈՒ
# ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐ ( ՄՈՆՈՊՈԼՅԱ )

*« Եւ եթէ մարդկութիւնը անտարբեր ականատես է մնում կատարուող ոճիրին կամ փորձ չի անում պատասխանատուութեան կանչելու ազգասպանին՝ մարդկութիւնը ինքը արդէն ոճրագործ է ու մեծ կարիք ունի իմքննաքուժման »:*

*Հովհաննես Քաջազնունի*

Չարիքի Իշխանության հենասյուներից մեկը առողջապահությունն է ու մենաշնորհները, քանզի այդ երկուսը սերտ կապված են իրար հետ: ( *Առողջապահությունը ու Հիվանդության չարիքի երկրում... Ըստ Նար-Դոսի հոգեբանական վերլուծության գրքում ճիշտ է ներկայացնում իրավիճակը Չարիքի երկրում « Մարդիկ կործանվում են ոչ թե հենց այնպես, զանազան հիվանդություններից ու արկածներից, այլ ինչ-որ ուրիշ, ինչպես Զոհրապն է ասում « Անանուն հիվանդությունից » ( Գրիգոր Զոհրապ ) անարդար իրականությունից, որը մեծ տառապանք է բերում մարդկանց: Այդ հիվանդությունը որի ակունքը սոցիալական ու բարոյական չարիքն է: Դա հասարակության պայմանադրական կեղծիքն է, որից սկիզբ են առնում քաղքենի միջավայրի անամոթ գործարքները, բարոյական արատները ու խոցերը: Այս ծանր մթնոլորտում զոհ են գնում զգացող, խորհող, ազնիվ անհատները: ու ոչ թե հենց այնպես »: )*

Նկատի ունենանք, որ, առհասարակ Չարիքի երկրներում առողջապահություն կոչվածը արդեն իսկ մահաբեր երևույթ է: Օրինակ Աֆրիկյան երկրներում, որտեղ իշխանավարում են բռն-

նակալները, տարբեր ու տարատեսակ հիվանդություններ են ծնվում: Առողջապահության նախարարը նշանակվում է չորս տարի ժամկետով, նա պայմանագիր է կնքում դեղագործական մի ընկերության հետ, որը մենաշնորհային կարգով երկիր է ներմուծում դեղորայք և պատվաստանյութեր: Քանի որ գործարքը կատարվում է կաշառքով և եկամտաբեր է առաջին հերթին նախարարի համար, ուստի լաբորատոր փորձաքննություն չի անցկացվում, նույնիսկ համապատասխան փորձագիտական լաբորատորիաների բացակայությունը հնարավորություն է տալիս Մոնոպոլիային, այսինքն` մենաշնորհի տիրակալին, իր կողմից ներմուծված դեղերը ու պատվաստանյութերը պարտադրել ժողովրդին, արդյունքում շահում են իշխանության ղեկին բազմածները և նույն մենաշնորհի տիրակալը: Էժան դեղագործական ընկերությունների անորակ դեղորայքը վաճառում են ժողովրդին, հաշվի չառնելով, որ վարակիչ հիվանդություններն առաջանում են նաև անորակ, ժամկետանց, քիմիական ու վտանգավոր դեղերի օգտագործման հետևանքով: Արդյունքում Առողջապահության նախարարը կամ բռնակալը իրենց միլիոններով հեռանում, փախչում են երկրից` ժողովրդին թողնելով տառապանքների ու հիվանդությունների մեջ: Այդպես հերթականությամբ փոխվում են նախարարները, տալիս և ստանում կաշառքը, թալանում, ստորագրում են սպանդի փաստաթղթերը, հետո` կրկին անհետանում: Առհասարակ Չարիքի իշխանությունը այս բանաձևով է առաջնորդվում. ներկրվող դեղերը, սննդամթերքը, կենցաղային ու տնտեսական իրերն ու պարագաները անորակ են ու վտանգավոր մարդկանց առողջության ու շրջակա միջավայրի համար: Ինչպես ասացի, չի կատարվում բավարար փորձաքննություն, որովհետև հենց այդ լաբորատորիաները կամ գոյություն չունեն, կամ` որևէ կաշառակեր, չինովնիկ նախարարի

վերահսկողության տակ են: *( 2,5 մլն դոլարի պատվաստանյութ է ձեռք բերվել Քննչական կոմիտեի ղեկավար Աղվան Հովսեփյանի որդուն պատկանող ընկերության միջոցով. ուսումնասիրությունների արդյունքները՝ որոնց համաձայն՝ միլիոնավոր դոլարներ է յուրացվել պետգնումներով: Ուռճացվել են պատվաստված անձանց թվերը, պատվաստանյութի ձեռք բերման գները և այլն: [http://www.1in.am/2005128.html](http://www.1in.am/2005128.html) )*

Գյուղատնտեսությունն ու ջրամատակարարումը նույնպես խայտառակ վիճակում է, փող, կաշառք, անորակ սննդամթերք ու չֆիլտրված ջուր, արդյունքում՝ թունավորված բնակչություն: Իզուր չէ, որ Արարատյան դաշտավայրի բնակչության մեծ մասը ստամոքս-աղիքային ու երիկամային հիվանդություններով են տառապում և բազմաթիվ այլ հիվանդությունների զոհ դառնում: Քաղցկեղը և երիկամային հիվանդությունները դարձել են ամենատարածված հիվանդությունները, որոնց զոհ են դառնում հարյուրավոր քաղաքացիներ: Հիվանդություններ, որոնց զարգացմանն ու տարածմանը նպաստում է բժիշկների կողմից կանխամտածված սխալ բուժումը: Այդ երկու հիվանդությունների բուժումը ( *քաղցկեղի պարագայում՝ քիմիաթերապիա, երիկամային անբավարրության դեպքում՝ դիալեզ* ) բավականին թանկարժեք « հաճույք » է համարվում, նույնիսկ անհասանելի, որ մարդիկ ստիպված են լինում անգամ վաճառել իրենց բնակարանն ու ողջ ունեցվածքը, միայն թե երկարացնեն հարազատ մարդու կյանքը: Ուռուցքաբանական կենտրոնը, որը գտնվում է Երևանի Քանաքեռ թաղամասում, դարձել է ոչ միայն չարորակ ուռուցքաբանության կենտրոն, այլև Չարիքի իշխանության սննդարար զարկերակներից մեկը: *( [http://galatv.am/hy/news/150910/](http://galatv.am/hy/news/150910/) 23.05.2016 | 20:14 Հայաստանում քաղցկեղը հայտնաբերվում է ուշ, բուժումը կատարվում թերի: )* Այդ հիվանդանոցում հայտն-

ված հիվանդների պատմածները այնքան սարսափելի են, որ նկարագրելն ուղղակի ավելորդ է: Միայն ներկայացնեմ մի դրվագ, մի հատված, երբ հիվանդի մոտ հայտնաբերվել է քաղցկեղ: Ինչպե՞ս է ընթանում հիվանդանոցային բուժսպասարկումը: Ժպտերես բուժքրոջ միջոցով հայտնում են չարորակ ուռուցքի գույժը և զգուշացնում, որ բժշկական բոլոր ծառայությունները վճարովի են և հարկավոր է վճարումներ կատարել մուտքի մոտ գտնվող դրամարկղում: Չհաշված, որ նրանք արդեն վճարել էին « Սևով »:
Առհասարակ, քաղաքակիրթ հասարակությունում նման դեպքերում հոգեբանների միջոցով են հիվանդին տեղեկացնում իր հիվանդության մասին որպեսզի հիվանդը խուճապի մեջ չընկնի, նամանավանդ նրա հարազատները:
Սակայն, քանի որ Ուռուցքաբանական կենտրոնը Չարիքի կենտրոններից է, ապա այնտեղ իսպառ բացակայում է մարդասիրական մոտեցումը, փոխարենը՝ գործում է դաժան գործելաոճը: Մեկ քիմիաթերապիայի ընդունման արժեքը կազմում է մոտ 1 միլիոն դրամ, իսկ հաջորդող փուլերի արժեքը ավելի բարձր է: Միալ ախտորոշումը ևս եկամտաբեր է:
Իմ լրագրող բարեկամներից մեկը պատմում էր մի սարսափելի դեպքի մասին, որը կարծում եմ, անհրաժեշտ՝ է ներկայացնել այս գրքում: Քանի որ բարեկամս պատրաստվում էր մի ծավալուն հոդված հրապարակել այդ մասին, ուստի համաձայնվեց նաև ինձ տրամադրել այդ փաստագրությունը, մինչ իր հոդվածի հրապարակումը, ես կփորձեմ համառոտ ներկայացնել այդ սարսափելի դեպքի պատմությունը:
Ոճրագործություն, որի հեղինակները եղել են « Բժիշկ » կոչված մարդասպանները:
« Այդպիսով Էջմիածնի շրջանի Արշալույս գյուղի բնակիչ՝ Նվեր

Ծաhբազյանի 7 ամյա որդու՝ Արթուր Ծաhբազյանի մոտ 2013 թ.-ի դեկտեմբերին բժիշկները ախտորոշում են չարորակ ուռուցք՝ մեջքի հատվածում: Հասկանալի էր ծնողների վախն ու անհանգստությունը, որոնք պատրաստ էին ամեն ինչ անել, միայն թե փրկեն իրենց զավակին: Սկսվում է վազքը հիվանդանոցից հիվանդանոց՝ վճարելով բոլոր ախտորոշումների ու փորձաքննությունների արժեքները, նույնիսկ ավելին:
Տարբեր բուժհաստատությունների բոլոր բժիշկները միաբերան պնդում էին, որ երեխայի մոտ արյան քաղցկեղ է և կյանքի հավանականությունը հինգ տոկոս է: Չնայած այդ ամենին երեխային վիրահատում են, այն էլ երկու անգամ, որովայնում « փնտրելով » ինչ-որ բան: Ամեն անգամ վճարելով հարյուր հազարից ավելի դրամ և 95 հազար դրամ էլ անընդհատ՝ ինչ-որ աննպատակ զննումների համար: Երեք ամսվա ժամանակահատվածում տառապանքները ծնողների վրա նստում է 4 միլիոն դրամից ավելի: Սակայն ոչ մի արդյունք: 2014 թվականի մարտի 24 – ին երեխային նշանակում են քիմիեոթերապիա, որի արժեքը ինչպես ասացի 1 միլիոն դրամ է: Այս տարբերակում Ծահբազյաններին բժիշկները հայտնել էին, որ անհրաժեշտ է 14-16 կուրս, որը ինչպես հասկանալի է, արդեն չափազանցված է: Քանի որ բժիշկները ամեն ինչ անում էին, որպեսզի ճարահատյալ ծնողներից ավելորդ գումարներ շորթեին:
Ինչպես պարզվում է, այդ երկու վիրահատությունները հենց մեծ գումարներ պոկելով էր պայմանավորված: Մարտի 24- ին նշանակված առաջին քիմիոթերապիան չի կայանում, որովհետև երեխայի հայրը՝ Նվեր Ծահբազյանը Մուրացանի հիվանդանոցից առևանգում է իր երեխային, նրան վերաբերող բոլոր փաստաթղթերի հետ միասին: Կարողանում է որդու կյանքը փրկել, զավակին հասցնում է Գերմանիա, որտեղ գերմանացի մասնա-

գետները ուսումնասիրում են Հայաստանում անցկացված հետազոտությունների արդյունքներն ու համեմատելով իրենց կատարած փորձաքննությունների արդյունքների հետ՝ մնում են ապշած »: ( *https://surhandak.wordpress.com/2016/10/23/մահվան-դատա_վճիռ/ ՄԱՀՎԱՆ ԴԱՏԱՎՃԻՌ Октябрь 23, 2016* )

Նրանք համոզվում են, որ հայ բժիշկները ոչնչով ետ չեն մնում իսլամիստ ծայրահեղականներից, որոնք կտտանքի են ենթարկում մարդկանց:

« Պազվում է, որ փոքրիկ Արթուրիկը քաղցկեղով չի տառապել, այլ թոքի և ողնաշարի հատվածում մի փոքրիկ մկանաթելի առկայությունն է եղել, որը բորբոքվելուց անհանգստացրել էր երեխային: Գերմանացի բժիշկները առանց բարդությունների վիրահատում են նրան ու փրկում երեխայի կյանքը: Սակայն հայ բժիշկների կատարած վիրահատության սպիները հիշեցնում են նրան՝ հրեշավոր ոճրագործության մասին: Այդպիսով Ծահբազյանները կարողանում են վերագտնել իրենց հանգստությունը, իրենց զավակը ողջ առողջ է »: Պատկերացնու՞մ եք, թե որքան ընտանիքներ են զոհ դարձել նման ոճրագործություններին, որը կոչվում է Հայաստանի առողջապահական համակարգ:

( *http://www.aravot.am/2011/08/11/335730/ ԲԻԶՆԵՍՈՎ ՉԵՆ ԶԲԱՂՎՈՒՄ, ԲԱՅՑ ԾԱՀՈՒՅԹ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ 00:00 | Օգոստոս 11 2011 http://www.asparez.am/news-hy/xosrov-harutyunyan-xamachik-davarornery-talanum_en_inc_hy/ « ԱԺ պատգամավոր Խոսրով Հարությունյանի խամաճիկ դատավորները թալանում են ինձ »:* )

Սա միակ դեպքը չէ այս բնագավառում, ցանկացած փոքրիկ երևույթ ուռճացվում է: Ինչպես ասում են, հայ բժիշկների մոտ լավ է ստացվում **« из делать из мухи слона »:** Ինչքան դժվար և բարդ հիվանդություն, այնքան մեծ գումարներ ու մեծ եկամուտ:

Չարիքի իշխանության բոլոր առողջապահական հաստատություններում, սահմանված են այնպիսի բարձր գներ, որ մարդիկ ուղղակի հնարավորություն չունեն անգամ ցավացող ատամ հեռացնեն: Հիվանդանոցների վերելակների հսկիչները նույնքան գումար են աշխատում, որքան երթուղային տաքսու վարորդները, միայն այն տարբերությամբ, որ նա միայն վերելակի կոճակն է սեղմում: Դրան գումարենք նաև այն, որ անատոմիկներն ու հուղարկավորության ծախսերը նույնքան սարսափելի բարձր են, որքան բուժման ծախսերը, նաև Չարիքի երկրում անգամ մահն է վճարովի և այն էլ այնքան թանկ, որ մարդ վախենում է անգամ մեռնել: Գրիգոր Զոհրապի « Ձիտին պարտքը » պատմվածքում նման տիպիկ տեսարան պատկերված է և որը շատ արդիական է: Ու այն, որ Ազգային ժողովի պատգամավորներից շատերը սեփական հիվանդանոցներ ունեն, դա փաստ է, Խոսրով Հարությունյանի և Մեյրան Սարոյանի նման հրեշներին նույնիսկ ծննդատուներ են պատկանում:

( *http://armlur.am/600468/ Զորի Բալայանն ինձանից հիվանդանոց է խլում. բաժնետերը մանրամասներ է ներկայացնում (տեսանյութ) 12:10 | Հոկտեմբեր 21 2016* ) *http://armlur.am/225878/ Արկադի Ղուկասյանը «Արմենիա» բժշկական կենտրոնի բաժնետե՞ր. «Ժողովուրդ» 07:46 | Սեպտեմբեր 5 2014* )

Հայաստանի շատ մարզերում բուժհաստատություններ ուղղակի չկան, կամ էլ կան միայն անունով ու փաստաթղթերով:

Ինչ վերաբերվում է Հայաստանի էկոլոգիային, ապա այդ ոլորտը առհասարակ գոյություն չունի, միայն անունը կա... Իսկ Սյունիքի բնակչության զգալի մասը ճառագայթված սնունդով ու ջրով է ապրում: Հանքարդյունաբերության պոչամբարներում հավաքված ծանր մետաղները, որոնց մեջ առկա են սնդիկ ու վոլֆրամ, մահաբեր է: Առանց անվտանգության որևէ միջոցնե-

րի իրականացման, ծանր մետաղներով հագեցած կեղտաջուրը լցվում է պոչամբարներ, որը մեծ վտանգ է ներկայացնում շրջակա միջավայրի ու բնակչության համար: *( http://www.armecofront.net/lrahos/kapanum-lobi-ev-kanaci-utely-mahacu-vtangavor-e/*

*27 September 2015 Կապանում լոբի ու կանաչի ուտելը մահացու վտանգավոր է: Աղավնի Հարությունյանի հետաքննությունը. «ԱԶԳ»*
*« 19 պոչամբարներից 9 գտնվում են Սյունիքում: Հանքերի շահագործման ընթացքում կուտակվում է միլիոնավոր տոննաներով արդյունաբերական թափոններ: Մոլիբդենի և մանգանի իոններ: Մկնդեղ և այլ ծանր մետաղներ »:*
*https://hy.wikipedia.org/wiki/Պոչամբարները_Սյունիքի_մարզում )*

Ռոբերտ Քոչարյանի իշխանավարության ժամանակ հարյուրավոր պոչամբարներ դարձան մահաբեր և ոչ միայն ներկա սերունդների, այլ նաև՝ ապագա սերունդների համար:
*( http://araratnews.am/հայաստանի-իրական-ավերման-հիմքը-դրեց-ռ/*
*Հայաստանի իրական ավերման հիմքը դրեց Ռոբերտ Քոչարյանը. Բնապահպան Օգոստոս 29, 2014 4:40 pm )*

Իսկ այն, որ Սիրուշոն վայելում է նույն **պոչամբարների** զոհ դարձած հարյուրավոր ընտանիքների դառը ճակատագիրը...
Ողբերգական է, որ չգտնվեց գեթ մեկը, որ այդ Ոճրագործության այդ մասին բարձրաձայներ: Սակայն այդ ամենի մոռանում ենք ու հիշում ենք թուրքերի գործած ցեղասպանությունը: Առհասարակ տարբերություն չկա՝ երկու դեպքերում էլ կատարվել է ոճրի:

Առողջապահության այդպես կոչված չակերտավոր Անվճար բուժումը մնացել է անցյալում՝ Խորհրդային տարիների հուշերում: Այն, որ երեխաների մահացությունը բարձր է Հայաստանում, դա փաստ է, թերզարգացած ու հիվանդ երեխաների համար անգամ բուժօգնությունն անվճար չէ, ազատամարտիկներն ու

հաշմանդամները նույնպես վճարում են բժշկական ծառայութ-յունների և թանկ դեղորայքի համար, որ շատ դեպքերում նույնիսկ դառնում է անհասանելի: Այդ բոլորին նաև կարելի է գումարել դիաբետով տառապող բնակչությանը, որին գոնե ինսուլինի որոշակի չափաբաժին պետք է անվճար տրամադրվի: Կաթվածահար առողջապահության վճարովի համակարգը, իր բոլոր ծառայություններով հանդերձ՝ ավելի շատ դահճի գործ-ողությունների է նմանվում, քան հումանիստի: Անորակ կադր-երի պատրաստումը, խնամի-բարեկամ կապը ոլորտը դարձրել են շահութաբեր բիզնես, մարդկանց սպանում են, որպեսզի փող աշխատեն, սակայն, դեռևս ոչ ոք, անգամ սփյուռքում, այս մասին չի բարձրաձայնել, հատկապես այն հայ բժիշկները, որոնք միջազգային առողջապահության բնագավառում փայլում են մասնագիտական բարձր որակներով: Պատահական չէ, որ քրեա-օլիգարխիան նախընտրում է բուժվել արտասահմանում, քան սեփական երկրում կրթություն ստացած մասնագետների մոտ: Զարմանալին այն է, որ Չարիքի իշխանությունն ընդունում է պետական օրենքներ և կայքերում տեղադրում, որ ՀՀ-ում առ-ողջապահությունն ու կրթությունը անվճար են: Այն, որ սահ-մանամերձ գյուղերի բնակչությունն անգամ բժշկի երես չի տես-նում, դա ոչ ոք չի կարող հերքել: Հիվանդ ու թույլ երեխան-ներին զինվորական ծառայություն զորակոչելը արդեն ավանդ-ույթ է դարձել, անգամ դիաբետով, սրտի արատով, նույնիսկ քաղցկեղով հիվանդ երեխաներին են ծառայության զորակոչում: Այս ամենը, իհարկե, միայն անապահով ընտանիքների զավակ-ների հաշվին է արվում, որովհետև զինվորների քանակը չի բավարարում երկրի սահմանների պահպանությանը, հարուստ-ները վճարում են՝ ազատելով իրենց զավակներին զինվորական պարտադիր ծառայությունից:

Աղետալի վիճակում է բնակչության թվի աճը, քանի որ մահացության թվաքանակը գերազանցում է ծննդաբերության թվաքանակին: Ծննդատներում անպատասխանատվության և անտարբերության արդյունքում շատ նորածիններ են մահանում և ոչ ոք այդ մասին չի մտահոգվում և պատասխանատվության չի ենթարկվում: ( *Մահացող երեխաների 70 %-ը նորածիններ են Հուլիս 13 2015* *http://www.aravot.am/ 2015/07/13/592590/* )

Սահմանամերձ գյուղերում անգամ երեխաններ չեն մնացել: Դրա վառ ապացույցը` սահմանամերձ Այգեպատ գյուղի առաջին դասարան հաճախում են միայն երկու աշակերտ այն էլ` երկու երկվորյակ եղբայրներ:

( *http://www.civilnet.am/news/2016/08/27/այգեպարում-առաջին-դասարան-կգնա-2-ներքի/299483 27 օգոստոս, 2016 09:12 Այգեպարում առաջին դասարան կգնա 2, Ներքին Կարմիրաղբյուրում` 3 աշակերտ* )

Դատարկվում ու հայաթափվում է Հայաստանը, ինչպես օսմանյան կայսրության տիրապետության ժամանակաշրջանում:

Հայկական Գենոֆոնդին վտանգ է սպառնում, սակայն շատերը դա չեն հասկանում: Պատահական չէ, որ Չարիքի իշխանությունում քարուքանդ դպրոցներ են ու մանկապարտեզներ, ազգայնությունը խրախուսվում է օրենքով: Ինչպես տեսնում ենք Չարիքի արմատը շատ խորն է, որը ներսից քայքայում ու կործանում է ոչ միայն առողջ մարմինը, այլև առողջ հոգին, ոչ միայն ներկա սերունդներին այլ եկող: Տեղին է հիշեցնել Ավանի գիշերօթիկ դպրոցում կատարված ոճրագործությունները` անապահով ընտանիքի երեխանների նկատմամբ: Կարծում եմ, նույնիսկ Ֆաշիստական Գերմանիայում այսպիսի դեպքեր չեն գրանցվել: ( *« Ավանի, Թամրուչի փողոցի 36 հասցեում գտնվող գիշերօթիկ հանրակրթական դպրոցում սովորող երեխաներին « ծեծում են, դեղեր խմեցնում և սովամահ անում »:*

*( [http://www.panarmenian.net/arm/news/140617/](http://www.panarmenian.net/arm/news/140617/) Ավանի գիշերօթիկում երեխաներին ծեծում են. Ոստիկանությունն ուսումնասիրում է բնակիչների նամակը: 11 հունվարի 2013 )*

Այդ ամենը ծանր հետք է թողնելու առողջ սերունդ դաստիարակելու համար: Ինչպես նշել էի նախորդում՝ Չարիքին ծառայող տականքներից շատերը գործում են նաև սփյուռքում, պատահական չէր, որ վերջերս Ֆեյսբուքում տարածվեց, որ ԱՄՆ -ի Գլենդել քաղաքի հայտնի « Նարեկ » մանկապարտեզի աշխատողները. « գոռացել, վիրավորել, ծաղրել, հրմշտել և սոված են թողել 11 երեխայի՝ 2.5 տարեկան հասակի »: ( 27/09/2016 ) Չարիքի Իշխանության գործելաոճը որդեգրել են արտերկրում բնակվող մեր հայրենակիցներից շատերը: Ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում ոհմակի որգեգրած քաղաքականության և գործելաոճի պատճառով ապականվում է հայի տեսակն ու կերպարը: Կրկին վերադառնանք Չարիքի իշխանություն: Քրեա-օլիգարխիկները չեն հասկանում, որ ժողովրդին ուտել վերջացնելուց հետո մնալու են միայն իրենք, ու սկսելու են հոշոտել իրար: Ասում են, թե սուլթան Համիդը ցանկանում էր մեկ հայ թողնել, այն էլ թանգարանում, հիմա ո՞վ է նրա գործը շարունակողը՝ թուրքերը, թե՞ Նժդեհի ասած թուրքանման հայերը:

( **« Մեր դժբախտությունն այն չէ, որ աշխարհում կան թուրքեր, այլ այն, որ կան թուրքանման հայեր » Գարեգին Նժդեհ.** )

Մի խոսքով Չարիքի Իշխանությունը ոչ միայն թունավորում է ժողովրդին, այլև նրանց կյանքը դարձնում է դժոխք: Առհասարակ Չարիքի իշխանությունում մարդիկ ապրում են խավարում և զրկված են անգամ արևի լույսից: Պատահական չէ, որ Հայաստանում անգամ կլիման է փոխվել ու զգալի են դարձել ցրտահարություններն ու սառնամանիքները: Առհասարակ ասում են, թե « Աստված երես է թեքել

մեր ժողովրդից »: Թույլ տվեք որպես բժիշկ ու հոգեբան համ-աձայնվել այդ մտքի հետ: Կաշխատեմ զերծ մնալ ներկայացնել իմ մտքերը, սակայն կփորձեմ Ձեզ ներկայացնել իմաստուն մարդկանց մտքերը: Գարեգին Նժդեհն ասել է. « Աստված ուժ-եղներին է սիրում »: Նույնը ասել են Հովհ. Թումանյանը, Րաֆֆին, Նար-Դոսն ու Աղայանը, Մովսես Արազի՝ « Արևը » պատմութ-յունը: **« Եվ աստված ինքը սառն աչքով է նայում այդ ցավալի տեսարանների վրա... Նա տեսնում է, յուր պատկերը շինել են անասուններին հավասար, բայց աչքերը խփում, երեսը շրջում, անց է կենում...»: Րաֆֆի**

Չարիքի Իշխանությունը « Գույք՝ պարտքի դիմաց » կարգախոս-ով ռուսներին ծախեցին Հայաստանի մարտավարական նշան-ակություն ունեցող բոլոր կարևորագույն ճյուղերը: Եթե հաշվի առնենք, որ Խորհրդային Միության իրավահաջորդը դարձավ Ռուսաստանի Դաշնությունը ու հենց իրենք առաջինը հայտա-րարեցին, որ Խորհրդային Իշխանությունը եղել է Չարիքի կայ-սրություն, որ Խորհրդային Միության ժողովուրդը տառապել ու հալածվել է: Դա նշանակում է, որ Ռուսաստանը, որպես իր-ավահաջորդ, պարտավոր էր հայ ժողովրդին փոխհատուցել 70 տարի շարունակ կեղեքելու և խոշտանգելու համար, դրան գու-մարած՝ Նախիջևանի հայաթափումը, Ստալինի ու Լենինի տա-րածքային բաժանումները... Սակայն, չգիտես ինչու, հանկարծ՝ Հայաստանը պարտք մնաց Ռուսաստանին, ոչ թե՝ հակառակը: Փաստերը համոզում են, որ դա մի Բլեֆ էր ԿԳԲ-ի գործակ-ալների՝ հանձինս Քոչարյանի ու Սերժ Սարգսյանի կողմից, որ-ոնք փորձելու են արդարացնել իրենց հանցանքները: Դրան գումարենք, որ Խորհրդային Հայաստանը յոթանասուն տարվա ընթացքում միայն տվել է Խորհրդային Ռուսաստանին և ոչ թե պարտք մնացել: Հազարավոր թոշակառուների ավանդներն

ու թոշակները Ռուսաստանը գողացավ, չհաշված Սպիտակի արհեստական երկրաշարժի՝ « **Մերկուրի 18** »: ( http://www.armversion.am/2012/12/09/ժամանակի-մեքենա-մերկուրի-18-գաղտնի/ )

Նյութական ու բարոյական վնասը փոխհատուցելու գումարները, ստալինյան բռնակալության զոհ դարձած մեր հայրենակիցների հասանելիք փոխհատուցումը: Մի խոսքով, չգիտես ինչպես, Մեր բռնակալները ինչ-որ հնարված պարտքի դիմաց ծախեցին երկիրը, իսկ գումարները գնացին իրենց սեփական հաշիվների վրա:

Ինչպես տեսնում ենք Հայաստանը ոչինչ չունի, միայն սպառող ու հարկեր վճարող… Այս քսանհինգ տարիների ընթացքում ծախեցին բոլոր ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող ճյուղերը՝ երկաթգիծը, էլեկտրամատակարումը, հեռահաղորդակցությունը, գազամատակարարումը, ջրամատակարարումը, անգամ վաճառեցին Անկախություն կոչվածը:

Չարիքը դեռ սկզբից՝ 1988 -ից խլեց պետության անկախությունըն ու ինքնապաշտպանվելու հնարավորությունը: Իզուր չէ, որ Գյումրիում գտնվող Ռուսական ռազմաբազան ավելի շատ վընաս է տալիս Հայաստանին, քան օգուտ, պատահական չէր, որ 2016թ. -ին Ազգային ժողովի պատգամավորները ծախեցին նաև Հակաօդային պաշտպանությունը, տարիներ առաջ էր, երբ վաճառեցին Հայաստանին պատկանող ուղղաթիռային պարկը: Աստված չանի, որ պատերազմը վերսկսվի, Հայաստանը ի վիճակի չի լինի դիմակայել, որովհետև չկա պահեստավորված ոչ հաց, ոչ հեղուկ վառելիք ոչ էլ զինամթերք: Եղածը գտնվում է մենաշնորհիների ձեռքին, որոնք կարող են թելադրել իրենց գըները: Ջորջ Օրուելը իր « Անասնաֆերման » գրքում ներկայացրել էր անուղեղ ոչխարներին, որոնք անընդհատ կրկնում են առաջնորդ բռնակալի խոսքերը. « Ոչխարները սովորություն էին

ձեռք բերել տեղի-անտեղի բառաչել **« *չորս ոտք լավ, երկու ոտք վատ* »**, *երբեմն դրանով ընդհատելով միտինգը* »:
Առհասարակ չորեքթաթ վիճակում՝ ( կզած ) ապրում են Չարիքի երկրում, չհասկանալով, որ աշխարհում կան այլ արժեքներ ու այդ պատճառով էր, որ « Սասնա ծռերի » վեհ գաղափարները նրանց համար տարօրինակ էին ու խորթ:
( *[https://www.1in.am/2035384.html](https://www.1in.am/2035384.html) Ազգովի խնդրանքը Ծառուկյանին 2016-10-24* ) Պատահական չէր, որ շատերի համար « Վերջին Բոլշևիկը » դառնալու էր աստվածային ու առաքելական: Նույնիսկ որոշների համար նա Սուրբ Սարգիս է, իսկ որոշների մոտ՝ Մովսես մարգարե, նաև այն, որ այդ ցողունապատված տգետը « Դու-ն » ու « Դուք-ը » իրարից չի տարբերում, ինչպես փնթի Մանվելը՝ աղջիկն ու տղան:
Մի խոսքով Չարիքի Իշխանությունը, ըստ Օրուելի՝ Խոզերից ու ոչխարներից հիմնված պետություն է, որտեղ գրագետները հալածվում են ու խոշտանգվում, իսկ փնթիները՝ խրախուսվում ու գնահատվում: *( «Կգլխատեմ» և « բռնաբարվելու են » խոսքերը սպառնալիք չեն. վճիռ՝ ՀՀԿ-ականի օգտին 10.02.2015 epress.am [http://www.epress.am/2015/10/02/«կգլխատեմ»-և-«բռնաբարվելու-են»-խոսքե.html](http://www.epress.am/2015/10/02/«կգլխատեմ»-և-«բռնաբարվելու-են»-խոսքե.html) )*
Սակայն հայկական իրականության մեջ Օրուելի ոչխարների դերում հանդես է գալիս քաղաքական աղբակույտը, հանձինս՝ հոգեբանների ու սոցիոլոգների, փորձագետների ու իրավապաշտպանների: Իզուր չէ. որ Ահարոն Ադիբեկյանն էլ Գառնիկ Իսագուլյանի պես ոտքի տակ ընկնող արարածներ են, զուրկ՝ մարդկային արժեքներից: Նույն ոչխարների պես, որոնք նախընտրում են չորեքթաթ տիրոջ լափամանից լափել, քան ոտքի վրա մարդավարի ապրել: ( **« Կարևորը ապրելը չէ, այլ ապրելը որպես մարդ »: Ջորջ Օրուել** )

Չարիքի իշխանությունը իրենից ներկայացնում է կենդանի դըժոխք երկրի վրա, որտեղ ամեն ժամ ու ամեն վայրկյան խոշտանգվում են ու սպանվում: Սպանում են պատգամավորներն ու նախարարները, ոստիկաններն ու բժիշկները, գեներալներն ու հոգևորականները, անգամ բարերարները: Իզուր չէ, որ բարերարների պարանոցները ավելի հաստ են, քան իրենց սափրագլուխ թիկնապահների պարանոցները: Այդ պատճառով է Ծմայսը իրեն իրավունք է վերապահում բռնաբարել ու գլխատել, Թոխմախի Միհրը՝ ծնոտը պոկել, Երանոսյան Լևոնը՝ « Ականջները շան թուլի պես կտրել »: ( [http://armlur.am/279105/ ԳԵՆԵՐԱԼԸ ՍՊԱՌՆՈՒՄ Է ԱԿԱՆՋՆԵՐ ԿՏՐԵԼՈՎ 22:18 | 11. 12. 2014](http://armlur.am/279105/) ) Շուշան Պետրոսյանը աչքերն է հանում: Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը՝ « Քացու տակ է գցում »: Իսկ վերջերս, Գյումրու քաղաքապետ Սամվել Բալասանյանին սատարողները լրագրող Կիմա Եղազարյանին սպառնացել են՝ ծխախոտը հանգցնել նրա վրա: Իմիջիայլոց, այդ ծխախոտ հանգցնելու ավանդույթը մնացել է Խորհրդային Չեկիստներից: Ինչպես ասում են՝ Խորհրդային կայսրության « Գուլագից » ազատվեցինք, ստեղծելով սեփական **Գուլագը**: Հայաստանը դարձրեցին մի մեծ համակենտրոնացման ճամբար՝ կառափնարան ոչ միայն ժողովրդի համար, այլ՝ եկող սերունդների: Ծխախոտ հանգցնելու ավանդույթը շարունակող Վազգեն Սարգսյանը 1990 թվականին Արարատի զորամասերից մեկում ժամկետային զինծառայողին հայհոյել էր, զինվորը պատասխանել էր, որ նա իրավունք չունի իրեն հայհոյել, Վազգենը մոտեցել էր ու ծխախոտը հանգցրել ժամկետային զինվորի ճակատին: Մի քանի ամիս հետո զինվորը համարձակություն էր ունեցել ծնողներին պատմել կատարվածը, չանցած որոշ ժամանակ՝ զինվորին սպանում են ու պատճառաբանում, որ զինվորը զոհվել է Նախիջևանի սահմանագծ-

ին՝ ադրբեջանցի դիպուկահարի կողմից: Որպեսզի այդ պատմությունը չբացահայտվի, իշխանությունները սկսում են զինվորի ծնողներին հալածել, որոնք ստիպված են լինում հեռանալ Հայաստանից: Վազգեն Սարգսյանը եղավ Չարիքի Իշխանության կնքահայրը: Ինչու՞ են այդպես ինքնավստահ ու անպատիժ գործում, որովհետև օրենքն ու իշխանությունը իրենց է սատարում ու պաշտպանում: Հենց այդ անպատժելիության մթնոլորտըն է, որ նրանց տալիս է ազատություն:

*« Այսօրուայ մարդկութիւնը պէտք է նմանեցնել հիւանդ օրգանիզմի՝ անպտուղ ու շահագործող, իսկ դասակարգերը այն ապաւիսպական կամ rudimentaires օրգաններին, որոնք ծանրաբեռնում են վատ կազմուած օրգանիզմները եւ որոնք ոչ միայն անպէտք են ու աւելորդ, այլեւ ուղղակի վնասակար, այն աստիճանի, որ մարդիկ յաճախ դիմում են վիրաբուժական գործողութիւնների՝ այդ պարազիտներից ազատուելու համար, օրինակ՝ կտրում, դէն են ձգում appendice-ը »:*

*Յովհաննէս Քաջազնունի*

# ՀԼԿԵՄ ԿՈՄՍՈՄՈԼԻ ՓՈԽԱՆՑԻԿ ԴՐՈՇ

***«Անհնար է վախի, ատելության ու դաժանության վրա քաղաքակրթություն հիմնել: Այն չի հարատևի»:***

***Ջորջ Օրուել***

Չարիքի իշխանությունն ու կեղտարյունների դասակարգը սնվում է ժողովրդի գրպանից ու նրա արյամբ: Սակայն նրանք քաջ գիտակցում են, որ ժողովրդին շնչահեղձությամբ պահել դժվար է, այդ պատճառով էլ պատրաստում են մեկ այլ ուժ, որը որոշ ժամանակ բեկումնային կարող է լինել և որը կարող է իր վրա վերցնել պատասխանատվությունը, այսինքն իշխանությունը:
Այդ ուժը ներկայանալով որպես ընդդիմադիր ուժ, ինքն է ըստանձնելու իշխանության ղեկը: Ինչպես ՀՀՇ-ն փոխանցեց իշխանությունը Քոչարյանին, իսկ նա էլ իր հերթին հանձնեց իշխանությունը Սերժ Սարգսյանին: Այսպես կոմունիստական փոխանցիկ դրոշի պես, իշխանությունը իրար փոխանցելով, քողարկեցին իրենց գործած ոճիրները: Լևոն Տեր-Պետրոսյանի ոհմակի հանցանքները մարվեցին Քոչարյանի կողմից, իսկ Քոչարյանի ոհմակի հանցանքները՝ Սերժ Ազատիչի: Չարիքի իշխանությունը աշխատանքային փորձը ձեռք է բերել տասնամյակներ առաջ 1996 թ. սեպտեմբերի 25-ին և 2008թ. մարտի 1-ին:
Իզուր չէր, որ «Սասնա ծռերի» գործողությունների ժամանակ ակտիվացել էր Նիկոլ Փաշինյանը՝ առնելով իշխանության հոտը: Չարիքի իշխանությունը վաղուց նախապատրաստել է իր իրավահաջորդին, քանի որ հնարավոր է՝ ամեն ինչ դուրս գա վերահսկողությունից ու հանկարծ Դողի Գագոն կամ Նիկոլ

Փաշինյանը, որոնք ընդդիմադիր են ներկայանում, քաղաքական-ությունից հեռանալուց հետո հանկարծ կարող են ետ վերադ-առնալ ու ներկայանալ որպես ժողովրդական շարժման ղեկա-վարներ: Արդյունքում իրենք կմնան իշխանության կենտրոնում, իսկ նախորդ իշխանություններին ու բռնակալին կնշանակեն պե-տական թռշակ ու թիկնազոր՝ կրկին ժողովրդի հաշվին:
Եվ տասնամյակների ընթացքում նրանց թալանածն ու գործած ոճիրները կմոռացվեն ու կջնջվեն ոչ միայն մամուլի էջերից, այլ մարդկանց ու վկաների հիշողություններից՝ ինչպես եղավ նախկինում:
Իզուր չէ, որ Ռոբերտ Քոչարյանի ընտանիքը բնակվում ԱՄՆ-ում և այդ ամենը մնում է որպես պետական գաղտնիք:
*( [http://nyut.am/?p=124486&l=am](http://nyut.am/?p=124486&l=am) 16:52 — 1/Օգոստոս/ 2016 Ռոբերտ Քոչարյանը «սուսուփուս» բնակություն է հաստատել ԱՄՆ-ում )*
Նույնը Լևոն Տեր-Պետրոսյանի ժառանգներն են: Նրանք վաղուց օտարերկրյա քաղաքացիություն ունեն և իրենց միլիոնները վա-ղուց տեղափոխել են արտասահման: Նրանք իրենց ապահով-ագրել են, չնայած հնարավոր է՝ մի գեղեցիկ օր ժողովուրդը չհանդուրժի ու դուրս գա իրենց դեմ, այն ժամանակ նրանք կարող են թռնել, ինչպես ասվում է « Նվագախմբի տղաները » ֆիլմում. « Դաշնակները վերցրեցին երկրի փողերը, ու հայդա արտասահման »:
Արտասահմանում նախօրոք ստեղծել են իրենց դղյակներն ու առանձնատները, միաժամանակ սփյուռքում ստեղծել քրեական-ներից կազմված բանդաններ, որոնք պետք է երաշխավորեն իրենց անվտանգությունը դրսում: Եվ կրկին այդ քրեականների ոհմակը սնվում է Հայաստանից թալանված գումարներով: Չարիքի իշխանությունն ամեն ինչ հաշվարկել է, որպեսզի մնա անպատիժ ու վայելի ժողովրդից կողոպտած միլիոնները:

Սակայն նրանց դեմ պայքարելու արդյունավետ միջոցներ ևս կան, որոնք կարող են սահմանափակել ոչ միայն նրանց գեր-դաստանների հնարավորությունները, այլ հանդիսանալ նրանց գերեզմանը: Արտերկրի անձնագիրը կամ քրեականների բանդա-ներն ու բազմաքանակ թիկնազորը անկարող կլինեն նրանց պաշտպանել: Սակայն ինչպես ասում էր փնթի Շարմազանովը. « Դա հաջորդ դասին »:

***« Մի խառնիճաղանջ ամբոխ, որ ապուշորեն զբաղված է դիտելով խավարի այս մռայլ հաղթանակները իրենց վերջալույսի փառահեղության մեջ »:***

***Վիկտոր Հյուգո***

***вера и знание - ето две чаши весов:***

***Чем више одна, тем ниже другая.***

***А . Шопенгауер***

# ԱԶԳԱՅՆԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ՝ ՇՈՎԻՆԻԶՄ

***« Մինչև չգիտակցեն, երբեք չեն ապստամբի, մինչև չապստամբեն, չեն կարող գիտակից դառնալ»:
Ջորջ Օրուել***

Չարիքի իշխանության կարևոր հիմնասյուներից մեկը **Ազգայնամոլությունն է՝ Շովինիզմը:** Այդ պատճառով է, որ իշխանությունները ազգայնամոլական - հայրենասիրական կարգախոսները խիստ կարևորում են և հատուկ նպատակներով այդ գաղափարները ներարկում սերունդների մեջ: *« Մենք հպարտ ենք, որ հայ ենք » « Մենք առաջին քրիստոնյա ազգն ենք աշխարհում » « Ես հայ եմ, հպարտ եմ... Հպարտ եմ, քանի որ ունեմ պատմություն, լեզու, հավատ: Հայն առաջինն է ու կլինի: Դեռևս միլիոնավոր տարիներ առաջ տեղի ունեցած ջրհեղեղից հետո Հայաստանը եղավ այն առաջին վայրը, Արարատը՝ այն առաջին կետը և մեր լեռնաշխարհը՝ այն դրախտավայրը, որտեղ իջավ Նոյն իր տապանով »: (* [http://www.copypaste.am/2012/07/01/ես-հայ-եմ-1341105735/](http://www.copypaste.am/2012/07/01/ես-հայ-եմ-1341105735/) *)* Նման անգիր արած բառակապակցություններն ու կեղծ հայրենասիրական բաժակաճառերը դարձել են լոզունգներ: *( « Հայոց Արծիվների » առաջնորդը իր ելույթում նշեց նաև. « Մենք՝ հայերս, հինգ հազարամյա պատմություն ունեցող ժողովուրդ ենք և մեր բոլոր պատմական ու տարածքային կորուստները տեղի են ունեցել այն ժամանակ, երբ մենք կորցրել ենք մեր միասնությունը, պետականությունն ու պայքարի ոգին»: Խաչիկ Ասրյանը )* Իրականում ազգայնամոլների այդ ոչ գիտակից տեսակը Յութուբից և ինտերնետային կայքերից է լրատվություն

ստանում, այսինքն՝ հարթաուղեղությունը թույլ չի տալիս գրրք-եր կարդալ և լուսավորել մթության մեջ մնացած իրենց գիտ-ակցական կյանքը: Հասարակության հենց այդ հատվածն է, որ Վազգեն Սարգսյանին համարում է սպարապետ, իսկ Կռազի Ծռ-ֆեռին՝ զորավար: Եվ այդ նույն քաղաքական վերնախավի կեղտարյունններն էլ զուր չէ, որ միահամուռ հարձակվել են Վահան Բաղդասարյանի վրա, իսկ որոշ ժամանակ անց՝ նույն ոհմակը հարձակվել է Զարզանդ Գրիգորյանի ու Հակոբ Հակոբ-յանի՝ « Ճոյտի » վրա: Ազգանամոլության հիմնական կենտրոնը հանդիսանում է Երկրապահ Կամավորական Միությունը, որտեղ ցավոք, ոչ մի ազատամարտիկ չի մնացել, ԵԿՄ- ն հանդիսան-ում է Չարիքի Իշխանության պատանիների մի խմբակ-խմբավ-որում, որտեղ Մանվելի պես տգետներն ու փնթիներն են կառ-ավարում:
Ավելի ճիշտ, սեփականաշնորված կառույց է, որովհետև այնտեղ գլխավոր դերը ստանձնել է Մանվելի ողջ գերդաստանը, սկսած իր թուլերից, վերջացրած բաջանաղներով ու տեգոր կնանիքով: Այս տհասների համար ազգայնամոլությունը դրսևորվում է մի-այն չափազանց ագրեսիվ ռազմա-հայրենասիրական կարգախոս-ներով, որտեղ դրոշակակիր-օրինակները Վազգեն Սարգսյանն ու Մանվել Գրիգորյանն են: Պատանի Եռասերունդ Երկրապահների շարքերում են գտնվում փնթի օլիգարխների թուլերը, և դա ակ-նհայտ է, քանի որ նրանց միանում են Տարոն Մարգարյանը, Ծարմազանովը, Կարեն Ավագյանը, Խաչիկ Ասրյանն ու նման դատարկ ուղեղներով ազգայնամետ տգետները՝ իրենց « Բազե-ներ » ու « Արծիվներ » կոչված երիտասարդական խմբակներով: Հենց այդ երիտասարդական խմբակներն են հանդիսանում Չա-րիքի Իշխանության « Յունկեր-ջոկատները », որոնք օգտագործում են քաղաքացիական նախաձեռնությունները տապալելու դեմ:

Ինչպես գիտենք Ժիրար Սեֆիլյանի Նախախորհրդարանի դեմ Երևանում և Գյումրիում օգտագործվել են հենց այդ ջոկատնե-րը: Ակտիվիստներին ծեծելու ու ահաբեկելու գործում նրանք գործադրում են իրենց ավանդական մեթոդները՝ ծեծն ու ահա-բեկումը: Յունկեր-ջոկատները օգտվում են նախագահի հովան-ավորչությունից, իրավապաշտպան- ոստիկանների ու դատախազ-ության կողմից նրանց լիարժեք ազատություն է տրվել: *( « Հայ-ոց Արծիվներ » հայրենասիրական հասարակական կազմակերպ-ությունը այսուհետ ևս նպաստելու է Հայաստանի Հանրապետ-ության օրենքների և պետականամետ, հայրենապաշտ գաղափ-արների անշեղ ու համակողմանի իրականացմանը: « Ուզում ենք մեր հարգանքն ընծայել « Հայոց Արծիվներին » ու Խաչիկ Աստ-յանին »: Սամվել Ալեքսանյան )*

Տարոն Մարգարյանի դիսերտացիայի պաշտպանության ժաման-ակ աչքի ընկած Յունկեր-ջոկատների երիտասարդները Պաշտպ-անության նախարար Սեյրան Օհանյանի կողմից անձամբ նվեր-ներ ու պատվոգրեր ստացան: Ռազմականացված ազգայնամետ խմբակներում երեխաներին ու պատանիներին դարձնում են հի-վանդ ազգայնամոլներ, ովքեր ատելությամբ ու ագրեսիվությամբ են հանդես գալիս և պատահական չէ, որ պատանի երկրապ-ահները ամեն խոսքի մեջ ասում են. « **Շուն թուրքին պետք է սատկացնել** », ինչպես նաև « Սպարապետի » մտքի անիմաստ բարբաջանքներով լցնում նրանց գլուխները: *( Մաղթում եմ, որ ձեր աշխատասիրությամբ, նվիրումով եւ կեցվածքով արժանի լի-նեք Վազգեն Սարգսյանի հիշատակին եւ պատգամներին»,-ասված է ՀՀ Նախագահի շնորհավորական ուղերձում: )*

*http://www.slaq.am/arm/news/1008662/ Արժանի լինեք Վազգեն Սար-գսյանի հիշատակին եւ պատգամներին. Սերժ Սարգսյան )*

*http://www.1in.am/1857850.html Փոքրիկ զինվորները՝ Վազգեն Սար-*

*գայանի մասին 2016-03-05* ) Այն, որ Գերագույն Գլխավոր Չարիքը համարում է, որ Պատանի երկրապահը ճիշտ ուղու վրա է, նշանակում է, որ դա իր նախաձեռնությամբ է իրականացվում: Սակայն ծիծաղելին այն է, որ Նժդեհյան գաղափարախոսությու-նը դարձնում են Ազգայնամոլ-շովինիստական: Ցեղակրոնությու-նը դարձնում՝ գաղափարական սկզբունք: Կոմսոմոլ Վազգեն Սարգսյանն ու Բոլշևիկ Սերժ Ազատիչը իրենց դարձրել են Նժդեհական գաղափարախոսության կրողները: Դա արդեն զար-մանալի է: Իսկ Գարեգին Նժդեհը երբեք ազգայնամետ ու ազ-գայնամոլ չի եղել: Գարեգին Նժդեհի արտահայտած մտքերը հենց այդ են ապացուցում: Նա ավելի շատ սեփական տակ-անքների մասին է գրել, քան այլ ազգերի ու ցեղերի:
Նա երբեք ատելություն չի քարոզել մեկ այլ ազգի հանդեպ, անգամ՝ թուրքերի: ( « **Հա՛յ երիտասարդ՝ սպանիչը կեղծիքի, ճղշ-մարտությունը, որով զինված, դու աննահանջ կռվի պիտ դուրս գաս տգիտության ու վատության դեմ** »: **Գարեգին Նժդեհ** )
Սակայն պատանիների ուղեղները լվանում են ինչպես կարող են: Ջորջ Օրուելի « 1984 » գրքի մեջ այդպիսի Պատանի Երկր-ապահները հարազատ հորը ուղարկում են կառափնարան, որ-ովհետև հայրը քնի մեջ առաջնորդին էր հայհոյել: Նույն բանը այսօր կատարվում է մեզ մոտ: Մանվելին հայհոյողին գտնում են կամ սպանված կամ՝ խոշտանգված: Իսկ Վազգեն Սարգսյա-նի մասին չասեմ, որովհետև բավական է մի բառ նրանց հաս-ցեին ու ոհմակը պատրաստ է հոշոտելու: Պատահական չէ, որ Հայաստանում շատերը վախենում են գնել « **Ազգադավը** » գիր-քը, որովհետև իշխանական ոհմակը ամեն ինչ անում է, որպե-սզի արգելի գրքի մուտքը Հայաստան: ԱՄՆ-ում և Եվրոպա-յում տպագրված « Ազգադավը » դարձել է գլխացավանք Չարի-քի Իշխանության համար: Չարիքի Իշխանության շատ վայրե-

րում տեղադրվեց Վազգեն Ազգադավի կիսանդրին կամ արձանը, նոր թափով նրա մասին սկսեցին նկարահանել ֆիլմեր ու երգեր գրել: *( http://wwwslaq.am/arm/news/1126512/ Երկրապահներս խոնարհվում ենք Ձեր առաջ, Դուք հայ ազգին Սպարապետ եք պարգևել. Մանվել Գրիգորյանի ուղերձը Գրետա մայրիկին 21.09.16 17:25 , http://wwwslaq.am/arm/news/1008667/ Մանվել Գրիգորյանը Գրետա մայրիկին 001 համարով երկրապահի վկայական տվեց )*

Պատահական չէ, որ Երկրապահում « Ազգադավը » գրքի հեղինակը համարվում է Ադրբեջանի գործակալ կամ թուրք: Մանվել Գրիգորյանի մասին հորինված գրքերով ու նկարահանվող ֆիլմերով ցանկանում են այս գրքի իրականությունը շուռ տալ, հակառակն ապացուցել:

Ինչու՞ է Չարիքի իշխանությունը վախենում մի գրքից, որը բացահայտում է մարդկանց իրական կենսագրություններն ու պատմությունը: Պատասխանը կարող եք ինքներդ ենթադրել: « **Հայոց քսան տարիների պատմությունը կեղծեցին միայն հանցագործները, որովհետև իրենց հանցանքների սկիզբը այնտեղից է սկսում: ԳՀ © ԱՌ 2014** ) Ազգայնամոլությունը դպրոցական երեխաների մոտ դարձնում են հիվանդագին ու վարակիչ, որը հոգեկան ծանր շեղում է առաջացնում սերնդի մոտ, տգիտությունը ներարկելով նրանց մեջ՝ դարձնում են իրենց պես փնթի ու տգետ: *( « Հառաջիմություն կը պոռանք և ետ ետ կերթանք, լույս կը պոռանք և դեպի խավար կերթանք, աջ կը կոչենք և դեպի ձախ կերթանք, ապագա կըսենք և դեպի անցյալը կը վազենք: Ո՜հ, մեծ մեծ խոսքեր, իսկ մեծ գո՞րծ... » Հակոբ Պարոնյան )*

Երեխաները ռաբիզ երաժշտությամբ ու անիմաստ պոեզիայով են դաստիարակվում, ձեռք են բերում արատավոր սովորություններ, որոնք դրսևորվում են ագրեսիվության ու բռնության նկատմամբ հակումներով: Դասակարգային տարբերությունը դպրոցա-

կան նստարանից արդեն ներարկելով երեխաների մեջ, փորձում են իրենց ժառանգական արտոնյալ թողտվությունը տարածել հասարակության մեջ։ Հենց դպրոցից երեխաների մեջ մըցնում են վախի զգացումը, պատահական չէ, որ Փնթի Մանվելի թուլեքը դպրոցներում արտոնյալ են համարվում, որտեղ ուսուցիչներն ու դասախոսներն անգամ ահ ու սարսափով են վերաբերվում նրանց։ Չհասկանալով, որ իրենք իրենց արժեզրկում են աշակերտների մոտ։ Էջմիածնում Մանվելի ընտանիքի արտոնյալ վիճակը չարորակ ուռուցք է էջմիածինցիների շրջանում, և այդ հիվանդության մետաստազները տարածվել են Չարիքի Իշխանության երկրում։ Սյունիքում արտոնյալ կարգավիճակում իշխում է Լիսկա Խաչատրյանը, Արտաշատում՝ Մուկ Աբրահամյանը, Հրազդանում՝ Բուռնաշ Աշոտ Աղաբաբյանը, Աբովյանում՝ Դոդի Գագիկ Ծառուկյանը և այլն։

Բռնակալական թագավորություն։ Պատահական չէ, որ Կռազի Շոֆեռը ի լուր աշխարհի հայտարարել է, որ իրենից պատասխան ուզողները թուրք են, ու իրենք չեն հանդուրժելու, առանց երկմտելու՝ մի երկու «թուրք էլ ավել կսատկացնեն»։
*(«Ինձնից մենակ թուրքն է պատասխան պահանջում, եղա՞վ։ Իսկ եթե ուրիշ մարդ էլ կա՝ կուղարկես մոտս տենամ թուրք ա՞, թե հայ։ Ով ինձնից փորձի պատասխան ուզի՝ թուրքից էլ փիս ա, սապլյակ թուրք ա, եթե մեկը կա, որ կարա ինձնից հաշվետվություն պահանջի, թուրքից էլ բեթար ա, թուրք ա ու ստեղ ինչքան երկրապահներ կան, իրանց համար էլ ա թուրք, եղա՞վ, հասկանո՞ւմ ես»։ ԵԿՄ նախագահ Մանվել Գրիգորյանը։ 25 Փետրվար, 2015)* Այս ամենը կատարվում է պատերազմի միջով անցած և փաստացի պատերազմի մեջ գտնվող երկրում։ Այդ լկտի ու անպատիժ վիճակը ժողովրդին հուսահատության մեջ է գցում ու մարում նրանց բոլոր հույսերը ապա-

գայի հանդեպ: **Ընկճվածությունն** ու **Հուսահատությունը** դառնում են արդեն սովորույթ, ապրելակերպ: Մարդիկ համակերպվում են իրենց վիճակին: Իմ ծանոթ հայտնի դերասաններից մեկը՝ ասում էր. **« Ես այդ կյանքով եմ ապրում արդեն 23 տարի »:** Այս դեպքում ասում են, որ ժողովուրդը իմունիտետ է ձեռք բերել դիմակայելու ու հանդուրժելու ահաբեկումներն ու խոշտանգումները: Դրա վառ ապացույցն է, որ որդեկորույս մայրերին ոստիկանները քարշ են տալիս ասֆալտի վրայով, իսկ ժողովուրդը անտարբեր ու լուռ հետևում է: Անտարբեր են հոգևորականները, բժիշկները, անգամ սփյուռքը:

Հենց այդ անտարբերության շնորհիվ է, որ Չարիքի Իշխանությունն ավելի է ծաղկում ու բարգավաճում: Անտարբերությունն էլ հենց մարդկանց դարձնում է հլու հնազանդ: Ինչպես « Սասնա ծռերին » սատարող զանգվածը միայն անկազմակերպ բողավում էր. « Ամոթ ոստիկաններին »: Հասարակությունը պետք է հասկանա, որ հանցագործ իշխանություններին քաղաքակիրթ ճանապարհով, հրաժարականի պահանջով հեռացնելն անհնար է: Դա խաբկանք և հիմարություն է: Ո՞վ է տեսել, որ **Բռնակալը** ինքնակամ հեռանա կամ հրաժարական տա: Մի խոսքով ծիծաղելի է և սարսափելի:

Ինչպես տեսնում ենք Չարիքի իշխանությունը ժողովրդի ուժը օգտագործում է ժողովրդի դեմ, դրա համար տեղին է հիշել « Կացինի ու անտառի » առակը: *( Երբ որ կացինը եկավ անտառ, ծառերը ասացին... Կոտը մերոնցից է: )* Քանի դեռ այդ ուժը ժողովրդի միջից է, դժվար է նրա դեմ պայքարել:

Սակայն արդյունավետ պայքարի ձևերը կան ու դրա մասին ես բազմիցս գրել եմ: ( **« Մեր քարոզած ճշմարտութիւնը գուցէ թէ կտրատում է ազգի սիրտը, բայց այդ սուրը միակ հնարն է փտած ու ճարակած խոցը առողջ մասերից բաժանելու եւ**

**հեռացնելու համար »: Միքայել Նալբանդեան )**
Չարիքի Իշխանությունը չարորակ ուռուցք է, որի արմատները տարածվելով սպանում են գեղեցիկն ու առողջը, սպանում մարդու մեջ մարդկային հատկություններն ու արժեքները, նրանց դարձնելով նվազ, բայց կատաղած գիշատիչներ, ոչնչացնում նրանց բարոյապես ու ֆիզիկապես:
Իսկ Չարիքից ազատվելու համար ոչ միայն կամք ու համարձակություն է հարկավոր, այլ՝ արիություն և գիտելիք: Ճիշտ ախտորոշելով հիվանդի հիվանդության պատճառները՝ հնարավոր է արդյունավետ բուժել այն, բայց շատ դեպքերում բժիշկներն առանց հասկանալու բուժման տարբերակներ են առաջարկում, որը ապաքինելու փոխարեն էլ ավելի է վնասում հիվանդին: Սակայն մենք պետք է գիտակցենք, որ լավ մասնագետը, լավ բժիշկը առանց ախտորոշելու ու փորձաքննության արդյունքների երբեք չի սկսի հիվանդի բուժումը: ***( « Ես հեղափոխությունը սկսել եմ 82 հոգով: Եթե ստիպված լինեի կրկնել դա, ինձ տասնհինգ-քսան հոգին էլ հերիք կլիներ: Տաս հոգի եւ բացարձակ հավատք: Կարեւոր չէ, թե քանի հոգի եք: Կարեւորը հավատալն ու հստակ պլան ունենալն է: » Ֆիդել Կաստրո )***
Հետաքրքիրն այն է, որ շատերը զուրկ են տարրական տրամաբանությունից:
Հայաստանում այդպես կոչված « Երթուղային տաքսի » կոչվածները, որոնց « **Մարշրուտնի** » են կոչում, չեն կարող քաղաքակիրթ հասարակության հասարակական փոխադրամիջոց համարվել: Դա ուղղակի հանցագործություն է ու զազրելի: Չարիքի իշխանությունը հիմնահատակ ոչնչացրեց Երևանում գործող տրամվայների պարկը: Քաղաքակիրթ երկրներում հասարական գլխավոր փողադրամիջոցը հանդիսանում են տրամվայները: Իսկ մեզ մոտ ոչնչացվեց, որպեսզի ի հայտ եկած գծատերերը

ժողովրդին « Կզած » տեղափոխեն: Ժողովրդին կարտոֆիլի պես լցնեն իրար վրա ու քշեն: Ու դա համարվում է օրինական « ԿԶԱՑՆԵԼ »: Երկրում ոչ ոք չպայքարեց դրա դեմ, ժողովուրդը լուռ համակերպվեց, իսկ ոմանց համար դա ծառայեց հարստացման աղբյուր: Արդյունքում մարդիկ կամաց -կամաց անցան բթացման ճանապարհ, փոխարենը՝ ձգտեն լուսավոր հորիզոններ, նրանք իրենց կամքով ընկղմվում են խավարի մեջ: Հասարակ բույսը, որին կաղապարում են փոքր տարածքում, դառնում է թերաճ ու գաճաճ: Նույն կերպ էլ մեր ժողովուրդն է, որին դարձրել են կաղապարված և զուրկ ամեն տեսակ տրամաբանությունից: Հայաստան ժամանած օտարերկրացի հյուրերը կամ սփյուռքում ապրող մեր հայրենակիցները ապշած են նման տրանսպորտային միջոցներով երթևեկելով, և շատ լավ գիտակցում են, որ դրանք հասարակական փոխադրամիջոց համարել չի կարելի: Իշխանություններին ձեռնտու է ժողովրդին պահել այս տաղտուկ և ստորաքարշ վիճակում, և ոչ որի մտքով անգամ չի անցնում, որպեսզի նորմալ տրանսպորտային միջոցներով սպասարկում իրականացնեն ու կարգավորեն քաղաքային և գյուղական տրանսպորտը: Քանի որ դա պետական ծրագրի մաս է կազմում, ժողովրդին « **Կզացնելը** »:
Ժողովուրդը համակերպվեց դրան արդեն 20 տարի, կարծես այդպես էլ պետք է լիներ, այն դարձավ սովորական երևույթ: Քաղաքակիրթ երկրներում անգամ ընտանի կենդանիներին նրման մեքենաներով չեն տեղափոխում, իսկ մեզ մոտ ժողովուրդը ընտելացել է այդ կարգավիճակին: Քաղաքակրթությունը սկսվում է նման հասարակ երևույթներին կարևորություն տալով. « որպեսզի մարդը իրեն մարդ զգա, և որ հարկավոր է, որ մարդավայել ապրեն՝ իրենք իրենց հարգելով »: ( « **Կարևորը ապրելը չէ, այլ ապրելը որպես մարդ** »: **Ջորջ Օրուել** )

Սակայն, ինչպես տեսնում ենք, մեր ժողովուրդն ինքն իրեն չի հարգում, Էլ ուր մնաց հերոսացնի և պայքարի իր հերոսների կյանքի, ազատության ու արժանապատվության համար:
( « **Փոքրամասնություն լինելը, նույնիսկ եթե այն բաղկացած է մեկ հոգուց, չի նշանակում, որ խելագար ես: Կա ճշմարտություն և կա սուտ, ու եթե կառչում ես ճշմարտությունից՝ նույնիսկ հակառակ ամբողջ աշխարհի, խենթ չես »: Ջորջ Օրուել** )

*« Պետք է շարժել նրանց, հրել, պետք է կոպիտ վարվել մարդկանց հետ հենց նրանց ազատագրման բարիքի համար, ծակել նրանց աչքերը ճշմարիտով, ահավոր բռերով լույս նետել նրանց »:*

*Վիկտոր Հյուգո*

# ԱՊԵՐԱԽՏՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԻՆՔՆԱԶՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

*« Ըմբոստանալու կարողութիւնը մարդ անհատի ու մարդկային խմբակցութիւնների ամենամեծ առաւելութիւնն է ու առաքինութիւնը »:*
*Յովհաննէս Քաջազնունի*

Առհասարակ ես ինքնազոհաբերության կողմնակից չեմ, քանի որ տեսնում եմ ինքնազոհաբերության պտուղները: Մենք Եվրոպական քաղաքակիրթ ազգերից չենք, մենք հետամնաց ասիական ժողովուրդ ենք՝ **անշնորհակալ** ու **ապերախտ**, չգնահատող և ուրացող: Իմիջիայլոց, այդ դառը, բայց ճշմարիտ խոսքերն ասել է Գարեգին Նժդեհը: Այդ է պատճառը, որ անիմաստ եմ համարում ինքնազոհաբերությունը: Քսանհինգ տարիների ընթացքում կորքիս շատ եմ տեսել ինքնահրկիզվող, և ինքնահրկիզման պատրաստ հայրենասերների, բայց պատասխանը եղել է ցավալի՝ ժողովրդի անտարբերությունը, որն ավելի ցավոտ՝ է քան թուրքի մահաբեր գնդակը: Իր ունեցածի արժեքը չիմացող ու չգնահատող ազգ ենք, ապերախտ ու բարբարոս: Ազատամարտիկներ Պավել Մանուկյանը, Արայիկ Խանդոյանն ու « Սասնա ծռերի » մյուս տղաները հայրենիքի ազատության զոհասեղանին են դրել ոչ միայն իրենց կյանքը այլ՝ ողջ ընտանիքի: ( *http://armlur.am/602664/ 17:18 | Հոկտեմբեր 25 2016 Բացահայտվել են ՊՊԾ գնդի տարածքում 3 ոստիկաններին սպանած անձինք* ) Հայ մարդու համար ամենաթանկը զավակն է ու ընտանիքը, սակայն այս հերոսների համար ազգն ու հայրենիքն ավելին արժեին, քանզի նրանք գնացին ինքնազոհաբերու-

թյան: Արդյունքում ոչինչ ստացան միայն վարկաբեկիչ շահարկումներ ու խոշտանգումներ: Ի՞նչ եք կարծում, տղաները չէին հասկանում, որ անհաջողության դեպքում Չարիքի Իշխանությունը պողպատե ատամներով ծամելու է ոչ միայն իրենց, այլև իրենց հարազատներին: Հասկանում էին, որ կառափնարաններում իրենց խոշտանգելու են, իսկ դրսում իրենց հարազատներին հասցնելու են կամ խելագարության կամ ինքնասպանության: ( *http://www.1in.am/2036427.html Իշխանությունը որոշել է « Սասնա ծռերի » անդամներից մի քանիսին ցմահ ազատազրկել 09:58 2016-10-26* ) Ինքնազոհաբերված Արցախյան պատերազմի մարտիկները ատամնաշար չունեն բերաններում, հանապազորյա հացի մասին չասենք, ի՞նչ է, դա՞ էր իրենց ինքնազոհաբերության գնահատականը՝ արժեզրկվել ու բոմժի կարգավիճակով ապրել՝ անտեսված ժողովրդի ու պատմության կողմից: ( *http://www.aravot.am/2016/09/27/809835/ Շուշիի ազատագրման ժամանակ զոհված հերոսի հայր. «Դեղի փող խնդրեցի, ինձ դուրս արեցին, հիմի եկել, ձայն են ուզում »: (Տեսանյութ, Ֆոտոշարք ) https://www.youtube.com/watch?v=Tzz-aXaqUds* )

Ապրիլյան պատերազմի զինվորները, որոնք կենաց ու մահու կռիվ տվեցին, այն էլ բահերով ու քարերով, ինչ է, ինքնազոհաբերությու՞ն չէր արդյոք, սակայն ինչպե՞ս վարձահատույց եղանք « 800 հեկտար անպետք » հողի համար ինքնահրկիզվեցին, որ Փնթի Օհանյանը հայտարարի՝ « Հարուստների զավակները սովորում են, իսկ Քյասիբը փող չունի », ու դեռ դա բավական չէր՝ գեղանուշ կինն էլ հենց պատերազմի օրերին, գույնզգույն ծաղիկների ֆոնին ֆոտոսեսիաներ անում և տարածում էր սոցցանցերում: Ազգի նվիրյալները ինքնազոհաբերվեն, իսկ թալանչիները վայելեն կյանքը: Այս է հայ նվիրյալի գնահատականը: Գիտեք, ես նրանց չեմ կարող մեղադրել, իրենք այդպես են

ծնվել ու մեծացել: Բնության արտաթորանքները ծանր մանկություն են ունեցել ինչպես ասում էր Արիստոտելը. « **Ճիվաղն իր չկայացածության համար վրեժ է լուծում մի ողջ երկրից ու ժողովրդից** »: Այստեղ միակ մեղավորը ժողովուրդն է, որ հանդուրժում է իր կեղեքիչներին ու կողոպտիչներին. փոխարենը՝ պետք է այդ գունավոր տիկնոջ ծաղիկներն ու աղավնիները մտցնեին ամուսնու՝ Սեյրանի համապատասխան տեղը, որպեսզի հասկանային, թե որոնք են արժեքները, և որպեսզի որդեկորույս մայրերին ասֆալտի վրա քարշ տվող ոստիկանի համար դաս լիներ, որ ամեն հանցանք անպատասխան չի լինում:

Հայ ժողովուրդը այդպես էլ Չգիտակցեց, որ իր Ապերախտության պատճառով էր, որ Գարեգին Նժդեհն ու Զորավար Անդրանիկը հեռացան հայրենիքից, այն մեծությունները, որոնց ինքնազոհաբերությունը **չկարողացանք գնահատել** ազգովի: Փոխարենը ճիվաղներին ու տգետներին, ոճրագործներին ենք հերոսացնում: *( [https://www.armlur.am/601919/](https://www.armlur.am/601919/) Հոկտեմբեր 24 2016 Գագիկ Ծառուկյանի տան դիմաց մի խումբ քաղաքացիներ են հավաքվել. նրանք պահանջում են, որպեսզի նա վերադառնա քաղաքականություն ( Փոտո, վիդեո )*

Արժեզրկված հերոսներով ուզում ենք լուսավոր պետություն կառուցել, ուղղակի ծիծաղելի է:

Չարիքի իշխանությունն առհասարակ ոչնչացնում է արժեքավոր ու արժեք ներկայացնող ամեն ինչ: Դա կլինեն Հերոսներ թե փաստագրություն, պատմություն, մշակույթ, արվեստ, պատմական ու ճարտարապետական կոթողներ, անգամ կենսագրություն: Ոչնչացնում է արժեքավոր մտքեր ու գաղափարներ:

( « **Դա մի սարսափելի եղեռնագործություն է, սպանել պատմությո՜ւնը: Դա ամենամեծն է բոլոր հանցանքներից** »: **Րաֆֆի** )

Սակայն մեկ բան, « *Գաղափարները չեն մեռնում, նրանց հնար-*

*ավոր չէ ոչ խոշտանգել, ոչ էլ սպանել »: ( Գեհենի Առաքել )*
Սակայն հենց Չարիքի իշխանության ամենասարսափելի երևույթն այն է, որ նրանք ամեն ինչ անում են, որպեսզի ջնջեն գաղափարներն ու դրանց կրող մարդկանց: Այն, որ ԿԳԲ-ի ՀՀՇ-ական ոհմակը հենց Արցախյան շարժման սկզբից որդեգրել էր **Գաղափարի մարտիկների** ոչնչացման ծրագիր, դա փաստ է: ԿԳԲ-ի գեներալ Մարիուս Յուզբաշյանի թողած փաստաթղթերում դրա մասին ներկայացված է շատ պարզ, այդ պատճառով էր ԿԳԲ-ն Փնթի Վազգեն Սարգսյանին դարձրեցին որպես **« Գաղափարի Մարտիկների » գլխավոր Դահիճ**: (**« Վազգեն Սարգսյանը հենց որպես « ռազմական առաջնորդ » ստեղծվել է, որպեսզի Մովսես Գորգիսյանը կամ Վիտյա Այվազյանը չդառնան հայկական ջոկատների ղեկավար »: « Ազատամտություն» օրաթերթ « Ազգային գաղափար » ամսագիր:** ) Ինչպես տեսնում ենք Չարիքի իշխանությունը ոչնչացնում է արժեքները` հենց Փնթի կեղտարյունների ձեռքերով:(**« Հոգեկան արժէքներ, արժէքներ, առանց որի մարդը մարդ չէ »: Հովհաննես Քաջազնունի** )
Ոչնչացնում են **Ազգային Հերոսներին, Հավատքն** ու **եկեղեցին, բարոյականությունն** ու **մարդկությունը**, **հույսն** ու **հավատը**:
*( « Սպարապետի » կերպարը երիտասարդ սերունդի մեջ ներարկվել է, որպես հերոս, իրականում հերոսի մասին երբեք բացասական չեն խոսում` անգամ օտար թշնամին: ԳՀ © ԱՌ 2014 )*
Այն, որ ասում են, թե Հույսը վերջինն է մեռնում սուտ է… Չարիքի Իշխանությունը հենց այդ հույսն է սպանում, որը մարդ փայփայում է իր երազներում: Արդյունքը ինքներդ տեսար, « Սասնա ծռերի » տարբերակում, ժողովուրդը մեռած հույսով **Թամաշա էր անում** Հերոսների անձնազոհությանը:
*( [http://www.panorama.am/am/news/2016/07/19/Աղիբեկյան-Նավասարդյան-Խուդոյան/1614847](http://www.panorama.am/am/news/2016/07/19/Աղիբեկյան-Նավասարդյան-Խուդոյան/1614847) 4:02 19/07/2016 Բանակցություններին այլըն-*

*տրանք չեմ տեսնում. Բորիս Նավասարդյան )*

Մենակ չասեք թե դա սուտ է: ( « **Երբ մեռնում է հույսը, առաջանում է անհուն դատարկություն »: Լիանարդո դա Վինչիի** )

Այդ դատարկության մեջ էլ ապրում ենք: Այն մասին, թե ինչպես են սպանում հավատն ու հույսը: Սկզբից Փնթի հայտնիների միջոցով եթերներում ու համացանցում լցնում են թուրքական բայաթին ու ռռնոցը, այնուհետև մատուցում սերունդներին, հարսանիքներում ու ժամանցային վայրերում նույն գարշահոտ մուղամն է ու աղբը: Թաթուլ, Սպիտակցի Հայկո, Արմենչիկ, Գոռ Վարդանյան ու նման անճաշակ անտաղանդներին դարձնում արժեքավոր՝ շնորհելով մեդալներ ու ժողովրդական արտիստի տիտղոսներ: Նույն գործելաոճով շարունակում են նաև մյուս բոլոր ոլորտներում: Քոսոտ Ռադիկ Մարտիրոսյանին, ով ոչ միայն կրկին վերընտրվեց ԳԱԱ նախագահ, այլև Գերագույն գլխավոր չարիքը պաշտոնապես շնորհավորեց նրան վերընտրվելու և 80 ամյակի կապակցությամբ: Իսկ Սեյրան Օհանյանը արժեքավորեց Կռազի Շոֆեռի գործունեությունը ( թե Ո՞ր, Աստված գիտե ) սերունդ դաստիարակելու համար: *( « Երկրապահները շարունակում են մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակության գործը »: Սեյրան Օհանյան http://lurer.com/?p=184704&l=am )* Ամենածիծաղելին կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի խոսքն էր, որ երեխաները Մանվելից պետք է « կռվել սովորեն, մեկ էլ հայհոյել »: Ամենուրեք գերիշխում է տգիտությունը:

Մի խոսքով, աղբը արժեքավորում են, իսկ արժեքները ոչնչացնում: Քրեականները նույնպես արժեքավորվում են, որովհետև նրանք ձեռք-ձեռքի հետ տված օրենքի թվացյալ պաշտպանների հետ գործում են ոչ միայն հայրենիքի հերոսների դեմ, այլև՝ Ժողովրդի: « Սասնա ծռերի » դեմ դուրս են բերվել գողական աշ-

խարհի աղբակույտը: ( *http://www.1in.am/2033790.html Գողական աշխարհի մի մասն այժմ Ջապին գող չի ճանաչում. Պատճառը « Սասնա ծռերն» են 09:14 2016-10-21* *Ջապը համարվում է ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանի թիկնազորի պետ Արշակ Հակոբյանի « մարդը » գողական աշխարհում ու հենց նրա հրահանգով է Ջապն արգելել « Սասնա ծռերի » տղերքին դատապարտյալների հիվանդանոցում սնունդ և այլ անհրաժեշտ պարագաներ տրամադրել: )*

Առհասարակ ՀՀ իշխանությունները մշտապես գործել են քրեականների հետ միասին: Նրանցից շատերը դարձան հերոսներ ու զորավարներ: ( *http://4news.am/2016/08/բարձրաստիճան-պաշտոնյա-ններով-եւ-քրեա/ Բարձրաստիճան պաշտոնյաններով եւ քրեական հեղինակություններով նշում են ԼՂՀ ոստիկանապետի « աջ ձեռքի » ծնունդը* ) Պատահական չէր, որ Ֆեյսբուքյան մի օգտատեր՝ Ռոման Դավթյանը արտահայտել էր հետևյալ միտքը՝ « Մանվել Գրիգորյանն ինձ համար հերոս է, քանզի նրան հերոս է « կարգել » Վազգեն Սարգսյանը »:

Առհասարակ երիտասարդ սերնդից շատերը տեղյակ չեն, որ Վազգենը հենց գլխավոր ազգադավն ու ոճրագործն էր, և նրա ոհմակն է, որ քսանհինգ տարուց ավելի հոշոտում է ոչ միայն ժողովրդին, այլև բարոյականությունը: Փաստորեն, եթե Մանվելը հերոս է ու Ռոման Դավթյանի ասելով՝ նրա կողմից « կարգված » տականքները պետք է, որ հերոս ճանաչվեն, կնշանակի Հրանուշ Հակոբյանը, Հասմիկ Պողոսյանը, Հեղինե Նաղդալյանը ու Լֆիկ Ալեքսանյանը հերոսներ են, չհաշված՝ Տարոն Մարգարյանին ու ԵԿՄ- ի մյուս թափթփուկներին:

( *http://blog.mediamall.am/?id=63746 «Մանվել Գրիգորյանն ինձ համար հերոս է, քանզի նրան հերոս է «կարգել» Վազգեն Սարգսյանը » 17:18 - 19.Մայիս.2016 (տեսանյութ )*

Այնպես որ, տգիտությունն ու խավարամտությունը կուրացրել է ոչ միայն տեսողությունը այլև ուղեղները: Սերունդներին մատուցելով միայն սուտն ու կեղծիքը, մատուցեցին աղբ, որը կարող էր սերունդներին ստրկացնել ու դարձնել իմպոտենտ: Կեղծիքը մատուցում են բոլորը, ովքեր օգտվում են Չարիքի իշխանության լափատաշտից, կեղծեցին հոգևորականներն ու մանկավարժները, կեղծեցին պատմաբաններն ու լրագրողները, ինչ-որ մեր ազգին բարձրացնում էր ու նպաստում վերելքին, դարձրին ավերակ՝ հողին հավասար, անգամ հայրենասիրությունըն ու փառահեղ մտքերը: **Քոստ երկիր** դարձրին, որպեսզի ժողովուրդը չըմբոստանա իր տերերի դեմ:
( *[http://mamul.am/am/news/93776](http://mamul.am/am/news/93776) Սերժ Սարգսյանը ,, Սասնա ծռերի,, իր վարչապետի պաշտոնում առաջադրվելու հնարավորության մասին; Հոկտեմբերի 27 ին 2016 Al Jazeera հեռուստաալիքը* )
Առհասարակ **Տեր ու Ծառա** արտահայտությունը քաղաքակիրթ երկրներում այլ է, որովհետև քաղաքական իշխանությունն է ծառայում ժողովրդին, ոչ թե ժողովուրդը՝ իշխանավորներին: Տեղին է հիշել, որ մեզ մոտ միջնադարի ֆեոդալական կանոնները պարտադրեցին ժողովրդին, որպեսզի մարդ գիտակցի, որ ինքը **ԱնՏեր** չէ, տիրոջ կարգավիճակում նշանակվեցին թաղային հեղինակությունները՝ Թոխմախի միերը, Նեմեց Ռուբոն, Ծառուկյան Գագիկը, Լիսկան ու Լֆիկը:
Այս **քրեաօլիգարխիկ Տերերն են**, որ ֆեոդալական տիտղոսներն ստանալով ժողովրդին պահում են խավարի ու սովի մեջ: Իսկ Չարիքի իշխանությունն էլ իր հերթին նրանց է պահում ու քաջալերում: Պատահական չէր, որ « Սարի թաղի » դեպքերի ժամանակ Թոխմախի Միերի ու մնացած օլիգարխների թիկնազորի գործիլաներն էին, ովքեր փորձում էին սադրել ու հրահրել, այդ թվում ծեծել ու խոշտանգել աչքի ընկնող ցուցար-

արներին ու ակտիվիստներին: Ահա այն ուժը, որը գործում է միայն Չարիքի իշխանությունը հզորացնելու համար:
Շատերը հիշում են ԱԺ պատգամավոր, « Ժառանգություն » խըմբակցության անդամ Զարուհի Փոստանջյանի ԵԽԽՎ հանձնաժողովի նիստում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին ուղղված հարցը, որտեղ տիկին Փոստանջյանը Ազատիչին անվանել էր խաղամոլ ու թմրամոլ: Ամենաhետաքրքիրը ոհմակի ակտիվությունն էր, ովքեր ելել էին պաշտպանելու իրենց **Տիրոջը**... Ամենաակտիվներից մեկը Շմայս Առաքելյան, ով ցանկություն էր հայտնել բռնաբարել ու թքել. « Զարուհու նմանները կ, գնում են սունաթված թուրքերի մոտ, որ հեշտ զբաղվեն իրանց գործողություններով: Տղամարդու կարիք չունեն իրանք, պռոստո սունաթվածի կարիք ունեն »: *( [http://wwwslaq.am/arm/news/155775/](http://wwwslaq.am/arm/news/155775/) Ինձ թույլ չեմ տա դաժը թքել նրա վրա. Շմայսը՝ Զարուհի Փոստանջյանին (Video) 03.10.1312:10 [http://yn.am/ p=14835&l=am/ zaruhu+nmanery+gnum+en+sunatvac+turqeri+mot+shvays](http://yn.am/) 12:07 – 3/ Հոկտեմբեր /2013 Զարուհու նմանները գնում են սունաթված թուրքերի մոտ. Շմայս Նյութի աղբյուրը՝ YN.am )*
Ոհմակն անգամ փորձում է արժեքավոր մարդկանց խոսքը արժեզրկել: Ինչպես տեսանք Չարիքի Իշխանությունը Արժեքներ ոչնչացնելը դարձրել է սկզբունք:
Եթե հիշու՞մ եք Շանթ Հարությունյանը հենց այդ « **Արժեքների Հեղափոխության** » գաղափարով էր դուրս եկել Բռնակալությանը դեմ հանդիմանն: *( [http://wwwazatutyun.am/a/26642925.html](http://wwwazatutyun.am/a/26642925.html) Մեղադրական դատավճիռ՝ « Արժեքների հեղափոխության » գործով հոկտեմբերի 17, 2014 )* Սակայն նա պետք է հասկանար, որ իրեն ճզմելու է այն մեքենան, որը գործի է դրվել քսանհինգ տարի առաջ: Շանթը լավ պետք է հասկանար, որ Չարիքի իշխանությունում, ոչ որ **« պոլի փեղով »** իշխանափոխություն

չի կարող անել և հնարավոր չէ անել միայնակ, որովհետև այն հասարակությունը, որը պետք է աջակցեր նրան վաղուց արդեն հոգևարքի մեջ է, ավելի ճիշտ՝ Կոմայի մեջ է, իսկ թե ե՞րբ հոգեդարձ կլինի, դեռևս անհայտ է։ Ծանթի Արժեքների հեղափոխությունը գրվեց սառույցին, ինչպես և կգրվի « Սասնա ծռերի » պատմությունը։
Չարիքի իշխանությունը արտաքինից թվում է առողջ և ուժեղ, իրականում այն նեխած է ու փտած, բայց և հասկանալի բոլորի համար, որ խորտակելու համար բավական է մեկ հարված, որպեսզի Չարիքի բուրգը վերջնականապես փլուզվի։
Պատահական չէ, որ ապականված միջավայրում ապականվել են լուսավոր մարդիկ ու գաղափարները, շատերը « Սասնա ծռերի » պայքարն անվանում են ներկայացում կամ շահերի պայքար, նույնիսկ, ոմանք կարծում են, թե Պավել Մանուկյանին իշխանությունները գումար են խոստացել այս ամենը կազմակերպելու համար։ Պատկերացնու՞մ եք, տգետներն իրենց արշինով են չափում հերոսներին։ Ինչպե՞ս կարող է Պավել Մանուկյանի պես լուսավոր մարդը, զոհաբերել իր զավակին ու ընտանիքին՝ ինչ-որ ներկայացման համար։ Արայիկ Խանդոյանին գյուղապետի ընտրության համար մեղադրում էին, թե պայքարում է աթոռի համար։ Ուղղակի ողորմելի է, երբ տգետներն արտահայտվում են բարձրաձայն, այդպիսիներին հանդուրժելը ոչ միայն դատապարտելի է, այլև վտանգավոր։ Դրանք պետք է իսպառ ոչնչացվեն որպես չարիք ու կեղտ։ Հենց նմաններն են ապականում ազգն ու պատմությունը։ Նման տգետներն են, որ պախարակում են ազգը, նվաստացնում արժանավորին, ինչպես արեց Արմենչիկի նման ծաղրածուն, իր բերած բարեգործական ծամոնն ու կոնֆետը արհամարհական կերպով, անգամ առանց դեմքերին նայելու շպրտելով հայրենիքի զինվորի երեսին, որպ-

ես ողորմություն, չգիտակցելով, որ դրանով սպանում է ոչ միայն զինվորի ոգին, բարոյականությունն ու արժեքները, այլև բացահայտում է նաև իր իրական ողորմելի, անմարդկային քաղքենի դեմքը: Եթե նույն բանը մեր հարևան Իրանում լիներ, ապա Արմենչիկը կախաղանի կարժանանար, ոչ թե՝ ժողովրդական արտիստի կոչման: Նմաններին պետք է հասարակությունը մեկուսացնի ու արհամարհի, որպես երգիչ կամ արվեստագետ, բայց ստրկամիտ դարձած ժողովրդի մի հատվածը դեռ այդքանից հետո սպասում է նրա մենահամերգներին՝ լսելու նրա անկրկնելի անճաշակությանը՝ ռաբիս երգն ու երաժշտությանը: Արժանապատվությունը վեր է ամեն բանից, նվաստանալով կորցնում ես ազգայինը և թույլ տալիս, որ քեզ հետ վարվեն՝ ինչպես ցանկանան: Այդպես է եղել նաև այն ժամանակ, երբ թուրք իշխանավորները նվաստացնում էին օսմանյան բանակում ծառայող հայ զինվորներին, նույն պատկերն էր, նույն ներկայացումը, նույն ոտնահարված հայ զինվորը:

Ի՞նչ եք կարծում, ինչու՞ են հայ զինվորին ծաղրում, նվաստացնում, խոշտանգում ու սպանում, իսկ նրանք կռվում են հերոսաբար մինչև վերջին շունչը, բայց մենք լուռ ու անտարբեր նայում ենք, անգամ վախենում ենք կարեկցել զոհվածների ծնողներին: ( *http://www.1in.am/1491917.html Սերժանտն ու կրտսեր սերժանտը անկողնում պառկած զինվորին ոտքերով ծեծել, ծաղրել ու հասցրել են ինքնասպանության 2014-11-28* )

Արժեզրկված համակարգում մեռյալ լռություն է, միապաղաղ անտարբերություն: ( « **Ժողովուրդների արյունն ու արցունքը պիտի չդադարի, մինչև որ նրանք ինքնօգնությամբ ոտքի չկանգնեն, մինչև չհզորանան հողով»: Գարեգին Նժդեհ** )

Չարիքի իշխանությունում խաչել են ոչ միայն արդարությունը այլև բարոյականությունը, որտեղ մարդը դարձել է գիշատիչ և

հոշոտում է ինքն իրեն, սակայն ոչ իրեն խոշտանգողներին: ( *http://asekose.am/hy_AM/news/11/230619-arcaxyan-paterazmi-kama-vor-bjiske-virahatvelou-700000-dram-couni-nran-ognoutyoun-e-anhra-jest.html Արցախյան պատերազմի կամավոր բժիշկը վիրահատվե-լու 700.000 դրամ չունի. նրան օգնություն է անհրաժեշտ 2016-09-13 16:55:51* ) Այն, որ ամեն տոնակատարության ժամանակ մեծ շքախմբերով գնում են Եռաբլուր, իբր հարգելու Արցախյան պատերազմի զոհերին, ինչ է չի՞ երևում, թե ինչպես են հարգում հերոսներին: Ազատամարտիկները լիովին իրավունքներից զրկված ժողովրդի մի մասնիկն է, որին խաչեցին ու խոշտանգեցին: Էլիտան անընդհատ խոսում է Անկախության ձեռքբերումներից, բայց իրականում իրենք շատ լավ գիտակցում են, որ քսանհինգ տարիների ընթացքում երկիրը հասցրին անդունդի եզրին, կործանեցին ամեն ինչ: Ձեռքբերումները միայն իրենց նեղ անձնական շրջանակներից այն կողմ չի անցնում: Ժողովուրդը քսանհինգ տարի խոշտանգվեց ու հալածվեց, հալածյալները օտար երկրներում են բախտ որոնում, իսկ Հայաստանի հալածյալները մահ են փնտրում ինչպես ասում էր Թումանյանը:

> « Մեռա՜ն, մեռա՜ն.. Եվ ահա,
> Խառնվել են կյանք ու մահ.
> Չեմ հասկանում աշխարհքի
> « Կան ու չկան » ես հիմա »:

Սփյուռքից հազարավոր դոլարներ և օգնություն ուղարկվեց Արցախ ու Հայաստան, սակայն ոչինչ չհասավ նրանց, ում համար ուղարկվել էր, ոչինչ չծառայեց իր նպատակին: Գիշատիչներն ամեն անգամ իրենց թաթը դնում են հենց այդ գումարների վրա և հափշտակում, լցնում սեփական գրպանները: Արդյոք որքան անմիտ պետք է լինի մարդ, որ չհասկանա և հավատա, որ

25 տարի սեփական ժողովրդին ու երկիրը թալանողը չի կարող փոխվել, դառնալ բարեսիրտ բարերար: Չի կարող բանակը թալանած հրեշները սրտացավ լինեն բանակի հանդեպ, չի կարող զինվորին սպանող ոճրագործ գեներալը փոխվել, դառնալ բարեսիրտ ու բարեգութ: *( http://www.aravot.am/2016/10/18/817175/ Համազգեստի որակը գցելը Մովսես Հակոբյանի առաջին քայլերից է եղել. «Հրապարակ» 11:13 | Հոկտեմբեր 18 2016 )*
Իմ բարեկամներից մեկը պատմում էր, որ 08.10.2016 8:23 Ֆրանսիայի մի քանի ընտանիքների դաշինքը դադարեցնում է հայաստանաբնակ 150 տարեցներից և կարիքավորներից 117-ի ամսեկան օգնություն ցուցաբերելը, քանի որ, պարզվել է այդ տարեցների մասնակցությունը ընտրություններին՝ 5000 դրամով: Նրանք հայտարարել են. « Հիմա թող այդ կաշառող իշխանավորները կատարեն մեր Ֆունցիաները »:
Ու ցավալին այն է, որ չակերտավոր բարերարներից շատերը Չարիքի իշխանությանն են սնում ու հովանավորում, բայց ոչ ժողովրդի անապահով զանգվածին: Չարագործներ, որ շա՜տ հեռու են բարերարությունից ու հումանիստ լինելուց: Հարուստ ենք նման տականքներով, ինչպես Սփյուռքում, այնպես էլ Ռուսաստանում: Այդպիսի « **բարերարներներից**» են Արա Աբրահամյանն ու Ռուբեն Վարդանյանը և այդպես շարունակ մինչև Սամվել Կարապետյան և Սերգեյ Սարկիսով:
*( http://www.tert.am/am/news/2016/10/17/sarkisov-birthday/2165364 Միլիարդատեր Սերգեյ Սարկիսովը որդու 18-ամյակի առթիվ 12 մլն ռուբլի արժողությամբ խնջույք է կազմակերպել ( նկարներ, տեսանյութ) 15:07 • 17.10.16 )* Այն, որ սրբախիղծ կաթողիկոս Գարեգին Բ - ն է « Բարերարներին » մեդալներով պարգևատրում արդեն իսկ հանցագործություն է մեր եկեղեցու հանդեպ:
*( https://www.youtube.com/watch?v=QNTpy7fMwkg Սերգեյ Սարկիսուն-*

*վին շնորհվել է Հայ եկեղեցու պատվո բարձրագույն շքանշան 22 февр. 2016 г.* ) Իսկ որոշ « Բարերարներ » էլ, որ ընդհանրապես որևէ առնչություն չունեն ոչ երկրի պաշտպանության, ոչ ԵԿՄ-ի հետ, հենց նույն ԵԿՄ -ի ենիչերիների ձեռքից են մեդալներ ստանում: ( *https://www.youtube.com/watch?v=OcKrYAH1SDU Զորավ-արն Արայեռում պարգեւատրեց սփյուռքահայ բարերարներին )*
*( http://orer.am/?p=238728&l=am 18 Հոկտեմբեր, 2016 8:32 «Հրապա-րակ». Սամվել Կարապետյանը 300 միլիոն դոլարի ներդրում է կատա-րելու ՀՀ տնտեսության մեջ )*
Իսկ երկրի գլխավոր Չարիքի կողմից պարգևներ ու մեդալներ ստացած « **բարերարները** » կարողանում են սիրահոժար ընդ-ունել դրանք, հավատալով, որ իրենց գնահատում են ըստ արժ-անավույն: ( **«Մենք չունենք ազնվականություն, առաջնորդներ, ղեկավարներ: Մեր ունեցածը վաճառականություն ու հոգևորա-կանություն են Վաճառականությունն աղբ է, իսկ հոգևորական-ությունը միշտ դեմ է անհատի ազատությանը: Նրանք, ովքեր պատասխանատու են մեր անվտանգության համար, հանցա-գործ ավազակախումբ են »: Րաֆֆի** )
Մինչդեռ իրենք էլ ծիծաղում են իրենց վրա, թե ինչպե՞՞ս են պարգևատրվում, երբ իրենք ո՛չ բարերար են, ո՛չ էլ գնահատ-անքի արժանի: Երկիրն իրենցն է, իշխանությունը նույնպես, ինչքան և ինչպես կարող են պետք է վայելեն: Նույնը կարելի է ասել Եվրոպայի կամ ԱՄՆ-ի « բարերարների » մասին, որոնց թվում Եվրոպայի Հայկական Միությունների Ֆորումի /ԵՀՄՖ/ դոկտոր Աշոտ Գրիգորյանը, որ նույնքան հանցագործ է, որքան Չարիքի իշխանության կառավարողները:
Ի՞նչ եք կարծում, եթե այդ բոլոր բարեգործությունները իսկա-պես նպատակին ծառայեին՝ այսինքն հասներ երկրին ու ժող-ովրդին, այսօր Հայաստանը կլինե՞ր **Չարիքի երկիր:**

(*Գագիկ Ծառուկյանը 200 հազար դոլար է նվիրաբերել իրանահայ համայնքին. 16 սեպտեմբեր 2016 [http://www.youtube.com/watch?v=hZ KarTizNbI&feature=youtube_gdata_player](http://www.youtube.com/watch?v=hZKarTizNbI&feature=youtube_gdata_player)* ) Կարծում եմ ոչ, բավական էր այդ « Բարերարները » զարգացնեին տնտեսությունը, այդ դեպքում հարկ չէր լինի բարերարություն անելու, որովհետև երկիրը կծաղկեր ու կբարգավաճեր:

Իսկ իրենք ինչ են անում: Սփյուռքում սև փողերը լվանալու համար կազմակերպում են կեղծ բարեգործություն, որը միայն արտաքուստ է բարերարություն, որի զգալի մասը վերադառնում է իրենց՝ գումարը ճամպրուկում, այսինքն՝ գործարքից ստացած եկամուտը ստանում են Չարիքի իշխանության հոշոտիչները: ( *[http://www.aravot.am/2014/11/09/514077/](http://www.aravot.am/2014/11/09/514077/) 16:09 | Նոյեմբեր 9 2014 « Սամվել Ալեքսանյանն ու իր կինը անկողին չեն մտնում, եթե բարեգործություն արած չեն լինում ». մանկավարժ* )

Հայաստանն օգտագործվում է գումարներ լվանալու համար: Իսկ երկրի ներսում, որպեսզի ռիսկային չլինի և աչք չզարնի գումարների լվացման գործը, նրանք կառուցում կամ վերանորոգում են ինչ-որ մի կիսաքանդ դպրոց կամ մանկապարտեզ, ու դա համարում բարեգործություն: « **Բարերար** » կոչվածների միջոցներով ու ժողովրդի արյան հաշվին է, որ երկրի **գլխավոր չարիքը** իրեն թույլ տալիս **Ցողունախատվել** Կորեայի առաջնակարգ հիվանդանոցներից մեկում, ժողովուրդը սոված է ու ընչազուրկ, իսկ **Փոքրիկ Բռնակալն** իրեն թույլ է տալիս 186. 000 դոլարից ավելի գումար ծախսել միայն իր կոսմետիկ բուժման համար, իսկ խաղատների ու մյուս հաճույքների վրա ծախսված գումարը տասնապատիկ անգամ ավելի է: ( *Հայաստանի նախագահը՝ Կորեայում 14: 47, 24 հունվարի, 2014 [http://www.hetq.am/arm/news/32162/hayastani-nakhagahy-koreayum.html](http://www.hetq.am/arm/news/32162/hayastani-nakhagahy-koreayum.html)* ) ( *Ցողունապատվելը անհրաժեշտ բուժում չէ, այլ երիտասարդացման*

*պլաստիկ թերապիա է, որն արվում է միայն քմահաճույքներից ելնելով: )* Ծահագործող դասակարգի ճոխ ապրելակերպը ցայտուն երևում է հեռուստաէկրաններից, անապահով ընտանիքների չարքաշ. սովահար վիճակի մասին երբեք չեն բարձրաձայնում, այն երևում է միայն համացանցում և այն էլ հիշում են հատուկենտ մարդիկ: Նույնիսկ նման ծանրագույն ժամանակներում հաղթանակներ են տանում և հերոսություններ կատարում ժողովրդի հասարակ ընտանիքների զավակները: Պատահական չէր, որ Օլիմպիական հաղթանակները տարան անապահով ընտանիքից դուրս եկած զավակները, պատահական չէր, որ Ապրիլյան պատերազմում նորից անապահով ընտանիքի զավակներն էին սխրանքներ գործում, Արցախյան պատերազմում նորից նույն պատկերն էր: Նշանակում է, որ այդ **Ծահագործողների** մեջ չկան մարդկային հատկություններով օժտված մարդիկ, որ մտածեն սեփական ժողովրդի բարօրության մասին, որովհետև նրանք ապրում են **« Մարդագելի »** բնազդով, հոշոտում ու արդարացնում իրենց հանցանքները: ( **« Եթե մեղավոր ես, մի աշխատիր արդարանալ: Դրանով միայն ծանրացնում ես հանցանքդ »: ՄՈՒՐԱՑԱՆ** )

Հովհաննես Թումանյանը իր « Գելը » պատմվածքում ներկայացրել է գայլերի մասին, սակայն **մարդագայլը** շատ ավելի վտանգավոր է՝ կատաղած ու սոված գայլի համեմատ: ) *( * « Սարսափելի բան է գիլի ոհմակը, մանավանդ էդ լինում է ձմեռը, գիլի ամենաքաղցած ժամանակը, երբ շատ անգամ գելը քաղցից կատաղում է: Էդ ժամանակ, ասում են, գելերը իրենք էլ են իրարից վախենում: Երբ ոհմակով մի տեղ կանգնում են հանգստանալու՝ շրջան են կազմում ու էնպես են վեր թափում, որ իրար երես պահեն, չեն հավատում մեկմեկու: Վախենում են իրար ուտեն: Բայց ոմանք էլ ասում են՝ նրա համար են էդպես անում, որ իրար տեսնեն ու*

*հարկավոր դեպքում իսկույն նշան տան իրարու, և իբրև թե բոլորը նայում են իրենց գլխավորին »: Հովհաննես Թումանյան )*
Պատահական չէ, որ նրանք օրենքը սահմանել ու գծագրել են իրենց համար, որպեսզի անհրաժեշտության դեպքում օրենքն իրենց պաշտպանի, իսկ իրենք գործեն իրենց հնարած օրենքի սահմաններում, Օրուելի ասելով « **Խոզերը փոխեցին օրենքը իրենց հանցանքները արդարացնելու համար** »: Էջմիածնի քաղաքապետ դարձած՝ ոճրագործի ոճրագործ թույեն արդարությունից ու օրենքից է խոսում, քանզի գիտի, որ օրենքն իրենց ձեռքին է, ու օրենքի անունով էլ սպանում ու թալանում: Օրենքը քաղաքապետի ոճրագործ հայրն է, օրենքը իր դատավոր քույրն է, օրենքը իրենց ձեռքին գործիք է, որով համ նալին են խփում, համ մեխին: Ապրում են Չագուչի օրենքով ու խփում են ում ուզում են: Պատահական չէ, որ այդ տգետ չագուչագլուխներն են, որ ոչնչացնում են բոլոր արժեքները, ոչընչացնում տասնամյակների կառուցածն ու ստեղծածը, ժողովրդին պահելով են հավիտենական խավարում: Շեքսպիրի ասած դըժոխքը այստեղ է, իր ԴԺՈԽԱՅԻՆ երևույթներով ու տառապանքներով: ( **Դժոխքը դատարկվել է… Բոլոր հրեշներն այստեղ են…** » )
Աստված վաղուց է երես թեքել մեր ժողովրդից, որովհետև Աստված ապերախտներին չի սիրում, « Սասնա ծռերին » դավաճանեցինք Հուդայի պես երեսուն արծաթով, համբուրելով Չարիքի աջը արժանացանք այս ամենին, որը կոչվում է **ստրկություն**, ստրուկները պետք է տառապեն, որովհետև իրենք են ընտրել իրենց պատիժը: ( « **Աստված ստեղծել է մեր գլուխը ուղղաբարձ դեպ վեր, ամոթ է մեզ, երբ մենք, անասուններին հավասարվելով ընդունենք այդ անարգությունը, մեր գլուխը խոնարհեցնելով և ուրիշի ոտքի տակը տալով** »: **Րաֆֆի** )
Ինչ-որ ցանեցինք ժամանակին, այն էլ հնձում ենք այսօր, ցա-

նեցինք անտարբերություն ու դավաճանություն, հիմա հավաք-ում ենք տառապանք ու պատիժ:

**« Մեր խոսքն ու գործը, առհասարակ, չեն հարմարում իրար: Խոսքն առաքինական է, գործը՝ մոլեկան »: ՄՈՒՐԱՑԱՆ**

**« Իշխելու գաղտնիքն է՝ սեփական անսխալականության հանդեպ հավատը համադրել անցյալի սխալներից դասեր քաղելու ունակության հետ »: Ջորջ Օրուել**

**« Ժողովուրդների արյունն ու արցունքը պիտի չդադարի, մինչև որ նրանք ինքնօգնությամբ ոտքի չկանգնեն, մինչև չհզորանան հոգով»: Գարեգին Նժդեհ**

***« Եվ ամեն մեկը, որ ոգիություն և վատություն ունեցավ իրենից դուրս փնտրելու աղետի պատճառները, կրկնեց հիմարություններ միայն »: Գարեգին Նժդեհ***

***« Երբ խաբում եք ինքներդ ձեզ՝ կարծելով, թե ինչ-որ բան եք տեսնում, ենթադրում եք, որ բոլորն էլ տեսնում են նույնը »: Ջորջ Օրուել***

# ՈՐԱԿՈՒՄ ՈՒ ԹԻՐԱԽԱՎՈՐՈՒՄ

*« Ազգերը անմահական չեն:*
*Եւ եթէ մի ազգի մահուան պատճառը իր խսկ ներսից է »:*
*Կոլիաննես Քաջազնունի*

Ցանկացած Չարիքի երկրում Որակումը և Թիրախավորումը գործող իշխանության գլխավոր պայմաններից մեկն է, որովհետև ինչպես ասում են՝ « **ամենալավ պաշտպանությունը դա հարձակումն է** », ուստի դա համարվում է առավել արդյունավետ միջոց՝ հակառակորդին հեղինակազրկելու և ոչնչացնելու համար: Որակման ու թիրախավորման ավանդույթը մնացել է Չեկիստական Ռուսաստանից: Ես ներկայացրել էի, որ Ստալինը Լև Տրոցկուն, ով Հոկտեմբերյան Հեղափոխության հերոս առաջնորդներից ամենակարևոր դերակատարություն ունեցողն էր՝ Վլադիմիր Լենինից հետո: Ստալինը մրցակիցներից ազատվելու համար Տրոցկու գլխին որոգայթներ սարքեց, սկսեց հալածել ու հետապնդել, հասկանալով, որ իր մրցակից Տրոցկին կոչվում էր ազգային թշնամի, իսկ նրա կողմնակիցները՝ պետության թշնամիներ՝ Տրոցկիստներ: *( « Троцкизм » . Троцкистское движение )* Անկախ նրանից, թե մարդիկ կապ ունեին նրա հետ թե ոչ, կամ կիսում էին Լև Տրոցկու մտքերը, թե ոչ: Ուղղակի, դա պատճառ էր դառնում որակել ու թիրախավորել ում ցանկանում էին: Ստալինի ու Բերիայի նախաձեռնությամբ հազարավոր մտավորականներ, գեներալներ ու քաղաքական գործիչներ աքսորվեցին Սիբիր ու գնդակահարվեցին՝ առանց դատ ու դատաստանի: Նույն տեսարանը պատկերել է Ջորջ Օրուելը իր « Անասնաֆերման » գրքում, որտեղ առաջնորդ՝ Բոնակալ Խոզը, « Գո-

մի » պատերազմի հերոս Զյունիկին համարում է թշնամի ու սկսում է հալածել՝ ինչպես Ստալինը: Չարիքի իշխանության առաջին տարիներին նույն գործելաոճով էր գործում ՀՀՇ -ի ոհմակը՝ հանձինս Լևոն Տեր -Պետրոսյանի ու Վազգեն Սարգսյանի: ՀԱԲ-ին ոչնչացնելուց հետո թիրախավորեցին, որից հետո զոհաբերեցին Վիտյա Այվազյանին և Գեղազնիկ Միքայելյանին: ՀՀՇ-ական ԿԳԲ- ի ձեռքով սպանվեց նաև Անկախության բանակի հրամանատար Մովսես Գորգիսյանը: ( « **Վազգեն Սարգսյանը հենց որպես « ռազմական առաջնորդ » ստեղծվել է, որպեսզի Մովսես Գորգիսյանը կամ Վիտյա Այվազյանը չդառնան հայկական ջոկատների ղեկավար »: « Ազգային գաղափար » ամսագիր: Արտյոմ Խաչատրյան )**

Վազգեն Սարգսյանը պատահական չէր թիրախավորում ու հալածում Գաղափարի մարտիկներին, որոնք վտանգ էին ներկայացնում իրենց ոհմակին: Արտաշատի Անկախության բանակի մարտիկներին ու հարյուրավոր մարդկանց ԿԳԲ- ի կառափնարաններում խոշտանգեցին ու սպանեցին: « **Ազգադավը** » գրքում ավելի պարզ է գրված այդ ոճիրների մասին: Վազգեն Սարգսյանից հետո նրա գործը շարունակեց Մանվել Գրիգորյանն ու Սերժ Սարգսյանը: **( « Զորավար Մանվել Գրիգորյանը սպարապետ Վազգեն Սարգսյանի գործի արժանի շարունակողն է »: « Գեներալ » Մեյրան Սարոյան © )** Նույն ավանդույթով խոշտանգում ու սպանում էին ցանկացած մարդու, ով իրենցից պատասխան էր պահանջում: Եթե հիշում եք, ԵԿՄ 10-րդ համագումարին Սերժ Սարգսյանը հայտարարել էր, որ իրենք լավ գիտենք, թե ով որտեղ և ինչպես է կռվել: *( **« Մենք շատ լավ գիտենք՝ ով, որտեղ և ինչքան արյուն է թափել: Մենք նաև շատ լավ գիտենք այդպիսի մարդկանց խոսքի արժեքն ու նրանց գործունեություն կատարելու ունակությունը »: Սերժ Սարգսյան 15.02.2014***

*http://www.7or.am/am/news/view/79105/ Դեկտեմբեր 11, 2014 01:00 Ով և որտեղ է արյուն թափել․ Տարեսկզբին՝ փետրվարի 15-ին, ԵԿՄ համագումարում ունեցած Սերժ Սարգսյանի ելույթից մեջբերում.)* Այդպես թիրախավորելով ազատամարտիկներին: Վոլոդիա Ավետիսյանի ձերբակալությունը, մի շարք ազատամարտիկների ձերբակալությունները հենց դա էին վկայում: Այդ խուքերից էր, որ ոստիկանապետ Վովա Գասպարյանը հայտարարել էր. « Ազատամարտիկները թասիբ, պատիվ չունեն. թերթերում իրար են լափում », ինչից ինքը զարշում է: Ինքներդ տեսեք՝ դասալիք, հանցագործ ու մարդասպան Վովա Գասպարյանը, որի խղճին հարյուրավոր զոհեր կան, իրեն իրավունք է վերապահում թիրախավորել հայրենիքի պաշտպաններին՝ մոռանալով, որ ինքը քրեական հանցագործների հետ համագործակցում է արդեն երեսուն տարուց ավելի է: *( Օրենքով գող Զաալը համարվում է ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանի թիկնազորի պետ Արշակ Հակոբյանի « մարդը » գողական աշխարհում ու հենց նրա հրահանգով է Զաան արգելել « Սասնա ծռերի » տղերքին դատապարտյալների հիվանդանոցում սնունդ և այլ անհրաժեշտ պարագաներ տրամադրել: http://www1in.am/2033790.html Գողական աշխարհի մի մասն այժմ Զաալին գող չի ճանաչում. Պատճառը « Սասնա ծռերն » են 09:14 2016-10-21 )*

Ադրբեջան փախած ակտիվիստ Վահան Մարտիրոսյանին նույն կերպ որակեցին ու թիրախավորեցին, որովհետև նրան պետք է լռեցնեին, ուղղակի Վահան Մարտիրոսյանը խելացի գտնվեց ու խույս տվեց ԿԳԲ-ի կառափնարանում խոշտանգվելու հաճույքից: Այստեղ նորից Քրեականներն էին իրենց պատգամավոր՝ Թոխմախի Միհրով, այնպես որ տգետ ու հանցագործ Միհրը նույնպես թիրախավորել էր Վահան Մարտիրոսյանին իր բոլոր ծանոթներին իրար խառնելով: Թոխմախի Միհրի ձեռքով

էր, որ Վահանին ոչ միայն դավաճան հանեցին այլև սպանեցին Վահան Մարտիրոսյանի երեխային, այն էլ մոր որովայնում: Այդպես ինչպես օսմանա-թաթարական ոճրագործներն էին անում: Այն, որ ազգովի նրան դավաճան ու Ադրբեջանի գործակալ ենք կոչում, դա նորմալ է, որովհետև Չարիքի իշխանությունը գործի է դրել պետական ողջ ռեսուրսը, որպեսզի նրան որակեն՝ դարձնելով թիրախ միամիտ հայերի համար: Պատահական չէ, որ « Արծիվներ » միության նախագահ՝ Խաչիկ Ասրյանը հայտարարել էր. « Վահան Մարտիրոսյանին պետք է գնդակահարել ու մոխիր դարձնել »: Վահան Մարտիրոսյանին իզուր չէին մեղադրում կեղծ ու հորինված գողության ու մի շարք ծանր հանցանքների մեջ, անգամ բռնաբարության ու համասեռամոլության մեջ, նույնիսկ խելագար ու թուրք որակեցին: Անգամ Ապրիլյան պատերազմն ու հարյուրավոր զոհերը կապում էին նրա անվան հետ: Բաքվում Վահան Մարտիրոսյանը իր մամուլի ասուլիսի ժամանակ ասաց հայկական իրականության ողջ ճշմարտությունը, չհաշված իհարկե մի քանի չափազանցված մտքեր: Այն հարցին, թե ինչու՞ Վահան Մարտիրոսյանը նախընտրեց փախչել Ադրբեջան, ունի իր պատասխանը, նա այլընտրանք չուներ ու խոշտանգվել հանուն որոշ մարդկանց անիարկի վրեժխնդրության՝ բոլորովին չարժեր: « **Ապերախտ** » ժողովրդի համար էշ նահատակ լինելը հիմարություն էր: *( « **Ապերախտ ժողովորդ** » Գարեգին Նժդեհ: 1920 -թ սեպտեմբերի 17 ) Ուստի նա պարտավոր էր մտածել սեփական զավակի ու կնոջ անվտանգության մասին: ( [https://surhandak.wordpress.com/2015/12/25/վահան-մարտիրոսյանն-է-դավաճանը-թե՞-նր/](https://surhandak.wordpress.com/2015/12/25/վահան-մարտիրոսյանն-է-դավաճանը-թե՞-նր/) ՎԱՀԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՆ Է ԴԱՎԱՃԱՆԸ, ԹԵ՞ ՆՐԱՆ ՄԵՂԱԴՐՈՂՆԵՐԸ )*
Եթե հիշում եք 1999 թվականի հոկտեմբերի 27 -ի հերոսներից՝ Նաիրի Հունանյանին, ում նույնպես որակեցին ու ոչնչացրեցին,

նրան հենց այնպես չդարձրին Թուրքիայի ու Ադրբեջանի գործակալ, դավաճան ու թշնամի: Սա արդեն Գագիկ Ջհանգիրյանի արդյունավետ ծառայության շնորհիվ: Հեռուստալրագրող Տիգրան Նաղդալյանին նույնպես որակեցին ու թիրախավորեցին՝ արդեն Վազգեն Սարգսյանի եղբայրների կողմից: 90-ականների կեսերին որակեցին ու թիրախավորեցին ԱՍԱԼԱ-ի մի քանի մարտիկների, որոնք գնդակահարվեցին հենց Երևանում ԿԳԲ-ի գործակալների կողմից: Մոնթե Մելքոնյանը նույնպես դարձավ այդ Չարիքի զոհը: Որակեցին շատ լուսավոր մարդկանց, որոնք խանգարում էին Ռիմակին:

Վոլոդիա Ավետիսյանը, Ծանթ Հարությունյանը, Ժիրայր Սեֆիլյանը, անգամ Գարեգին Չուքասզյանը հենց այդ որոգայթի զոհերը դարձան: « Սասնա ծռերին » որակում են ինչպես կարողանում են, նրանց հանցագործ որակելու համար անգամ օգտագործում են հոգևորականներին ու մտավորականներին:

Պատահական չէ, որ այդ Որակման ու Թիրախավորման կիզակետում եմ հայտնվել և ես: Սոցիալական ցանցերում իմ լուսանկարները տարածում են ու հայտարարում, որ **Գեհենի Առաքելը** ադրբեջանական ֆեյք է կամ գործակալ: Հայտարարում են, որ Թուրքիայի ու Իսրայելի գաղտնի ծառայությունները հովանավորում են ու վճարում ինձ: Նույնիսկ ԿԳԲ- ի գործակալ էլ համարեցին: Անգամ Արշակ Զաքարյանը ներկայացրել էր, որ Գեհենի Առաքելը հենց Վահան Մարտիրոսյանն է ու այդ գրական կեղծանունով է իր սև գործն անում: Չնայած իմ հրապարակումներից մի քանիսը, իսկապես, տպագրվել են ադրբեջանական « Հաքքին.Ազ » ( http://haqqin.az/ ) կայքում, իմիջիայլոց դա ողջունելի է, և բոլորովին չի նշանակում, որ ինձ պետք է կապեն Վահանի հետ: Ես չեմ թաքցրել, որ Վահան Մարտիրոսյանը սոցիալական ցանցերով գրում է ինձ:

Ճշմարտությունը կարևոր է, քան ինչ-որ շահեր, այս տարբերակում հայկական համացանցային տիրույթում վխտացող ներքին Չարիքը ավելի վտանգավոր է, քան արտաքինը: Համացանցում նույնիսկ ներկայացված է, թե Գեհենի Առաքելը ԿԳԲ-ի լրատվական ծառայությունում է աշխատում ու Սերժ Սարգսյանի հովանավորյալներից է: Այն, որ շատերը կարծում են, թե իմ լուսանկարը իմը չէ, այլ` ինչ-որ մոդելի: Ամենահետաքրքիրն այն է, որ Գեհենի Առաքելը հրապարակախոս լրագրող Արտյոմ Խաչատրյանն է: Նույնիսկ Երկրապահները սպառնացել էին Արտյոմ Խաչատրյանին հաշվեհարդար տեսնել: Կարծիքներ են հնչում, որ Առաքելի « դիմակի » ետևում կին է, նույնիսկ ներկայացրել են, թե Սուզան Սիմոնյանն է, կամ, անգամ` Դավիթ Շահնազարյանի գործակալներից: Ամենահետաքրքիր փաստը վերջերս Ֆեյսբուքում հայտնված « Սասնա Ծռերին » հայհոյող ինչ-որ ֆեյք ներկայացրել էր, որ իմ դիմակի ետևում ազատամարտիկ Վարդան Հովհաննիսյանն է: Ճիշտն ասած` այս որակումը իսկապես մեծ պատիվ է ինձ համար, քանի որ դրանով ոչ թե արժեզրկում են, այլ ավելի վեր են բարձրացնում: Իսկ այդ որակումով իրենք ցածրանում են, ապացուցելով, որ բոլոր ազատամարտիկներն իրենց թշնամիներն են: Չնայած այդպես էլ կա: Ինձ համար իսկապես մեծ պատիվ է լինել Արցախյան պատերազմի լեգենդներից մեկը, որն ի տարբերություն շատ հերոսների, գլուխ չխոնարհեց Չարիքի իշխանության դեմ: Հիմա ինձ ներկայացնում են որպես ազատամարտիկ, ի՞նչ եք կարծում ազատամարտիկ լինելը հավասար է դավաճանությա՞ն:

Ժիրայր Սեֆիլյանին ու « Սասնա ծռերի » տղաներին անվանեցին ահաբեկիչներ ու մարդասպաններ, արդյոք դա չի՞ նշանակում, որ Չարիքի իշխանության ոհմակի համար **ԱՌԱՋԻՆ** թշնամիները ազատամարտիկներն են:

Քանիհինգ տարի խոշտանգեցին նրանց, ինքս ազատամարտիկի զավակ լինելով, իմ մաշկի վրա եմ զգացել այդ բարբարոսությունը: Հենց այնպես չէ, որ հոշոտողների դասակարգը բոլոր տոնակատարությունների ժամանակ իրենց թանկարժեք ավտոշարասյունով ու հաստագլուխ թիկնազորով գնում են Եռաբլուր ու «խոնարհվում» հերոսների շիրիմներին, ամպագոռգոռ ելույթներ ունենում նահատակված տղաների մասին, իբր հարգում են նրանց հիշատակը: Ի՞նչ հարգանքի մասին է խոսքը, երբ կենդանի լեգենդներից շատերն անգամ տատամ չունեն իրենց բերաններում, որ այդ հերոսներից շատերը մահացան սովից ու ցրտից: ( *http://www.aravot.am/2016/09/27/809835/ Ծուշիի ազատագրմանը զոհված հերոսի հայր. «Դեղի փող խնդրեցի, ինձ դուրս արեցին, հիմի եկել, ձայն են ուզում»: (Տեսանյութ, Ֆոտոշարք )*
*https://www.youtube.com/watch?v=Tzz-aXaqUds* )
Ի՞նչ է, դա՞ է ձեր անկախությունը, երբ ազատամարտիկների հանդեպ շարունակվում է հաշվեհարդարն ու սպանդը: Պավել Մանուկյանի ու Արա Խանդոյանին դարձրել են որպես Ռամիլ Սաֆարով, ներկայացնում են որպես հանցագործ, ահաբեկիչ ու մարդասպան, ցավոք շատ տխմարներ ընդունում են դա՝ չհասկանալով, որ հաջորդ թիրախը կարող են հենց իրենք լինել, իրենց կեղծ քծնանքի ու շողոքորթության համար:
Որակելով «Սասնա ծռերին՝» հոշոտողների ոհմակը պատկերում է հենց իրենց իսկ գայլային կատաղի դեմքն ու նկարագիրը, որովհետև գալու է մի գեղեցիկ օր, երբ հալածյալների որդիներն են խոշտանգելու իրենց, որովհետև Չարիքի Իշխանության վերջը գալու է, և որպես կանոն ավելի սարսափելի ու դաժան է լինում, քան սկիզբը: ( *http://armlur.am/586895/ 16:17 | Սեպտեմբեր 26 2016 «Սասնա ծռեր» խմբի անդամներ Արամ Մանուկյանի և Պավել Մանուկյանի կալանքը երկու ամսով երկարացնելու միջ-*

*նորդության հիմքում եղել է Վալերի Օսիպյանի ցուցմունքը:)*

Արցախյան պատերազմի հերոսներին որակելն ու թիրախավորելը պետական ծրագիր էր: Մանվելի ու Սեյրան Սարոյանի պես տզետներին կոչումներ շնորհելով՝ որակազրկեցին գեներալի պատվավոր տիտղոսը:

Կրկին վերադառնանք Վահան Մարտիրոսյանի թեմային, քանի որ նոր հիստերիա է սկսվել նրա դեմ, ահաբեկության նոր ալիք: Ու դա պատահական չէ, որ իշխանությունը նրա դեմ իսկական որս է սկսել, Վահան Մարտիրոսյանը ադրբեջանական կայքերի միջոցով հրապարակել էր Սերժ Սարգսյանի փեսա Միքայել Մինասյանի՝ « Միշիկի » թալանած միլիոնների մասին, այդ թվում նաև նորանշանակ ԱԱԾ- ի պետ Գեորգի Կուտոյանի կատարած հանցանքների մասին: *( http://haqqin.az/news/45538 21 Мая 2015 )*

Ողջ աշխարհը գիտի, թե ովքեր են իրական հանցագործներն ու թալանչիները, սակայն դրանց մասին Հայաստանում ԲՈԼՈՐԸ աչք են փակում ու լռում, փոխարենը որպես ազգի թշնամի տեսնում են Ժիրայր Սեֆիլյանին կամ « Սասնա ծռերին », կամ էլ Վահան Մարտիրոսյանին ու Գեհենի Առաքելին: Ճիշտն ասած դա գերագույն հաճույք է ինձ համար, որ վախենում են ինձանից, այն որակումները, որոնք տարածվում են իմ անվան շուրջ, վկայում է, որ Չարիքի իշխանությունը խուճապի մեջ է: Վերջապես մեկը պետք է լինի, որ առերես հայտարարի ու բացահայտի իրենց գործած հանցանքների ու ոճիրների մասին: Ի՞նչ կարևոր է, թե ով կասի, եթե ես չասեմ, ուրեմն կասի ինչ-որ մեկը: Ի գիտություն բոլոր ոճրագործների, արդեն գործի է դրվել այդ մամլիչը, որը որ գալու է ճզմելու ոհմակին: Մարդիկ արդեն հասկացել են, որ իրենց խաբել են քսանհինգ տարի շարունակ՝ հերոսներին ներկայացնելով որպես դավաճան, իսկ դավաճաններին էլ մատուցել որպես հերոսներ:

*( http://www.armtimes.com/hy/article/95552 Բաղմանյանի գործով դատախազի ու քննիչի վեճը վերաճել է ծեծկռտուքի 20/10/2016 )* Հիմա արդեն դժվար կլինի կանգնեցնել այն ձնագնդին, որը գլորվելով ավելի է մեծանում: Անկախ նրանից Գեհենի Առաքելը կլինի թե ոչ, կամ թե Գեհենի Առաքելը՝ կին է, թե տղամարդ նշանակություն չունի, ազգը արդեն արթնացել է լեթարգյան քնից արդյունքը նկատելի է, իսկ ավարտը լինելու է ողբերգական՝ հոշոտողների համար: Գեհենի Առաքելի ժամանակը դեռ գալու է, որովհետև գալու է այն սերունդը, ով կրակով ու արյունով մաքրազերծելու է քանիհինգ տարիների ամոթալի էջերը: **Չարիքի իշխանության** տված պտուղները տեսնում ենք, սակայն իրենք իսկ չեն նկատում, որ դրան զուգահեռ ծիլ են տալիս նաև այն հերոսների ժառանգները, ովքեր պատրաստ են « Սասնա ծռերի » պես շուռ տալ աշխարհն ու մարդկանց հոգիները, և որը կոչվում է **Վրեժ: ( « Թո՛ղ վրեժխնդրության աստվածը թափե իմ գլխին կայծակ, կրակ, թո՛ղ նա բանա ինձ համար դժոխքի բերանը, բայց ես պիտի գոչեմ, աղաղակեմ այս անբախտ այրիի հետ՝ վրե՛ժ, վրե՛ժ...: Րաֆֆի )**
*( http://www.armtimes.com/hy/article/95559 Վիգեն Սարգսյանը պատրա՞ստ է վերադարձնել « այդ տարածքները » Ադրբեջանին 19:35 20/10/2016 )* Այնպես որ, թող չմտածեն, որ Գեհենի Առաքելը վախենում ու թաքնվում է Ֆեյքերի ետևում, ես հրապարակել եմ ոչ միայն իմ լուսանկարը, այլև անուն ազգանունը: Իմ ընթերցող բարեկամներից շատերը գիտեն, ով եմ ես ու ավելորդ է ինչ-որ բացատրություններ ներկայացնել: Որպես քրեագետ -հոգեբան ես գիտեմ, թե վախեցած ոհմակը ինչի է ընդունակ, անզորությունը առաջացնում է հիստերիա: Ինչպես ասում են **« երկու ահը մեկ մահ է »**: Կլանային օլիգարխիան ոչ միայն խուճապի մեջ է, այլև՝ հոգևարքի: Պատահական չէր Չարիքի

Իշխանության 25 ամյակին նվիրված զինվորական շքահանդեսի ցինիկ ցուցադրությունը « Իսկանդեր » հոթիոների մասնակցությամբ: Իմիջիայլոց հեռուստամեկնաբանը այնպիսի ոգևորությամբ արտասանեց « Իսկաաանդե՜ր »-ը, որ մշակույթն ու զինտեխնիկան խառնեց իրար: Այդ շքահանդեսը ամբողջությամբ ներծծված էր խորհրդային ոգով ու ոճով: *( https://www.youtube.com/watch?v=YweWKN5azG4 )* Զազրելի ու ծիծաղելի էր « գերագույն գլխավոր » հրամանատարի ելույթը, չեմ փորձի մեկնաբանել, որովհետև **վերջին Բոլշևիկից** ավելին սպասել ուղղակի կլինի անմտություն:

Իսկ ինչ վերաբերում էր « Իսկանդեր » հոթիոներին, ապա դրանք չեն կարող նպատակին ծառայել, թռչել, որովհետև տեղադրված են կոյուղու խողովակներ և ոգևորությունն ուղղակի ինքնախաբեություն է: Եթե պետության հակաօդային համակարգը վաճառված է մեկ այլ երկրի, ապա նշանակում է, որ այդ հոթիոները սողալով պետք է անցնեն այդ տարածքը: Մի խոսքով, Չարիքի իշխանության հերթական խաբկանքն է ու կեղծիքը: ( *http://www.1in.am/2035176.html Ռուսաստանից 200 միլիոնի զենք ենք ստացել, մի բան էլ ավելի. Ռուստամ Գասպարյան 2016-10-24* )

Կրկին վերադառնանք՝ որակման ու թիրախավորման հարցին: Եթե կազմելու լինենք Չարիքի իշխանության **« թշնամիների »** ցանկը, ապա կտեսնենք, որ առաջին տասնյակում ազատամար տիկներն են, այդ թվում նաև՝ ես: ( **« Ով մեզ հետ չի, նա ազգի դավաճան է »: ՀՀԾ** ) Ուրեմն այսպես:

1./ Նաիրի Հունանյան.

2./ Ժիրայր Սեֆիլյան.

3./ « Սասնա ծռեր »

4. / Շանթ Հարությունյան,

5. / Գնդապետ Վոլոդիա Ավետիսյան.

6. / Քահանա՝ ազատամարտիկ՝ Արծրուն Ավետիսյան.
7./ Գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանց.
8./ Գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյան.
9./ Պահեստազորի փոխգնդապետ Խաչիկ Ավետիսյան,
10./ Վահան Մարտիրոսյան.
11./ Գեհենի Առաքել։

Ինչպես տեսնում ենք, Չարիքի իշխանության բոլոր « թշնամիները » բացի Վահան Մարտիրոսյանից ու Գենենի Առաքելից, բոլորը ազատամարտիկներ են ու Արցախյան պատերազմի հերոսներ։ Նորից վերհիշենք « մեծ սպարապետիկի » խոսքերը « **ՀԵՐՈՍՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԶՈՀՎԵՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏՈՒՄ, ՀԱԿԱՌԱԿ ԴԵՊՔՈՒՄ ՆՐԱՆՔ ԱՆՏԱՆԵԼԻ ԵՆ ԴԱՌՆՈՒՄ** »։ ( *Վազգեն Սարգսյան, Վիքիպեդիա:* ) Շատերը կասկածում են, թե Վազգեն Սարգսյանը այդպիսի բան ասել է, թե ոչ, սակայն փորձեք համացանցում փնտրել այդ բառերը ու կհամոզվեք։
( *http://www.1in.am/2041461.html « Արմենիա TV»-ն ցեխ է շպրտել ՍէՖիլյանի անցած մարտական ուղու վրա և պետք է ներողություն խնդրի. փաստաբան 19:00 2016-11-03* ) Պատահական չէր, որ Ռուսաստանի հայերի միության նախագահ՝ փնթի Արա Աբրահամյանը վիրավորել էր Արցախյան պատերազմի հերոս գեներալ - լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցին։
Իմիջիայլոց, պատերազմից ամիջապես հետո Վազգեն Սարգսյանը նրան ծեծել էր ու դուրս վռնդել իր առանձնասենյակից։ Գեներալը հեռանում է Հայաստանից՝ երդվելով, որ երբեք Հայաստան չի վերադառնա։ Իսկ գեղցի Արա Աբրահամյանը, որն անգամ ռուսերեն խոսել չգիտի, իրեն թույլ է տալիս վիրավորել հերոս գեներալ - լեյտենանտին անվանելով նրան « Ինչ-որ մեկը »։ Նույն վիրավորական խոսքերը փնթի Արմեն Զավենի Սարգսյանը ասել էր Արկադի Տեր- Թադևոսյանին, եթե հաշվի առնենք, որ ոճրագործություններ գործած Արմեն Սարգսյանը ոչ միայն

« սպարապետ » Վազգեն Սարգսյանի եղբայրն է, այլև Պաշտպանության նախարարի օգնականը: *( http://168.am/2013/08/24/266978.html#. « Արթնացիր մղձավանջից, Կոմանդոս. Վազգենը չկա, բացնրանց, ում « խմբավորում » ես որակել, նրանք իմ համար Վազգեններ են: Եվ էնպես էլ չէ, որ չեմ կարող Կոմանդոսին հիշեցնել, թե որտեղից է եկել և ուր է գնում... Մենք պատրաստ ենք հակադրվել քո հետ »: Արմեն Սարգսյան. 24 Օգոստոս 2013 )* Այն, որ նա ամենուրեք հայտարարում է, որ ինքն ու իր ոճրագործ եղբայրը Արցախյան պատերազմի մասնակից են, դա արդեն սուտ է, քանի որ նրանք պատերազմի ժամանակ ըզբաղված էին ալան - թալանով ու ազատամարտիկներին ոչնչացնելով: *( Արմեն Սարգսյանի ընտանիքի հանցանքները այնքան շատ են ու բազմազան, որ ուղղակի անհնար է պատկերացնել: Պատահական չէ, որ Արմենի աներորդի Լեոնիկ Ալեքսանյանը, որը Ազգային Ժողովի Հանրապետական խմբակցության պատգամավոր է հայտարարել էր, որ Աղդամը կարելի է հանձնել թուրքերին: http://mitk.am/2016/07/եթե-աղդամը -տանք-ու-անկախություն-լինի-ի/ Եթե Աղդամը տանք, ու անկախություն լինի, ի՞նչ է եղել որ, տանք 14/07/2016 )* ( **« Միևնույն մարդու մեջ չեն ապրում միաժամանակ ստրկամիտն ու ազատատենչը: Նա կամ մեկն է կամ մյուսը »: Գարեգին Նժդեհ** ) Եթե հիշում եք, ցմահ դատապարտված ազատամարտիկ Սողոմոն Քոչարյանը նույնպես դարձավ այս կեղտոտ իրականության գարշելի կենդանիների զոհը, Լևոն Տեր -Պետրոսյանի ոհմակը նրան անվանեց ահաբեկիչ ու ցմահ դատապարտեց` խոշտանգելով նրան ու ողջ ընտանիքին: Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը ոչինչ չարեցին իրենց նախագահության ժամանակ, որպեսզի անարդարությանը զոհ դարձած հերոսին համաներում շնորհեն: Այսպես է Չարիքի իշխանությունը գործում, տեղին կլինի կարդալ

դատապարտված ազատամարտիկ՝ պահեստազորի փոխգնդապետ Խաչիկ Ավետիսյանի նամակը «գերագույն գլխավոր հրամանատարին»: (*Ազատամարտիկ Խաչիկ Ավետիսյանը հետ է վերադարձրել իր 8 մեդալները* *http://www.tert.am/am/news/2016/09/21/medal/2140563 21.09.16*) Որակում և թիրախավորում են նրանց, ովքեր փնթի կռազի շոֆեռի հասցեին ցանկացած տիպի արտահայտություններ են անում: Այն, որ ԵԿՄ-ի ոհմակը, որ ողջ կատաղությամբ ու սարսափով սկսում է վայրահաչել ու հաշվեհարդարի սպառնալիքներ հնչեցնել, դա համարվում է նորմալ: Որովհետև Չարիքի իշխանության նպատակն է՝ ամեն գնով լռեցնել ճշմարտությունը, վախի ու ահաբեկության միջոցով պարտադրել իր սուտն ու կեղծիքը:

(*http://www.armtimes.com/hy/article/95645 «Սասնա ծուռ» Հովհաննես Վարդանյանի որդին ազատ կարձակվի 1 միլիոն դրամ գրավ վճարելուց հետո 21/10/2016*)

Եթե տարածաշրջանի ֆոնին նայելու լինենք, ապա կտեսնենք, որ Թուրքիան որակեց ու թիրախավորեց Հրանտ Դինքին: Հիմա ասացեք՝ տարբերությունը ո՞րն է թուրքերի ու Չարիքի իշխանության միջև: «Սասնա ծռերին» որակում են անգամ աննշան տզրուկները, որոնք քաղաքական դաշտում անտեսված են, Դաշնակցական բոլշևիկները ու ՀՀԾ-ական կոմունիստները: (*http://mamul.am/am/video/26648055 Զենքով իշխանության եկողը զենքով էլ գնում է. պատգամավոր Վահան Բաբայան | Առավոտ օրաթերթ* *http://www.aravot.am/2016/08/17/727125/ «Փորձել են բողարկել ահաբեկչությունը». Խոսրով Հարությունյանը՝ «Սասնա ծռերին» աջակցողների մասին երկուշաբթի, 18 հուլիսի, 2016 թ.*)
Այն, որ դաշնակցականները սպառնում էին նաև ինձ հետ հաշվեհարդար տեսնել ու նույնիսկ գլխատել, դա արդեն գալիս է ապացուցելու, որ իրենց նախապապերը Երիտթուրքերն են:

Պատահական չէր, որ ԵԿՄ -ի ենիչերը իրենից պատասխան պահանջողներին խոստանում է անխնա կոտորել, ինչպես թուրքերին: Նույնիսկ, իր ասելով ԵԿՄ-ի թշնամին է նա, ով իրենից պատասխան է պահանջում: Առհասարակ կասկածել չի կարելի այդ խոսքերի վրա, որովհետև նրա անցած արյունոտ ճանապարհը հենց դա է ապացուցում, դրան գումարենք նաև վերջերս Էջմիածնի քաղաքապետի ընտրությունները, որոնք իր հովանու տակ անցան ահաբեկության ու խոշտանգման մթնոլորտում: *( http://www.lragir.am/index/arm/0/country/view/139402 « 15 - 20 հոգով ծեծել են: Էնքան էին ծեծել Արթուրին, սպանել էին». Ինչ է կատարվել Էջմիածնում. Lragir.am 17/09/2016 12:35 ( http://4news.am/2016/09/կարեն-գրիգորյանը-20-հոգով-երեխըի-աչքի-առ/ Կարեն Գրիգորյանը 20 հոգով երեխըի աչքի առաջ ծեծել է Արթուրին եւ Ստեփանին. Հրաչիկ Աբգարյան )*
Մանվելի մասին ավելի շատ բաներ կան գրված, քան թե ներկայացնում եմ ես, իմ ընկերներից մի քանիսը նույնիսկ 5-րդ բրիգադի հրամանատարական կազմում են եղել:
Այդ բրիգադի Երևանի գումարտակի հրամանատար` Արա Սերոժայի Ավագյանի մարտական օրագիրը բավական է, որպեսզի Մանվել Գրիգորյանին դատապարտեն **Հաագայի** միջազգային դատարանում, որպես **պատերազմի հանցագործ** ու քաղաքակիրթ մարդկության դեմ գործած ոճրագործ: Այդ 5- րդ մոտոհրաձգային բրիգադի բոլոր կամավորները լավ գիտեն նրա գործած ոճիրների մասին, ուստի վստահ եմ, որ բացահայտումը լինելու է: Եթե նայենք, որ այս ամենը կատարվում է ազգային գենոֆոնդը ոչնչացնելու համար, ապա կարելի է վստահ ասել, որ ամենը անում են հայի գենետիկական հատկություններն ոչնչացնելով: *( Խնդրում եմ չշփոթել « ՀԱՅՈՒ ՏԵՍԱԿԻ » հետ, որովհետև այդպիսի մտահղացումը Գագիկ Գինոսյանի*

*մտքի թռիչքն է: Առհասարակ նրա երկրպագուն չեմ, որովհետև ինքը նույնպես լափամանից օգտվողներից է:)* Շարունակեմ, հայի գենետիկական հատկությունների մասին...

Պատկերացնելու համար Հայ մարդու **Գենետիկական հատկությունը,** բավական է հայացք նետել հայ դասականների ստեղծագործությունների դրական հերոսներին, ինչու դրական և ոչ բացասական: Քանի որ դրական հերոսների մարմնավորումով են ներկայացրել ՀԱՅԻՆ, իսկ բացասական հերոսները ներկայացրել են թշնամու կերպարով, անկախ իրենց հասարակական ու ազգային պատկանելության: Եթե Հայի տեսակը Մուշեղ Գալշոյանի « Ձորի Միրոն » էր կամ Հրաչյա Քոչարի « Նահապետը », որոնք ցեղասպանության սարսափը վերապրելով՝ մոխիրներից փյունիկի նման վեր հառնեցին ու սկսեցին ապրեցնել ու իրենց շնչով լցնել շրջապատը: Հենց Ձորի Միրոններն ու Նահապետներն էին, որ մարմնավորում էին Հային իրենց կերպարով, մարմնավորելով բարությունն ու ազնվությունը, հերոսությունն ու նվիրվածությունը: Կյանքով լեցուն հայն էր, որ կարողացավ պարզվել Արցախյան պատերազմի հերոսների պես ժառանգներ, « Սասնա ծռերի » պես ազնիվ հայորդիներ: Պավել Մանուկյան, Արա Խանդոյան, Մխիթար Ավետիսյան ու Մարտիրոս Հակոբյան ( Դեդ ) և մնացած տղաները իրենց առաքինությամբ ու ազնվությամբ համ ու հոտ են տալիս ոչ միայն ազգին այլև ազգային գաղափարներին: Միայն չասեք, թե **Ազգային Գաղափարախոսություն** չունենք, ինչքան գիտեմ մի քանի հեղինակներ այդ մասին գրել են: Սակայն այստեղ խոսում ենք Լուսավոր հայերի մասին, չնայած այս գրքի մեկ այլ հավելվածում կներկայացնեմ նախորդ հրապարակումներից, որոնք խոսում են լուսավոր մարդկանց մասին: Ուստի շարունակեմ ՀԱՅԻ գենետիկական հատկության մասին:

***« Բռնակալությունը բռնաբարում է բարոյական սահմանագլուխը, Վռնդել բռնակալին նշանակում է հետ գրավել սեփական հողը: Գալիս է մի պահ, երբ բողոքը այլևս բավական չէ. փիլիսոփայությունից հետո գործողություն է պետք. կենդանի ուժը ավարտում է այն, ինչ ուրվագծել է գաղափար»: Վիկտոր Հյուգո*** )

Այդպես **ՀՈՇՈՏՈՂՆԵՐԻ** դասակարգը սկզբից պետք է այդ լուսավոր մարդկանց տեսակը ոչնչացներ: Իր շրջապատը լցնելով արտաշատցի Մկներով, Թոխմախի Միհրներով, տխմար Մանվելներով ու Սարոյաններով, չհաշված մյուս մուտանտներին: Հասարակական միտքը շեղված է, հիմա մնում է ամեն տեսակի արատներով փչացնել հայ մարդու դիմագիրը: ( *https://www.armlur.am/601919/ Հոկտեմբեր 24 2016 Գագիկ Ծառուկյանի տան դիմաց մի խումբ քաղաքացիներ են հավաքվել. նրանք պահանջում են, որպեսզի նա վերադառնա քաղաքականություն: ( Ֆոտո, վիդեո* )

« **Դիմագիտություն** » որպես գիտություն շատ կարևոր է, ու այդ մասին իմ նախորդ գրքերում ներկայացրել եմ: Սակայն Դիմագիտություն քրեագիտության մեջ օգտագործելուց բացի օգտագործվում է հնագիտության ու էթնիկական հոգեբանության մեջ: ( *Գրեմաներեն բառ է, Физиогномика- Völkerpsychologie* )

Պատկերացրեք, որ Հայկական դիմագիրը դառնա խոզի մռութով Մանվելը, Ծմայսը կամ Յուրի Խաչատուրովը:

Այդպիսի խզբզանք ազգային պատկերի վրա ուղղակի նշանակում է, որ հայերը առաջացել են գորիլաներից, ինչպես ասում էր Չառլզ Դարվինը:

Չեմ կարծում, որ հայերը կարող են իրենց հեթանոս աստվածներին պատկերել Շուշան Պետրոսյանի մռութով կամ Գևորգ Կոստանյանի « չագուչ » հայացքով: ( « **Օտարը չի հարգի և սիրի մի ժողովրդի, որը ինքնուրույն պատկեր և բովանդակություն չունի »: Հովհաննես Թումանյան** )

Հայի գենետիկական տեսակը ոչնչացվում է անգամ սփյուռքում: Ես նախորդում նշեցի, որ Սփյուռքի Հայկական համայնքները հենց սկզբից այս ազգադավ գործի մասնակիցն են դարձել: **Կուսակցականաշինությունով** ապականեցին հայի կերպարն ու դիմագիրը, այստեղ կարելի է նշել, որ ցեղասպանություն հայերի դեմ, ես չեմ նշում սպիտակ սպանդ, այլ նշում եմ ցեղասպանություն, որովհետև ոչնչացնելով ազգային դիմագիրն ու տեսակը արդեն իսկ ոճիր է, արդեն իսկ ցեղասպանություն:

*Քանի Ավետարանի ճշմարիտ լույսը չէ ծագում մեր ազգի վրա, քանի նա հայերի համար դրված է գրվանի տակ, քանի ճշգրիտ ուսում և գիտությունը անմերձենալի են հասարակ ժողովրդին, և քանի նրանք՝ թողնելով սուրբ գրքերի ճշմարտաքարոզ վարդապետությունը, կհետևեն հայրապետական մոլորություններին — ճշմարիտ եմ ասում, ա՜յնքան ժամանակ կապրեն նրանք իբրև լոկ նյութական մարմիններ, զուրկ մարդկության հոգևոր մասնից»:*

*ՐԱՖՖԻ*

*« պատմական անցեալն է, մի ուրոյն կաղապար, որի մէջ ձուլուել է եւ ձեւաւորուել դարերի կեանքը: Ըմբռնպանալու կարողութիւնը մարդ անհատի ու մարդկային խմբակցութիւնների ամենամեծ առաւելութիւնն է ու առաքինութիւնը:*
*Մարդը համեմատաբար գիտակից է, աւելի քան որեւէ ուրիշ կենդանի էակ երկրագնդի վրայ: Նա ընդունակ է, որոշ չափերով, քննադատելու ու գնահատելու կենսական երեւոյթները իր, մարդկային տեսակէտից, զանազանել ցանկալին ոչ-ցանկալիից եւ որոշ սահմաններում ուղղում մտցնելու իր անհատական ու խմբական կեանքի մէջ »:*

*Հովհաննես Քաջազնունի*

# ՊԵՏԱԿԱՆ ԱՀԱԲԵԿՈՒԹՅՈՒՆ

*«Նպարակ» ազգը օպար պերութեան մէջ, նոյնիսկ ամենից աւելի ազարամիր ու լայնախոհ պերութեան մէջ անխուսափելիօրէն մնալու է զրկուած անունից»:*

*Յովհաննէս Քաջազնունի*

Չարիքի իշխանության ամենակարևոր գործոններից մեկը ահաբեկությունն է, որը կարելի է անվանել պետական ահաբեկություն, իսկ դա իր հերթին կատարվում է փուլ առ փուլ: Սկզբից **Ծաղրում** են, հետո **Նվաստացնում,** հետո **Խոշտանգում,** վերջում՝ **Ոչնչացնում**: Սակայն Բռնակալն այդ ամենն իրականացնելու համար սկսում է ընտանիքներից, հասկանալով, որ մարդուն ընկճելու համար պետք է սպանել նրան հոգեպես ու բարոյապես:
Այն սփյուռքահայերը որոնք վերադառնում են Չարիքի իշխանություն հենց առաջին իսկ վայրկյանից « Զվարթնոց » օդանավակայանում ամիջապես զգում են Չարիքի իշխանության « Բարի Գալուստը », որն սկսվում է ահաբեկությամբ: Հենց օդանավակայանից սկսվում է քաշքշուկն ու անիմաստ գործողությունների ձգձգումները, որպեսզի կարողանան ստանալ իրենց ուղերբեռը՝ ճամպրուկը կամ պայուսակը: Չհաշված ոստիկանների խորթ ու ագրեսիվ հայացքները, անցագրային պահակակետի դժգոհ ու մունաթով հայացքները, ովքեր կարող են ցանկացած մանրուքից քաշքշուկ սարքել ու ավելի բարդացնել վիճակը:
Բազմաթիվ անգամ եմ ականատես եղել սփյուռքահայերի հրրճվանքին, երբ լքում էին հայրենիքը, ցավով լսում ինքնաթիռ նրստելու ընթացքում արտաբերած բառերը. « Փառք Աստծո հազիվ ազատվեցինք... »: Շատերն ուրախանում են, որ ետ են վերադառնում դժոխքից:

Երկիր մուտք գործելուց, գրեթե միշտ, ճամպրուկներն ու իրերը քրքրում են մաքսային ծառայության աշխատողները՝ ինչ-որ բան փնտրելով անգամ ներքնաշորերի մեջ, ակնկալելով՝ մաղարիչ, որ ավելի արագացնեն գործընթացը, իսկ եթե ոչ՝ սպառեն նրանց համբերությունը: Նկատի ունենանք, որ անօրինական ու ապօրինի է բացել քաղաքացու ճամպրուկն ու քրքրել նրա անձնական իրերը: Եվ Աստված մի արասցե, որ կասկածելի ինչ-որ բան է հայտնաբերվի: Իսկ դա արվում է խուզարկու շների օգնությամբ միայն: Դեռ չեմ հանդիպել մի հայրենակցի, որն իր գոհունակությունն արտահայտի Երևանի « Զվարթնոց » օդանավակայանի սպասարկումից: « Զվարթնոց » օդանավակայանում առհասարակ աշխատում են միայն հանցախմբին հավատարիմ մարդիկ, որովհետև ինչպես ասում են. « լավ փող աշխատելու տեղ է », իսկ թե ումի՞ց են փող աշխատում, դա արդեն պարզ է. հայրենիք վերադարձող հարենակիցներից, կամ հայրենիքը լքողներից: Աշխարհի ոչ մի երկրում նման ընդունելության չենք հանդիպի, ինչ Հայաստանում:

Իմ ընթերցասեր ընկերներից շատերը կարդացել են իմ գրած **« WELCOME TO ARMENIA »** փոքրիկ պատմությունը, կարծում եմ, այնտեղ ավելի մանրամասն է նկարագրված: **Միաբեկությունը,** որպես կառավարման ձև և միջոց, ամրագրված է օրենքով ու սահմանադրությամբ: Պատահական չէ, որ « Սասնա ծռերի » ընտանիքների նկատմամբ կիրառում էին Խորհրդային Չեկիստների կտտանքներն ու հալածանքները: Հոգեկան ծանր վիճակի հասցնելով նրանց՝ փորձում են ճնշել ու քայքայել նրանց նյարդային համակարգը: *( « Մարդու ամենավատ թշնամին նրա նյարդային համակարգն է: Ցանկացած պահի ներքին լարվածությունը կարող է արտացոլվել արտաքինում: Մարդն ինչպե՞ս է իշխանություն հաստատում ուրիշ մարդու վրա: – Նրան տառապանք պատ-*

*ճառելով: Երբեք և ոչ մի պատճառով չես ցանկանում, որ ցավն ուժեղանա: Ցավից միայն մի բան ես ուզում, որ դադարի: Աշխարհում չկա ավելի վատ բան, քան ֆիզիկական ցավը: Նրան տառապանք պատճառելով: Հնազանդությունը բավական չէ: Եթե նա չտառապի, ինչպե՞ս կարող եք վստահ լինել, որ հնազանդվում է ձեր, այլ ոչ թե իր կամքին: Իշխանությունն էլ է այդպես: Իշխանությունը ցավ պատճառելու և ստորացնելու մեջ է: Իշխանությունը հետևյալն է. կտոր-կտոր անել մարդկանց մտքերը ու կրկին հավաքել նոր ձևով»: Ջորջ Օրուել )*

Ընտանիքների խոշտանգումներից է սկսում ամեն ինչ, այն որ «Սասնա ծռերին» պարտադրում էին զենքը վայր դնել, միաժամանակ ընտանիքներին ահաբեկում ԱԱԾ -ն ու ոստիկանությունը: *( Ձերբակալվել է «Սասնա ծռեր» խմբի անդամի որդին Սեպտեմբեր 28,2016 http://www.a1plus.am/1489380.html )*

Այնպես որ, ընտանիքներին ու հարազատներին խոշտանգելուց ու ոչնչացնելուց հետո էլ այդ մղջավանջը չի ավարտվում, որովհետև նրանց նպատակը մեկն է՝ մարդկանց հիշողությունից ու պատմությունից ջնջեն նրանց անունները, այդպես եղավ շատերի հետ, ահա՝ թարմ օրինակը՝ Նաիրի Հունանյանին քան տարի է խոշտանգում են, ոչնչացրեցին նրա ընտանիքի բոլոր անդամներին, անգամ հիշողություններ չկան և նրա անունն էլ պատմության մեջ մտավ որպես դավաճան: *( 08:58 | Հոկտեմբեր 28 2016 Նաիրի Հունանյանը խցակիցներ չունի. «Հրապարակ» http://armlur.am/604017/ )* **(«Ողբերգությունն այն է, որ քչերի խելքին փչեց հարց տալ. արժե՞ր արդյոք (եւ որքանո՞վ էր դա ընդհանրապես արդյունավետ քաղաքական տեսակետից) կուռքի աստիճան շնորհել մի անհատի, որը համընդհանուր զզվանքի ու նողկանքի առարկա էր եղել»: «Մտորումներ «Պագոլինի»-ից հետո» գրքից Արտյոմ Խաչատրյան )**

Այդպես աննկատ ոչնչացրեցին նաև Մովսես Գեղանգուլյանին ու նրա ընտանիքի բոլոր անդամներին: Մովսես Գեղանգուլյանը Վազգեն Սարգսյանի վարորդն էր, թիկնազորի պետը և վերջապես նրա բոլոր հանցանքների ու ոճիրների կենդանի վկան ու ականատեսը: Մովսեսին սպանեցին որովհետև անցանկալի վկա էր, սպանեցին նրա որդիներին ու կնոջը, անգամ քրոջ որդուն: Մարդկանց հիշողությունից ու պատմությունից ջնջեցին նրանց անունները, կարծես նրանք երբևէ չեն էլ եղել:

*( « Ինչ տեղի էր ունեցել անցյալում ջնջվել էր հիշողությունից: Երբ հնարավոր չէ օգտվել որևէ վկայությունից, նույնիսկ սեփական կյանքիդ ուրվագիծը կորցնում է հստակությունը: Հիշում ես խոշոր իրադարձություններ, որոնք գուցե չեն էլ պատահել, հիշում ես դեպքերի մանրամասներ, բայց ի վիճակի չես վերականգնել մթնոլորտը. Կային նաև երկար, ոչնչով չառանձնացվող բաց ժամանակահատվածներ: Ջորջ Օրուել )*

Պետական ահաբեկություն կարելի է համարել 1996 թվականի Ռազմական հեղաշրջումը, որի մասին բազմիցս գրվեց:

Պետական ահաբեկություն է 2008 թվականի մարտի 1 –ը, դրան նախորդած և հաջորդած բոլոր ընտրությունները, լինեն տեղական ինքնակառավարման ընտրություններ, թե նախագահական: Այնպես որ, այդ բոլոր ընտրություններն ու իրենց նախորդող և հաջորդող հետևանքներով պետական ահաբեկություն է, որովհետև դրանց ետևում կանգնած են ուժային կառույցներն ու ԿԳԲ -ն: *( http://mitk.am/2016/10/wikileaks-քոչարյանը-վերահսկել-է-հոկտեմբերի-27-ի/ WikiLeaks. Քոչարյանը վերահսկել է Հոկտեմբերի 27-ի դատավարությունը )*

Հաշվի առնենք նաև այն, որ դատական ներկայացումները մարտի մեկի գործով և դրան հաջորդող այլ գործերով ևս, կտեսնեք, որ անմիջապես Աղվան Հովսեփյանի ու Գագիկ Հարութ-

ունյանի, ԿԳԲ-ի մյուս գործակալների՝ Լևոն Տեր-Պետրոսյանի, Գագիկ Ջհանգիրյանի, Սերժ Սարգսյանի, Ռոբերտ Քոչարյանի անմիջական օժանդակությամբ էր կազմակերպվել մարտի մեկի սպանդը, որպեսզի ահ ու սարսափի մեջ պահեն ժողովրդին: Այդ պետական ահաբեկության մեղավորները մինչև հիմա չեն պատժվել, իսկ արդյունքն էլ եղավ այն, որ ժողովուրդը վախեցավ՝ պետական ապարատը պատրաստ է ճզմելու ցանկացած ըմբոստություն ու ընդվզում: Որ ինչ էլ լինի, նրանք իշխանությունը ժողովրդին երբեք չեն զիջելու: Իսկ մարտի մեկը Չարիքի իշխանությունը միշտ օգտագործելու է ժողովրդին ճնշելու և ահաբեկելու համար: Հայի արյուն չթափելու գործոնը օգտագործում են միջոց՝ ժողովրդին ստիպելու լռել ու հնազանդվել: Եվ նրանք հասան իրենց նպատակին. ժողովուրդը վախեցավ փողոց դուրս գալ՝ սատարելու « Սասնա ծռերին »: Հենց նույն պետական ահաբեկությունն էր, որ կրկնվեց Խորենացի փողոցում: Եվ այդ ահաբեկության շնորհիվ է, որ ստիպում են լռեցնել սփյուռքի մեր հայրենակիցներին: Չարիքի իշխանությունն անգամ հաշվեհարդար է տեսնում սփյուռքահայերի հետ: Վառ ապացույցը Սերժ Սարգսյանի փարիզյան այցն էր, որտեղ Ֆրանսիական ոստիկանների կողմից բռնություն կիրառվեց հայ ցուցարարների դեմ: Չասեք, թե դա փաստ չէ, քանի որ այդ փաստերին նույնիսկ օտարալեզու մամուլը բազմիցս անդրադարձավ:

# ԵՐՋԱՆԻԿ ԱՊՈՒՇՆԵՐԸ

***« Մինչև չգիտակցեն, երբեք չեն ապստամբի, մինչև չապստամբեն, չեն կարող գիտակից դառնալ »:***

***Ջորջ Օրուել***

Ճիշտ ասած հայ գրականության մեջ, ինչպես նաև բանավոր խոսքում օգտագործվում է « **Երջանիկ Ապուշ** » բառակապակցությունը, սակայն իմաստի վերաբերյալ որևէ բացատրություն չի տրվում: Այդ բացատրությունն հիմա ես կտամ: Երջանիկ ապուշները նրանք են, ովքեր « **Ո՛չ խելք ունեն, ոչ մեղք** »:
Այսինքն իրենք մեղավոր չեն, որ լույս աշխարհ են եկել, իսկ խելքի մասին խոսելն ավելորդ է: Չնայած նրանց ծնունդն արդեն իսկ համարվում է **Մեծ Մեղք**:
Երջանիկ ապուշները զուրկ են ուղեղից, նրանց մոտ զարգացած է միայն տեսողական բնազդը, մյուս բնազդները իսպառ բացակայում են, դրա հետ մեկտեղ բացակայում է նաև չափի զգացողությունը: Երջանիկ ապուշները չգիտեն ինչու՞, և ինչի՞ համար, միշտ ուրախ են ինչ-որ հաջողությունների վրա, նամանավանդ ուրիշների, որոնք առհասարակ չկան, կամ գոյություն չունեն: Ուրախանում են, որ Հայաստանը թվացյալ « Ազատ Անկախ » է, ուրախանում են, որ թուրքերի լծի տակ չեն, ուրախանում են հայկական « Հզոր », բայց **լապատկաներով** զինված բանակի վրա, ուրախանում են Արամ Mp 3 -ի « տաղանդի » վրա, ուրախանում են, որ նախագահը շախմատի մասնագետ է, ուրախ են նաև Լֆիկի ու Սաշիկ Սարգսյանի հաջողությունների վրա: Ուրախանում են Միրուշոյի « հայրենասիրական » տեսահոլովակների վրա, ով ժողովրդից գողած փողերով ցոփ ու շվայտ կյանք է վարում արտասահմաններում:

*( http://araratnews.am/հայաստանի-իրական-ավերման-հիմքը-դրեց-ռ/ Հայաստանի իրական ավերման հիմքը դրեց Ռոբերտ Քոչարյանը. Բնապահպան Օգոստոս 29, 2014 4:40 pm )* Երջանիկ ապուշների համար, ամեն ինչ վարդագույն է ու լուսավոր: Երջանիկ ապուշները Հրանտ Մաթևոսյանին համարում են տաղանդաշատ մտավորական, մոռանալով նրա չարագործ Վերժիկին, ուրախանում են Սպարապետով, չցանկանալով նույնիսկ լսել նրա գործած ոճիրների մասին: Ուրախանում են ԵԿՄ-ի զորավարի հարստությամբ, նրա չվճարած հարկերով, հաստագլուխ ու անճոռնի թուլեքով, ովքեր իրենց Փնթի հորից ժառանգել են տգիտությունն ու արյունամոլությունը: Այդ ապուշները չեն ցանկանում լսել, որ այդ փնթին ժամանակին Կռազի շոֆեռ է եղել, այն էլ՝ հանցագործ ու ոչ տառաճանաչ: Եթե նրա կենսագրության մեջ գրված իրավաբանի, փիլիսոփայի ու արվեստասերի մասնագիտություններն ու մնացած բարեմասնություններին էլ հավատանք, ապա նրան պետք է համարենք Սուրբ Գևորգ և աստվածացնենք: Իրականում մի ողջ Երջանիկ ապուշների բանակ հավաքված է ԵԿՄ-ում: Արդեն ինչպես ասել եմ Երկրապահ Կամավորական Միությունը Մանվել Գրիգորյանի սեփական **Հարեմն** է, որտեղ Երջոնները Օրուելի ոչխարների նման անընդհատ կրկնում են « **չորս ոտք լավ, երկու ոտք վատ** »: Ի՞նչ եք կարծում, եթե երկրապահ են կոչվում՝ Տարոն Մարգարյանը, Լևոն Երանոսյանը, Կարեն Ավագյանը, Հրանուշ Հակոբյանը, Լիսկայի որդին՝ Տիգրան Խաչատրյանը, Հասմիկ Պողոսյանն ու անգամ Սամիկոն Խուրշուդյանը, ապա նշանակում է, որ այդ կառույցը ենիչերների nհմակ է՝ ոչխարի ուղեղներով: *( « Մանվել Գրիգորյանը Հայ ժողովրդի տան ճրագներով ստեղծված բանակով է պաշտպանում մեր սահմանը »: Սամիկոն Խուրշուդյան 5-05-2016 12:40 )*

Մնացած աղբակույտն էլ դեռ չհաշված, իրենց տիրոջ հրամանով պատրաստ են հոշոտել ցանկացածին: (*Երկրապահ ազատամարտիկները հակադարձում են Արշալույսի գյուղապետի արդարացումներին* *http://shamshyan.com/hy/article/2016/09/08/95001/ 19:38 2016/09/08*) Երջանիկ ապուշներն ուրախանում են նույնիսկ գոյություն չունեցող երևույթների վրա: Դրանցից մեկն էլ Հայաստանի Անկախության 25 ամյակի առթիվ Երևանում անցկացրած զինվորական շքերթն էր: Մարդիկ հիշում են, որ նման շքեղ զորահանդեսներ եղել են ամեն տարի, սակայն 2016թ.-ի Ապրիլյան պատերազմի ժամանակ, սահմանին կանգնած զինվորները բահերով ու քարերով կռվեցին թշնամու դեմ: Սակայն Երջանիկ ապուշները կոպիտ ասած՝ Երջոնները ուրախանում են, ինչ-որ «Իսկանդեր» հրթիռներով, որոնք իրենցից ընդամենը Կոյուղու խողովակ են ներկայացնում: (*Քաղաքագետ Հրանտ Մելիք-Շահնազարյանը «Իսկանդեր»-ը նաև քաղաքական գործիք է Հայաստանի համար* *http://www.panorama.am/am/news/2016/09/28/Իսկանդեր-զենք/165019 8 28/09/2016* *http://www.1in.am/2035176.html* *Ռուսաստանից 200 միլիոնի զենք ենք ստացել, մի բան էլ ավելի. Ռուստամ Գասպարյան 2016-10-24*) Եթե Չարիքի իշխանությունը 25 տարի միայն լափել ու թալանել է, ինչպե՞ս կարող է հիմա հանկարծ վերափոխվել, դառնալ բարի ու ազնիվ:

Այնքան տգետ են, որ չեն հասկանում՝ վարչապետ փոխելով հնարավոր չէ փոխել երկրում որևէ բան, իսկ **Երջոնները** մե՜ծ հույսեր են կապում ու ուրախանում են նորանշանակ վարչապետի դիզած միլիոնների վրա: Մոռանում են, որ իշխանություն զավթած գիշատիչների մոտ իսպառ բացակայում է չափի զգացողությունը՝ ինչքան լափում են, այնքան ավելի է գրգռվում ախորժակը: (Պետք է խնդրեն, որ Ծառուկյանն այդ ծանրության տակ մտնի. Գագիկ Ծառուկյան

https://www.youtube.com /watch?v=8RMY2ezb_T8 )
**Երջոնները** չգիտեն, որ « Իսկանդեր » հրթիռներ ունենալը դեռ քիչ է հզոր բանակ ունենալու համար, և դա Է հարց է՝ մե՞րն է, թե մեզ տվել են ընդամենը ցուցադրության համար։ *( « Սելֆի » անելու ու լուսանկարվելու համար։ )* Ցանկանում եմ հատկապես ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ Հայաստանում հիմնական կարևորագույն ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտները, համարվում են մեր սեփա- կանը՝ հայկական, սակայն փաստացի պատկանում են այլ պե- տությունների։ Ունենք ատոմակայան, որ մերը չէ, սակայն մենք ենք վճարում, շնչում արտաշնչում աղտոտված օդը և զազրելին այն է, որ արտադրվող էլեկտրաէներգիան մեզ՝ հայերիս ավելի թանկ են վաճառում, քան հարևան պետություններին՝ Թուրքի- ային ու Վրաստանին։ Հետո ունենք « Գազպրոմ », որը նույն- պես մերը չէ, և մատուցած ծառայություններն Է ավելի թանկ է նստում մեզ վրա, որքան պետք է լիներ։ Նույնը ՀԷՑ-ն ու երկաթգիծը, հեռահաղորդակցությունն ու ինտերնետը, ջրամատ- ակարումը, օդանավակայանն ու անգամ սահմանային ծառայու- թյունը, իսկ վերջում ավելացավ ևս մեկը՝ հակաօդային պաշտ- պանությունը։ Ոչինչ մերը չի, այլևս ոչինչ չունենք, ծախեցին ինչ ունեինք և ինչ կարող էին, անգամ Հայկական բանակը գեներալներ չունի, որովհետև ինչպես Ջորջ Օրուելն էր ասում, բոլորը **խոզեր** են։ Իսկ գերագույն գլխավոր հրամանատարի մասին խոսելն ավելորդ է։ Հայկական բանակը հիշեցնում է 90 -ականների թալանված պահեստի, որտեղից թալանեցին ամեն ինչ, անգամ զինվորի կյանքն ու առողջությունը։ Պահեստում մնացել են միայն անպիտան ու ժանգոտած պահեստամասեր։ Մեր զրահատեխնիկան թալանված է ու ժանգոտած, առանց վառելիքի ու խնամքի։ Ի՞նչ եք կարծում, արդյո՞ք այդ գեներալ

կոչված հրոսակ-թալանչիները, պատրա՞ստ են մեծ գումարներ տրամադրել թանկարժեք « Իսկանդերները » պահելու, խնամելու և օգտագործելու համար, որոնք իրենցից մեծ գումարներ են պահանջում: Չեմ կարծում, որ Խաչատուրովի ու Օհանյանի նման ազահներն իրենց կանանց թանկարժեք Փոտոսեսիաների հաճույքներից զրկեն և « Իսկանդերի » վրա գումար ծախսեն: Երևի գեներալադինոզավրերը տեղյակ չեն, որ « Իսկանդերների » վրա կան թանկարժեք մետաղներ՝ ոսկի ու պլատին: Ի՞նչ եք կարծում, ՊՆ հրեշները hո հիմար չե՞ն, որ թողնեն այդպիսի թանկարժեք մետաղները հրթիռների վրա: Այնպես որ, եթե ռուսները տված էլ լինեն այդ « Իսկանդերները », ապա չի բացառվում, որ մեկ ամիս հետո այդ հրթիռները դառնալու են մետաղի ջարդոն, կամ էլ ծախելու են որևէ երրորդ երկրի: Տեղին է հիշեցնել պատմական փաստերը՝ 1918 թվականին դաշնակներն անգլիացիների նվիրաբերած զրահապատ մեքենաներն ու սավառնակները վաճառեցին վրացիներին: Անգլիացիներն ապշած էին հայերի վրա, ինչպե՞ս կարող էր պատերազմող երկիրը զենք վաճառել մեկ այլ երկրի: Նույն բանը կրկնվեց Արցախյան պատերազմի ժամանակ, և դրան նախորդած տարիներին՝ 90-ականների վերջերին գեներալ Մանվել Գրիգորյանն ու Սեյրան Սարոյանը Հայկական բանակի « Իգլա » տեսակի հակաօդային հրթիռները վաճառեցին չեչեն անջատողականներին: Մեծ աղմուկ բարձրացավ, քանի որ այդ հրթիռներով էր խոցվել ռուսական Սու-25 ռազմական օդանավը: Ռուսները նույնիսկ պատժամիջոցներ կիրառեցին հայերի դեմ, չնայած քավոր Վազգենը գործը փակեց ու մոռացվեց: ( **« Երկրի քրեական օրենսգրքում չկա որևէ հոդված, որին հանցակից չէր Վազգեն կեղտոտ ձեռքը »: Մտորումներ « Պագոլինի »-ից հետո » գրքից Արտյոմ Խաչատրյան**) Այնպես որ, չի բացառվում, որ « Իսկանդերները » կարժանանան

« Իգլաների » ճակատագրին: Եթե պարզվի, որ « Իսկանդերները » ռուսները տվել են միայն շքահանդեսի ցուցադրության համար, որ իբր տեսե՛ք, մենք ունենք... Ապա վստահ կարող եմ ասել, որ ամեն առավոտ այդ « Իսկանդերների » կադրերը զովազդելու և ցուցադրելու են բոլոր հեռուստակայաններով: Մի քանի տարի կցուցադրեն ու նույն ոճով կշարունակեն թալանել բանակն ու ժողովրդին: Հետո կբարձրացնեն առաջին անհրաժեշտության ապրանքների գները և կհայտարարեն, որ փողերը « Իսկանդերները » լվանալու վրա են ծախսվել կամ « Իսկանդերների » վերանորոգումը շատ թանկ է: Այսինքն, իրենք գիտեն՝ ինչպես կոծկեն իրենց հանցանքները, մանավանդ որ ռազմական դատախազ Աղվան Հովսեփյանը փորձված մասնագետ է: Ճիշտ ասած, այդ զորահանդեսը **Չարիքի իշխանության** հերթական խեղկատակությունն էր, որով լավ էին զգում երջանիկները՝ այսինքն միայն իրենք: 25 տարի խաբել ու թալանել են ժողովրդին՝ հավաստիացնելով, որ իբր գերժամանակակից զինտեխնիկայով են սպառազինում հայկական բանակը, սակայն պարզվում է, որ հայկական բանակում հայ զինվորը պատերազմում է 80-ականների զենքով, վճարում է իր գրպանից՝ համազգեստի ու կոշիկների համար, անգամ ներքնաշորը գումարով ձեռք են բերում նույն զորամասի պահեստից: *( http://www.politik.am/մովսես-հակոբյանը-նոր-առանձնատուն-է-գն/ Մովսես Հակոբյանը նոր առանձնատուն է գնել, որն արժե 1 միլի- ոն դոլար 2016/10/21 )*
Սուտն ու կեղծիքը, որ 25 տարի շարունակ քարոզվել ու փաթաթվել է ժողովրդի վզին, արդեն դուրս է գալիս ջրի երես, ինչպես 80 - ականների զենքի պատմությունը՝ բացահայտվեց ապրիլյան պատերազմի շնորհիվ:
Բազմիցս նշել եմ, որ **Փնթի կռացի շոֆերը** « Վկաներ » է փնտրում, որպեսզի կեղծ ներկայացումներով հերոսացնեն իրեն:

Անգամ զոհվածների ծնողներին է դիվադադար արել, Ղարաբաղի գյուղերի խեղճ ու անճար բնակիչներին, որոնք մի քանի հազար դրամի համար տեսախցիկների առջև ծախում են իրենց հոգիներն ու արժանապատվությունը, թալանչի Մանվելին հերոսացնում: Երկրապահներն ու քաղաքական աղբակույտը Մանվելին դարձրել են Մարշալ ժուկովին հավասար զինվորական: Նույն կերպ սպարապետին, **Գերագույն գլխավորին**, ով առհասարակ հերոսությունից անքան հեռու է, որքան մյուս ոճրագործները: ( « ***Էսօր ով հելնում ա Սերժի դեմ, ուրեմն հելնում ա Վազգենի դեմ*** »: *https://www.youtube.com/watch?v=xQIop09E5Ts Մանվել Գրիգորյան 31/12/ 2014* ) Նույն ծախված իշխանության պնակալեզները սկսեցին նույն հանգավորմամբ կրկնել, որ Արցախյան պատերազմում 800 հեկտար կորցրած տարածքը անպետք ու ոչ պիտանի հողեր են: Նույնիսկ Սփյուռքի ժամկետանց երջանիկներից մեկը՝ « Կալիֆոռնիա կուրիեր » թերթի խմբագիր, ամերիկահայ Հարութ Սասունյան: ( *« Կալիֆոռնիա կուրիեր » թերթի խմբագիր, ամերիկահայ Հարութ Սասունյանը Սերժ Սարգսյանին անփոխարինելի է համարում, իսկ ժողովրդին՝ քաղաքական հասունությունից զուրկ: http://www.7or.am/am/news/view/114305/ Սեպտեմբեր 25, 2016* ) Ռոբերտ Ամիրխանյանն ու Ռադիկ Մարտիրոսյանը, որոնց համար ոչ միայն 800 հեկտարն է քոսոտ, այլ մեր ողջ հայկական տարածքները:
( *http://www.aravot.am/tag/ռոբերտ-ամիրխանյան/ Ռոբերտ Ամիրխանյանը խոստանում էր « Սասնա Ծռերին »* ) Հիմա Լ պնակալեզները նոր քարոզարշավ են սկսել Իսկանդերների պատկանելության խնդրի շուրջ՝ զենքը համարելով իրենցը: Ապրիլյան պատերազմից հետո բոլորը միաբերան աղաղակում էին, որ պատերազմը մեզ միավորեց, դարձրեց մեկ բռունցք, իբր իշխանությունները սկսեցին դասեր քաղել և խելքի գալ:

Սակայն, ինչպես տեսնում ենք ընդամենը մի քանի ամիս անց, մոռացեցին բարձրագոչ ճառերն ու Ապրիլյան պատերազմի վիրավոր ու հաշմանդամ դարձած զինվորներին ու նրանց առողջության հետ կապված խնդիրները: ՊՆ-ն որևէ օժանդակություն ցույց չտվեց պատերազմի հետևանքով ծանր վիրավորումներ ստացած իր զինվորներին: Այնպես որ, զինվորներն անօգնական են ու անտեսված, ինչպես Արցախյան ազատամարտի հերոսները: Պատերազմը ոհմակի համար միջոց է ժողովրդին խեղդելու ու հնազանդ պահելու համար:

*( Պատերազմը բնորոշվում է միայն իր նպատակով: Ոչ արտաքին պատերազմ կա, ոչ էլ քաղաքացիական. Կա միայն արդարացի եվ անարդարացի պատերազմ.....: Պատերազմը դառնում է ամոթ, սուրը դառնում է դաշույն միայն այն ժամանակ, երբ սպանում է իրավունքը, առաջադիմությունը, բանականությունը, քաղաքակրթությունը, ճշմարտությունը: Այնժամ, լինի դա քաղաքացիական թե արտաքին պատերազմ, անարդար է, դա կոչվում է ոճրագործություն: Վիկտոր Հյուգո )*

Եթե ճիշտ գնատենք պատերազմում մեր տարած հաղթանակները և մեր հաջողությունները, ապա պետք է հասկանանք, որ միայն զենքը չէ, որ հզորացնում է մեր բանակը, « Իսկանդերը » չէ, որ դեռ հարց է՝ կաշխատի, թե ոչ: Մեր բանակի ուժը հայ զինվորն է, ովքեր Ապրիլյան պատերազմի օրերին ցույց տվեցին իրենց ուժն ու հզորությունը, հերոսությունը, որոնց, ցավոք, այսօր պատերազմից փրկված վիրավոր զինվորներին խոշտանգում են ինչպես թուրքերը: Մեր բանակին պետք է բարոյա-հոգեբանական առողջ մթնոլորտ, որը սակայն գոյություն չունի: Ասացեք, ո՞րն է արդյոք թուրքերի ու հոշտողների տարբերությունը, այն, որ թուրքը ճակատում է սպանում միանգամից, իսկ հայը թիկունքում՝ կամաց - կամաց: ( *Առաջնագծում գլխ-*

*ից վիրավորված 20-ամյա Ալբերտի ընտանիքն օգնության կարիք ունի 25 սեպտեմբերի, 2016 [http://hetq.am/arm/news/71099/arajnagtsum-glkhic-viravorvats-20-amya-alberti-yntaniqn-ognutyan-kariq-uni.html/](http://hetq.am/arm/news/71099/arajnagtsum-glkhic-viravorvats-20-amya-alberti-yntaniqn-ognutyan-kariq-uni.html/)* )

Եվ այս դաժան ու անողոք իրականության մեջ երջանիկ ապուշներն ուրախանում են և զվարճանում են իրենց շքահանդեսներով ու փառատոներով: « Հետախույզ » Վովա Վարդանովը եջանկությունից նորահարսի պես փայլում էր շքահանդեսին, ջանք չխնայելով արդարացնել իր գերագույն հրամանատարին՝ 80 - ականների զենքերի վերաբերյալ չմտածված հիմար արտահայտության համար:

Ծքերթներից անցնենք փառատոներին, այն էլ՝ միջազգային: Աղքատ ու սոված երկրում միջազգային փառատոներ նշելը ուղղակի զազրելի է:

« Ոսկե ծիրանի », « Ավրորա » մրցանակաբաշխություն և մնացյալը՝ ուղղակի այս գայլային իշխանության անպատկառության գագաթնակետն են: ՀՈՒՄԱՆԻԶՄԻ մասին անգամ պատկերացում չունեն, անխղճորեն հոշոտում են մարդկային ու բարոյականության արժեքները: Ոճրագործը չի կարող հումանիզմից ու գեղեցկությունից խոսել, իսկ փնթին՝ արվեստից ու մշակույթից:

( [http://mitk.am/2016/10/fhjkfg/](http://mitk.am/2016/10/fhjkfg/) *Նոր տվյալներ « կարմիր դիպլոմով գռուզչիկ » աշխատած պատգամավորի ունեցվածքի մասին* )

Մովսես Խորենացու « Հայոց Պատմություն » մեջ **Ողբը** պատահական չի գրված, և որը ճիշտ բնորոշում է տալիս, որովհետև մենք երբեք դասեր չքաղեցինք մեր պատմությունից, մնացինք այնպիսին, ինչպիսին ենք ու կանք:

# ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՆՈՖՈՆԴԻ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ

***« Փոքրամասնություն լինելը, նույնիսկ եթե այն բաղկացած է մեկ հոգուց, չի նշանակում, որ խելագար ես: Կա ճշմարտություն և կա սուտ, ու եթե կառչում ես ճշմարտությունից՝ նույնիսկ հակառակ ամբողջ աշխարհի, խենթ չես »:***

***Ջորջ Օրուել « 1984 »***

Առհասարակ, ինչպես նշել էի, **Ազգային Գենոֆոնդի** ոչնչացումն սկսվում է ծննդատներից և վերջանում ծերանոցներով: Եթե հաշվի առնենք, որ փուլային ժամանակահատվածը՝ դպրոց, բանակ, աշխատանք, ապա այն դառնում է ծրագրավորված քաղաքականության ամբողջական պատկերը: Գենոֆոնդի ծայրահեղ վիճակը պատկերացնելու համար հարկավոր է նայել վերջին քսան տարիների օրենքների փոփոխությունները, որոնք անմիջական կապ ունեն դրա հետ: Պատահական չէ, որ վերջին գլուխգործոցներից է չարիքի իշխանության որոշ տզրուկների՝ հանձինս պատգամավոր Թևան Պողոսյանի առաջարկը՝ բանակ զորակոչել նաև աղջիկներին: *( http://newsarmenia.am/am/news/armenia/-hay-patgamavorn-arajarkum-e-banak-zorakochel-/ Հայ պատգամավորն առաջարկում է բանակ զորակոչել նաև աղջիկներին )*

Նրա լուսավոր գաղափարը՝ ստեղծել սերմնաբջիջների բանկ, որը հնարավորություն կտա գենետիկ բազան պահպանել, այսինքն արհեստական բեղմնավորման տարբերակով վերարտադրել զոհված զինվորին: *( http://politik.am/թեւան-պողոսյանն-առաջարկում-է-զորակոչ/ Թեւան Պողոսյանն առաջարկում է զորակոչվողների սերմ-*

*նարջիջների պահել՝ գենետիկ բազան պահպանելու համար: 2016/05/02* ) Ճիշտն ասած, այս գաղափարը վատը չէ, եթե մեր պետության բարոյական չափանիշները համապատասխանեին զարգացվածության բարձր մակարդակին, ինչպես քաղաքակիրթ երկրներում, սակայն այն, որ այստեղ գերիշխում է Չարիքի իշխանությունը, որտեղ խարխափում է խավարը և հետամնացությունը, ապա դա նշանակում է ոճրագործություն սեփական ժողովրդի հանդեպ: Բացատրությունն ավելի ուշ: Բռնակալի ոհմակը լավ հասկանում է, որ երկիրը կանգնած է լուրջ վտանգի առջև, սակայն նրանք ոչինչ չեն ձեռնարկում կանխարգելելու աղետը: ( « **Բարձր դասի նպատակն է՝ մնալ նույն տեղում: Միջին դասի նպատակն է՝ փոխել տեղը բարձրի հետ** »: **Ջորջ Օրուել** « **1984** ») Եթե շատերը տեղյակ չեն, ապա փորձեմ ներկայացնել այն փաստագրությունը, որը ունենք: Վերջին տարիներին Հայկական բանակ զորակոչ կազմակերպելու համար առաջացած բարդությունները իշխանավորներին պարտադրել են օրենքի մի շարք փոփոխություններ մտցնել, որը հնարավորություն է տալիս բանակին ապահովել նորակոչիկներով: Այսինքն բանակը մարդկային ռեսուրսով բավարարելու համար օրենքներ են փոփոխվել: Տասներկուամյա դպրոցի նոր կանոնակարգը դպրոցի շրջանավարտներին հնարավորություն չի տալիս շարունակել ուսումը բարձրագույն ուսումնական հաստատություններում, քանի որ դպրոցը ավարտելուց ամիջապես հետո զորակոչվում են ծառայության: Սովորել կարող են միայն ծառայությունը վերջացնելուց հետո: Այն, որ արական սեռի պակաս կա Հայաստանում դա փաստ է, այդ պատճառով իշխանություններն ամեն ինչ անում են, որպեսզի այդ խոչընդոտը հաղթահարեն: Սակայն չի խրախուսվում ծննդաբերությունը, նույնիսկ արհեստական խոչընդոտներ են առաջացնում, ոչնչացնելով գենետիկական բազան:

Ինչպես Ջորջ Օրուելին իր գրքում է գրում, որ Խոզերը գալով իշխանության փորձեցին փոխել օրենքներն ու հարմարեցնել իրենց քմահաճույքին: **« Բոլոր կենդանիներն իրար հավասար են, բայց որոշներն ավելի հավասար են »: ( Ջորջ Օրուել « Անասնաֆերմա » )** Պատճառը, ինչպես ասացի արական սեռի երիտասարդների պակասն է զորակոչը կազմակերպելու համար, շատ դեպքերում անտեսելով հիվանդություններն ու առողջական խնդիրները զինվորին զորակոչում են զինվորական ծառայության: ( *[http://xnews.am/?view=news&id=2786](http://xnews.am/?view=news&id=2786) « Առողջական լուրջ խնդիրներ ունեցող քաղաքացիները զորակոչվում են պարտադիր զինվորական ծառայության ». ՀՔԱ զեկույց 11:06 | 26.11.2014 Դժբախտ դեպք բանակում. մահացել է քաղցկեղով հիվանդ նորակոչիկ [http://armlur.am/363265/](http://armlur.am/363265/) 13:34 | Մայիս 29 2015* )

Իհարկե դա չի վերաբերում մեծահարուստների զավակներին, որովհետև դրանք այլ կատեգորիայի են պատկանում: Պատահական չէ, որ Հայկական բանակը կազմված է, ինչպես Կառլ Մարքսը էր ասում, միայն **« Բանվորա-գյուղացիական »** դասակարգից: Բանակում ծառայում են միայն անապահով ընտանիքների զավակներ, այսինքն չքավորների զավակներ, որոնք ի վիճակի չեն իրենց զավակներին ծառայությունից ազատելու գումարը վճարել: Պատահական չէր. որ Սեյրան Օհանյանը Ապրիլյան պատերազմից հետո հայտարարել էր, որ անապահով ընտանիքների զավակները չեն կարող վճարել ուսման համար, քանի որ գումար չունեն: Իսկ մեծահարուստների երեխաները սահման չեն գնում, որովհետև սովորում են ԲՈՒՀ- երում: ( *[http://hayeli.am/article/870071](http://hayeli.am/article/870071) Սեյրան Օհանյանը պարզաբանում է, թե ինչու են սահմանի առաջնագծում անապահով ընտանիքների երեխաները* ) Բոլորը լավ գիտեն, որ հայկական բանակում կոռուպցիան ու կաշառքն ինչ մակարդակի վրա է և ինչպիսի գումար-

ներ ու կաշառք է այնտեղ պտտվում: Այն, որ տաս տասնհինգ հազար դոլարը սովորական գումար է ՊՆ աշխատող սպաների համար, դա է վկայում: Բանակից ազատվելու համար հըսկա կարողություն է հարկավոր, այդ պատճառով շատ հանապազորյա հացով ապրող ընտանիքներ չեն կարող թույլ տալ այդպիսի շռայլություն: Սակայն մեծահարուստները կարողանում են իրենց թույլ տալ նման շռայլություն և այնպես անել, որ իրենց զավակները ձևական գնում են բանակ` իբր ծառայելու:
Նկատի ունեմ պատգամավորների ու օլիգարխների զավակներին: ( *[https://www.youtube.com/watch?v=1cAVIjJ1EwU](https://www.youtube.com/watch?v=1cAVIjJ1EwU) 4 сент. 2016 г. Իմ հերը շատ փող ուներ, դրա համար էլ ես լավ եմ ապրում Մեյրան Սարոյան* ) Այդպիսի էլիտար զինվորները զորամաս հաճախում են իրենց քմահաճույքով, սակայն նրա աշխատանքը, որը պետք է արվի զորամասում անում են մյուս զինվորները, այդ պատճառով անապահով ընտանիքի զավակները ծառայում են նաև օլիգարխիկ զինվորների փոխարեն: Անվանացուցակով գրանցված օլիգարխիկ զինվորները ավելորդ եկամուտ են բերում զորամասի հրամանատարի համար, շահութաբեր էլիտար զինվորը հնարավորություն է տալիս ոչ միայն գումար աշխատել, այլև` պաշտոնի բարձրացում ստանալ: Քանի որ օլիգարխիկ հայրիկի կապերով ՊՆ -ում կարող են առաջ գնալ լավ ծանոթով ու փողով սպաները: Պաշտպանության նախարարությունը մեծ գումարների աղբյուր է, քանի որ բոլոր ծառայություններում հաստատված են հստակ գներ, որոնք տարեցտարի աճում են: ( *[http://armtimes.com/hy/article/71935](http://armtimes.com/hy/article/71935) Զինված ուժերում ծառայություն իրականացնող հոգևորականները կվճարվեն 14/10/2015* )
Մի քանի տարի հետո իսկապես դժվար կլինի կազմակերպել հայկական բանակի զորակոչ, քանի որ արական սեռի երիտասարդների պակասը կգերազանցի մինիմալի սանդղակը:

Այս տարբերակում իշխանավորները պատրաստ կլինեն օրենքով ամրագրել աղջիկների պարտադիր ծառայությունը բանակում: Ազգային ժողովի պատգամավոր Թևան Պողոսյանը պատահական չէ, որ այժմ ներկայացրել է այդ առաջարկը ազգային ժողով: Այդպիսով իշխանություններն աղջիկների զորակոչի հաշվին հնարավորություն կունենան լրացնել Զինված ուժերում պահանջվող անհրաժեշտ քանակը: Չկարծեք թե ես դեմ եմ աղջիկների պարտադիր ծառայությանը Զինված ուժերում, նույնիսկ կողմնակից եմ, քանի որ դա ոչ միայն օգտակար է իր պետության համար այլև` հենց աղջիկների: Սակայն դա հնարավոր կլինի միայն բարոյական պետություն ու քաղաքացիական հասարակության պայմաններում: Ինչպես օրինակ մի շարք երկրներում, որտեղ կանայք մեծ սիրով են ծառայում Զինված ուժերում: Զինված ուժերում կան ծառայություններ, որտեղ կանայք ավելի լավ են ծառայում քան տղամարդիկ, մանավանդ նոր տեխնոլոգիաներով զինված հարուստ բանակները, որոնք համակարգչային ու թվայնացված համակարգով են աշխատում: Ռադիոլոկացիոն, հեռահաղորդակցության, այդ թվում ռադիոհետախուզության ու հակաօդային պաշտպանության մեջ կանայք անգերազանցելի են, հրթիռահրետանային և հետախուզությունը ներառյալ: Որպես ռազմական ու քրեական ոլորտի հոգեբան, կարող եմ հաստատել, որ կանայք անգերազանցելի են իրենց հնարավորություններով, քան տղամարդիկ: ԱՄՆ-ում, Գերմանիայում և Կանադայում կանայք ծառայում են Ռազմածովային նավատորմում, որտեղ նաև հատուկ ռազմական օդաչուների բարձրագույն հաստատություններ կան կանանց համար:

Սակայն մեր Չարիքի երկրում ամեն օր խոշտանգվում և ըսպանվում են մեր զինվորները: Իսկ` սպաների ոտնձգությունները սահմաններ չեն ճանաչում, լկտիորեն չարաշահում են հրաման-

ատարական դիրքն և պաշտոնը: Պաշտպանության նախարարության իմ ընկերներից մեկը պատմում էր, որ Հայկական բանակում տիրում է անսահման թողտվությունը, կատարվում են այնպիսի զարհուրելի դեպքեր, որոնք խիստ գաղտնի են պահվում, մեծ թվերի է հասնում բռնաբարությունները, որոնց մասին առհասարակ չի խոսվում: Նա նույնիսկ բարձրաձայնել էր, սակայն Պաշտպանության նախարարության հրամանատարությունը սպիններով էր դիմավորել այդ լուրը և հաշվեհարդարի սպառնալիքներով լռեցրել նրան: *( [http://168.am/2013/08/13/262934.html](http://168.am/2013/08/13/262934.html) Ազատամարտիկներ. « Արդյո՞ք Վարդան Հովհաննիսյանը մեր այն նույն մարտական ընկերն է, այն ազնիվ երիտասարդ տղան, որին բոլորս հարգում էինք » | 22:20 | Օգոստոս 13 2013 )*

Ինֆորմացիոն մեդիան արգելափակված է: Պաշտպանության նախարարության ու բանակի հասցեին հնչած ցանկացած արտահայտություն դառնում է ոհմակի համար պատճառ, որպեսզի հարձակվեն ու հոշոտեն մարդկանց: Պատահական չէ, որ ՊՆ նախարար Սեյրան Օհանյանի անձնական քարտուղարուհի Արշակ Զաքարյանը հայտարարել է « Ղարաբաղում « սմերծելնիկների մի ջոկատ կա, որտեղ կռվում են միայն պաշտոնյաների տղաները »: *( [http://hraparak.am/?p=89008&l=am%2F Սեպտեմբեր 09 / 2015](http://hraparak.am/?p=89008&l=am%2F) Ըստ Արշակի՝ Ղարաբաղում «սմերծելնիկների մի ջոկատ կա», որտեղ կռվում են միայն պաշտոնյաների տղաները: )*

Պատկերացրեք, եթե հայ աղջիկը ծառայի բանակում, այն էլ անապահով ընտանիքից, ի՞նչ կստացվի՝ գեներալներից սկսած վերջացրած **« Չաստ Նայողը »**, ու քոսոտ ենթասպաներն հերթով պետք է բռնաբարեն ու ինքնասպանության հասցնեն նրան, հետո էլ ասեն, որ զինվորական ծանր կյանքին չդիմացավ: Բայց չէ որ նույնը կատարվում է այժմ մեր զինվորների հետ, ում խոշտանգում են, սպանում, հետո որակում, թե ինք-

նապաստ են եղել` կոծկելով ու փակելով իրենց հանցանքները: Չհաշված, որ հրամանատարներից շատերը զինվորներին որպես ստրուկ են օգտագործում` ինչպես զորավար Մանվելը: ( *https://www.youtube.com/watch?v=6bHO9jcMiSI «Զինվորի հետ վերաբերվում են ինչպես ստրուկի» 19 авг. 2010 г* )

Ի՞նչ եք կարծում, այդ Սպանդանոցում փափկասուն օրհորդը քանի օր կդիմանա, եթե երկու օր դիմացավ, ապա հերոս կլինի: Այն, որ հայկական բանակում զինվորների ծնողներն են վճարում նրա հիգիենայի ու հանդերձանքի համար, դա փաստ է: Արդյոք հայ կինը կարող է ծառայել այդ սպանդանոցում, որը կոչվում է Հայկական Բանակ: *( « Ապրիլյան պատերազմի օրերին առաջնագծում է եղել, իսկ այսօր, մի հայ սպայի թեթև ձեռքով, հաշմանդամ է դարձել ու անօգնական վիճակում հայտնվել». զինծառայողի հարազատները բողոքում են 13:15, 26.09.2016: https://www.mamul.am/am/news/91878 )* Մի խոսքով, արական սեռի երիտասարդների պակասը այժմ նկատելի է, ի՞նչ եք կարծում, մի քանի տարի հետո ինչ է սպասվում, եթե օրըստօրե ավելանում է արտագաղթը, զոհված ու խոշտանգված զինվորների քանակը հասնում է զարհուրելի թվերի: Քանի տարուց ավելի է ոչնչացնում են հայկական գենոֆոնդը, որն ունակ է շարունակելու, արտադրվելու ու շատանալու: Ես նախորդում շեշտել էի, որ օլիգարխների զավակների փոխարեն նաև ծառայում են անապահով ընտանիքների զավակները ու հենց նրանց « ներկայության » ծանրությունը ընկնում է մնացած ծառայողների ուսերին: Չնայած այդ օլիգարխիկ զինվորներին համարել ազգային գենոֆոնդը հարստացնող, սխալ կլինի, որովհետև դրանք առհասարակ ազգի հետ կապ չունեն, դրանք արյունածուծների դասին են պատկանում: Ցավոք նման արյունածուծներն ավելի արագ են բազմանում և ավելի շատ: Օրինակ օլիգարխիկների

բազմացումը՝ ճվաղրումն ու աճը կատարվում է **Լվերի** նման ինչպես Մանվել Գրիգորյանի ու Սամվել Ալեքսանյանի դեպքում, որոնք վեց կամ յոթ զավակ ունեն, իրենց պես անտաշ ու անճոռնի: Մնացածին չհաշվեմ, կարող եք համոզվել նրանց ճվադրումից: *( Առհասարակ Մանվելի նմանները առնետի պես են բազմանում, մինչդեռ դրանց դեմ մկնդեղով պիտի պայքարել: ԳՀ © ԱՌ 2014)* Հայկական գենոֆոնդի ոչնչացմանը նպաստում են հիվանդություններն ու արատավոր երևույթները՝ հարբեցողություն, թմրամոլություն հանցագործությունները, աղանդները, միասեռականությունը այդ թվում նաև հոգևորականությունը: *( https://www.youtube.com/watch?v=4gUO9ricSSc « Պիտի ամաչի այն ընտանիքը, որտեղ չմկրտված երեխա կա ». Միքայել Սրբազանը՝ Սարալանջի բնակիչներին 31 окт. 2016 г. )* Թունավորված սննդամթերք, անհայտ ծագումով պատվաստանյութեր: Այս բոլորը բացասաբար է ազդում բնակչության աճի ու զարգացման վրա: *( http://armlur.am/270334/ Արգելվել է Եղվարդի մանկապարտեզ մատակարարված սննդամթերքի օգտագործումը 12:09 | Նոյեմբեր 29 2014 )* Դրան գումարենք թունավոր միջավայրն ու սոցիալական ծանր պայմանները, անբարոյական աղետալի մթնոլորտը, բարոյահոգեբանական վիճակն ու արտագաղթը: Այս ամենը նշանակում է, որ ազգը չի կարող առողջ սերունդ ունենալ՝ գալիս է ժառանգական արատներով ծնված սերունդ՝ հիվանդ ու նվազ, որոնք իր հերթին առաջացնում են ամլություն և չբերություն: Հիվանդություններով ծնված սերունդը չի կարող առողջ սերունդ տալ: Ինչպես ասում են **« Առողջ մարմնում առողջ հոգի »**: *( http://womennet.am/ինչպե՞ս-բացառել-մանկապարտեզներում-ե/ Ինչպե՞ս բացառել մանկապարտեզներում երեխաների թունավորման դեպքերը: )* ( **« Ամեն կենդանի գոյություն, որ ոտնատակ է ընկնում, եթե չի մեռնում, այլանդակվում է, դառ-**

**նանում և փչանում: Սա է բնության օրենքը** »: **Հովհաննես Թումանյան** ) Սակայն Չարիքի երկրում այդ ամենը տրված է միայն « **Ընտրյալներին** », որոնք հնարավորություն ունեն լավ սնվել ու հագնվել, այդ թվում բուժվել Եվրոպական երկրներում: Սակայն ինչպես ասացի, այս կատեգորիան չի մտնում Ազգային Գենոֆոնդի մեջ, որովհետև հենց այդ Չարորակ տեսակն է, որ ապականում ու ոչնչացնում է մեր գենոֆոնդը: Ոչնչացման փաստերը եթե հաշվենք ու ներկայացնենք, կտեսնենք սոսկալի թըվեր: Ես կխուսափեմ թվեր նշելուց, քանի որ թվային շեշտադրումները Չարիքի իշխանության մեջ օգտագործվում է ժողովրդին խաբելու համար: Սակայն ներկայացնեմ պաշտոնապես հրապարակված որոշ թվեր:

Եթե Հայաստանում 2010թ.-ին ինքնասպանություն էր գործում օրեկան մեկ քաղաքացի, ապա 2016թ. այդ թիվը տասն անգամ ավելացել է: ( *հունիսի, 2010 Հայաստանում օրական գրանցվում է 1 ինքնասպանություն* *http://hetq.am/arm/news/45396/hayastanum-orakan-grancvum-e-1-inqnaspanutyun.html* *Անցյալ տարի Հայաստանում գրանցվել է 195 ինքնասպանություն և 452 ինքնասպանության ձախողված փորձ 15:12 | 1 Փետրվար 2012* *http://armlur.am/17365/* )

Դրան գումարենք նաև սպանությունները, որոնք կատարվում են վեճերից ու կռիվներից, ավելանում են ավտովթարներից տուժածները: Սոսկալի է բանակում՝ սահմանագծին զոհված զինվորների, սպաների ու ծառայակիցների կողմից խոշտանգված զինվորների թիվը, որոնք կորցնում են բանականությունն ու խելագարվում՝ հայտնվելով հոգեբուժարաններում կամ հաշմանդամության սայլակին:

Առհասարակ, որպես ռազմական հոգեբան կարող եմ ներկայացնել այն փաստը, որ ցանկացած ինքնասպան եղած զինվորի ետևում կա պատճառ ու մեղավոր: Այսինքն դրդապատճառն է

ստիպում զինվորին գնալ այդ ծայրահեղ քայլին: Ուստի, ամեն դեպքում հրամանատարն է մեղավոր ու մեղսակից այդ հանցանքին, քանի որ զինվորի կյանքի համար պատասխանատու է իր հրամանատարը՝ վերևից մինչև ներքև: Այս դեպքում եթե զինվորը չի մտածում սեփական կյանքի մասին, ապա հրամանատարը պարտավոր է պատասխանատվություն կրել զինվորի կյանքի ու առողջության համար: Հրամանատարը պարտավոր է իմանալ իր ենթակա զինվորի վիճակի ու հոգեկան շեղումների մասին: Պարտավոր է զեկուցել և հոգ տանել իր զինվորի մասին: Եթե սպան թերանում է թվարկածս պարտականությունները կատարելու մեջ, ապա նրան հարկավոր է ոչ միայն հեռացնել ծառայությունից այլև քրեական պատասխանատվության ենթարկել: Քանի որ, նրա պատճառով է, որ զինվորը ինքնասպանություն է գործել, ու դա ոչ միայն բանակին է վնասում, այլ նպաստում հայկական գենոֆոնդը ոչնչացնելու գործին:

Նման անտարբերությունը բառիս բուն իմաստով հավասար է ոճրագործության, որի համար պետք է կրի ամենախիստ պատիժը, որը սահմանված է օրենքով: Մեկ Զինվորի կյանքն ավելին է, քան որևէ արժեք ու շահ: ( *«Արծրուն Հովհաննիսյանը լկտիաբար ստում է. ես փաստեր ունեմ և պատրաստ եմ պատասխանատվություն կրել, եթե զրպարտում եմ». Վահան Բաղդասյան 24 Հոկտեմբեր 2016 https://www.168.am/2016/10/24/706229.html* )

Պատահական չէ, որ Իսրայելը իր մեկ զինվորի համար պատրաստ է ոչնչացնել ողջ արաբական երկրները:

Չարիքի իշխանությունում Ազգային Գենոֆոնդի ոչնչացման հիմնական ոլորտը **առողջապահությունն** է, **սոցիալական դասակարգային** ու **բարոյահոգեբանական** վիճակը:

Մանկանց մահացության թիվը աճում է տարեցտարի:

( *http://www.aravot.am/2015/07/13/592590/ Մահացող երեխաների 70*

*%-ը նորածիններ են: Հուլիս 13 2015 ) (Տեսանյութ )*
[https://www.youtube.com/watch?v=sUZqmIDMUDY](https://www.youtube.com/watch?v=sUZqmIDMUDY) )
Պատահական չէ, որ հայաստանյան ծննդատներից մի քանիսը Ազգային Ժողովի պատգամավորներին պատկանող սեփականություն է, որոնք չգիտես ինչու պատասխանատվություն չեն կրում մանկասպանության ու գենոֆոնդը ոչնչացնելու համար: *( Հայաստանում երեխաների մեծ մասը խոցելի է կամ աղքատ [http://www.epress.am/2016/09/26/հայաստանում-երեխաների-մեծ-մաս-ը-խոցելի.html](http://www.epress.am/2016/09/26/հայաստանում-երեխաների-մեծ-մաս-ը-խոցելի.html) 09.26.2016 17:13 epress.am )* Մանկական հիվանդություններն ու առողջապահության ոլորտի անպատասխանատու ու անտարբեր վերաբերմունքը նույնպես գենոֆոնդը ոչնչացնելու փաստ է, որն ակնհայտ է և կարիք չկա ծավալվելու: Գենոֆոնդը ոչնչացնելու ամենասարսափելի ձևերից մեկը սոցիալական դասակարգային ու հոգեբանական գործոնն է: Երիտասարդները չեն կարողանում ընտանիք կազմել, որովհետև սոցիալական պայմաններն ու հնարավորությունները թույլ չեն տալիս, իսկ հնարավորություն ունեցողներն անվերադարձ արտագաղթում են օտար երկրներ: Ինքներդ պատկերացրեք, եթե հնարավորություն չունեն ամուսնանալ, որովհետև չկան մինիմալ պայմաններ՝ ոչ բնակարան, ոչ աշխատանք, ոչ առողջություն և ոչ բարոյական միջավայր, նշանակում է, որ երեխա ունենալըն ու պահել, մեծացնելը դառնում է երազանք: *( [http://women-net.am/մանկական աղքատություն/](http://women-net.am/մանկական աղքատություն/) Մանկական աղքատություն )*
Շատերն են հրաժարվում ավելորդ դժվարություններից և զույգ չեն կազմում: Իհարկե դասակարգային բաժանումը արդեն իսկ դժվարացնում է առողջ ընտանիք ու սերունդ ունենալու գործը: Երիտասարդներից շատերի մոտ ընդհանրապես կորել է ընտանիք կազմելու երազանքն ու հույսը, իհարկե դրան գումարած շատ երիտասարդների առողջական խնդիրներ, որոնք հոգեկան

դեպրեսիայից առաջանում է ամլություն կամ չբերություն: Ինչպես ասացի հոգեբանական դեպրեսիան պատճառ է դառնում ինքնասպանության և գենոֆոնդի ոչնչացման: Նշանակում է Չարիքի իշխանությունը կանխամտածված կազմակերպում է ոչ միայն ներկա սերնդի ոչնչացումը, այլև այն սերնդի, որը պետք է գար: Իրականացնում է Ազգային գենոֆոնդի ոչնչացման իր զազրելի ծրագիրը՝ «**Հայաստանը առանց Հայերի**» բանաձևի շրջանակներում: Այդ ոչնչացման ծրագիրն իրականացնում է գիշերօթիկ դպրոցներից սկսած վերջացրած մանկատներ ու ծերանոցներ: Մի կարծեք, թե ծերանոցները ազգային գենոֆոնդի մաս չեն, քանի որ հենց մեծահասակ սերնդի մեջ է մնացել առողջ բանականությունը, սակայն նրանց ոչնչացնելով՝ ոչնչացնում են հիշողություններն ու իրական պատմությունները, ոչնչացնում իրենց հանցանքների վկաներին: Այնպես որ, ծերանոցները նույնպես համարվում է գենոֆոնդի մաս: Ես նախորդ բաժիններում ներկայացրել էի թե Ավանի գիշերօթիկ դպրոցում ինչպես են խոշտանգում երեխաներին: Ի՞նչ եք կարծում այդ դպրոցի սաները արդյոք կարող են լիարժեք քաղաքացի լինել, երբ ամեն օր ռեժիմով ծեծ ուտեն իրենց դաստիարակիչների ձեռքով: Խեղաթյուրելով երեխաների միտքն ու մանկությունը նրան դարձնելով գիշատիչ՝ ինչպես իրենք:
*( http://168.am/2016/10/26/707273.html 168.AM | 17:19 | Հոկտեմբեր 26 2016 Այգեստանում աշակերտները դասադուլ են հայտարարել. պահանջում են կարգի հրավիրել դպրոցի տնօրենին. News.am )*
(**«Մատաղ սերնդի դաստիարակությունը շատ ավելի կարևոր խնդիր է, քան այն, ինչ կարելի է անել արդեն հասունացածների համար» : Ջորջ Օրուելի)** Հոգեբանական ծանր վիճակից ծընվում են շատ արատներ, ծանր մանկությունը մարդուն դարձնում է մելամաղձոտ կամ ագրեսիվ, շատերը չեն կարողանում

հասարակության մեջ ապրել, մանկության մղձավանջները շարունակում են հետևել ողջ կյանքի ընթացքում: Մարդ այդ պարագայում դառնում է անկախ իրենից անձնասպան:

Ինքնասպանությունը շատ վտանգավոր երևույթ է, այն համարվում է դարի հիվանդություն: Գլխավոր չարիքի պատճառով է. որ քանիհինգ տարի խեղաթյուրեցին սերունդներին մոլագարի հատկություններով: Պատահական չէ, որ Վազգեն Սարգսյանը Շիզոֆրենիկ էր, և որ իր կառուցած երկիրը դարձավ մոլագարներով խեղաթյուրված: ( « **Գործընկերների վկայությամբ՝ Սարգսյանը հոգեպես անհավասարակշիռ անձնավորություն էր, իրականացնում էր խելահեղ արարքներ** »: « **Մտորումներ « Պազլի-նի »-ից հետո » գրքից Արտյոմ Խաչատրյան** )

Հոգեկան ծանր ապրումներից ելնելով է մարդ գնում ծայրահեղության՝ վերջ տալով սեփական կյանքին, փորձում է ազատվել անվերջանալի թվացող տանջանքներից: Սակայն, ինչպես ասացի, միևնույն է, ցանկացած ինքնասպանության ետևում կա պատճառ և մեղավոր, այս դեպքում մեղավորը ողջ համակարգըն է՝ իր արատավոր երևույթներով:

Եթե հաշվի առնենք, որ Եվրոպայում դեպրեսիան համարվում է հոգեկան ծանր հիվանդություն, որոնց մեծ և հատուկ ուշադրություն են դարձնում այն կանխարգելելուն, տարբեր հոգեթերապիաների վրա ծախսելով միլիոնավոր Եվրոներ՝ փորձում են այն նվազեցնել: Անձնասպանության երևույթի համար պատասխանատվություն է կրում ոչ միայն բժիշկը, այլ՝ ամբողջ պետությունը: Այն, որ մեզ մոտ Չարիքի Իշխանությունում հոգեկան ծանր վիճակում հայտնված մարդուն ոչ թե տանում են բուժհաստատություն, այլ տանում են ոստիկանություն ու խոշտանգում նրան, միաժամանակ օգտվելով անհավասարակշիռ վիճակից՝ վրան փող աշխատում: ( *Պայմանագրային զինծառայ-*

*որը փորձել է նետվել Կիևյան կամրջից 04.10.2016 10:00* [http://m.mamul.am/am/news/92313,](http://m.mamul.am/am/news/92313) *)* Աշխաhի շատ պետություններ շատ լավ գիտակցում են, որ սեփական ժողովրդի համար բարեկեցիկ ու առողջ միջավայր ստեղծելով, նպաստում են ազգային գենոֆոնդի պահպանմանն ու արտադրությանը: Գենոֆոնդի պահպանությունը ցանկացած պետության և քաղաքացու պարտքըն է: Այդ պատճառով քաղաքակիրթ երկրներում խրախուսվում է ծննդաբերությունն ու ամուսնությունը: Պետությունները իսկայական միջոցներ են հատկացնում ուսանողներին, երիտասարդ ամուսնությունները խրախուսելով՝ հատկացնում բնակարաններ ու գումարներ, առողջապահական ոլորտում ստանում են անվճար բուժում և այլն, բազմազավակ ընտանիքներին ապահովվում ինչով անհրաժեշտ է առողջ սերունդ դաստիարակելու համար: Պատահական չէ, որ ուսումը անվճար է՝ անկախ սոցիալական ու ազգային պատկանելությունից, առողջապահությունն ու կրթությունը կազմակերպված է պետական կառույցների կողմից: ( **«Ազգս երբեք չէ կարող կրթության կատարելագործությանը հասնել, քանի նորա մեջ չէ զարգացած ընթերցանության սերը: Իսկ ընթերցասիրությունը ժողովրդի մեջ տարածելու գլխավոր միջոցներից մինը՝ բանաստեղծական և վիպական գրվածքներն են: Ի՞նչ գիրք կարող է լինել ժողովրդի սրտին և հոգույն այքան մոտ, որքան մի վեպ, որը կախարդական հայելով նման պատկերացնում է յուր մեջն նորա կյանքը, երևան է հանում հասարակական տիպեր՝ յուրյանց գեղեցիկ և այլանդակ նըկարագիրներով:» Րաֆֆի** ) Առողջ միջավայրում ու առողջ պայմաններում փորձում են կրթել ու դաստիարակել արողջ սերունդ: Չհաշված, որ օտարազգիների հաշվին են լուծում գենոֆոնդի պահպանման հարցերը: Սակայն դա էլ իր դրական կողմերը ունի: ( **«Տգիտությունը ներքին թշնամու կերպարով իր սև գործն**

**է անում և շարունակելու է անել, քանզի թշնամու այդ տեսակը կենսունակ է այնտեղ, որտեղ պարարտ հող կա իր համար»: Հովհաննես Թումանյան)** Իսկ ի՞նչ է կատարվում Չարիքի իշխանությունում, ինքներդ դատեք. եթե միայն «2009թ. Հայաստանում 44.530 երեխաներից 1567-ը ծնվել են արատներով: Նորածինների մոտ ամենից շատ գրանցվում են սրտի արատով հիվանդության դեպքեր»: ( [http://www.aravot.am/2015/ 07/13/592590/](http://www.aravot.am/2015/07/13/592590/)) Իսկ «2010թ.-ին Հայաստանում յուրաքանչյուր հինգերորդ երեխան քրոնիկական թերսնման խնդիր ունի, ինչն անմիջապես ազդում է նրանց ֆիզիկական և մտավոր զարգացման վրա: Որպես հետևանք՝ մինչև 5 տարեկան երեխաների 37 տոկոսը սակավարյունության խնդիր ունի, ինչը արդեն բավական բարձր ցուցանիշ է համարվում»: ( *«Յուրաքանչյուր հինգերորդ երեխան Հայաստանում թերաճ է»: [http://www.tert.am/am/news/2016/03/27/ child/1975635](http://www.tert.am/am/news/2016/03/27/child/1975635) Հայաստանում 5 տարեկանից փոքր երեխաների 19%-ը թերաճ է, գրեթե 15%-ը՝ գերքաշ 20:13 • 27.03.16 [http://www.azatu- tyun.am/a/27633833.html](http://www.azatutyun.am/a/27633833.html) [https://www.youtube.com/watch? v=Lm_ZM 1 HaypA](https://www.youtube.com/watch?v=Lm_ZM1HaypA) )* Հիմա էլ տարածում է գտնում մանկական հաստատությունների թունավորումների դեպքերը: Մանկապարտեզներում երեխաների թունավորման դեպքերը բազմաթիվ են ու բազմատեսակ և դրա համար ոչ ոք պատասխանատվություն չի կրում: Չնայած ներկայացրած թվերն ունեն մի քանի տարիների վաղեմություն, սակայն, եթե փորձենք համեմատել նոր տվյալներին, ապա կտեսնեք, թե ինչպիսի աճ է գրանցվել:

Այս վիճակագրական տվյալների ետևում միայն թալան է ու կողոպուտ, քանի որ հենց այս վիճակագրության տվյալների վրա է, որ Չարիքի իշխանությունը միջազգային ու եվրոպական առողջապահական ու մանկական ֆոնդերից վարկեր ու նվիրատվություններ ստանում:

Դրանք բավական մեծ գումարներ են, որոնք յուրացնում են իշխանությունները: Օրինակ 2016 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան իրականացրած ծրագրի շնորհիվ Դավթաշենում մանկապարտեզներից մեկում 5 սենյակ վերանորոգելու համար 285 հազար դոլար է ծախսվել, երբ այդ գումարով հնարավոր կլիներ կառուցել մի քանի դպրոց սահմանամերձ գյուղերում՝ իրենց մշակույթային տներով հանդերձ:

*( Դավթաշենում մանկապարտեզի 5 սենյակ վերանորոգելու համար 285 հազար դոլար է ծախսվել 12.09.2016 http://yerkirmedia.am/social/davtashen-mankapartez-veranorogum/ )*

Ինչպես տեսնում ենք, **Ազգային գենոֆոնդը** աղետալի վիճակում է ու ոչնչացման եզրին, իսկ սփյուռքում հայապահպանության ծրագրերը չեն կարող իրականանալ գենոֆոնդի պահպանման հակահայ ծրագրերի շնորհիվ: Իսկ պատգամավոր Թևան Պողոսյանի սերմնաբջիջների գենետիկ բազայի առաջարկությունըն ուղղակի ծաղր է հայ մոր, զավակի ու նրա ցավի հանդեպ, որի համար պետք է գնդակահարել նման տականքին, ով փորձում է արդարացնել հանցավոր իշխանությունների հանցանքները՝ ազգային գենոֆոնդի ոչնչացման ծրագրերի իրականացման հարցում: Այդ առաջարկի փոխարեն թող առաջարկեր պետության սոցիալ բարոյական վիճակը բարելավելու ծրագրեր, որոնք հնարավորություն կտային արդիականացնել բանակի զինտեխնիկան, նպաստել նորաստեղծ ընտանիքների ու բազմազավակ երեխաների ավելացմանը: Առաջարկեն նպատակային ծրագրեր, որոնք խթան կհանդիսանան բարոյական պետության ստեղծմանը, որտեղ ծնելիությունը ավելի բարձր կլինի, և որը հնարավորություն կտա պահպանել գենոֆոնդը ոչ արհեստական բազմացման հաշվին, այլ բարոյական ու մարդկային, բնական ճանապարհով: Հենց Թևան Պողոսյանի պես փնթի անգրագետների

շնորհիվ է, որ ոչնչանում է **Հայի Ազգային Գենոֆոնդը:** Պատահական չէ, ոհմակը ոչ միայն ոչնչացնում է եկող սերնդին, այլև օգտագործում և ստրկացնում երեխաներին, ինչպես Մանվելն ու իր նման փնթիները: *( 30 Սեպտեմբեր, 2016 Մուշեղ Պետոյանի քույրը աշակերտներին ստիպել է քարոզչական բեմի պատրաստման աշխատանքնե՞ր տանել: ) http://fnews.am/p=2521490&l=am/mushex+petoyani+quyry+ashakert-nerin+stipel+e+qarozchakan+bemi+patrastman+ashxatanqner+tanel )*

*«Իրականությունն արտաքին երևույթ չէ: Իրականությունը գոյություն ունի մարդու գիտակցության մեջ և ուրիշ ոչ մի տեղ»: Ջորջ Օրուել*

*«Գուցե մարդը ոչ այնքան սիրվելու, որքան հասկացված լինելու կարիք ունի»: Ջորջ Օրուել*

*«Իշխելու գաղտնիքն է՝ սեփական անսխալականության հանդեպ հավատը համադրել անցյալի սխալներից դասեր քաղելու ունակության հետ»: Ջորջ Օրուել « 1984 »*

# « ՌԱՍԿԻՐՈՎԿԱ »
# ( Փոխատեղում )

***« Ամեն ոք, ով երբևէ հռչակել է բռնությունը իր մեթոդը, անխախտորեն պիտի ընտրի սուտը որպես իր սկզբունք »:***
***Ալեքսանդր Սոլժենիցին***

Այս բառը բառարաններում էլ չեք գտնի, քանի որ այն « Փառահեղ Զորավարի » **Տիկոզի** բառապաշարի գոհարներից է:
*( https://www.youtube.com/watch?v=afqTKT448eI Գեներալ ա, տեղերը ռասկիրովկա են արել. Մանվել Գրիգորյան 16 июн. 2015 г )*
Պատահական չէ, որ որոշեցի հենց այս անունն էլ դնել որպես ենթավերնագիր: Կռազի շոֆեռը **Ռասկիրովկա** ասելով նկատի ուներ շախմատային խաղում օգտագործվող Փոխատեղումը, որը ռուսերեն **« Рокировка »** բառի աղավաղված ձևն է, որը հավանաբար ինչ-որ տեղ պատահական լսել է, սակայն չիմանալով, թե դա ինչպես է արտասանվում, ինչում կամ օգտագործվում: Այնպես որ, ենթավերնագիր դնելով, այսպես շեշտադրվում է իրենց փնթի տեսակի մտքերը:
Ուրեմն այսպես, **Ռասկիրովկան**, առհասարակ, Չարիքի իշխանության հերթական բանաձևերից մեկն է, որն օգտագործվում է շուրջ քսանհինգ տարուց ավելի և արդեն ավանդույթ դառնալով, շարունակվում է մինչև հիմա: Չարիքի իշխանության այս վերջին վարչապետի ու կառավարության փոփոխությունը հենց այս Ռասկիրովկան է, որ կա: Ռասկիրովկան օգտագործվում է հատկապես այն ժամանակ, երբ ժողովրդի լարվածությունը հաս-

նում է գագաթնակետին: Այսինքն ձևական փոփոխությունները ներկայացնելով՝ փորձում են թուլացնել լարվածությունը:

Եթե ասենք, որ **Ռասկիրովկայի** ավանդույթը նորից մնացել է Վազգեն Սարգսյանից, ապա չենք չափազանցացնի: Կարծում եմ, նրա ժամանակակիցները լավ են հիշում, թե Վազգեն Սարգսյանը քանի անգամ « հրաժարական » տվեց Պաշտպանության նախարարի պաշտոնից ու կրկին վերադարձավ նույն պաշտոնին: Միայն 1990 -1993թթ. երեք թե չորս անգամ հրաժարական տվեց, հետո նորից վերադարձավ: Այսինքն ձևական իբր հեռանում է, սակայն արդյունքում մնում է նույն տեղում:

Ռասկիրովկան անելով՝ հանցագործները ոչ միայն խուսափում են պատասխանատվությունից, այլև թաքցնում են իրենց գործած ոճիրները: Վազգեն Սարգսյանը Արծվաշենն ու Շահումյանը ծախելուց հետո հրաժարական տվեց, որպեսզի իրեն չմեղադրեն հանցագործության մեջ, նույնը եղավ Կապանի օդանավակայանի մոտակա ադրբեջանական գյուղերի տարբերակում: Երբ պետք է պատասխանատվություն կրեր անհաջող մարտական գործողությունների համար, նա « Բկլիկ ձկնիկի » պես իջնում էր ջրի հատակը, մինչև անցնում էր վտանգը: Ամեն ինչ հանդարտվում էր, նա կրկին վերադառնում ու սկսում էր շարունակել իր պաշտոնավարումը: Եթե շատերը կարծում էին, թե նա իսկապես հեռացել էր, ապա թող հիշեն նրա 1996 թվականին ասած խոսքերը **« իշխանություն չենք տա »**: Ռասկիրովկայի շնորհիվ էր. որ ղարաբաղցիների ոհմակը հայտնվեց Հայաստանի իշխանական օթյակում: Առանձնապես կցանկանաի նշել այդ ոճրագործի արտասանած խոսքերից մեկը, որն անմիջական կապ ունի այս հավելվածի հետ: Վազգենը շեշտում էր, որ « **Ազատամարտիկը Քաղաքականությամբ չպետք է զբաղվի** »: Այս խոսքերը դարձրեցին լոզունգ, կարգախոս, ու սկսեցին հալածել

նրանց, ովքեր ցանկալի չէին իրենց: Այսօր էլ Փնթի Մանվելն ու **գերագույն ապուշը** անընդհատ կրկնում են այդ խոսքե-րը, սակայն շատերը չեն պատկերացնում այդ խոսքերի իմաս-տը, դրա ետևում թաքնված հանցանքները: *( 11 Դեկտեմբեր 2014 01:00 [http://www.7or.am/am/news/view/79105/](http://www.7or.am/am/news/view/79105/) Ով և որտեղ է արյուն թափել . Տարեսկզբին՝ փետրվարի 15-ին, ԵԿՄ համագում-արում ունեցած Սերժ Սարգսյանի ելույթից մեջբերում: )*
Ազատամարտիկներին արգելեցին քաղաքականությամբ զբաղվել, քանի որ քաղաքականությամբ պետք է զբաղվեին կոմունիստա-կան նոմենկլատուրայի աղբը՝ սկսած ԺԵԿ- ի պետերից վերջաց-րած գյուղսովետի թալանչիներ, կոմկուսի կենտկոմի հրեշներ ու թալանչի պահեստապետներ, Խորհրդային բանակի հարբեցող սպայակույտը, մինչև անգամ Կոմսոմոլամետ տականքները, քրե-ական հեղինակությունները ու գրպանահատ սրիկաները:
Բոլորը քաղաքականության մեջ մտան, բացի ազատամարտիկ-ներից: Հենց այդ քաղաքականությամբ զբաղվող քրեականա-մետ ոհմակը, որոնք այդքան տարի թալանեցին ժողովրդին: Վազգենի խոսքերը նորից հիշենք. « **Լևոնը իմ ընկերն է, ինչպ-ես և Վանոն, Ռոբերտը, Սերժը** »: Ինչպես տեսնում ենք թվարկ-ված ընկերները բոլորն էլ **ոճրագործներ** են՝ բառիս բուն իմ-աստով: Ինչպե՞ս կարող էր բանականություն ունեցող մարդը այդ ոհմակի հետ ընկերություն անել, եթե իհարկե ինքը ոհմ-ակապետը չլիներ: *( [http://lurer.com/?p=39180&l=am&fb_comment_id=256903151097695_1105181](http://lurer.com/?p=39180&l=am&fb_comment_id=256903151097695_1105181) Վազգեն Սարգսյան. Մենք ինքներս ենք մեր տունը շինելու (տեսանյութ ) ( Խնդրում եմ ընդունել, որ ես երբեք տարբերություն չեմ դրել հայաստանցիների և ղարաբաղ-ցիների միջև, քանի որ դա մեկ ժողովուրդ է, ու այդ ժողո-վուրդը, տառապում է հենց նույն ոհմակի ձեռքին, անկախ իր բնակության վայրից: )*

Ես « Փոխանցիկ դրոշ » բաժնում ներկայացրել եմ որոշ մանրամասներ իրար պաս տալու, այսինքն պաշտոնը իրար փոխանցելու երևույթի մասին: **Ռասկիրովկան,** որի մասին խոսում ենք հենց այդ երևույթի ենթակառուցվածքն է: Ռասկիրովկան, ինչպես ասացի, օգտագործվում է ծայրահեղ իրավիճակների դեպքում, երբ ժողովրդի դժգոհության ալիքը հասնում է կրիտիկական աստիճանին, այդ դեպքում գործի է դրվում Ռասկիրովկան, որպեսզի ժողովրդին հույս տան, որ նոր փոփոխությունները՝ նոր որակ ու նոր լիցք կտան ոչ միայն պետության զարգացման համար, այլև ժողովուրդի կյանքում:

*( https://www.youtube.com/watch?v=PjCFMUITZik Ծառուկյան. Եթե անհրաժեշտություն լինի, փակված էջը հնարավոր է բացվի 26 окт. 2016 г. )* Սակայն, ինչպես ասում են « **գումարելիների տեղը փոխելուց գումարը չի փոխվում** »:

Այդ պատճառով էլ քսանհինգ տարի ոչինչ չի փոխվում:

Ինչպես եղել ենք **Հատակում,** այդպես էլ մնացել ենք, նույնիսկ գլորվել ենք ավելի ներքև՝ **Դժոխք:** Լևոնը Տեր-Պետրոսյանը պատահական չէր, որ 2012 թվականին շեշտել էր դժոխքում ենք: *( Չեմ չափազանցնում հայաստանը վերածվել է դժոխքի հակ առաջնորդ: 22 ապրիլ 2012 http://mamul.am/am/news/9273/չեմ-չափազանցնում-հայաստանը-վերածվել-է-դժոխքի-հակ-առաջնորդ )*

Սակայն ոճրագործ հանցագործը մոռանում է, որ հենց ինքը եղավ դժոխքի առաջին անկյունաքար դնողը: Ցավալին այն է, որ այդքանից հետո նա համարձակվում է խոսել: Քաղաքակիրթ հասարակության մեջ նա պետք է վաղուց դժոխքում լիներ, ոչ թե հարթակից բարձրաձայներ: Չարիքի իշխանության մեջ ամեն մեկի պոչը մյուսի ոտքի տակն է, այդ պատճառով նրանք ոչ թե փոխարինում են, այլ **Ռասկիրովկա** են լինում, ինչպես եղավ Լևոնի ժամանակ, հետո Քոչարյանի ու Սերժի:

Նրանք փոխվում են տեղերով, նրանց վարչապետները նույնպես՝ Գագիկ Հարությունյանից սկսած վերջացրած Կարեն Կարապետյանով: Պատահական չի, որ Չարիքի իշխանությունում մեկ հանցագործին հանում են ու տեղափոխում մեկ այլ նախարություն, իբր թե նա այդ բնագավառում ավելի լավ կարող է աշխատել: Ամբողջ համակարգը սկսած դպրոցի տնօրեններից մինչև վարչապետներ ու նախարարներ, անգամ կուսակցական ու հասարակական կազմակերպություններն են Ռասկիրովկայով գործում: Ծառուկյանը գնում է՝ Զուրաբյանն է գալիս, նա գնում է, Լֆիկն է գալիս, նա էլ գնում է՝ նորից Ծառուկյանն է գալիս ու այսպես անվերջ ու շարունակ:

*( [https://www.168.am/2016/10/24/706094.html](https://www.168.am/2016/10/24/706094.html) « Ծառուկյանի վարկանիշը բավականին կայուն-բարձր է, նրա վերադարձի պահանջը կա». Երվանդ Բոզոյան Հոկտեմբեր 24 2016 / Պետք է խնդրեն, որ Ծառուկյանն այդ ծանրության տակ մտնի. Գագիկ Ծառուկյան [https://www.youtube.com/watch?v=8RMY2ezb_T8](https://www.youtube.com/watch?v=8RMY2ezb_T8) )*

*( [http://www.tert.am/am/news/2016/10/31/vahanbabayan/2178791](http://www.tert.am/am/news/2016/10/31/vahanbabayan/2178791) Վահան Բաբայանը մտադիր է դաշինք կազմել ՀՀԿ-ի հետ և մտնել ՀՀԿ ցուցակ 22:15 • 31.10.16 )*

Նույնը ուժային կառույցներում է ու անվտանգության համակարգում: Առհասարակ Հայկական բանակը Ռասկիրովկաների կիզակետում է հայտնված: Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ռասկիրովկաներով Ղարաբաղից եկավ ու նստեց Հայաստանի պաշտպանության նախարարի պաշտոնին, նույնը գեներալ Վարդան Ավետիսյանը, Մովսես Հակոբյանը, Սերգեյ Չալյանն ու Արթուր Աղաբեկյանը, մնացած շնագայլերը, որոնք այնքան շատ են, որ մտածելն անգամ սարսափելի է: Նույնիսկ Ռազմական ուսումնարանում ոճրագործությունից հետո ուսումնարանի պետ *( Հայկազ Բարսեղյանի դաժան սպանությունը )*

նշանակվեց Արմեն Ղահրամանյանը, ով ավելի ճիշտ, Ռասկիրով-կա եղավ, ոչ թե նշանակվեց պակաս հանցագործ ու ոճրագործ էր, քան նախորդը: Տարիներ առաջ էր, երբ Արմեն Ղահրաման-յանը մեղադրվել էր զինվորներին խոշտանգելու մեջ, քանի որ գործը մաքրեցին ու մոռացվեց, ուստի կարելի էր Ռասկիրովկա անել: Ապրիլյան պատերազմից հետո Պաշտպանության նախա-րարության բարձրաստիճան գեներալները նույնպես ռասկիրովկա եղան: Հայկական բանակում մի ոճրագործին փոխարինում է մյուս ոճրագործը, այդ պատճառով երկար տարիներ սպանված զինվորների գործերը մնում են առանց բացահայտման:
*( Զինվորի երակի մեջ ջո՞ւր են ներարկել | ՉԵՆՔ ԼՌԵԼՈՒ 15 мар. 2013 г. Լավ, մինչև ե՞րբ ենք խաղաղ պայմաններում մեր զինվոր-ներին կորցնելու: https://www.youtube.com/watch?v=ntjOt2DvrIc )*
Որդեկորույս մայրերը տասնամյակից ավելի պայքարում են, որ-պեսզի իրենց որդիներին սպանած գեներալներն ու սպաները պատժվեն, սակայն ապարդյուն: Առհասարակ որդեկորույս մայր-երը լավ են հասկանում այս Ռասկիրովկայի բանաձևը, որովհե-տև տարիներով վազում են ու պայքարում, սակայն չգիտեն, թե որտեղ է ավարտվելու իրենց պայքարը: Փոխատեղվում են՝ գըն-ում է Ջհանգիրյանը, գալիս է Աղվան Հովսեփյանը, գնում է նա գալիս է Կոստանյանը, Կոստանյանը գնում է նորից գալիս է Աղվան Հովսեփյանը ու այդպես շարունակ: Ռասկիրովկա են լինում քննիչներն ու դատավորները և գործերը այդպես մնում են մոռացված ու անպատիժ: Պատահական չէր, որ Ապրիլյան պատերազմում կորցրած 800 հեկտարը անպետք հողեր համա-րեցին, ժամանակին Արծվաշենի կորստից հետո Վանո Սիրադ-եղյանն հայտարարել էր. **« Որ մի Արծվաշեն էլ թող չլինի»** , նույն խոսքը հաստատել էր նաև Լևոն Տեր -Պետրոսյանն ու Վազգեն Սարգսյանը: Շահումյանի կորուստը նույնպես ջրեցին

գնաց: ( *« Վանոն ասեց՝ ի՞նչ եք էդքան աղմկում, թող մի հատ փոքր Արծվաշեն էլ չլինի, Լևոնն էլ թե՝ ի՞նչ է եղել՝ 5000 հատ-վել ենք, 7200 հա վերցրել»* [*http://haynews.am/hy/137544877302*](http://haynews.am/hy/137544877302) *Օգոստոսի 2013–17:00* ) Սակայն տարածքային կորուստների ետևում հազարավոր խորտակված ու մարված ընտանիքներ ու ճակատագրեր են, իսկ ոհմակը թքած ունի, ինչպես հիմա թքած ունեն 800 հեկտարի ու հարյուրից ավելի զոհերի վրա: Ոհմակը արդարանում է, իրենց դավաճանությունը քողարկե-լով ու ծածկելով, ինչպես նախկինում: Սակայն ոչ ոք հարց չտվեց, թե ինչու՞ այդ 800 հեկտարի վրա, թշնամու ոչ մի զրահատեխնիկա չպայթեց հակատանկային ականի վրա, կամ ինչու թշնամին առանց խոչընդոտի պետք է անցներ այդ տարածքով: Նշանակում է, որ քսան տարվա մեջ չկարողաց-ան ականապատել իրենց ասած քոսոտ 800 հեկտարը, կամ էլ՝ ադրբեջանցիների հարձակումից առաջ դրանք հատուկ ականազերծվել էին, որպեսզի թշնամուն հանձնեին այդ **անպետք տարածքները**: Առհասարակ 1992 թվականին նույն ձևով ականազերծել էին Շահումյանի պաշտպանական գիծը, հնարավորություն տալով, որ ռուսական զրահատեխ-նիկան առանց խոչընդոտի մտնի Շահումյան: ( [https://surhandak.wordpress.com/2012/11/02/անյռեկի-ղանգակա-տուն-ո՞վ-ծախեց-շահու/](https://surhandak.wordpress.com/2012/11/02/) ) Ինչպես տեսնում ենք, ներկան անց-յալի շարունակությունն է: Ինչպես եղավ, որ **Քոսոտ երկ-իրն** անգամ իր սեփական ինքնապաշտպանության համար, չկարողացավ քսան տարվա մեջ, գոնե պաշտպանական ակ-աններ արտադրել, որը շատ մեծ գումարներ չէր պահանջ-ում: Ինչպես ստացվեց, որ քսան տարվա մեջ չկարողացան ինժեներական ու ականապատված ամուր պաշտպանություն կառուցել, որպեսզի թշնամու դիվերսանտների ամենօրյա այց-

ելությունները վերածվեին իսկական դժոխքի: Սակայն ինչ-պես տեսնում ենք, այդ հրեշները դժոխքը ժողովրդի համար են կառուցել, ու անապահով ընտանիքների զավակների: Իրենք տեղերով ռասկիրովկա են լինում, իսկ ժողովուրդը տառապում է նրանց փոփոխություններից: Պաշտպանության նախարարության բարձրաստիճան սպաներին Ռասկիրովկա արեցին, որովհետև, ինչպես ասացի, դրանք խոշոր ձկները չէին, այլ միջին օղակի: Պն Նախարարն ու գերագույն գլխա-վորը իրենց մեղքը կոտրեցին նրանց գլխին, չնայած որ նրանք էլ անմեղ չէին, իրենք էլ իրենց հերթին օգտվում իշխանության լափամանից: Ուղղակի նրանց զոհաբերեցին, որպեսզի հանցանքի կծիկը չքացվի: Այն, որ կծիկի մեջ իր ուրույն տեղն ուներ գեներալ Խաչատուրովը, ով Ապրիլյան պատերազմի ժամանակ պետք է իր զինվորի կողքին լիներ, բիլիարդ էր խաղում: Փոխարենը՝ նրան պատժեին, նույն-իսկ պաշտոնի բարձրացում ստացավ: Սակայն հիշեցնեմ, որ Խաչատուրովը հենց այն խոշոր ձկներից մեկն է, որի մասին ասացի: *( http://araratnews.am/yuri-xachaturovn-azatvec-zinvatc-uzheri-glxavor-shtabi-peti-pashtonic/ Յուրի Խաչատուրովն ազատ-վեց զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնից 4 Հոկտ-եմբեր 2016 )* Խաչատուրովի մասին շատ հետաքրքիր ու զազրելի պատմություններ են շրջանառվում, նույնիսկ համ-ացանցում: Խաչատուրովը ոչ միայն բիլիարդի մասնագետ է, այլև Ռասկիրովկայի վարպետ, որովհետև իր կողմից կատար-ված տեղափոփոխությունները միլիոնավոր դոլարների օգուտ է բերում նրա գերդաստանին: Սակայն, ինչպես ասել էի նախորդում, Չարիքի իշխանությունում նրանք պաշտպանված են ոչ միայն օրենքով, այլև սահմանադրությամբ, դրա հա-մար նրան անգամ հաուբիցայով չեն կարողանում տապա-

լել: Հետաքրքիր մեկ փաստագրություն, որի մասին հայտնել է ՊՆ իմ բարեկամներից մեկը: Պարզվում է, տարիներ առաջ, երբ Խաչատուրովի որդին եղել է Արարատի զորամասերից մեկի հրամանատարը կամ տեղակալը, հարբած վիճակում սխալմամբ հայտնվել է Նախիջևանում և ադրբեջանցիները գերևարել են նրան: Դե, Խաչատուրովը, որպես ազդեցիկ մարդ կարողացել է բանակցել և փրկագին տալով՝ ազատել որդուն գերությունից: Սակայն փրկագինը եղել է ոչ թե իր գրպանից այլ պետության: Խաչատուրովը ողջ Նախիջևանի սահմանի երկայնքով հայկական դիրքապահներին հրամայել է նահանջել ու նոր դիրքեր գրավել թիկունքում: Այդպիսով փրկագինը եղել է տարածքային կորուստները Նախիջևանում: Ինչպես տեսնում ենք, այս գործարքի մասին ոչ մի արձագանք չեղավ, ինչպես Ծահումյանի ու Արծվաշենի տարբերակում: Գործն անգամ լռեցրին ու փակեցին: Չնայած այս պատմությունը միակը չէ Խաչատուրովի ու նրա հանցագործ որդու մասնակցությամբ, քանի որ Ապրիլյան պատերազմին նրա որդու և հոր հանցանքն ակնհայտ էր, դրանից առաջ էլ հայր ու որդի մասնակից են եղել շատ ոճիրների ու հանցանքների: *( [http://www.lragir.am/index/arm/0/right/view/44098](http://www.lragir.am/index/arm/0/right/view/44098) 14 Փետրվարի 2011, 18:51 ՌՎ Է ՀԵՏԱՊՆԴՈՒՄ "ՌՈԺԻՆ" )*

Ծարունակենք խոսել մեկ այլ դավաճան գեներալի մասին: Այժմ արդեն նախկին Պաշտպանության Նախարար Սեյրան Օհանյանի մասին: Փոխարենը ռազմադաշտային դատարանին հանձնելու որպես դավաճանի՝ Սեյրանին Ռասկիրովկա արեցին Վիգեն Սարգսյանով, չնայած նա դժգոհությունը չէր թաքցրել Գլխավոր հրամանատարին՝ հայտնելով իր հեգնանքը: *( [http://hayeli.am/article/951798](http://hayeli.am/article/951798) Oct 04, 2016 Սերժ Սարգսյա-*

*նին դուր չի եկել Սեյրան Օհանյանի պահվածքը* ) Սակայն դա կարող է ծանր նստել Սեյրանի վրա ու զրկել հետագա ռասկիրովկաներից, քանի որ **Բոլշևիկ Չեկիստ** ընկերը չի ներում դավաճաններին ու հակադարձողներին: Այնպես որ, այս տարբերակում հնարավոր է, որ նրան թողնեն « **Բորտին** »: Սակայն այնպես չէ, որ Օհանյանն ու իր գեղեցկուհին կարող են զրկվել իրենց բարեկեցիկ ու շքեղ կյանքից: Նրանք վաղուց հոգ են տարել դրա մասին: Ֆրանսիայի Նիցցա քաղաքում ձեռք բերած հիվանդանոցը, Չեխիայում գտնվող հյուրանոցային համալիրներն ու խաղատները նրանց մշտական եկամտի աղբյուրն են, այնպես որ չի բացառվում, որ Օհանյանը Տիգրան Սարգսյանի ու Ռոբերտ Քոչարյանի պես թռնի Եվրոպա և այնտեղ սկսի վայելել Հայաստանից թալանած միլիոնները: Նրա համար, իհարկե, դժվար չէ ստանալ Ֆրանսիայի կամ Չեխիայի քաղաքացիություն, մանավանդ, որ այնտեղ մեծ մասշտաբների է հասնում սեփականություններն ու կարողությունները: Պատահական չէ, որ խոսք է գնում Օհանյանի՝ Վիկտոր Դալլաքյանի հետ նոր կուսակցություն հիմնելու և ընդդիմադիր դաշտում հանդես գալու հավանականությունը: Քանի որ նա Ռասկիրովկայի իր հույսը չի կորցնում, փորձում է նստել գերագույն գլխավորի աթոռին: ( *http://shabat.am/am/article/88184/88184.html Ո՞ւր են տանում Սեյրան Օհանյանի ճանապարհները. դեպի Վիկտոր Դալլաքյան. « Իրավունք » 04 Հոկտեմբեր, 2016 08:38* )

Կարծում է, որ Պաշտպանության նախարարության իր կադրերի հաշվին ինչ-որ դիվիդենտներ շահել: Սակայն Օհանյանի թեման ավելի ողբերգական է, քան Ռասկիրովկայի զոհ դարձած Հովիկ Աբրահամյանի, ով ամեն գնով ցանկանում է իր իշխանությունը, կամ ազդեցությունը պահել կառավա-

րությունում: Պատահական չէ, որ նա իր հավատարիմ կադրերին պատգամել էր, որպեսզի պայքարեն իրենց նախարարական պորտֆելների համար: ( *Հովիկ Աբրահամյանն իրեն հավատարիմ նախարարներին պատգամել է պայքարել 2016-09-20 www.1in.am/2009905.html#sthash.QV2MgkaS.gbpl&st_refDomain=&st_refQuery=* ) Իսկ թե ինչ ստացվեց այդ պայքարից, կարծում եմ, բոլորն հիմա համոզվում են:

Աղվան Հովսեփյանի Ռասկիրովկան ավելի հաջող էր, քանի որ իշխանությունը հատուկ նրա հագով նոր **Քննչական Կոմիտե** ստեղծեց, որպեսզի նա շարունակի աշխատել, նույնն արեցին Գոռիկ Հակոբյանի ու Հրանուշ Հակոբյանի համար: ( *Աղվան Գառնիկի Հովսեփյան, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահ,) (http://operativ.am /?p=197327&l=am Պաշտոնյաների որդիները հերթով լքում են Հայաստանը. հերթը՝ Ներսիկ Նազարյանի և Աղվան Հովսեփյանի որդիներինն է 21 Հոկտեմբեր, 2016 9:04* )

Ավագ տարիքի սերունդը պետք է լավ հիշի, թե ինչպես Վազգեն Սարգսյանն իր համար **նոր աշխատատեղ** « բացեց՝ » **Ազգային Անվտանգության պետական նախարարի** պաշտոնը, որի ձեռքին էին գտնվում երկրի բոլոր ուժային կառույցները: ( *1993-1995 թթ.-ին ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի գծով պետնախարար https://hy.wikipedia.org/wiki/Վազգեն_Սարգսյան* ) Չնայած Հայաստանի Սահմանադրությամբ այդպիսի հաստիք չկար, հասկանալի է, որ նա ինքնագործունեությամբ էր այդ ամենը սարքել: Դա էլ նրա հերթական Ռասկիրովկաներից էր, որպեսզի միշտ մնա բարձրունքում: Այստեղ պետք է օրորմի ասենք Նաիրի Հունանյանի անցավորներին, որ կարողացավ ավտոմատի խզակոթով նրան ուղարկել իրեն հասանելիք տեղը՝

**Դժոխքը:** Առհասարակ Ռասկիրովկան իրենից ներկայացում է մեծ եկամտաբեր բիզնես, մանավանդ վարչապետի Ռասկիրովկան: Ինչպես միշտ այդ գումարները գնում են գերագույն գլխավորի գրպանը: Այսինքն նոր վարչապետը գալով կառավարություն, պետք է կազմի նոր կառավարություն նոր աշխատակազմով: Այսինքն՝ հները, ովքեր պատրաստ չեն վճարել իրենց պաշտոնը պահելու համար հեռանում են, իսկ ովքեր ավելի շատ են վճարում ձեռք են բերում նախարարական պորտֆելը: Առհասարակ այդպիսի պաշտոնները սակարկվող տարբերակով է գործում, ով շատ է վճարում, նա էլ մնում է: Չնայած սա Ռասկիրովկայի ավանդական ձևն է, որը գործածվում է քսանհինգ տարուց ավելի: Այդ պատճառով մեր քաղաքական էլիտայում միշտ նույն դեմքերն են, սկսած Արմեն Զավենի Սարգսյանից, վերջացրած Հրանուշ Հակոբյանով:

Քանի որ խոսեցինք Արմեն Սարգսյանից, ուստի ինչպես կասեր առաջին տիկին Ռիտա Սարգսյանը. « **Մի Փոքր Սպռավչկա՛** »:

Ժամանակակիցները լավ են հիշում, թե Արմեն Սարգսյանը ինչպես թալանեց ու կողոպտեց Հայաստանի գործարանները, հետո սպանեց ոչ միայն Տիգրան Նաղդալյանին, այլև նրա դեռ չծնված երեխային, հետո, իբր նստեց ու հետո համաներումով ազատվեց, այնուհետև եկավ ու բազմեց Պաշտպանության նախարարի խորհրդականի աթոռին: Հիմա լավ խորհուրդներ է տալիս, թե ինչպես կարելի է խոշտանգել, թալանել, սպանել ու մնալ անպատիժ:

Պատահական չէ, որ Սոցիալական ապահովության պետական ծառայության նախկին պետ Վազգեն Խաչիկյանին, ով ժամանակին նախարար էր, թալանեց ու կողոպտեց անօգ-

նական թոշակառուների թոշակները, հիմա արդեն համան-երումով շուտով ազատ է արձակվելու: *( http://politik.am/վազգեն-խաչիկյանը-ներում-է-խնդրել-սերժ/ Վազգեն Խաչիկյանը ներում է խնդրել Սերժ Սարգսյանից. «Ժողովուրդ» 2016/09/16 )* Իսկ ազատամարտիկներ գնդապետ Վոլոդիա Ավետիսյանն ու փոխգնդապետ Խաչիկ Ավետիսյանն անգամ համաներման տակ չեն ընկել: *( http://lakmoes.am/hasarakutyun/1454-2016-10-27-12-01-14 Ս. Սարգսյանն արգելել է քրեականների ու օլիգարխների հետ աշխատանքը Հոկտեմբերի 27 2016, 09:01)* Վազգեն Խաչիկյանն Արմեն Սարգսյանի պես մնացել է անպատիժ և դրա համար էլ անգամ գաղութից է սպառնում: *( « Վազգենն է գաղութից ղեկավարում Ախթալան ». Խաչիկյանը գաղութից սպառնում է ընտրողներին. ՀԺ 2016-10-01 « Վազգենն է գաղութից ղեկավարում Ախթալան, Հայկազն ո՞վ է, որ կարողանա ինչ-որ բան անել: Կալանավոր է, բայց հեռախոսը ձեռքից չի գցում, գործող քաղաքապետը մեկին մի տեղեկանք տալու համար էլ պիտի զանգի, ախպոր հետ համաձայնեցնի: Վազգենն էլ Ախթալայում բոլորի համարներն ունի, օրը տասն անգամ զանգում է՝ սպառնում, վախացնում »: http://www.1in.am /2018864.html )* Ինչպես տեսնում ենք, Ռասկիրովկան իր-ենց « **Ընտրյալների** » համար է, սակայն ոչ ժողովրդի: ( « **Ճշմարիտն էն է, որ մեր ամբողջությունը տառապում է մի ծանր ու խոր բարոյական հիվանդությամբ** »: **Հովհաննես Թումանյան** )

« Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ,
Օր ու արև չտեսանք.
Վա՜խ, մեր կյանքը սևով անցավ,
Աշխարհից բան չիմացանք »:

Շատ դեպքերում անգամ իրենք իրենց հետ են Ռասկիրով-կա լինում, ինչպես Սուրիկ Խաչատրյանը Բուղաղյանների սպանությունից հետո հրաժարական տվեց, ու նորից վեր-ադարձավ նույն մարզպետի պաշտոնին, Մանվել Գրիգորյա-նի թուլեն՝ Կարեն Գրիգորյանը նորից վերընտրվեց Էջմիա-ծնի քաղաքապետ: Ճիշտ է, համեմատած ԱԱԳ- ի նախագահ Ռադիկ Հակոբյանի, Կարեն Գրիգորյանը Ռասկիրովկա եղավ արյան ու ահաբեկության գնով, նույնը իր հայրը, ով ամեն տարի Ռասկիրովկա է լինում ինքն իր հետ, մնալով հավեր-ժական ԵԿՄ-ի նախագահի պաշտոնին: Ռասկիրովկան գոր-ծում է բոլոր բնագավառներում, ինպես Գրողների ու կոմ-պոզիտորների, ժուռնալիստների միությունների նախագահ-ները, և անթիվ անհամար նման պաշտոններ: Օրինակ հան-ցագործ Արմեն Սարգսյանի կինը Ռասկիրովկա եղավ ու խոհանոցից միանգամից հայտնվեց Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջի տնօրենի պաշտոնին: *( http://hzham.am/մարդասպան-խորհրդականի-կինը-քոլեջի-տն/ Մարդասպան խորհրդականի կինը՝ քոլեջի տնօրե՞ն 07-10-2016 )* Նրա փես-այի՝ աղջկա ամուսնու՝ Գևորգ Տեր-Ղազարյանի մեծագույն ցանկությունն է Ռասկիրովկա լինել Դուբայում Հայաստանի հյուպատոսի պաշտոնին:

Ռասկիրովկան լինում է նաև սփյուռքի համայքներում, մի փնթին գնում է, գալիս է մյուս փնթին: Ինչևիցե, Ռասկի-րովկա լինում են բոլորը, անգամ նախագահներն ու վարչա-պետները, սակայն կարծես հավերժական են թվում Գագիկ Հարությունյանն ու Հրանուշ Հակոբյանը: Դրան կարելի է գումարել նաև Գարեգին Սրբապիղծին:

Ինչպես ներկայացրել էի նախորդ բաժիններում, Սփյուռքի նախարարությունը հատուկ ստեղծվել է, որպեսզի Սփյուռքն

ու հայրենիքը չմիավորվեն մեկ գաղափարի ու մեկ դրոշի տակ: ( *http://168.am/2016/10/25/706534.html 13:15 Հոկտեմբեր 25 2016 « Այստեղ Ազգային անվտանգության խնդիր կա. երկքաղաքացիության մեր պահոցը պետք է լրացնենք». Գագիկ Ջհանգիրյան* ) Ինչպես տեսնում ենք Սփյուռքահայերի գլխավոր թշնամի **կոմսոմոլ** Հրանուշ Հակոբյանն իր գործը գերազանց է կատարում, դրա համար, դժվար թե գտնեն մեկ այլ հրեշ, ով այդքան շատ **ատի** սփյուռքահայերին: Ամենահետաքրքիրը վերջերս ստացված մի նամակ էր, որը կցանկանայի ներկայացնել ընթերցողներին: Իմ Սիրիահայ բարեկամներից մեկը Շվեդիայից տեղեկացրեց, ( *02 /10/ 2016* ) թե Հրանուշ Հակոբյանն ինչեր է անում Սիրիահայերի գլխին: ( *https://www.youtube.com/watch?v=8cNDg-L4g84 Անգամ փախստականն է փախնում Հայաստանից* ) Այն սիրիահայերը, ովքեր պատերազմից մազապուրծ փախել ու ապաստանել են Հայաստանում, հայրենիքում արժանացան ամենադաժան ու վայրի վերաբերմունքի, անվերջանալի խոշտանգումների ու թալանի և ստիպված շատերը մի կերպ պարտք անելով կարողացավ փախչել Սփյուռքի Նախարարի ճանկերից ու մեծ դժվարությամբ հասնել Եվրոպա՝ Շվեդիա: Սակայն ահաբեկիչ Հրանուշ Հակոբյանը հասավ նրանց ետևից՝ նույնիսկ Շվեդիա: Չնայած, որ Շվեդիան սիրիացի փախստականներին աջակցում է ամեն ինչում և օգնում, սակայն սիրիահայերին կտրականապես հրաժարվում է տրամադրել փախստականի կարգավիճակ, պարզաբանելով, որ իրենց հայրենիքը Հայաստանն է: Փաստորեն Հրանուշ Հակոբյանը Շվեդական միգրացիոն ծառայություններին է ներկայացրել այն սիրիահայ փախստականների ցուցակը և պահանջել, որպեսզի նրանց վերադարձնեն Հայաստան:

Նա նույնիսկ սպառնացել է սիրիահայերին, որ Ինտերպոլի միջոցով բոլորին արտաքսել է տալու Հայաստան: Սիրիահայերն ահաբեկված են, և չեն էլ ցանկանում հիշել այն խոշտանգումները, որոնք տեսել են **Չարիքի Իշխանությունում**՝ Հրանուշ Հակոբյանի կողմից: Սակայն շատերը կզարմանան, թե ինչու՞ է Հրանուշ Հակոբյանը այդպես շահագրգռված սիրիահայերի վերադարձով: ( *https://www.youtube.com/watch?v=r5paP25OoUU Սիրիահայերը հեռանում են Հայաստանից 09.03.2013 9 мар. 2013* ) Այն, որ Հայաստանը միջազգային կառույցներից ու Եվրոպական երկրներից բավականին մեծ գումարներ է ստանում և ամեն եռամսյակ պետք է հաշվետվություն ներկայացնի իր երկրում փախստականների թվի վերաբերյալ, որպեսզի շարունակվի ֆինանսավորումը: ( *http://armlur.am/37528/ Քուվեյթը 100 հազար դոլար կհատկացնի Հայաստանում գտնվող սիրիահայերին 17:44 | Նոյեմբեր 29 2012* ) Ահա պատճառը: Հայրենակիցների դժբախտության վրա տզրուկներն հարսանիք են անում և թալանում: Ինչքան շատ սիրիահայ, անքան ավելի մեծ եկամտի աղբյուր: Այնպես որ, Հրանուշը ոչ միայն հայ ժողովրդի **թշնամին է**, այլ չարիք մարդկության համար, ում համար պատերազմը եկամտի աղբյուր է: ( *http://www.panorama. am/am/news/2016/10/12 Հալեպահայերը ոչ բրնձի կարիք ունեն, ոչ հացի, ոչ հագնելիքի, այլ՝ կյանքի ապահովության. Հրապարակախոս1 6:23 12/10/2016 Հայաստան* ) ( *http://m.mamul.am/am/news/92688 ՀՀ կառավարությունը բնակարաններ տրամադրելու անվան տակ թալանում է սիրիահայերին 16:05, 10.10.2016* )

# ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԿԵՏ ՉՈՒՆԻ

***« Չարիքը թաքցնելը կամ ուրանալը նման է թույլ տալուն, որ վերքը արյունահոսի՝ առանց վիրակապելու այն »:***

***Հռոմի Պապ Ֆրանցիսկոս***

Մեր հայրենակիցներից շատերն ապրում են հայրենիքի սահմաններից դուրս՝ Սփյուռքում: Սակայն, երկար ժամանակ ապրելով այնտեղ, այդպես էլ չեն կարողանում կողմնորոշվել թե ի՞նչ են ցանկանում, կամ ո՞րն է իրենց նպատակը, երբ փորձում են ինչ-որ անտեսանելի « **հայապահպանության** » ծրագրեր իրականացնել: Համարենք, որ Հայաստանից արտագաղթած հազարավոր հայեր **Փախստականներ** են, որովհետև հեռացել են պարտադրված՝ Չարիքի իշխանության կողմից: Չմանրամասնեմ, որովհետև իսկապես այդպես է, չհաշված այն մի զգալի հատված աշխատանքային վիզաներով ու պայմանագրերով են բնակություն հաստատել օտար երկրներում: Իհարկե, այդպիսիները քիչ են՝ համեմատած առաջին խմբին: Եթե հաշվի առնենք, որ Լևոն Տեր-Պետրոսյանի իշխանավարման ժամանակ **1.5 միլիոն** հայեր լքեցին իրենց հայրենիքը, ապա միանշանակ կարելի է ասել, որ Հայաստանի իշխանությունները իրականացնում են **Սպիտակ ցեղասպանություն** »: Չարիքի իշխանության բոլոր իշխանավորների ժամանակ Արտագաղթն ավելի լայն տարածում գտավ, գնալով հասավ ահռելի թվերի: Ճիշտն ասած, այդ բառն այդքան էլ տեղին չեմ համարում, քանի որ այս պարագայում ոչ այնքան սոցիալական գործոնն է դեր խաղում, որքան բարոյա-

հոգեբանական ծանր մթնոլորտը, գարշանքը, որն ստիպում է մարդկանց գնալ ծայրահեղ քայլի՝ լքել հարազատներին ու իր բնօրանը, հեռանալ գոյատևելու համար: Ուստի, ես « **Արտագ-աղթ** » բառից կիրաժարվեմ և կներկայացնեմ « **Փախստական** » տարբերակը: Բազմամիլիոնանոց հայկական համայնքներում զգա-լի թիվ են կազմում **Փախստականները**, որոնց մասին ասացի: Արդեն վաղուց այդ փախստականներից շատերը օրինական քա-ղաքացիություն ունեն և ապրում են որպես տվյալ երկրի լիարժ-եք քաղաքացի: Նրանց մեջ բավականին ազդեցիկ, ճանաչված ու մեծահարուստ հայեր կան և չմոռանանք, որ այդ ազդեցիկ մարդկանց մեջ կան գիտնականներ, փաստաբաններ, քաղաքակ-ան ու մշակութային գործիչներ, ովքեր ծանր կշիռ ունեն այդ երկրներում, անգամ միջազգային արենաում: Սակայն, ցավալի-որեն այդ մարդկանցից շատերը, չգիտես ինչու, մոռանում են իրենց անցյալն ու կենտրոնանում միայն նեղ-անձնական աննը-պատակ բաների վրա, ինչ-որ միջազգային անհեռանկար հայկ-ական ֆորումներ ու կոնգրեսներ կազմակերպելու վրա՝ մսխել-ով հազարավոր դոլարներ: Այդ մարդկանցից ոչ ոք փորձ չա-րեց ազդեցություն ունենալ օրինակ Լևոն Տեր- Պետրոսյանի վրա, կարող էին, բայց չարեցին, կարող էին քրեական պատասխանա-տվության կանչել որպես մարդասպանի ու հանցագործի, ավելի ճիշտ որպես Ոճրագործի: Կարծում եմ, միջազգային **Հաագայի** դատարան դիմելու բոլոր հիմքերն ու փաստերը կան, մնում է ցանկություն և իրականացում: Նույն մեղադրանքը կարելի է տարածել Լևոն-Տեր Պետրոսյանի իրավահաջորդ նախագահների՝ Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի վրա: ( **« Ռոբերտ Քոչ-արյանն ու Սերժ Սարգսյանը « սպարապետի հետ համեմատած հիրավի հրեշտակներ են » « Մտորումներ « Պագոլինի »-ից հետո » գրքից Արտյոմ Խաչատրյան** )

Բացի նրանից, որ նրանք ջանասիրաբար կոծկել են իրենց նախորդների հանցանքները, նույնիսկ ընթացք են տվել այդ ոճիրների կրկնմանն ու շարունակությանը, այսինքն գործել են կրկնակի՝ ու ավելի մեծ հանցանքներ: ( « **Երբ Քրիստոսին հարցնում են, Վարդապետ ինչպե՞ս անենք, որ լավ լինի: Նա ասում է. « Լավին լավն ասեք, Վատին վատը, միայն թե ասեք…** » )
Առհասարակ **Ոճրագործությունը** ամենաասարսափելի հանցանքներից մեկն է, որը վաղեմության ժամկետ չունի, քանի դեռ այն չի դատապարտվել: Կարևոր չէ, թե քանի տարի է անցել գործած ոճիրներից, այն հարկավոր է բացահայտել, ջրի երես հանել ու պատժել ոչ միայն մեղավորներին, այլև հանցակիցներին: ( « **Չարիքը թաքցնելը կամ ուրանալը նման է թույլ տալուն, որ վերքը արյունահոսի՝ առանց վիրակապելու այն** »: **Հռոմի Պապ Ֆրանցիսկոս** ) Այն, որ Իրաքի նախագահ Սադամ Հուսեյինը մեղադրվեց քրդերի հանդեպ 1982 թվականին իրականացրած սպանդի համար, չնայած անցել էր շուրջ քսանչորս տարի, սակայն դատարանը այդ հանցանքը դատապարտեց ու որոշում կայացրեց մահապատիժ: ( *ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը ողջունել է Հուսեյնին մահապատժի դատապարտող դատավճիռը՝ այն անվանելով «շրջադարձային» Իրաքի համար: Եվրամիությունը նույնպես ողջունել է դատավճիռը, սակայն, ինչպես եւ Վատիկանը, հորդորել է կախաղան չբարձրացնել Իրաքի նախկին բռնակալին: http://www.azatutyun.am/a/1584962.html* )
Նույնը արեցին Չիլի բռնակալ Աուգուստո Պինոչետի տարբերակում: Տասնամյակներ անց իսպանացի փաստաբան Բալտասար Գարսոնը **Հաագայի դատարանում** մեղադրանք առաջադրեց Աուգուստո Պինոչետին իր գործած ոճիրների համար:
( *http://www.epress.am/ru/2010/09/16/դինքի-մրցանակը-ստացան-իսպանացի-դատավ.html Բալտասար Գարսոնը 1996 թվականին սկսել*

*է Արգենտինայում խունտայի տարիներին կորած Իսպանիայի 320 քաղաքացիների գործով հետաքննությունը: Գարսոնը միջ- ազգ- այնորեն հայտնի դարձավ 1998 թվականի հոկտեմբերի 10-ին, երբ դատարան ուղարկեց Չիլիի նախկին նախագահ Աուգուստո Պինոչե- տիին վերաբերող գործը, որում բռնապետը մեղադրվում էր ցեղա- սպանություն իրագործելու և ահաբեկչության մեջ: )*

**Հաագայի միջազգային դատարանը** մեղադրանք առաջադրեց Հարավսլավիայի նախկին ղեկավար Սլոբոդան Միլոշևիչին իր կատարած հանցանքների համար, չնայած նրա ոճիրներից ան- ցել էր բավականին ժամանակ:

*( 2001թ. հունիսի 28-ին*https://hywikipedia.org/wiki/Սլոբոդան_Միլոշևիչ *)*

Այնպես որ, հայերը լիարժեք իրավունքներ ունեն վստահորեն դիմելու միջազգային դատարան, որպես բռնության ու ոճրագոր- ծության զոհ, մանավանդ որ բոլոր նախադրյալները կան ոճրա- գործների հանցանքները բացահայտելու համար: Եթե հանցանքը չի պատժվում, ապա այդ անպատժելիությունը ծնում է **Ոճիր:**

*( Սերժ Սարգսյան. « Մեր քաղաքացու կյանքն օրեցօր բարելավվելու է» 14:00 | Նոյեմբեր 5 2016 http://www.aravot.am/2016/11/05/823814/ ) ( Անպատժելիության հետևանքները. Սուրիկ Խաչատրյանի վար- որդի որդին կրկին մարդ է ծեծել. «Ժողովուրդ» 07:42 | Սեպտեմբեր 6 2016 http://armlur.am/576843/ )* Միայն այն, որ վերջերս սիրիահայ- երից շատերը դարձան **Չարիքի իշխանության** զոհ, դա փաստ է: Սիրիական պատերազմից մազապուրծ փախած մեր հայրենակիցների նկատմամբ իրականացրած **խոշտանգումներն** ու **ոճիրներն** աննկարագրելի են: Դրան գումարած նրանց կող- ոպտելն ու թալանելը: Միջազգային մարդասիրական կառույց- ների կողմից սիրիահայ փախստականների համար հատկացվ- ած միլիոնավոր դոլարները թալանվեց Չարիքի Իշխանության կողմից, չհաշված նրանց սեփական միջոցներն ու նրանց հան-

դեպ իրականացրած հոգեբանական ճնշումներն ու ծաղրը: Եթե հաշվի առնենք, որ փախստականներին ծաղրելն ու նվաստացնելը, նրանց վրա բռնություն կիրառելը ավելի մեծ հանցանք է համարվում, քան ոճրագործությունը: Հանձինս Սփյուռքի նախարար կոմսոմոլ Հրանուշ Հակոբյանի՝ իրականացվեց այնպիսի բարբարոսություն սիրիահայերի հանդեպ, որ աննկարագրելի է: Չարիքի իշխանությունը բռնաբարել է ոչ միայն նրանց իրավունքները, այլ բառիս բուն իմաստով բռնաբարություն է իրականացրել սիրիահայ կանանց նկատմամբ: Սիրիահայերից շատերը ստիպված եղան նորից փախչել այս անգամ « հայրենիք » կոչվածից: *( https://www.youtube.com/watch?v=r5paP25OoUU Սիրիահայերը հեռանում են Հայաստանից 09.03.2013 9 мар. 2013 г.)*

Պատահական չէր, որ հազարավոր սիրիահայեր հեռացան Եվրոպա, Կանադա ու Ամերիկա: Այն, ինչ կատարվում է Սիրիահայերի հետ այժմ, կատարվել է նաև 90-ականներին ու շարունակվում է մինչ օրս: Նույն **ոճիրը** իրականացվեց Գանձակի, Սումգայիթի, Բաքվի, Շահումյանի, Արծվաշենի, Մարտակերտի փախստականների հանդեպ: Նույն ծաղրը նույն հանցանքը, նույն թալանն ու կողոպուտը: Միջազգային կառույցների հատկացված գումարներից ոչ մի լումա չհատկացվեց նրանց:

Այդ ամենին գումարած **Սպիտակի երկրաշարժի** աղետյալներին, որոնց համար հատկացված գումարները շուրջ երկու տասնամյակից ավելի թալանեցին: Չհաշված բարերարների նվիրատվություններն ու հայկական սփյուռքից ուղարկվող միլիոնները *( http://politik.am/video-պատգամավորին-ձերբակալել-էին-կաթի-փո/ « Պատգամավորին ձերբակալել էին կաթի փոշի գողանալու համար ОԵԿ-ական պատգամավոր Հովհաննես Մարգարյանի՝ հայտնի « կաթի փոշու » գողության մասին պատմող տեսանյութը: Հիշեցնենք, որ կաթի փոշին Գյումրի օգնություն էր փոխանցվել 1988թ.*

*Երկրաշարժին հաջորդած օրերին: 2016/10/01 » )*
Հազարավոր ընտանիքներ դարձան ՀՀՇ nhմակի ու նրանց հաջորդող շնագայլերի զոհը, սակայն այդ ամենը անտեսեցինք ու մոռացանք, լռեցինք ու հանդուրժեցինք, կարծես այդպես էլ պետք է լիներ, սակայն աննպատակ ու անիմաստ հիշում և աղմուկ ենք բարձրացնում Թուրքիայի իրականացրած ցեղասպանության շուրջ: Իսկ որքանո՞վ է արդարացված հայաստանյան չարագործների իրակացրած ոճիրների նկատմամբ մեր լռությունը: Դա արդեն աններելի է: ( *Գագիկ Ծառուկյանը 200 հազար դոլար է նվիրաբերել իրանահայ համայնքին Ուրբաթ, 16 Սեպտեմբեր 2016 11:37 http://www.kentron.tv/index.php/am/special-programs/item /11162-vard150916.html* ) Ամենածիծաղելին ոճրագործների ոճրագործ Աղվան Հովսեփյանի արտահայտած միտքն էր, որ Հայոց Ցեղասպանության զոհերը հրեշտակներ են: ( *«Նայեք երկինք, տեսեք՝ ինչքան հրեշտակներ կան, նրանք բոլորը այսօր մեզ են հետևում այս օրով»: http://www.a1plus.am/1451576.html Աղվան Հովսեփյանը խոսում է հրեշտակներից (տեսանյութ) Ապրիլ 24,2016* ) Իսկ ի՞նչ է, իր կողմից հազարավոր խոշտանգված զոհերը հրեշտակներ չե՞ն, իրենք մոռանում են իրենց ոճիրները, սակայն հիշում են մի բան, որի հետ առանձնապես կապ չունեն, նկատի ունեեմ հայ ժողովրդի վիշտը: Ինչպես տեսնում եք, հանցանքներն ակնհայտ են, զոհերն ու հանցագործները բացահայտված, իսկ թե ինչու՞ չկան մեղադրող վկաններ կամ դատապարտողներ, դա պետք է հարցնենք ինքներս մեզ: ( *http://armlur.am/576843/ Անպատժելիության հետևանքները. Սուրիկ Խաչատրյանի վարորդի որդին կրկին մարդ է ծեծել. «Ժողովուրդ» 07:42 | Սեպտեմբեր 6 2016* )
Սակայն սուտ ու ձևական պայքարելու համար շատ ակտիվ ենք, կեղծ հայրենասիրության ցուցամոլությունը սփյուռքում ավելի է ծաղկում՝ ապականելով իմաստուն ու մաքուր զաղա-

փարները: Պատահական չէր ցուցամոլությամբ « Սասնա ծռերին », օգնության հասած սփյուռքը իր տեսահոլովակներով: Տեսաելույթներում տղաներին սատարում են ու ոգևորում, որ իրենց կողքին են ու պատրաստ են օգնել: Ուղղակի ծիծաղելի է, երբ իրենք իրենց չեն կարող օգնել: Սփյուռքում իրար են հոշոտում՝ բաժանվելով թայֆաների, համայնքների ու մաֆիաների: Չարիքի իշխանությունն արդեն բույն է դրել իրենց մեջ, որովհետև չեն հասկանում և չեն էլ ուզում հասկանալ, որ այդպես անվերադարձ վնաս են հասցնում մեր հայրենիքին ու ժողովրդին, քան օգնում: (« **Տասնյակ տարիներով ու անհամար դեպքերով փորձված է, է՛լ հայհոյանք, է՛լ զրպարտություն, է՛լ ափաշկարա սուտ, է՛լ չարախոսություն, կեղծավորություն: Նեղ թայֆայականությունը ոչ մի գյուղում գուցե էնքան անվայել կերպարանք չի առել, որքան սրա մեջ** »: ***Հովհաննես Թումանյան*** )
Կուսակցական շարքերում տիրում է այլանդակ գզվռտոց, չհաշված ստեղծված մանր-մունր խմբավորումները: Իսկ « **Ինտելիգենցիան** » տարին մի քանի անգամ անիմաստ ժողովներ է հնարում փորձում ներկայացնել **Հայրենիքի Փրկության** բանաձևեր ու միջոցներ: Սակայն, ինչպես ասում էր Իվան Կռիլովը. « Կարապը, խեցգետինը և գայլաձուկը » առակում « **սայլը տեղից չի շարժվում** »:
Մսխելով հազարավոր դոլարներ՝ աննպատակ ու անիմաստ, երբ ընդամենը մի քանի հազարով հնարավոր էր փոխել ամեն ինչ: ( *http://www.aravot.am/2016/11/05/823814/ Սերժ Սարգսյան. « Մեր քաղաքացու կյանքն օրեցօր բարելավվելու է» 14:00 Նոյեմբեր 5 2016* )
*( « Մեր կյանքը ավելի նման է թատերական բեմի, ու այդ բեմը … տեսեք որքա՜ն դերասաններ ունի … Ահա սա՝ ներկայանում է ամեն տեղ որպես չհասկացված ու հալածված գաղափարական գործիչ, մյուսը՝ նշանավոր հերոս է խաղում, երրորդը՝ հրապար-*

*ակախոսություն է սարքել, չորրորդը բարեգործ է ձևանում, հինգերորդը գրող է կեղծում, վեցերորդը՝ հանդիսանում է արդեն որպես նախատակ, յոթերորդը՝ գալիս է որպես դատավոր ... Ու որպեսզի թամաշավոր ժողովրդի սիրտը շահած լինեն ու բարեկամ պահած, միշտ գոռում են ժողովրդի անունը »: Հովհաննես Թումանյան )* Սակայն իրենք խեցգետնի առակի պես ամեն մեկը քաշում է մի կողմ, արդյունքը մնում է անփոփոխ:

*( http://www.aravot.am/2014/11/09/514077/ 16:09 | Նոյեմբեր 9 2014 «Սամվել Ալեքսանյանն ու իր կինը անկողին չեն մտնում, եթե բարեգործություն արած չեն լինում ». մանկավարժ )*

Պատահական չէ, որ Եվրոպայի Հայկական Միությունների Ֆորումի /ԵՀՄՖ/ դոկտոր Աշոտ Գրիգորյանը կազմակերպել է հզոր ներդրումային ծրագիր Չարիքի իշխանության հետ:

*( http://www.aravot.am/2016/09/29/810263/ ԵՀՄՖի նախագահ դոկտոր Աշոտ Գրիգորյանը կազմակերպել է հզոր ներդրումային ծրագիր )*

*« Աշոտ Գրիգորյանի ու ներդրողների պատվիրակությունը ժամանում է Հայաստան, հոկտեմբերի 6-ին ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի հետ ներդրումային ծրագրերի քննարկման համար »:*

Առհասարակ, այդ դոկտոր կոչեցյալն ավելի շատ է վտանգավոր հայ ժողովրդի համար, քան ադրբեջանական դիվերսանտները:

Եթե հաշվի առնենք, որ հայերն ընդունակ չեն պատժել սեփական ոճրագործներին, թուլամորթ, վախկոտ ու քծնող են, ուրեմն այդ դեպքում ամոթ չէ դիմել հարևան ադրբեջանցիներին:

Մի կարծեք, թե Ադրբեջանը մեր թշնամին է, որպես հոգեբան կարող եմ վստահորեն ասել, որ թշնամու կերպարը մեր մեջ ներարկել են այս ոճրագործները: Առհասարակ Չարիքի իշխանությունում այդպես է՝ Ջորջ Օրուելը այդ մասին հիշատակություն է թողել: Հզոր և ուժեղ պետությունները թշնամիներ չեն ունենում, որովհետև իրենք վստահ են, որ իրենց դիմաց թշ-

նամի չկա, այլ միայն թույլ հակառակորդ: Եթե հարցնեք Իսրայելի իշխանավորներին, ապա կհամոզվեք, չնայած այն, որ շրջափակված են արաբական երկրներով, սակայն այնքան հզոր են, որ իրենց կամքն են պարտադրում նրանց, ու երբեք թշնամի չեն դիտում իրենից թույլ պետություններին: Իսկ մենք այս քան տարիներին հզորանալու փոխարեն այնքան թուլացանք, որ հասանք «**Քոստո**» երկրների մակարդակին, որ անգամ աննշան պետություններն են մեր վրա ոտքեր սրբում: ( *ՀՀ սպառազինությունը թարմացնելու համար $ 30 մլրդ է անհրաժեշտ. ՊՆ խոսնակ 19:39 2016 -11-05 http://www.1in.am/2042584.html* )

( «**Եվ աստված ինքը սառն աչքով է նայում այդ ցավալի տեսարանների վրա. Նա տեսնում է, յուր պատկերը շինել են անասուններին հավասար, բայց աչքերը խփում, երեսը շրջում, անց է կենում...»: Րաֆֆի** ) Եթե մենք հզոր լինեինք ոչ միայն տնտեսությամբ, այլև բարոյականությամբ ու բանակով, ապա վստահ եմ, որ մենք թշնամիներ չէինք ունենա, անկախ նրանից, թե հարևան պետությունը ինչքան հզոր է: ( *Ինչ է խոսել մահից առաջ զինծառայողը ծնողների հետ. Կա ձայնագրություն http://www.aravot.am/2016/10/07/813436/ 13:32 | Հոկտեմբեր 7 2016* )

Հեռու չգնանք. Իրանի Իսլամական հանրապետությունը վառ օրինակ է, նրա համար անգամ ԱՄՆ-ն ու Իսրայելը թշնամի չեն դիտվում: Նույնը նաև դաշնակիցների հարցում է, թույլ պետությունը չի կարող երբեք ուժեղ դաշնակից ունենալ, որովհետև թույլերի հետ չեն դաշնակցում, այլ օգտագործում են: Դաշնակցում են միայն հավասարազոր պետությունները:

Այն, որ մեր իշխանավորները անընդհատ կրկնում են՝ «Ռուսաստանը մեր դաշնակիցն է», իսկ Երջանիկ ապուշները կնկնում են այդ ապուշությունը, ուղղակի ծիծաղելի է: Նորից եմ կրկնում, որ հզոր պետությունը չի կարող թշնամի ունենալ, որով-

հետև թշնամի ունենալը նշանակում է, որ ինքն էլ ոչնչով չի տարբերվում հակառակորդից: Այս միտքն արտահայտել է Գարեգին Նժդեհը և առաջարկել այդ բանաձևով առաջնորդվել, սակայն մեր տգետներն ու փնթիները կառչել են թշնամի բառից, առանց գիտակցելու, որ դրանով դառնում են թշնամի և դիտվում որպես թշնամի: ( « **Յարձակւում է, ով իրեն ուժեղ եւ պատրաստ է զգում յարձակւելու՝ լաւագոյն ... Յարձակւում է նա ով որ իր դիմացը թուլութիւն է տեսնում: Եղիր ուժեղ, էլի ուժեղ և միշտ ուժեղ »: Գարեգին Նժդեհ** ) Ադրբեջանին թշնամի համարելով՝ ի ցույց ենք դնում մեր անզորությունը, սակայն ես, որպես բժիշկ-հոգեբան վերլուծելով այս, եկել եմ այն եզրահանգման, որ նրանց պետք չէ դիտել թշնամի, քանի որ հնարավոր է երբևէ գտնել հաշտության ընդհանուր եզրեր, համագործակցելու, հաշտ ու խաղաղ ապրելու պայմաններ: Չնայած, եթե նկատել եք, Փնթիները՝ Մանվելներն ու մյուսները իրենց հարցազրույցներում միշտ շեշտում են, որ այս պատերազմը անավարտ է մնալու: Սակայն այդ տգետները մոռանում են, կամ առհասարակ չգիտեն, թե ինչ է նշանակում լինել « **նախահարձակ** », էլ ու՞ր մնաց կարծիք հայտնեն: *(« Ասում ենք գեներալ Մանվել՝ հասկանում ենք Վազգեն Սարգսյան, ասում ենք Վազգեն՝ հասկանում ենք գեներալ Մանվել Գրիգորյան »: « Գեներալ » Սեյրան Սարոյան © 2014 )* Մի խոսքով, կարծում եմ Ադրբեջանը պարտավորված ու շնորհակալ կլինի, եթե Մանվելին ու մյուս բոլոր հանցագործներին հանձնենք իրենց: Սակայն այդ հարցում նրանք նույնպես պետք է ակտիվություն ցուցաբերեն: Կրկնում եմ, եթե մենք ընդունակ չենք պատժել մեր ոճրագործներին, ապա ամոթ էլ չէ դիմել ադրբեջանցիներին: Կարծում եմ, որ նրանք ավելի շահագրգիռ պետք է լինեն իրենց հանցագործ քաղաքացիներին ետ վերցնելու համար: Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ

Սարգսյանը որպես Ադրբեջանի քաղաքացի պետք է պատասխանատվության ենթարկվեն հենց Ադրբեջանական դատարանում, այնուհետև Հաագայի միջազգային դատարանում, հետագայում արտահանձնել կամ պատասխանատվության ենթարկել ոճրագործներին՝ իրենց օրենքներին համապատասխան:

Իսկ թե ինչ հիմքերով սկսել դատավարությունը, այդ հարցում ես մեծ սիրով կարող եմ որպես քրեագետ օգտակար լինել և տրամադրել իմ ձեռքի տակ եղած ողջ փաստագրությունն ու նյութերը: Բավական է միայն ԼՂՀ Գերագույն Խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի սպանությունը, որի անմիջական մասնակիցները եղել են Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը: ( *14/04/1992- ին Դեռ այն ժամանակ, ՀՀՇ-ն ու Արցախում նրա երդվյալ հավատարիմներ Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը ցանկալի չէին համարում նրա մուտքը քաղաքականություն: Նրա և ման մտավորականը պոտենցիալ վտանգ էր Արցախի հարցը իշխանության հասնելու նպատակով խաղարկող «Ղարաբաղ» կոմիտեի համար: 33 տարեկան էր, երբ քունքին արձակված կրակոցը վերջ դրեց այդ կարճ, բայց պայծառ կյանքին, ով անջնջելի հետք է թողել Արցախյան շարժման պատմության մեջ: https://hywikipedia.org/wiki/Արթուր_Մկրտչյան_(քաղաքական-գործիչ* ) Եթե չեմ սխալվում վկաներ կան, փաստագրությունը տեսագրված է: Այնպես որ ադրբեջանցի իրավապաշտպանները կարող են գործը սկսել: ( « **Պատմությունը չպետք է կարդալ հեքիաթի նման, այլ պետք է դասեր քաղել՝ սխալները չկրկնելու եւ հերոսական էջերն իբրեւ օրինակ ընդունելու համար »: Արթուր Մկրտչյանը** ) Կարծում եմ, Հայաստանում և սփյուռքում շատ վկաններ կգտնվեն, որոնք պատրաստ են Հաագայի դատարանում վկայություն տալ ոճրագործների դեմ: Բավական կլինի միայն Սիրիայի պատերազմից մազապուրծ փախած ու Հայաստան-

անում խոշտանգված սիրիահայերի հազարավոր ցուցմունքները, որպեսզի ոճրագործները դատապարտվեն օրենքի ողջ խստությամբ: Չհաշված որ այդ երկուսի հանցանքների սկիզբը դրվել է Լևոն Տեր - Պետրոսյանից ու Վազգեն Սարգսյանից, որոնք եղել են այդ հանցախմբի առաջնորդները: Կարծում եմ շատ հետաքրքիր դատավարություն կլինի, ինչքանով հայտնի է Լինսի հիմնադրամը կարող է վճարել դատավարության հեռարձակումը կամ պահանջվող ծախսերը: Այդ երեք նախագահների գործած հանցանքներրը իրականացվել են ոչ միայն հայ ժողովրդի հանդեպ, այլ **քաղաքակիրթ մարդկության** դեմ: Անհրաժեշտ է, մտածել նոր պետություն և նոր հասարակություն կառուցելու մասին: Այլապես անիմաստ է ամեն կարգի փոփոխություն, եթե ոճրագործը նորից շարունակելու է մնալ և վայելել արյունով ձեռք բերած հարստությունը: *( http://hayeli.am/article/953008 Գագիկ Խաչատրյանը վերցրել է միլիարդներն ու անհետացել Oct 07, 2016 )* Վերջերս Եվրոպայի Հայկական Միությունների Ֆորումի ( ԵՀՄՖ ) նախագահ դոկտոր Աշոտ Գրիգորյանը ինձ գրել էր, թե ինքը շատ բաներ է արել հայրենիքի համար, համեմատած՝ ինձ: Ճիշտն ասած, ինձ շատ տարօրինակ թվաց այն փաստը, գիտնական մարդը արդյոք չի՞ տեսնում թե իր կատարած բարի գործի պտուղներն ովքեր են վայելում... Վայելում են բոլորը, ողջ իշխանական համակարգը սակայն ոչ հայ ժողովուրդը:

*( « Արդ՝ եթե ունենք ազգային իմաստություն, հոգու արիություն և առողջ բնազդներ, անկարելի է աչքներս փակենք մեր էս ծանր հիվանդության առաջ և չզգանք, որ մեր հոգին շատ է չարացած, մեր ներքին մարդը շատ է փչացած, և դրա դեմ կռվելու, առողջանալու առաջին պայմանը էն է, որ մենք... ճանաչենք մեր դժբախտությունը...*

*Ուրիշ ճանապարհ չկա. ներսից է լինելու հաստատ փրկությու-նը, որովհետև ներսից ենք փչացած»: Հովհաննես Թումանյան )*

Ռափայել Պատկանյան « Հայերուս թուքը »

Դուն խելոք, հաշուով վաճառական ես,
Միւլք, փող ու ապրանք, կ'ասեն՝ շատ ունես.
-Բայց թէ փողէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,
Թքել ենք քու ալ, փողիդ ալ վրան:

Քաջ ես, լըսել ենք, ինքըդ մեծաւոր,
Անուն յաղթողի ունես փառաւոր.
Բայց թէ թըրէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,
Թքել ենք քու ալ, թըրիդ ալ վըրան:

Ի վերուստ քանքար քեզի տուած է,
Հեղինակ անունըդ աշխարհ փըռուած է.
Բայց թէ գըրչէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,
Թքել ենք քու ալ, գըրչիդ ալ վըրան:

Հեռատես մըտքով դուն զարդարեցար,
Հըզօր իշխանի սիրելին դարձար.
Բայց թէ մըտքէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,
Թքել ենք քու ալ, մըտքիդ ալ վըրան:

Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռքեր,
Շատ կը յօրինես թանգագին բաներ.
Բայց թէ ձեռքէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,
Թքել ենք քու ալ, ձեռքիդ ալ վըրան:

Երկինք շնորհեցին քեզ լեզու ճարտար,
Քարոզչի ստացար հռչակ ու հանճար.
Բայց թէ լեզվէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,
Թքել ենք քու ալ, լեզվիդ ալ վրան:

Մեծ ուսում առիր, եղար գիտնական,
Գովքովդ լցուած է մարդոց բերան.
Թէ ուսումէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,
Թքել ենք քու ալ, ուսմանդ ալ վրան:

Կու տամ քեզ պատիւ, կ'ունենաս դու յարգ,
Ու կը դընեմ քեզ ազնիւ մարդոց կարգ,
Երբ օրորանէդ մինչեւ գերեզման
Միակ ձըգտումնքըդ լինի ՀԱՅԱՍՏԱՆ:

Ռափայել Պատկանյան 1878 թ

*Եւ եթէ մարդկութիւնը անպարբեր ականապես է մնում կապարուող ոճիրին կամ փորձ չի անում պապասխանապութեան կանչելու ազգասպանին՝ մարդկութիւնը ինքը արդէն ոճրագործ է ու մեծ կարիք ունի ինքնաբուժման:*

*Հովհաննես Քաջազնունի*

# ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Գիրքն ընթերցելուց հետո շատերի մոտ հարց կառաջանա. Իսկ ո՞րն է **Չարիքի իշխանությունը,** չնայած այն. Որ ամբողջ գրքում անընդհատ շեշտվում է « Չարիքի Իշխանություն » բառակապակցությունը, սակայն այդպես էլ կոնկրետ չնշվեց, թե վերջապես ո՞րն է այդ Չարիքի իշխանությունը:
Չարիքի իշխանությունը Հայաստանի վերջին 25 տարիների բոլոր նախագահներն են, վարչապետերը, պատգամավորները ու նախարարները: Չարիքի իշխանությունը մեր գեներալներն են, քաղաքական գործիչները՝ կուսակցական թափթփուկները, մտավորականներն ու հոգևորականները, անգամ սատկած ու սրբացված կուռքերը: Անտարբեր ու ապերախտ ժողովուրդը, անշնորհքների կողմից ստեղծած արվեստն ու մշակութային աղբը: Ծահագործող ու շահագործվող դասակարգը, մենք՝ ձեզ հետ միասին, որովհետև մեր անգրագիտության, տգիտության ու հանդուրժողականության շնորհիվ է գոյատևում այդ **Չարիքի իշխանությունը**:



Գեհենի Առաքել 11/04/2016

Շատերը կարծում են , որ ես ընդդիմադիր եմ, սակայն ասեմ, որ ո՛չ ընդդիմադիր եմ, ո՛չ էլ դիմադիր... Ոչ կուսակցական եմ, ո՛չ էլ ինչ-որ ամետ... նկատի ունեմ Ռուսամետ ու Արևմտամետ... Այսինքն ոչ մի գաղափարախոսության կողմնակից չեմ, ոչ էլ դեմոկրատ կամ այլախոհ: Ես միայն առողջ ապրելու կողմնակից եմ, դա ոչ որպես բժիշկ եմ ասում, այլ որպես առողջ մարդ: Օրինակի համար մի կարգախոս ունեմ, դա **ապրել առողջ հոգով ու մաքուր ձեռքերով:** Բռնությունը առհասարակ ատում եմ, որովհետև Բռնակալները ոչ միայն վնասակար են առողջության համար, այլ նաև շրջակա միջավայրի: Բացիլներն ու պարազիտները վնասակար են առողջությանը, անկախ դրանցից, թե դրանք լվեր են, թե օլիգարխներ... Իսկ մաքուր ձեռքերը պարտադիր է, հոգին և խիղճը նույնպես, հավատքը պետք է մաքուր ու ջինջ լինի, ոչ թե սև սքեմներով ծածկված: Իսկ ախտահանումը ու մաքրությունը կարևոր նախապայման է, այնպես որ մաքրությունով պետք է սկսվի ամեն ինչ, պետք է մաքրել մեր պատմությունը այնտեղ բուն դրած չակերտավոր հերոսներից, պետք է մաքրել եկեղեցին սրբապիղծ հոգևորականներից, անկախ նրանից, թե որ « պառողայից » են, պետք է մաքրել դպրոցներն ու ԲՈՒՀ- երը, պետք է մաքրել միջավայրը ու կուսակցությունները, պետք է մաքրել բանակը արյունածուծ գեներալներից ու սպաներից, մեր սփյուռքը պետք է մաքրել... Մի խոսքով հիգիենիկ ու Պրոֆիլակտիկ մաքրություն է պետք, մշակույթում ու արվեստում, պետք է նաև գրականության ու արվեստի մեջ: Ու ամենակարևոր մաքրությունը պետք է լինի անգամ Եռաբլուրում ու Պանթեոններում, պետք է ազատվենք սաղ ու սատկած բացիլներից:

28 августа 2016 г



# ՆԱՄԱԿ ՀՌՈՄԻ ՊԱՊ ՖՐԱՆՑԻՍԿՈՍԻՆ

Հարգելի Հռոմի Պապ Ֆրանցիսկոս, այս նամակը գրում եմ՝ ճանաչելով Ձեր և Ձեր կենսագրությունը:

Հարգելի Սուրբ Օծություն, մոտակա օրերը Դուք նախատեսել եք այցելել Հայաստան, սակայն չգիտեմ, թե ինչքանով եք իրազեկված Հայաստանից: Այնուամենայնիվ, որպես իմ երկրի քաղաքացի, ինձ պարտավորված եմ զգում Ձեզ տեղեկացնել իմ Հայրենիքում կատարվող իրադարձությունների մասին:

Առաջին հերթին տեղեկացնեմ, որ Վենետիկում գտնվող Հայաստանի դեսպանը հանդիսանում է Հայաստանի իշխանությունը բռնազավթած Սերժ Սարգսյանի հարազատ փեսան՝ Միքայել Մինասյանը Հայաստանում, որի տված տեղեկությունները Հայաստանի Հանրապետության մասին շատ հակասական է իրականությունից, քանի որ Հայաստանում արդեն քսան տարի Նեպոտիզմի սկզբունքով է առաջնորդվում:

Եվ բռնատիրական ողջ մեքենան գործում է խնամի-բարեկամ սկզբունքով։ Քաղաքական նաև բիզնես կոչված գրեթե ընդհանուր է, այսինքն փաստացի մեկ տարբեր բուրգի անկյունաքարերն են։ Չեմ փորձի երկար գրել, որովհետև այն ավելի երկար ու սարսափելի է քան կարելի է պատկերացնել։ Այն ինչ Հայաստանի Հանրապետությունում տիրող անարխիան ավելի վաղուց է սկսել իր սև գործը՝ արդեն 25 տարի է ժողովուրդը հալածվում է և խոշտանգվում իշխանությունների կողմից։ Ոտնահարվում են անգամ հաշմանդամների, հղի կանանց ու մանուկների իրավունքները։ Դա արվում է ոչ միայն ՀՀ իշխանությունների կողմից, այլև Հայ Առաքելական եկեղեցու՝ կաթողիկոս Գարեգին Բ-ի լուռ համաձայնությամբ։ Ավելի ճիշտ կասեի նրա օրհնությամբ։ Քանի որ եկեղեցին ու հոգևորականները հեռացել են ժողովրդից ու Աստծո պատվիրանից, մաս կազմելով բռնակալ համակարգի հետ, կողոպտում ու ոտնահարում են ժողովրդին։

Հարգելի Ֆրանցիսկոս պապ, Ձեր այցելությունը նշանակալի է մեր ժողովրդի համար, քանի որ Դուք ոչ միայն այցելում եք Հայաստան, այլև այցելում այնտեղ՝ որտեղով անցնում է Դժոխքի ու կյանքի սահմանագիծը։ Երկիր, որտեղ ժողովրդին խաչում են ամեն օր, խաչում են հենց այն Փարիսեցիներն ու Պիղատոսներն, որոնք Հիսուսին գամեցին խաչափայտին։ Այնտեղ է գտնվում Չարիքի իշխանությունը, որտեղ սուտը ու կեղծիքը դարձել են պետական գործելաոճ, որտեղ մարդասպանները խրախուսվում են, իսկ բարին հալածվում։ Այսօր ինչպես և քսանհինգ տարի առաջ իշխանությունների կողմից հալածվեում են լրագրողներն ու պատերազմի վետերանները, ձերբակալվում են քաղաքական ակտիվիստներն ու ազատամիտ մարդիկ։ Իզուր չէր, որ Անգլիացի գրող Ջորջ Օրուելին իր « 1984 » գրքում

ներկայացրել էր Չարիքի Իշխանության ողջ պատկերը, խոշտանգումները ու կտտանքները: Հայաստանում նույն վիճակն է, ինչպես ներկայացված է Օուրելիի գրքում: Խաբեությամբ երկարաձգում են իրենց իշխանությունը, իսկ Քաղաքական հալածյալներին դարձնելով **բավության նոխազ**, քրեական գործերի անվան տակ խոշտանգում բանտերում ու կառափնարաններում: Ահա այն մեկ կաթիլը, ողջ օվկիանոսից, որը ներկայացրեցի այս նամակի մեջ: Հուսով եմ Դուք չեք սխալվի ճիշտ որոշում կայացնել, զսպելով անարխիան ու չարիքը:
Ես իմ երկրի քաղաքացին եմ, ինչպես միլիոնավոր մարդիկ, որոնք ամեն օր հալածվում են այդ **բռնակալ ռեժիմի** կողմից: Ես Ձեզանից օգնություն չեմ խնդրում, այլ միայն գնահատական ու ազնիվ առաքելական մարդու խոսք: Օրհնություն է հարկավոր և Ձեր Ճշմարիտ խոսքը: Աստվածահաճո մարդու օրհնությունը կարող է դառնալ լույս խավարում տանջվող հայ ժողովրդի համար:

Հարգանքներով Գեհենի Առաքել 20/06/2016

*15. Զգուշացե՛ք սուտ մարգարեներից, որոնք մոտենում են ձեզ ոչխարի կերպարանքով, բայց ներսից հափշտակող գայլեր են: 16. Իրենց գործերի՛ց կճանաչեք նրանց: Մի՞թե փշից խաղող կքաղեն կամ տատասկից՝ թուզ: 17. Լավ ծառը լավ պտուղ է տալիս, իսկ վատ ծառը՝ վատ պտուղ: 18. Լավ ծառը չի կարող վատ պտուղ տալ, և ոչ էլ վատ ծառը՝ լավ պտուղ: 19. Այն ծառը, որ լավ պտուղ չի տալիս, կտրվում և կրակն է նետվում: 20. Ուրեմն իրենց պտուղից կճանաչեք նրանց:* ***Մատթեոս 7.15-36***

# ՄԵՌԵԼՆԵՐ ԿԱՆ, ՈՐՈՆՑ ՊԵՏՔ Է ՍՊԱՆԵԼ

*«-Մեռելներ կան, որոնց պետք է սպանել»:*
***Րաֆֆի***

Ճիշտն ասած շատերը այս ոսկե բառերի իմաստը չեն հասկանում, սակայն, մեծ վիպասան Րաֆֆին ավելի իմաստուն էր, քան որևէ մարգարե կամ պայծառատես: Րաֆֆու մեծությունը կասկածի տակ դնել հնարավոր չէ: Եթե նա ոչ մի վեպ կամ ստեղծագործություն չգրեր, այլ միայն ներկայացներ այս նախադասությունը, նորից կկոչվեր « տաղանդավոր մտքի տեր » մարդ: Րաֆֆին իրոք Մեծություն էր, համաշխարհային մասշտաբի, նրա թողած ժառանգությունը կերազեր ցանկացած ժողովուրդ, սակայն մեր ժողովուրդը այդպես էլ չկարողացավ արժանավայել գնահատել ու սովորել Հայ գրականության ու պատմության Տիտաններից մեկի ճշմարիտ պատվիրանները: Ինչևէ... Ուրեմն ինչո՞ւ մարգարե Րաֆֆին պետք է արտահայտեր այդ իմաստուն միտքը մեռելների մասին: Չնայած շատերը կարծում են, թե Րաֆֆին վիպասան է, ես կասեի տաղանդաշատ **Ուսուցիչ**: Նրա ամեն մի գրած միտքն ու խոսքը ուսուցանում է ճշմարտություն: Առհասարակ Հայոց Մեծերի մտքերը ուսուցողական են ու գաղափարական: Րաֆֆին լավ գիտեր մեր ժողովրդի թույլ և ուժեղ կողմերը, գիտեր ավելի լավ քան որևէ մեկը: Նա գիտեր ոչ միայն հայերին, այլև թուրքերին, պարսիկներին, քրդերին, եզդիներին, ռուսներին, հրեաներին ու շատ ազգերի, որոնց մասին գրել էր իր գրքերում: Նա լավ գիտեր հայերի փա-

ռամոլությունը, գիտեր քծնելու ու շողոքորթելու արատների մասին: Լավ ծանոթ էր դասակարգային խավերի մտավոր ու գիտական չափանիշները ու բնավորության գծերը, սկսած հոգևորականներից, վերջացրած թափառական բոշաներով:
Րաֆֆին լավ ծանոթ էր առևտրականներին, որոնց սրբությունը փողն էր ու ոսկին: Լավ ճանաչում էր տգետ ու աստվածապիղծ հոգևորականներին, ճանաչում էր դավաճան մելիքներին ու իշխաններին, փաշաներին և խաներին, գեներալներին ու մտավորական կոչվածներին: Գիտեր նաև ռամիկին ու շինականին, գյուղացուն ու գաղափարի մարտիկին: Րաֆֆին լավ գիտեր, որ հայերը անհատապաշտ են ու կուրորեն հավատում են չեղած բաներին, նա լավ հասկանում էր, որ այդ ամենի պատճառը տգիտությունն է, որ կրթելով ժողովրդին հնարավոր է ձերբազատվել միջնադարյան խավարամիտ բարքերից ու սովորություններից: Անհատապաշտություն թուրք փաշայի ու ռուս չինովնիկների հանդեպ, անհատապաշտություն աստվածապիղծ տգետ հոգևորականների հանդեպ, դավաճան ու ազգադավ իշխանների ու բեկերի հանդեպ: Րաֆֆին, ինչպես Գարեգին Նժդեհը, գիտեր, որ ցանկացած մարդու մեջ կա Գերմարդկային, Գերբնական ուժ ու հնարավորություն, որը պետք է բացահայտել ինքնաճանաչմամբ: *(Քո մեջ մի գանձարկղ կա անբավ ու անհաշիվ հարստությամբ, բայց դու չես օգտվում նրանից, որովհետև քեզ պակասում է այդ արկղի ոսկե բանալին՝ ինքնաճանաչությունը: Դու օժտված ես անսպառ հոգեկան ուժով, որոնց մեծագույն մասը անինքնաճանաչության պատճառով շարունակում է մնալ քնած վիճակում և անօգտագործելի:
Ինքնաճանաչությամբ կարելի է դառնալ մագնիսական մի ամպ, որ չի խորտակվում և ոչ մի ուժից: ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ )*
Սակայն, խավարամիտ մարդու մոտ բացակայում է իրեն հար-

գելու « ես »-ը, ու ի հայտ է գալիս անհատապաշտությունը ու ստրկամտությունը: Րաֆֆին գիտեր, որ մեռելներ կան, որոնք մահից հետո դառնում են կուռք, դա մեռելապաշտության կանոնի ամենակարևոր նախադրյալներից մեկն է: *( « Երբ ասում են նրան՝ հող էիր և հո՞ղ դարձիր »: Արդարև, մի խորհրդական խոսք հայի համար... պատճառը՝ այդ ազգը յուր կյանքում չէ ցույց տվել որևիցե հոգեկան զորություն, այլ միշտ ապրել է նա որպես հող, քար և անշունչ մարմին...»: Րաֆֆի )*

Ես բազմիցս գրել եմ այդ արատավոր խոսքի մասին, որը բոլոր դարերում ու ժամանակներում դարձավ չարիքի աղբյուր: Նկատի ունենալով այն խոսքը, որը օգտագործել են միշտ ամեն պատահած առիթով, թե « **Մեռելների ետևից միայն ասում են լավը, կամ ոչինչ** »: Այնուամենայնիվ, Րաֆֆին այս մտքի կողմնակիցը չէր ու լավ հասկանում էր, որ այդ խոսքերը ավելի վտանգավոր են, քան թշնամու բանակները: Կարծում եմ կարիք չկա այս հավելվածում նորից գրել այդ ասացվածքի մասին, քանի որ դրա մասին կարող եք կարդալ իմ հավելվածներում ( մեռել- էլ- կա-մեռել -էլ ): Այդպիսով Րաֆֆին գիտեր, որ շատ մեռելներ իրենց մահից հետո դառնում են հերոս ու անգամ սրբացվում են՝ դառնում առաքելական, ու վերջապես դառնում են **կուռք**: Այս ամենի պատճառը իհարկե իմ ասած բանաձևն է, որը արգելում է դավաճանի ու հանցագործի ետևից վատը, ավելի ճիշտ ճշմարտությունը ասել, դա էլ պատճառ է դառնում մոռանալ նրա կենդանության ժամանակ գործած հանցանքները ու ոճրագործությունները: Հիշողության կորուստը տարիներ հետո կարող է այդ մեռած հանցագործին դարձնել հերոս, ինչպես եղավ մեր շատ հանցագործների հետ, սկսած Կարեն Դեմիրճյանից վերջացրած Անդրանիկ Մարգարյանով, դե ոճրագործ « Սպարապետին » չհաշված:

Րաֆֆին լավ գիտեր, որ ժողովրդի մի որոշ զանգված ամեն գնով փորձելու է, դավաճանի ու հանցագործի գործած հանցանքները իր մահից հետո պարտկել ու քողարկել: Քանի որ սեփական շահերը այդպես են պահանջում, նույնիսկ պարտադրում են: Այս տարբերակում կարելի է նշել կուսակցությունները, իրենց դավաճան ընկերների հանցանքները քողարկում են, որպեսզի չարատավորվի կուսակցության անունը: Առհասարակ դա վերաբերում է կրոնական, հասարակական, նույնիսկ ընտանեկան ու անձնական միջավայրում:

Եթե հաշվի առնենք պատմական բոլոր ժամանակները, ապա կհամոզվեք: Օրինակ դաշնակցությունը մինչև հիմա փորձում է քողարկել իրենց կուսակցության՝ երիտթուրքերի հետ համագործակցության հանցանքը: Նույնիսկ ՀՅԴ կենտրոնական բյուրոն մինչև հայկական մեծ եղեռնը ձեռք ձեռքի տված երիտթուրքերի հետ զինաթափում էր հայ բնակչության, նույնիսկ կոչ էր հղելով. « Տվե՛ք ձեր քվեն « Իթթիհաթին »: Սակայն այս օրինակը եզակի չէ, քանի որ այդ հանցանքների ետևում կանգնած էին անհատներ, որոնք ներկայացնում էին կուսակցությունը:

Ու խոսելով այդ անհատի դավաճանության մասին, մեծ համակրանք կարող էր առաջանալ նաև կուսակցության հանդեպ, դրա համար ձեռնտու չէր ի լուր հայտարարել նրա հանցանքների մասին, սակայն ամեն ինչ արվում էր կուսակցության կողմից ջնջելով նրա մասին վատ հիշողությունները: Նույնիսկ ահաբեկության ու դավադրության միջոցով լռեցնել այդ մասին: Այդպիսով իրենց կուսակցական ընկերոջ գործած հանցանքների հետքերը, վերացնում էր կուսակցությունը՝ ներքաշվելով հանցանքների մեջ:

Այստեղ տեղին կլիներ բերել մի օրինակ: Դաշնակցական կուսակցությունը հերոսացրեց Շահեն Մեղրյանին՝ կոծկելով նրա

դավաճանության փաստերը: Չնայած նրան, Ծահումյանի դավաճանության փաստը կար ու հազարավոր շահումյանցի փախստականներ դրա մասին էին բարձրաձայնում: Սակայն Մեղրյան Ծահենը միակը չէր, որ դավաճանություն էր գործել: Նրա հանցակից ընկերն էր Վազգեն Սարգսյանը, որը նույնպես հերոսացվեց հանցագործ ոհմակի կողմից, քանի որ իրենց կուսակցության շահը այդպես էր պահանջում: Դրան կարելի է գումարել դաշնակցական Վահան Հովհաննիսյանի քաղաքական գործունեությունը, քանի որ նա անմասն մնաց Հայաստանի Հանրապետության երեք դավաճան նախագահների համագործակցությունից, բայց նրա մահը կարծես թե ջնջել տվեց դավաճանության բոլոր փաստերն ու հետքերը: Ինչպես տեսնում ենք, փաստը հիմնավոր է: Րաֆֆին լավ գիտեր, որ անհատապաշտ կուսակցություններն ու միությունները ամեն ինչ անում են, որպեսզի իրենց դավաճան մեռելների հանցանքները ջնջեն, հետո հերոսական կերպար դարձնելով, գունազարդված փառավոր ձևով ներկայացնեն սերունդներին: ՈՒ տարիներ հետո այդ հանցագործը դառնալու է կուռք, փարոս եկող սերունդների համար: Նրան երկրպագելու են, որպես ազգի հերոս ու փրկիչ այդպես էլ չիմանալով, որ ժամանակին նա եղել է հանցագործ ու ոճրագործ: Ինչպես եղավ Վազգեն Սարգսյանի տարբերակում: Րաֆֆին ականատես էր եղել նման հանցագործությունների, դրա համար էլ հասկանում էր, որ կուսակցությունները իրենց մեռելներին դարձնելու են ժողովրդի գլխին **Չարիք**: Բազմաթիվ անգամ ինձ գրել են, թե ինչո՞ւ եմ մեռելների ուրվականների հետ կռիվ տալիս: Ծիծաղելի է, երբ այդպիսի հարց տվողը անգամ չգիտի տարրական բաներ, որը կոչվում է « **Պատմություն** »: Պատմություն, որի առանցքում հենց այդ ուրվականներն են, տգիտությունն այնպեսի չափերի է հասել,

որ կարծում են, թե ես Դոն Կի Շոթի նման հողմաղացների հետ եմ կռիվ տալիս, իրականում երևի չգիտեն, թե Սերվանտեսը ինչ ի նկատի ուներ՝ ներկայացնելով իր հերոսին: Մի խոսքով, հարցը ուրվականը չէ, այլ ուրվականի անունով ու անունից գործող մարդիկ, եթե կարելի է նրանց մարդ կոչել: Երևի շատերը չգիտեն, որ Հանրապետական կուսակցության հիմքում ընկած է Վազգեն Սարգսյանը, ոչ թե Աշոտ Նավասարդյանը, որը ստեղծել է այդ կուսակցությունը: Երկրապահ կամավորական միության ու Արցախի պատերազմի հաղթանակի առանցքում նորից Վազգեն Սարգսյանն է: Նույնիսկ Հայաստանի Հանրապետության առանցքում է Վազգեն Սարգսյանի անունը: Ինչպես տեսնում ենք, պետության հիմքում Վազգեն Սարգսյանն է: Ինչո՞ւ են ՀՀ իշխանությունները ամեն ինչ կապում նրա հետ, ազգային հերոսների առաջին հորիզոնականում նորից նա է, չնայած նա երբեք պատերազմի դաշտում չի եղել, ոչ մի հերոսություն չի արել: Չհաշված իր ոճիրները, որոնք անհնար է ներկայացնել մեկ գրքում: Իհարկե «Ազգադավը» գրքում մասամբ ներկայացված է փաստագրության մի փոքրիկ մասը: Իզուր չէր, որ նրան դարձնելու էին «**Հավերժական Երկրապահ**»: Սակայն շատերը չգիտեն, որ պատերազմի տարիներին Վազգեն Սարգսյանի անմիջական մասնակցությամբ Երկրապահ ու կամավոր հարյուրավոր տղաներ խոշտանգեցին ԿԳԲ-ի կառափնարաններում, չհաշված ճակատում թիկունքից գնդակահարված ազատատամարտիկները: Իսկ նրա «**Կոմսոմոլ**» լինելու փաստը քողարկեցին: Թաքցրեցին նրա մոլագարությունն ու շիզոֆրենիան, բանակի հետ կապ չունենալու փաստը, նորակոչիկ զինվորների սպանդը Լաչինում ու Արծվաշենում, ժամկետային զինվորների, գյուղացիների ու պատգամավորների՝ այդ թվում կանանց հանդեպ նրա գործադրած **բռնությունը ու**

**ծեծը**: Խորհրդային ԿԳԲ ի հետ համագործակցության ու Բիշ-քեկյան զինադադարի դավաճանության փաստերը: Մի խոսքով գլխիվայր շուռ տված ներկայացրեցին սերունդներին սպարապ-ետի կերպարը: Փնթի կռազի շոֆեռ Մանվելի գլխավորությամբ ամեն տարի եռասերունդ երկրապահը ոճրագործի գերեզմանին երդվում է ու դառնում « **Ենիչեր քերթողներ** », դառնալով չա-րիք ժողովրդի ու պետության համար: ( « ***Էսօր ով հելնում ա Սերժի դեմ, ուրեմն հելնումա Վազգենի դեմ»: Մանվել Գրիգոր-յան © 31/12/2014*** ) Ահա մեռել, որի մահից հետո շարունակում են ապականել սերունդներին, ապականել բնությունը ու մարդ-կությանը նույնիսկ ապականելով անցած պատմության հերոս-ական էջերը: Այդպիսի մեռելները ապականել են մեր պանթեո-նի հերոս նախատակներին: Եռաբլուրում հանգչող հայորդիների հանգիստը խանգարում է ոճրագործ Վազգեն Սարգսյանի ներ-կայությունը, իսկ « Կոմիտասի » անվան պանթեոնի հանգիստը՝ Կարեն Դեմիրճյանի ու Անդրանիկ Մարգարյանի ներկայությունը: Մի՞թե չեք տեսնում թե ինչպես են չարագործները պղծում մեր սրբավայրերը ու հերոսների հիշատակները:

Իսկ ինչո՞ւ ձեր կարծիքով փնթի Կռազի Շոֆեռը մեղալ շնորհեց ազգային հերոս զորավար Անդրանիկին, որովհետև գիտեն որ ժողովուրդը լռելու է, որովհետև ժողովուրդը չգիտի գնահատել իր հերոսներին: Որովհետև ժողովուրդը վախեցած է ճշմարտու-թյուն լսելուց: Որովհետև իրենք են տերը ժողովրդի ու պետու-թյան ու այդ տիրոջ իրավունքը տվել է հենց ձեր ասած **Ուր-վականը**... Իմ կռիվը այդ սաղ ու սատկած ուրվականների դեմ է, որը դարձել են պատուհաս ժողովրդի գլխին:

Մի՞թե չեք տեսնում, որ այդպիսի մեռելները վտանգավոր են ամեն առումով, այդպիսի մեռելների տեղը աղբանոցն է:

Րաֆֆին իզուր չի ասում. « **Մեռելներ կան, որոնց պետք է**

**սպանել** »: Հույսով եմ, որ մի օր ժողովուրդը կհասկանա այդ խոսքերի կարևորությունը և հայ ժողովրդի գլխին պատուհաս դարձած մեռելները մի օր կհայտնվեն Նուբարաշենի աղբանոցում:

Գեհենի Առաքել 5/06/2016

*« պատմական անցեալն է, մի ուրոյն կաղապար, որի մէջ ձուլուել է եւ ձեւաւորուել դարերի կեանքը: Ըմբռնպանալու կարողութիւնը մարդ անհատի ու մարդկային խմբակցութիւնների ամենամեծ առաւելութիւնն է ու առաքինութիւնը: Մարդը համեմատաբար գիտակից է, աւելի քան որեւէ ուրիշ կենդանի էակ երկրագնդի վրայ:*
*Նա ընդունակ է, որոշ չափերով, քննադատելու ու գնահատելու կենսական երեւոյթները իր, մարդկային պեսակէտից, զանազանել ցանկալին ոչ-ցանկալիից եւ որոշ սահմաններում ուղղում մտցնելու իր անհատական ու հքքական կեանքի մէջ »:*

*Ղովհաննես Քաջազնունի*

*« Բայց երբ ճշմարտությունը վարագուրվում է*
*խաբեությամբ և արդար իրավունքը փշրվում է*
*հաղթահարության ու բռնության ոտքի տակ, այն*
*ժամանակ մարդը յուր իրավունքը առաջ տանելու*
*համար պարտավորրվում է գործ դնել յուր*
*ֆիզիկական զորությունը — յուր թուրը »:*
*Րաֆֆի 182*

# « ԵՐԿՐԱՊԱՀ » ԵՆԻՉԵՐԸ

***« Պիտ պարտվի, պիտ մեռնի կեղծիքը մեր կյանքում, որ ապրի մեր ժողովուրդը » :***

***Գարեգին Նժդեհ***




Մտածում էի փակել այս էջն ու չանդրադառնալ, քանի որ շատ էի գրել դրա մասին, սակայն վերջին դեպքերը պատճառ դարձան կրկին անդրադառնալ այն չարիքին, որի մասին արդեն գրվել էր: Երեկ ինձ ուղարկել էին « Զորավարը » գրքի մի քանի էջ: Մանվել Գրիգորյանի մասին պատմող այս գիրքն է իմ մտահոգության պատճառը: Երևի Աստված մեր ժողովրդին պատժում է հենց այսպիսի տականքների պատճառով, որոնց հերոսացնում ենք ու սրբացնում: Ցավալին այն է, որ բոլորը գիտեն, որ Մանվել Գրիգորյանի « **Տիկոզի** » մասին հնարված բոլոր լեգենդները մի մեծ սուտ է, ու պատրաստվում են այդ սուտը և կեղծիքը մատուցել եկող սերունդներին, չնայած արդեն մատուցել են, դրա վառ արդյունքը՝ ապուշի սաած եռասերունդ երկրապահն է:
Ո՞վ էր տեսել՝ փնթի « շոֆեռը » դառնա գեներալ, և դա դեռ քիչ է՝ Արցախի հերոս ու զորավար: Ախր եփած հավի ծիծաղն է կգա, անտառաճանաչ տխմարի հավատալ, երբ նա Բ -ն Փ-ից չի տարբերում, « Սենդվիչն » էլ Վերնիսաժից: Այնքան տխմար է, որ Երուսաղեմ գնալ-գալուց հետո էլ չջոկեց՝ թե « եվրեյները »՝ տղա են թե աղջիկ…
Ամենամեծ ողբերգությունն այն է, որ մտավորական կոչվածները

լռում են ու քծնում այդ փնթի եզին, մեծարում են՝ երգեր ու պոեմներ գրում նրա մասին, ֆիլմեր նկարահանում ու գրքեր հրապարակում: Իսկ ինչ վերաբերում է իրականությանը, ապա դրա մասին գրել եմ բազմիցս...

Պատերազմի ժամանակ նրա տված վնասը ավելի շատ էր, քան ադրբեջանցիներինը: Իսկական «**ենիչերի**», որի հրամանով ազատամարտիկների գումարտակներն ուղղորդվում էին անվերադառնալի ճանապարհով, նրա համար երբեք արժեք չի եղել կամավոր ազատամարտիկները: Ֆիզուլու թալանի մասին պտտվող լուրերը հենց այնպես չեն, քանի որ դա զուտ ճշմարտություն է: Մանվելը ողջ կյանքում «**դասալք**» եղավ, «դասալքի» և մսագործի միջև տարբերությունը մեծ է: Մանվելը թալանում էր ազատամարտիկի կյանքի ու արյան հաշվին, նա թիկունքից ոչնչացնում էր ազատամարտիկներին՝ իր քավոր Վազգենի հրամանով: «**Հերոսները պետք է զոհվեն պատերազմի դաշտում, հակառակ դեպքում նրանք անտանելի են դառնում». Վազգեն Սարգսյան՝ Վիրիպեղիա**: Նրա համար երբեք արժեք չի եղել զինվորն ու իր համագյուղացին, նրա համար արժեք չի եղել տղամարդու խոսքն ու պատիվը, նա չգիտի բարոյականի ու անբարոյականության տարբերությունը: Իսկական **թշնամի**՝ բառիս բուն իմաստով: Նա ոչ միայն պատերազմի ժամանակ էր ոչնչացնում ազատամարտիկներին, այլև պատերազմից հետո, ֆիզիկական հաշվեհարդարը փոխարինելով բարոյահոգեբանականի: Զուր չէր, որ իր «թուլին»՝ Կարեն Գրիգորյանին, որն ընդամենը տաս տարեկան չկար, հռչակեց ազատամարտիկ, հետո սաղ ու սատկած եղբայրներին, բաջանաղներին ու քենիներին, իզուր չէր աջ ու ձախ վաճառում պատվոգրեր, պատերազմի մասնակցի վկայականներ ու մեդալներ, պատերազմի մասնակցի տեղեկանք տալով ցանկացածին, ով կվճարեր: Տարիներ հետո ԵԿՄ

-ն դառնալու է իր հոր «**դուքանը**», որտեղ ոչ մի ազատամարտիկ չի մնալու, նրա առհամարհանքն ու ծաղրը չեն հանդուրժելու պատվասեր հայորդիները, որոնք թքելով հեռացան երկրապահից, իրենց տեղը զիջելով՝ Մանվելի «հետույքը» լպստող պնակալեզներին, որոնք անգամ պատերազմի մասին չէին էլ լսել, սակայն պատերազմի ժամանակ բարբարոսաբար կողոպտել և թալանել էին Հայաստանի ու ժողովրդի սեփականությունը: Մանվելը իզուր չէր օլիգարխներին ու մարզպետներին, կառավարման օղակներում գտնվող աննշան չինովնիկներին, անգամ «**Կոմսոմոլ**» Հրանուշ Հակոբյանին հռչակում երկրապահ: Մանվելը այնքան եզ է, որ իր «հետույքը» լպստողների հանդեպ գոնե հավատարմություն ցուցաբերեր, սակայն ապերախտ եղավ, նա նույնիսկ իր թիկնապահներին չի վճարում, որոնք միայն «չուպա-չուպսով» են նրա մոտ ծառայում, հանդուրժելով տխմար ապուշին: Իսկ հետևից ձեռք տալու ավանդույթը նրա մոտ մնացել է ադրբեջանցիների մոտ գերի ընկնելուց հետո: Իզուր չէր իմ բարեկամներից մեկի պատմած պատմությունը, որը կցանկանաի ներկայացնել ստորև:
Մանվելի «**Տիկոզը**» Ղարաբաղում հայտնվելու պատմությունը նույնպես հնարված է, քանի որ Ղարաբաղում հայտնվեց առանց իր կամքի՝ քրեական պատասխանատվությունից խուսափելու համար, ի դեպ՝ նա մի քանի անգամ քրեական տարբեր գործերով դատապարտված է եղել, չնայած երկար տարիներ անցկացրել է ճաղավանդակների ետևում, սակայն նրա կենսագրական տվյալներում այդ մասը ջնջված է, առհասարակ չի էլ հիշատակվում, սակայն ողջ Էջմածինի շրջանը գիտի դրա մասին: Իսկ լրատվական կայքերը ու հեռուստակայանները ամեն ինչ արել են, որպեսզի նրան ներկայացնեն հերոսական ու հաղթական կերպարի մեջ: «Սուր անկյուն» հաղորդաշարին տված

նրա հարցազրույցներից մեկում, *( իմիջիայլոց այդ հաղորդաշա-րի ղեկավարը՝ ճանաչված « հետույք » մտնող Արտակ Ալեքսան-յանն է: )* Մանվելը պատմում էր, թե խորհրդային տարիներին գնա- ցել է Ռուսաստան աշխատելու, իրականում նրան տարել են Ռուսաստան՝ ոչ թե գնացել է, և նա Ռուսաստանը տեսել է միայն փշալարերի ետևից, քանի որ ընկերոջը դանակահար-ության համար նրան դատապարտել են, և նա պատիժը կրել է Ռուսաստանում, դրա մասին չմանրամասնեմ, քանի որ հետ-ագայում մանրամասը կիրապարակվի նրա կենսագրության բաց թողնված մասում, և ընթերցողը հնարավորություն կունենա ծա-նոթանալ դրան: Իսկ այժմ Մանվելի մասին գրվում է այն, ինչը կարող է նրան դարձնել հերոսական: ( « **Չի կարելի մի-աժամանակ վատ մարդ, բայց և այնպես լավ Հայ լինել: Միևնույն մարդու մեջ միաժամանակ չեն ապրում ստրկամիտն ու ազատատենչը: Նա կամ մեկն է կամ մյուսը** »: **ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ** ) Չնայած « Տիկոզը » այնքան հիմար է, որ կարծում է՝ թե մարդիկ իր պես հավի հիշողություն ունեն ու չեն հիշ-ում իր անցյալը: *( Ապագա կերտելու համար, հարկավոր է ետ նայել, տեսնել՝ թե ում և ովքեր են կառուցում այդ ապագան, հարկավոր է անցյալի սխալներից սովորել, որպեսզի նույնը չկրկնենք: )* Այդպես էլ « Տիկոզի » հարցում, իզուր չէր՝ իսպան-ացի գրող Սերվանտեսն ասում է . « **Ազգադավները երբեք էլ հայրենասեր չեն դառնա...** »: Հարկավոր է մաքրվել Մանվելի պես աղբից, որպեսզի կարողանանք երկիր ու պետություն կերտել: Նախորդ ակնարկներում գրել էի, որ Մանվել Գրիգոր-յանի գերդաստանը հայտնի է որպես « **շան ցեղ** » անվանում-ով. դա պայմանավորված է մի քանի գործոններով՝ այն՝ որ շնից շատ են, երկրորդը՝ որ շնանում են իրենց քենիների հետ: ( *Այն՝ որ շան պես սատկելու են, վերանան, դա չի բացառվում:*

*Մավեյի ընտանիքում՝ մեկ քույր և յոթ եղբայր են:)* Իսկ Մանվելի երեխաները և թոռները գերազանցում են Հայաստանի ամենամարդաշատ գյուղի բնակչությանը: Ու հարցը քանակի մեջ չէ, այլ որակի: Բանն այն է, որ նրա «թուլեքը» իր պես հաստագլուխ են ու արյունարբու, բառիս բուն իմաստով: *(Մանվելի 15 — ամյա դստեր՝ լրագրող Ալիս Խեչոյանին հնչեցրած սպառնալիքները փաստ են: www.hzham.am Սպառնալիք «Չաքուջի» արհեստանոցից)* Սակայն շռայլության, վայելքների ու շքեղության մեջ մեծացած նրա «թուլեքը» չգիտեն, որ իրենց հայրը ոչ թե «գեներալ» է ծնվել, այլ հաստագլուխ եզ, ու եզից էլ պիտի հաստագլուխ հորթեր ծնվեն, որոնք միայն լափել ու ապականել գիտեն: Ժողովրդական խոսք կա. «Եզը որ ընկնում է, դանակավորները շատանում են» ու վստահ եմ՝ Արշալույսի ողջ բնակիչությունը այդ օրվան է սպասում:
Նազիկ Ամիրյանի հետևին ձեռք տվողները կհայտնվեն ու այն ժամանակ նա պատասխան կտա՝ այն կամավորների օրվա հացը ուտելու ու թալանելու համար, պատասխան կտա հազարավոր հանցանքների համար, որոնց գլխավոր դերակատարը եղել է ինքը: Ու ոչ միայն իրենք են պատասխան տալու, այլև ժողովրդի արյունով մեծացրած իրենց «**լամուկները**», որպեսզի նրանք հասկանան, որ իրենց ծնողները ոչ միայն չարիք են եղել հայ ժողովրդի, այլև իրենց սեփական զավակների համար: Եվ ամեն մի չարագործ պատասխան է տալու ոչ միայն Աստծո առաջ, այլև իր զոհերի, մարդկության և արդարության առջև: Ու Մանվելը գիտի, որ պատասխան տալու օրը հեռու չէ, իր քավոր Վազգենը նույնպես գիտեր, որ սատկելու է հայ վրիժառուի ձեռքով, որ իր գործած ոճիրներն անպատասխան չեն մնալու, ու շուտ թե ուշ՝ իրեն ուղարկելու են դժոխքի կրակներում այրվելու: Այդպես էլ Մանվելը լավ գիտի, որ

մի պայծառ ու լուսավոր օր գալու է իր երազների արքայազնը՝ ավելի ճիշտ Նաիրի Հունանյանը, ու իր գլուխը ոչ թե դառնալու է լանգետ, այլ քյուֆթա, անպես որ « զորավարը » դրանից է վախենում, որ մինչև « քյուֆտա » դառնալը, տեսնելու է իր լամուկների « լափածը » ինչպես է քթներից դուրս գալիս: Այնպես որ ոչ միայն իր « թուլերի », այլև սաղ ու սատկածի... Իր հանցագործ եղբայրներին երկրապահի անվան տակ՝ հերոսի փառք ու պատվով հուղարկավորեց, քանի որ նրանց գերեզմաններից հանելու են ու իր քավորի հետ միասին աղբանոցը նետեն:

Որպես բժիշկ հոգեբան կարող եմ ասել, որ Մանվելը խուճապի մեջ է, մանավանդ « Ազգադավը » գրքից հետո՝ այն կրկնապատկվել է, մենակ չասեք՝ թե սա ինքնագովազդ է, քանի որ դա ակնհայտ է: ( **Երկու վախը մեկ մահ է: Ժողովրդական** )

Վերջին ժամանակներս Վազգեն Սարգսյանի արձանների տեղադրումը տարբեր քաղաքներում դա է վկայում, քաղաքական և հասարակական դաշտում Մանվելի ակտիվությունը դրա վառ ապացույցն է, իզուր չէր « զորավարը » բոլոր նախարարությունների հետ հուշագրեր ստորագրում, չգիտես՝ թե դա ինչ « մեյմունություն է », իզուր չէ մարզպետներին ու քաղաքապետերին ԵԿՄ անդամ դարձնում ու մեդալներ շնորհում, նույնիսկ չմոռացավ Ազգային հերոս Զորավար Անդրանիկին էլ մեդալ շնորհել: Իրականում կան հարյուրավոր ազատամարտիկներ ու կամավորականներ, որոնք անգամ մեկ շնորհակալագիր չունեն, էլ ու մնաց մեդալներ: *( Այդ թվում 5- րդ բրիգադայի կամավորներ, որի ոչ բարով հրամանատարը եղել է այդ փնթի դե-գեներալը: )*

Իր մասին նկարահանված տեսանյութերն ու փաստագրական հատվածները, որտեղ կարևոր տեղ է գրավում Վազգենի բաժակաճառը, նշվում է, որ Մանվելը հերոս է. Մի տեսեք՝ ով է

նրան գովերգում, մի մոլագար խեղկատակ, որը թիկունքից սպանել էր տալիս պատերազմի հերոսներին, մի թալանչի, որը սփյուռքի բարերարների միլիոնները թալանեց, որը Հայաստանը դարձրեց ավերակույտ, որի ոհմակը մինչև այսօր հոշոտում է ժողովրդին: Սակայն Մանվելը լավ գիտի, որ սատկած սպարա-պետը իրենից ոչնչով չի տարբերվել, նույն գարշահոտ ու ապ-ուշ մարդասպանն էր, որին արդեն հերոսական տիտղոսներով թաղեցին: Հիմա էլ փորձում է այդ « հերոսական » կերպարի ստվերում թաքնվել, իրեն համարելով հերոս: « Զորավարի » խու-ճապը ակնհայտ է, իզուր չի, որ նրա մարտական ընկերները հարձակվում են ցանկացած այն մարդու վրա, ովքեր փորձում են Մանվելից « **աչոտ** » պահանջել. նույնիսկ այդ ապուշն առ-անց իմանալու հայտարարեց, որ իրենից պատասխան ուզողը թուրք է, ու ինքը պատրաստ է ցանկացածին թուրքի անվան տակ հոշոտել, ոչ միայն ինքը, այլև իր սեփականաշնորհած ԵԿՄ-ի անդամները: Իզուր չէ, որ նա տեսախցիկների առջև հայտարարեց, որ ազատամարտիկների վրա թքած ու ունի, ու ազատամարտիկներին հասնում է դա: *( Գյումրեցի ազատամար-տիկ Յուրա Աթոյանի դեմ նրա կատարած ոտնձգությունը դրա վառ օրինակն է: )* Իզուր չէ « երկրապահ » Դ-գեներալը կազմա-կերպում է ուխտագնացություններ ու պատանի երկրապահների ակումբներ հիմնում, քանի որ դրանք հայրենասիրության հետ կապ չունեն, այդպիսով « զորավարը » փորձում է պաշտպան-վել իրեն մեղադրողներից ու պատասխան ուզողներից:

Իզուր չէ, որ երկրապահից շատերը թութակի պես կրկնում են իրենց տխմար « զորավարի » անիմաստ խոսքերը, որոնք դար-ձրել են իրենց համար լոզունգ ու առաջնորդվում են դրանց-ով, իրականում բոլորը վախից են այդպես նվաստանում ու քծնում: Իզուր չէ, որ Մանվելը, Պատանի երկրապահների համ-

ար դարձել է մեծ մարգարե և ուսուցիչ, երբ ինքն անգամ հինգերորդ դասարանն ամբողջությամբ չի ավարտել: ( « **Դժբախտություն է, երբ դաստիարակիչը՝ ինքը ևս կարիք ունի դաստիարակության »: ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ** ) « **Աչոտ** » տալու ժամանակը վախեցնում է « զորավարին », քանի որ գիտի, որ դժվար կլինի պատասխանել՝ իրենից պատասխան պահանջողներին, ու այն ժամանակ ոչ **վերջին բոլշևիկը** կարող է նրան փրկել, ոչ էլ « **սպարածերոտի** » հանցագործ եղբայրները ու ԵԿՄ-ի անդամ դարձած « օլիգարխները »: Երեկ համացանցում հայտնված հոդվածը երևի « զորավարին » դիվադադար է արել ( *30 Հունվար, 2014, 0 :52, երևի լաված կլինեք Մոնթեի ու Մանվելի միջադեպը* *operativ.am/?p=61226&l=am%2F* ), այնպես որ, վստահ եմ, որ մոտակա օրերս կլսենք ԵԿՄ-ի մարզային կառույցների « ճիճուների » սպառնալիքները: Մանվելը չարիք է հայ ժողովրդի գլխին, և ոչ միայն նա, այլև հայկական բանակի « **գեներալիտետը** », որոնք հայ զինվորի ու ժողովրդի հաշվին լցում են իրենց որովայնն ու գրպանները: Հայ ժողովրդի արգանդը դեռ ի վիճակի է ծնել Թեհլերյաններ ու Նաիրի Հունանյաններ, որոնք պատասխան են պահանջելու այս քսանհինգ տարիների ոճրագործությունների համար: Չկարծեք, թե սա սպառնալիք է, այլ գուշակություն, որը շուտով այցելելու ու չոքելու է սատվածապիղծների դռներին, նույնիսկ իրենց կառուցած վանքերն ու եկեղեցիները, տիտղոսներն ու « հերոսական» պատմություններ չեն փրկելու դատաստանից, ոչ թե Աստծո դատաստանից, այլ **վրեժի ու ցասումի**... Երբեմն ապրելն ավելի սարսափելի է, քան մեռնելը, երբեմն ողջերը փառք են տալիս մեռելներին... Այդ օրը ուշ չէ: Հատուցման օրը լինելու է անպատիժ չեն մնալու նաև սատկած « հերոսները »:

3/02/2016

# ՎԱԽԵՑԱԾ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԹԵ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՂԵՏԸ

***« Ազգային բանակի վրա տնտեսելը, նշանակում է գերեզմանաշինություն »:***
***Օտտո Բիսմարկ***

Երեկ զրուցելով իմ լավ բարեկամ՝ Արցախյան պատերազմի հերոսներից մեկի՝ հետախույզ, այնուհետև տանկային գումարտակի հրամանատարի տեղակալ՝ Վարդան Հովհաննիսյանի հետ ուղղակի չկարողացա անտարբերության ցույց տալ: Վերջին դեպքերը Արցախում ու Հայաստանի սահմաններին ինձ պարտավորեցնում է ներկայացնել մեր զրույցի մանրամասները, չնայած կարդացել եմ մեր հերոսի հուշագրությունները պատերազմի մասին, սակայն այն ինչի մասին մտահոգված էր նա կարծում եմ գալիս է լրացնելու իմ ասածը: Ես պատերազմի չեմ մասնակցել, սական ականատես ընկերներ շատ ունեմ, որոնք միաբերան հաստատում են մի բան, որ չարաբաստիկ պատմությունը կարծես նույնությամբ կրկնվում է՝ կրկնվելով ամեն ինչ է: Այն փաստագրությունները որոնք ներկայացնում էր Արցախյան պատերազմի հետախույզը իրոք անգնահատելի արժեք է ներկայացնում: Ազատամարտիկի հետախույզի հետ զրույցից պարզվում է, որ գրեթե ոչինչ չի փոխվել, կարծում եմ, որ նա ավելի լավ է պատկերացնում ներկայիս Արցախում ու Հայաստանի սահմաններում կատարված այս ողբերգական վճակը, քան որևէ մեկը: Հրամանատար Հովհաննիսյանը երկու օր առաջ կորցրեց իր զինակից ընկերներից մեկին՝ Սուրեն Ճարատանյանին, որը կամավոր գնացել էր ռազմաճակատ օգնելու մեր զինվորներին:: Վարդանի ասելով լինում են մարդիկ որ իրեն քննադատում են, թե հեռվից հեշտ է խոսել, սակայն այն ին-

չի միջով անցել է նա սարսափելի է ու անհավանական: Ազատամարտիկի անընդհատ հիշում էր, որ քսան տարի շարունակ ՀՀ իշխանությունները խաբել են ժողովրդին, այս երկար զինադադարի ժամանակ շատերը մոռացել են պատերազմի մասին, սակայն իր ասելով նա քսան տարի ապրելով Եվրոպայում երբեք չի մոռացել այն փորձությունը ու դժբվարությունները իր պատերազմը մնացել է անավարտ, որովհետև ինքը հողի համար չի կռվել, կռվել է երջանիկ ու ազատ ապրելու համար: Նա դժբախտություն է համարում, որովհետև շարունակվում է անցյալի խաբեությունը ու դավաճանությունը: Հրամանատարը ասում էր. «*Առհասարակ պատերազմը վտանգավոր երևույթ է, սակայն վտանգավոր չէ երբ դու նրան պատրաստ ես, վտանգավոր չէ երբ ունեք Մարտական ոգի, սպառազինություն ու նվիրված ու բարեխիղճ հրամանատարներ, ունես ազնիվ ու հայրենասեր ղեկավարներ*»: *Իսկ եթե հաշվի առնենք ներկայիս ու անցյալի փորձը իմ թվարկածներից միայն մեկը ունեինք, Մարտական ոգին ու հաղթանակի ձգտումը:*
*Իսկ մնացած հարցերը թվարկել եմ իմ բոլոր հոդվածներում, ունեինք անգրագետ ու հիմար հրամանատարներ, քանի որ պաշտպանության նախարարության ողջ սպայակույտը ոչնչի պիտանի չէր, նրանք թալանով էին զբաղված՝ ընդհուպ պաշտպանության նախարար՝ Վազգեն Սարգսյանը*»:
Չկարծեք թե դա ինձանից եմ հորինել դա ազատամարտիկի շուրթերից հնչած խոսքեր են: Վազգենի առանձնահատկություններների մասին ես գրել եմ բազմիցս ավելի մանրամասն ներկայացնելով « **Ազգադավը** » գրքում:
«*Շատերը կարծում են թե պատերազմը միայն զոհեր են ու վիրավորներ, սակայն դա միայն արտաքին տեսքն է Պատերազմում զոհերը ու վիրավորները կարող են կրկնապատիկ լինել կամ էլ առհասարակ մատերի վրա հաշված կորուստներ: Այդ ամենը գալիս է խելացի հրամանատարներից: Բազմիցս գրել եմ հայկական բանակի մասին, հանդիպել եմ միայն քննադատական ու սուր մեկնաբանությունների: Նույնիսկ Արցախյան*

*պատրեազմի տարիներին մեր կամավորական ջոկատների պարտությունը եղել է վերադաս հրամանատարների այդպես ասած անգրագիտության ու տգիտության արդյունքում: Իսկ Ռուսաստանից եկած գեներալներից ու բարձրաստիճան հրամանատարներից շատերը հարբեցողությամբ էին զբաղված ու թալանում էին բանակին հասանելիք միջոցները »: ՎՀ*

Դուք կհարցնեք թե ինչու՞ եմ հիմա այս ամենը գրում այս օրհասական պահին, անգամ վկա բերելով Ազատամարտիկ հետախույզն, որպեսզի ներկայացնեմ, որ այս ամենը կրկնվում է արդեն քսան տարուց ավելի:

*« Արցախյան պատերազմի հաղթանակը եղել է միայն դաշտային հրամանատարների ու ազնիվ ազատամարտիկների աննահանջ ոգու շնորհիվ: Ոչ մի գեներալ ու բարձրաստիճան սպա ներդրում չի ունեցել Արցախյան հերոսապատումին, չհաշված իհարկե մի քանի սպաների ու գեներալներ Արկադի Տեր-Թադևոսյանին ու Նորատ Տեր-Գրիգորյանցին: Գնդապետ Դնեպրիկ Բաղդասարյան Գնդապետ Վոլոդիա Կարապետյան, Գնդապետ Ռոմիկ Մարդանյան եւ մատերի վրա հաշված հրամանատարներ »:*

Ինչպես հայտնի է պատերազմից հետո ՊՆ կաբինետային առնետները սեփականացրեցին մեր ազատամարտիկների հաղթանակները ու սկսեցին իրենց մասին գրքեր ու ֆիլմեր նկարահանել, սահմանագծին կեղծ լուսանկարներով հաստատում էին, որ իրենք կռվել են ու ներդրում են ունեցել հայրենիքի պաշտպանության գործին: **« Հայի ոխերիմ թշնամին օտարը չէ, այլ հայը »**: Րաֆֆի : Ինչ է ստացվում սուտը ու կեղծիքը մտավ բանակ ու սկսեց այն որակազրկել:

*« Սերժ Սարգսյանի բարձրաձայնած 80 ականների զինտեխնիկայի պատմությունը նորություն էր հանրության համար, սակայն ոչ ինձ, որովհետեւ ես տեղյակ էի ու բարձրաձայնել եմ տարիներ առաջ մեր « անպարտելի » բանակի կեղծ լինելու փաստը » Վարդան Հովհաննիսյանը:*

Ի՞նչ եք կարծում արդյոք այդպիսի մարդը կարող էր սխալ-

վել... Ես միշտ եմ ասել, որ բանակի ու պետության թշնամին մեր թիկունքում է գործում: Քսան տարի խաբել են թե Ռուսը չի թողնի, որ պատերազմը վերսկսվի, որ մենք հզոր դաշնակից ունենք, Քսան տարի խաբել են թե Հայկական բանակը լավ սպառազինություն ունի, ապահովված է առաջին անհրաժեշտ միջոցներով, որ սպառազինությունը արդիական է ու նման հիմար բաներ, այդ թվին կարելի է գումարել սպայական անձնակազմի իբր բարձր պատրաստականությունը ու դաստերակությունը: Իսկ բանակի գեներալների « լեգենդար » պատմությունը ու իրենց « գերագույն գլխավոր հրամանատարի » սուտ ու կեղծ հերոսական էջերը: Այդպիսով ինչու՞ են փորձել ժողովրդի աչքին թոզ փչել ու ինչու՞: Այդ հարցերի միակ պատասխանը մեկն է իշխանությունները ժողովրդի հենց առաջին թշնամին է:
Երբ մեր սահմանների վրա պահածոների դատարկ տուփերն են հանդիսանում որպես ազդանշանային համակարգ, իսկ զինվորները մինչև հիմա ձեռքով են խրամատ փորում, կնշանակի առհասարակ բանակը ոչ թե կռվում է 80 ականների զինատեսակներով, այլև այդ բանակը 80 ականների մակարդակին է:
( Եթե հաշվենք որ ժամանակակից բանակներում մեխանիզացված տրակտորների օգնությամբ է արվում ամբողջ աշխատանքը` խրամատ փորելուց վերջացրած բարձում ու բեռնաթափումը: ) Այն որ ոչինչ չի արվել այս տասնամյակների ընթացքում փաստ է, ուղղակի բախտներս բերել է, որ նվիրված զինվորների շնորհիվ կանխվել է թշնամու առաջխաղացումը:
Իսկ արդիական զինատեսակների մասին խոսելը ավելորդ է:
Իսկ ինչ վերաբերվում է ստին ապա դա ինչպես տեսաք ազատամարտիկը **ՍՈՒՏԸ** դարձել է ավանդույթ Հայկական բանակում: Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը հայտարարում է. « թե հայկական հետախուզությանը հայտնի է եղել Ադրբեջանի նախահարձակ լինելու փաստը »:
Սակայն պաշտպանական գծի վրա ոչինչ չի արվել, որպեսզի կանխեին ադրբեջանական հարձակումը: Ինչքանով հիշում եմ մամուլից դեռ մեկ տարի Սերժ Սարգսյանը հայտարարել էր,

որ վտանգ զգալու դեպքում մեր զինված ուժերը Նախահարձակ կլինեն: *( Նույնիս այն փնթի կռացի շոֆեռը նախահարձակի թեմայով վիճում էր լրագրողների հետ: )*
Ուրեմն կնշանակի գերագույն գլխավոր հրամանատարությունը իմացել է ու ոչինչ չի ձեռնարկել հակադարձելու հարձակումը: Կնշանակի դա պետական դավաճանություն է պետության ու բարձրագույն հրամանատարների մակարդակով, և ռազմական դրության պայմաններում այդ հանցախումբը սկսած ՊՆ նախարարից վերջացրած քաղաքական գործիչները, որոնք պատասխանատու են պետության անվտանգության համար ԱԱԾ -ն ու Ոստիկանական բարձրաստիճան ղեկավարների պետք է ռազմադաշտային դատարանի կողմից ենթարկվեն գնդակահարության: Պատերազմի ու հատուկ դրության ժամանակ մահապատիժը կիրառվում է բոլոր երկրներում անգամ եվրոպական: Պետական դավաճանությունը ամենավտանգավոր հանցագործություններից մեկն է, իսկ այն պաշտոնյանները, որոնք քողարկում են ու թաքցնում դավաճանությունը կրնակի հանցագործ են կամ մասնակից: Մեր իրականության մեջ այն փաստը, որ 1992 թվականին մայիսի 12 ին ստորագրված **Բիշքեկի** համաձայնագիրով սկսում է զինադադարը դա խաբկանք էր: Ազատամարտիկի ասելով.
*« Այդ ժամանակ առաջագծին կանգնած ազատամարտիկներից շատերը գիտեին, որ տվյալ ժամանակ երբ Հայկական ուժերին հաջողվել էր հասնել մեծ հաջողությունների Ջակատային գծում, ՀՀ իշխանությունները գնում են ԽԱՅՏԱՌԱԿ զինադադարի: Փոխարենը պարտադրեին Ադրբեջանին ստորագրել Կապիտուլյացիան, որը կերաշխավորեր Լեռնային Արցախի ժողովուրդի անվտանգությունը, այդ թվում վերադարձնելով Շահումյանի շրջանը ու Արծվաշենը: Նախիջեւանի հարցը նույնպես կարելի էր մտցնել այդ պարտադրվող փաստաթղթի հավելվածում, որովհետև Բաքվի Գանձակի ու Սումգայիթից հայ փախստականները կարող էին տեղավորվել Նախիջևանում: Իսկ ինչ արեցին Հայաստանի իշխանությունները գնացին խայտառակ ու նվաստ-*

*ացուցիչ պայմանագրի, երբ ընդամենը մեր զրահատեխնիկան կանգնած էր Միր-Բաշիր ավանից երեք կիլոմետր հեռու, իսկ Բարդա քաղաքից տասներկու կիլոմետր հեռավորության վրա: Բարդան համարվում է Ադրբեջանի նավթարդյունաբերության ու հանգստավայրերի խոշորագույն կենտրոն: Բարդայի ազատագրումով հայկական ուժերը ամբողջովին իրենց շրջափակման մեջ էին պահում Ադրբեջանի հյուսիս արևելյան մասը՝ Գանձակը իր հարակից շրջաններով»:*

Ի՞նչ է ստացվում երբ մենք այդքան մոտ էինք կանգնած վերջնական հաղթանակին հանկարծ Հայաստանի բարձրագույն ռազմական ղեկավարները գնում են այդ պարտությանը: Ազատամարտիկները լավ գիտակցում էին, որ անավարտ պատերազմը նշանակում էր նոր աղետ ու լայնամաշտաբ պատերազմ իր ծանր հետեւանքներով՝ հազարավոր զոհեր, հսկայական միջոցների վատնում, եկող սերունդների վրա ծանրացած մի բեռ և այլն: Ինչպես հայտնի է Վազգեն Սարգսյանի ու Ռուսաստանի պաշտպանության Նախարար Գրաչովի կողմից կազմակերպված Բիշքեկի համաձայնագիրը փաստացի պարտության էր հայկական կողմին: Չնայած այն որ քսան տարի շարունակ խաբել են ժողովրդին, որ այլընտրանք չկար. խաբել են Նախիջեւանի հարցում, խաբել են Արծվաշենի ու Շահումյանի դավաճանության հարցում, Շրջափակման ու Բլոկադայի հարցում, Խաբել են ցուրտ ու մութ տարիների հարցում: Փաստացի պետական դավաճանությունը թաքցրել են քսան տարի ու իշխանավորները որոնք Ազգի ու ժողովրդի թշնամին են փորձում են մեղադրել ադրբեջանցիներին, ռուսներին անգամ հրեաններին ու նույնիսկ ազատամարտիկներին: Այն միջոցները որոնք փոշիացվել են ՀՀ իշխանավորների կողմից իբր թե վերազինում են հայկական բանակը, փաստորեն սուտ եղավ, այն որ սսում էին թե մենք տարածքային կորուստներ չենք այս քառօրյա պատերազմի ընթացքում, նույնպես սուտ էր:

Ինչպես եղավ երբ սկզբից ՀՀ բանակային ղեկավարությունը հերքում էր Թալիշ գյուղի կորուստ հետո մի քանի օր հետո հայ-

տարարեցին ազատագրելու մասին: Ի՞նչ է ստացվում, ստում են զոհերի, մեր կորուստների մասին թաքցնելով կարևոր փաստերը, որոնք կարող էր ավելի օգտակար լինել: Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի միայն անշարժ գույքը, որը Եվրոպայում է` *( Չեխիայի Միներալնի Վոդի վայրում հրուրանոցային համալիր իսկ Ֆրանսիայի Նիցցա քաղաքում Հիվանդանոց: )* Բավական էր այդ ծախսերով վերազինել ամբողջովին հայկական բանակը, գեներալ Խաչատուրովի, Մանվել Գրիգորյանի ու Հայկազ Բաղմանյանի ու նախկին զինկոմ` գեներալ Սերգեյ Չալիանի միջոցներով կարելի էր բանակի համար անգամ գնել ատոմային սուզանավեր: Ինչ է ստացվում պետական դավաճանները անպատիժ գործում են վտանգելով ժողովրդի ու զինվերների կյանքը, դե պետության մասին չեմ խոսում: Կնշանակի, որ թշնամին ներսում է իսկ մենք մեր զինվորների կյանքը ու պետության ճակատագիրը հանձնել ենք թշնամուն: Իսկ ինչու ենք մոռանում որ սահմանին հաշմանդամ դարձած զինվորին անգամ հենակներ չեն տրամադրում թողնելով նրան բախտի քմահաճույքին, հարյուրավոր զինվորներ որոնք կորցրել են առողջությունը կամ բանականությունը մնում են մոռացված ու անտեսված նրանց անգամ չեն թոշակավորում կամ փոխհատուցում: Զինվորները խոշտանգվում են իրենց հրամանատարների կողմից, նվաստացումը ծեծը ու բռնությունը հայկական բանակում դարձել է ավանդույթ: Բռնաբարությունները ու հոգեկան ծանր ապրումներից զինվորները կամ Խելագարվում են, կամ ինքնասպան լինում: Դրան գումարվում է քրեական օրենքների կիրառումը բանակում որը ձևավորեց « **Չաստ նայողների** » ինսիտուտը: Իսկ այն որ զինվորների ծնողները իրենց սեփական ծախսերով են գնում զինվորի համազգեստը և հիգենայի պարագանները, քանի որ հրամանատարները պարտադրում են ծնողներին նույն զորամասի պահեստից գնել համազգեստը ու անգամ ներքնազգեստները: Սպաները ամեն գնով ամեն ձևով կողոպտում են զինվորի ծնողներին, սկսած արձակուրդների վաճառքից վերջացրած փոստային վճարովի

ծառայությունով: Հայկական բանակում զինվորներին օգտագործում էին որպես ստրուկի ծեծելով ու խոշտանգելով վերադաս հրամանատարները ու ռազմական դատախազությունը ամիջապես փակում էին քրեական գործը որակելով ինքնասպանություն կամ դժբախտ պատահար: Սահմանամերձ գոտում զինվորների խոշտանգումը ավարտվում էր սպանությամբ, որը քողարկվում էր ադրբենական դիպուկահարի կրակոցի անվան տակ: Նույնիսկ փաստեր կան, որ հրամանատարները զինվորների մայրերին կամ քույրերին սեռական առաջարկություն էին անում կամ բռնաբարում, փոխարենը խոստանալով ապահովվեր իրենց զավակների անվտանգությունը կամ սահմանային գոտի չուղարկելու համար: Այդպիսի վճարովի ծառայություններ բանակում դարձել է ավանդույթ: Միայն չասեք թե ֆանտաստիկ ժանրից է, քանի որ ՊՆ բարձրաստիճան բարեկամներիցս դա հաստատել են: Հայկական բանակում զինվորը և նրա ծնողները եկամուտի աղբյուր էր գեներալների համար, չհաշված նաև թիրախ իրենց հաճույքները բավարարելու համար: Վազգեն Սարգսյանը իզուր չէր ասել. *« ՀԵՐՈՍՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԶՈՀՎԵՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏՈՒՄ, ՀԱԿԱՌԱԿ ԴԵՊՔՈՒՄ ՆՐԱՆՔ ԱՆՏԱՆԵԼԻ ԵՆ ԴԱՌՆՈՒՄ »:* Նա հասկանում էր, որ պետության վզին են ծանրանալու վիրավոր ու հաշմանդամ ազատամարտիկը, դրա համար նախընտրում էր, որ մինչև պատերազմի ավարտը ազատամարտիկ չմնա, չհաշված այն, որ գիտակցում էր, որ Ազատամարտիկը պատասխան է պահանջելու երկիրը թալանելու ու կողոպտելու համար: Դրա համար էլ կռազի շոֆեռը հայտարարում էր. « Ով փորձի ինձնից պատասխան պահանջի, թուրքից էլ փիսն ա, սապյյակ թուրք ա: Եթե էս հանրապետության մեջ մեկը կա, որ ինձնից պատասխան պահանջի, ուրեմն՝ թուրքից էլ փիսն ա, էղա՞վ »: ( 25 Փետրվար 2015 ) Նույն բանը արվում է հիմա, անտերության մատնած հայ հաշմանդամ զինվորներից շատերը ինքնասպան են լինում, որպեսզի բեռ չդառնան առանց այն էլ աղքատության մեջ տառապող իրենց ծնողների վրա:

չդառնան առանց այն էլ աղքատության մեջ տառապող իրենց ծնողների վրա: Զերբակալված ազատամարտիկների ռազմաճակատ մեկնելու խնդրանդրագիրը իշխանությունները մերժեցին, կնշանակի որ նրանք նախընտրում են ժողովրդին ու զինվորներին զոհաբերել, սակայն ոչ իրենց իշխանությունը:
ԴԱՀԿ-ի պետ Միհրան Պողոսյանի Պանամայի բիզնեսները ու միլիոնավոր դոլարների կողոպուտը փաստացի կոծկում են իշխանությունների կողմից: Այն ցինիկ հայտարարությունը թե. «*Առավել անհեթեթ է, որ պետության համար այս կարևոր ժամանակաշրջանում որոշ լրատվական միջոցներ զբաղված են պատվեր կատարելով*»:
Փաստորեն ինչպես գիտենք ժամանակին Վազգեն Սարգսյանը կոծկեց եղբայր Արմեն Սարգսյանի « Լիզինի »: գործարանի աղմկահարույց գործը, կոծկեցին Մանվելի ու Սեյրան Սարոյանի կողմից չեչեն անջատողականներին վաճառած հակաօդային հռթիռների գործը չհաշված Բալահովիտի ռուսական ռազմապահեստների գործը ու հազարավոր այլ գործեր: Դեռևս Վազգենի կենդանության ժամանակ հսկայական միջոցները որոնք կողոպտվեցին հենց նրա հովանավորությամբ, ( Քըրք Քրքորյանի նվիրաբերած 70 միլիոն դոլարը ) շարունակվեց Ռոբերտ Քոչարյանի ու Սերժիկի Ազատիչի օրոք:
Ինչու՞ քան տարի անց անգամ չկարողացան հայկական անկախ պետություն ղեկավարները գտնել արժանի դաշնակիցներ: Օրինակ Չինաստանը, Իրանը, Հունաստանը, անգամ Լատինամերիկյան պետությունները կամ հյուսիս Աֆրիկյան պետությունները Լիբանանն ու Հորդանանը: Միակ բանը այն էր, որ պետք է տասնամյակներով խաբեին ժողովրդին, որ բացի ռուսներից ուրիշ դաշնակից չենք կարող ունենալ: Իսկ այս պարագայում Ռուսաստանը ոչ թե դաշնակից էր այլ միայն **Տեր,** քանի որ տիրոջ կարգավիճակով է շահագործում Հայաստանի իր ռազմաբազանները: Հայաստանի ժողովուրդն է վճարում ռուսների ներկայության համար: Կնշանակի այդ միլիոնավոր դոլլարները, որոնք ծախսվում են իբր վարձակալ ռուսների

որոնք պարտավոր էին վերազինել Հայկական բանակը յուրացվել են: Միայն այն փաստը, որ Խորհրդային Միության իրավահաջորդը Ռուսաստանն է Հայաստանը ոչ թե պարտք պետք է լիներ, այլ պարտատեր: Արհեստական երկրաշարժի Մերկուրի 18-ի օպերացիայի փաստը ապացուցված է, և Խորհրդային Միության որպես իրավահաջորդ Ռուսաստանը պարտավոր էր փոխհատուցել այդ աղետի համար որպես իրականացրած ցեղասպանություն: Սակայն ոչինչ չարվեց դեռ 90 ականների սկզբից ՀՀ իշխանավորները որդեգրեցին **ԱԶԳԱԴԱՎ** քաղաքականություն: Իզուր չէ, որ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՍՊԱՆԴԱՆՈՑ որովհետև վիրավոր զինվորների համար ոչ պետությունը ոչ է պաշտպանության նախարությունը պատասխանատվություն չի կրում: Վիրավոր ու հաշմանդամ զինվորները լքված են ու առհամարված ինչպես եղավ ազատամարտիկների հետ, նրանց օգտագործեցին ու դեն նետեցին:

Ազատամարտիկ բարեկամս իզուր չէ, որ անհանգստանում էր անընդհատ շեշտելով անցյալի ու պատմության կեղծելու փաստը: Իզուր չի, որ Լևոն Զուրաբյանը հայտարարել է. « Որ ՀԱԿ միանշանակ կողմ է խաղաղապահների տեղակայմանը, և տարածքները փաստացի հանձնելուն »: ( 11-04-2015 Լրագիր.ամ )

է Փաստորեն ինչպես տեսնում ենք անցյալը կրկնվում է քանի որ նույն դավաճաններն են որոնք շքեղության ու դղյակներում ապրում, և նույն ընչազուրկ զինվորները, որոնք քան տարի ապրել են խոնավ հյուղակներում ու նկուղներում և զորակոչվել են բանակ, որտեղ էլ գեներալների խիստ հայացքի ներքո խոշտանգվում են ու դառնում հաշմանդամ, դե զոհերի ու ինքնասպաններ մասին չասեմ:

Ի՞նչ է ստացվում պատերազմը սկսվեց ու առաջինը նորից անատամ ու խեղճ ու կրակ ազատամարտիկներն են որոնք

երգելով են ճակատ գնում, գնում են ապավինելու մեր զինվորներին: Իսկ թիկունքում հրեշավոր Թշնամին է, որը նորից փորձելում է սպանել ու կոտրել այդ հայրենասերների ոգին: Անիմաստ զինադադարը, որը սպանում է առաջնագծում կանգնած զինվորներին ու կամավորներին շարունակու է սպանել նրանց հավատն ու հույսը, ինչպես եղավ 1994 -ի մայիսին:
Ես կասեի արդեն հայտարարելով զինադադարի կողմնակից նա շարունակում է Բիշքեկի դավաճանությունը: Կնշանակի նորից անավարտ պատերազմ թողնել սերունդների գլխին, նորից օգտագործելով ընչազուրկ զինվորին ու ազատամարտիկին պետք է թալանի ու կողոպտի երկիրը այդ երեխաների հաշվին կառուցի իր դղյակները ու ապարանքները: Ոստիկանությունը գեր հագեցած արդիական միջոցները տեսանկարահանող սարքերից սկսած վերջացրած թռչող նկարահանող սարքերով, թանկարժեք մեքենաներով ու ժողովրդին հնազանդեցնելու քիմիական ու լուսային միջոցները, գալիս է համոզելու, որ Իշխանությունները ժողովրդի հետ առհասարակ կապ չունեն: Պատերազմի անվան տակ ստացված միջոցները յուրացնելու են նույն տականքները, որոնք արեցին տասնամյակներ առաջ: Քանի դեռ ժողովուրդը չի հասկացել, որ իր լռությամբ ու անգործությամբ միայն օգնում է թշնամում մեր զինվորները ու ազատամարտիկները զոհվելու են ու այդպես էլ անհույս մնան շվարած: Իսկ ինչ մնում է գեներալ Արկադի Տեր-Թադևոսյանին, ապա նա անզգամ չի կարող անել ոչինչ, քանի որ ճակատում հաղթում է այն զինվորը, որը թիկունքում հավատարիմ զինակից ունի, որպեսզի պաշտպանի իր թիկունքից հարվածողին:
Այնպես որ Նժդեհը «ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄԻՆ ՉԻՆԱԿԻՑ Է ՈՒ ԵՂԲԱՅՐ ԱՐՏԱՔԻՆ ԹՇՆԱՄՈՒ»: «ՄԻՆՉԵՒ ՈՐ ՉԿԱՐՈՂԱՆԱՆՔ ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄԻՆ ՍՊԱՆԵԼ, ԱՆԿԱՐԵԼԻ Է, ՈՐ ԱՐՏԱՔԻՆ

ԹՇՆԱՄՈՒՑ ԱԶԱՏՎԵԼ ԿԱՐՈՂԱՆԱՆՔ »: ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ
Իսկ թշնամուն սպանելու ժամանակը եկել է քանի դեռ ավելի մեծ չարիք չի գործել, քանի դեռ զոհերը չեն շատացել, քանի դեռ մեր զինվորի աչքը չոր է քանի դեռ հույսը չի կտրել: Ինչպես կասեր մեծն Րաֆֆին « **Հայրենիքի թշնամուն սպանելը մեղք չէ** »: Իզուր չէ որ իշխանություններն դավաճանության մեջ մեղադրողներին որակավորում են Ադրբեջանի գործակալ, դավաճան ու անգամ թշնամի: Ողջ լրատվական միջոցներով սկսում են թմբկահահարել « **հայրենիքի դավաճանի** » մասին: Ես վստահ եմ այս ակնարկից հետո իմ ազատամարտիկ բարեկամին նույնպես համարելու են Ազգի դավաճան ու թշնամի չնայած ինչպես նա էր ասում նրան արդեն այդպես վորակավորել են, անգամ իր զինակից ընկերներին են պարտադրել նրա մասին հերյուրանքներ գրել: Բայց ինչպես ասեց ինքը, նա վախեցողներից չէ, չի վախեցել պատերազմի վեց տարիներին, ուր մնաց վախենա հիմա: Այնպես որ ես գիտեմ որ մեր ժողովրդի մեջ դեռ կան ազնվազարմ հայորդիներ, որոնք կուլ չեն տալիս դավաճանությունը ինչպես ասում են.
**« Ակն ընդական, ատամ ընդ ատաման »:**

Գեհենի Առաքել 11/04/2016 Ստեփանակերտ

***« Ով որ տնտեսում է դպրոցների վրա, կկառուցի բանտեր »:***

***Օտտո Բիսմարկ***

# ՀԱՅՈՑ ԱՐՔԱՆԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

*« Ապրի՛ր չմեռնելու, մեռի՛ր ապրելու համար »:*
***Գարեգին Նժդեհ***




Ինչո՞ւ կործանվեց Հայոց թագավորությունը:
Շատերը տալիս են այդ հարցը, չկարողանալով դարերի խորքից գտնել ճիշտ պատասխանը: Մի զգալի մասն այդ կործանումը վերագրում է քրիստոնեությանը, որոնք էլ՝ իշխանների դավաճանությանը, իսկ ոմանք էլ՝ արտաքին թշնամուն: Սակայն ճիշտ է, թվարկածս գործոնները մեծ ազդեցություն են ունեցել իրենց բացասական կողմերով, սակայն կործանումը եղել է միայն հանդուրժողականության հետևանքով: Շատերին տարօրինակ կթվա այդ միտքը, սակայն կփորձեմ ավելի հասկանալի ներկայացնել փաստերը: Այդպիսով, հայոց թագավորության կորուստը եղել է հանդուրժողականությունից: Երբ հայոց արքան հանդուրժողականություն էր ցուցաբերում, դա էլ իր հերթին բերում էր անկում ու կործանում: Երբ հայոց արքան անկոտրուն էր ու պահանջկոտ, թագավորությունը ծաղկում էր ու բարգավաճում: Մենք հայերս ունենք շատ բաներ, որը հենց ժառանգաբար անցնում է հորից որդուն: Այստեղ հանդես է գալիս « **Մահակի** » օրենքը, որը պարտադրվում է հասարակության որոշ խավերին:

Օրինակ՝ նա, ով զգում է իր իշխանությունն ու պաշտոնի համը, նա կարող է չարաշահել դա, կարծելով, որ ինքը կարող է անպատիժ գործել՝ անկախ իր դիրքից կամ մտերիմների ազդեցությունից: Ժողովրդական լեզվով ասած՝ «հարկ եղած դեպքում կարող է տակից դուրս գալ»: Եթե հաշվի առնենք, որ բոլոր դարաշրջաններում ունեցել ենք այդպես մտածողներ՝ տխմար ու անգրագետ հոգևորականներից սկսած վերջացրած իշխաններ ու նախարարներ: Այդպես ասած՝ ապիկար դավաճաններ: Սակայն հայոց արքայի հանդուրժողականությունից էր կախված նրանց գործելու ու բարգավաճելու ձևերը: Օրինակ՝ մինչ քրիստոնեությունը, հայոց արքաններն ունեին ավելի ազատամիտ գաղափարներ, քան քրիստոնեությունից հետո, սակայն դա մասամբ: Հայացք նետելով Տիգրան Մեծ արքային և քրիստոնեության նախաշեմին հայտնված Պապ թագավորին, որը կրթություն էր ստացել ոչ թե հոգևորականների, այլ քրմերի կամ ուսուցիչների մոտ, որոնք առհասարակ կրոնին չէին խառնվում: Հոգևորականները միշտ ցանկացել են և փորձել՝ իրենց գերիշխանությունը տարածել ժողովրդի վրա, նույնիսկ այդպես փորձել են նաև քրմապետերը՝ մինչ քրիստոնեության մուտքը Հայաստան: Դա իշխանության մոլուցք էր, որ զգում է մարդկանց որոշ տեսակ, որոնք չարաշահելով իրենց պաշտոնը, կոչումը, տիտղոսն ու իշխանությունը, ձգտում են դառնալ առաջինը պետության մեջ: Սակայն ինչպես ասացի նախորդում, դա կախված էր թագավորի հանդուրժողականությունից:
Ի՞նչ եք կարծում, Տիգրան Մեծի ժամանակ չե՞ն եղել քրմապետեր կամ նախարարներ, որոնք փորձել են Արքայի թիկունքում գործել՝ ի շահ սեփական որովայնի: Այո, եղել են, իհարկե, առանց դրա հնարավոր չէր, սակայն Տիգրան Մեծը հանդուրժող չէր, և այդ քրմապետին ու նախարարին՝ ի ցույց ժողովրդի՝

բարձրացվում էր ցցի: Ոչ միայն նրանք էին ցցի վրա հայտնվում, այլև նաև նրանք, ովքեր կոծկել, թաքցրել են իրականացվող հանցագործությունն ու դավադրությունը:

Արքան հանդուրժող չէր ոչ մեկի՝ ոչ նախարարների ու քրմապետերի, ոչ էլ իր հպատակների հանդեպ: Տիգրանն անգամ հանդուրժող չէր օտարերկրյա դեսպանների նկատմամբ: Արքան կարող էր գլխատել դեսպանին ու սկուտեղի վրա՝ փրկագնով, վերադարձնել հարևան թագավորին, անգամ դաշնակից, հասկացնելով, որ իր երկրում լրտես դեսպանը նույնպես պատասխան է տալիս՝ ինչպես և իր թագավորության հպատակները:

Հարևան թագավորը չէր կարող իր գլխատված դեսպանի համար դժգոհեր, որովհետև արքան առատաձեռն էր վճարել՝ սկուտեղի ոսկե դրամներն ավելին արժեր, քան ինչ-որ լրտեսի գլուխ: Դավաճանը ցցին էր բարձրացվում ու իր սեփական աչքերով տեսնում՝ իր գերդաստանի արական սեռի մանուկների մորթը: Դաժան է հնչում մորթը, այո, հենց այդպես էլ պետք է լիներ, որովհետև չարիքի արմատն էր կտրվում, որպեսզի հետո մոլախոտի պես չաճեն, բազմանան, ինչպես հիմա:

Դավաճանի ողջ սերունդը պետք է կոտորվեր ու վերանար աշխարհի երեսից: Տիգրանը հանդուրժողական չէր նաև իր կանանց ու զավակների հանդեպ, նրանց չզատելով իր հպատակներից: Արքան չէր կարող երկրի դավաճանների հանդեպ ներողամտություն ցուցաբերել, ներողամտություն ցուցաբերում էր դավաճանի գերդաստանի միայն իգական սեռի ներկայացուցիչների հանդեպ, իսկ արական սեռի՝ պատանիներից մինչև զառամյալ ծերունին, պետք է կախվեին բերդապարիսպներից:

Այդպիսով, Տիգրան Մեծն արմատախիլ էր անում դավաճանությունը: Նրա կողմից սահմանված կարգը վերահսկվում էր ու պարտադրվում, դրա համար էլ պետությունը հզոր էր, իսկ

հայկական բանակը համարվում էր ամենաhզոր բանակներից մեկը, ոչ միայն զենքի ու սպառազինության, այլև կարգապահության ու մարտունակության տեսակետից: Հրամանատարը, հազարապետը կամ հարյուրապետը, եթե չարաշահում էին պաշտոնը, համարվում էին թշնամի և կախաղան էին բարձրացվում: Նախարարները և իշխանները, ովքեր կփորձեին իրենց իշխանությունն օգտագործելով՝ ժողովրդին ու իրենց հպատակներին ճնշել, նորից մահապատժի էին ենթարկվում: Նույնիսկ, գրավյալ տարածքներում նշանակված մարզպաններն իրավունք չունեին բռնություն գործադրել օտարալեզու կամ օտարադավան ժողովուրդների հանդեպ:

Իսկ ինչ վերաբերում էր Տիգրանակերտի կառուցմանը, շատերը կարծում են, թե Տիգրան Մեծը բռնությամբ է հարևան ժողովուրդներին տեղահանել ու տարել Տիգրանակերտը կառուցելու: Տիգրանը լավ գիտեր, որ բռնությամբ տեղահանված ժողովուրդը՝ երբեք այդ երկիրը իրենը չի համարի, չհաշված, որ նրանց թշնամությունն իր և իր ժողովրդի հանդեպ՝ շուտ թե ուշ, ծնելու է անհնազանդություն, թշնամանք ու վերջապես՝ ըմբոստություն ու առճակատում: Արքան չէր կարող ապրել մի քաղաքում, որտեղ ըմբոստությունն ամեն վարկյան կարող էր դառնալ աղետ: Սակայն, իրականում Արքան հրովարտակով հորդորում էր շինարարներին ու արհեստավորներին՝ նպաստաբեր պայմաններով մասնակցել բերդաքաղաքի կառուցմանը:

Արհեստավորները վարձատրվում էին, նույնիսկ խրախուսվում: Տիգրանակերտ գաղթողներն իրենց հետ տանում էին իրենց կահ կարասին՝ ողջ շարժական գույքը, նույնիսկ անասունները: Ծինական ու արհեստավոր, դերասան ու զորավար ցանկանում էին լինել պաշտպանված, ու թագավորը երաշխավորում էր նրանց գույքի ու կյանքի ապահովությունը:

Պետությունն ու թագավորը պաշտպանում էին նրանց, իսկ նրանք էլ պետությանն ու թագավորին: Տիգրան Մեծը չսխալվեց, որովհետև պատերազմի ժամանակ Տիգրանակերտի ողջ բնակչությունը, անկախ ազգությունից ու դավանանքից, մեկ մարդու նման պաշտպանում էին Արքային ու բերդաքաղաքը: Սակայն Տիգրան արքան հենց զոհ դարձավ դավաճանության, որովհետև սեփական որդը, որը սերված էր օտարի արյունից, ըմբոստացավ հոր դեմ, և ամեն ինչ արդեն այլ էր: Տիգրանը գիտեր գենետիկական ժառանգության հզորությունը:

Արքայական պատվիրանի մասին հիշել են մեր բոլոր Մեծերը, «**Հայրենիքի թշնամուն սպանելը մեղք չէ**»: **Րաֆֆի**: *...Բայց, մինչև երբ պիտի ծածկենք մեր կեղտերը: Դա նույնը կլինի, եթե մի հիվանդ՝ ամաչելով թաքցներ այն վերքերը, որոնք օր-ըստօրե ավելի փտելով, նեխելով վարակում են մարմնի ամբողջ կազմվածքը... Րաֆֆի:*

Այդպիսով, պետության մեջ գործում էին օրենք ու կարգ, և կործանումը եղավ միայն այն ժամանակ, երբ հանդուրժողականությունն իշխեց պետության շահին: Պետության թագավորի անվտանգությունը կորուստ կրեց, որովհետև հոգևորականները ներկայացրեցին, որ դավաճան իշխանին կամ հոգևորականին կարելի է ներել, որովհետև Քրիստոսը ներել է անգամ իրեն խաչին գամողին, հարկավոր էր այստեղ ասել, որ հոգևորականները փորձում էին իրենց հանցանքները կոծկել ու քողարկել՝ ներողամտության ու հանդուրժողականության ետևում:

Հոգևորականները իրենց տգիտության պտուղները սերմանում էին անգրագետ ժողովրդի մեջ, արտահայտելով անիմաստ ու տխմար մտքեր, որոնք առհասարակ իմաս էլ չունեիր, կղերականների անիմաստ մտքերը առ այսօր գործածական է ժողովրդի մեջ, չհասկանալով անգամ դրանց իմաստը: Մեռելներից

սկսած վերջացրած դավաճանների մեծարումը: Մինչդեռ Հայաստանում օտարերկրյա դեսպանները լրտեսում էին՝ օգտագործելով իրենց դիվանագիտական հնարքները, հայ հոգևորականներին, իշխաններին ու նախարարներին կաշառքով և խոստումներով՝ դարձնում էին իրենց գործակալը, իսկ դավաճանության արդյունքում՝ վնասվում էր թագավորն ու պետությունը:
Պապ թագավորը հայոց արքաներից ամենաիզորն էր, չնայած իր տարիքին, նա Տիգրան Մեծից էլ ավելի պատրաստված էր և ուժեղ, սակայն երիտասարդ էր, ու հանդուրժողականությունը կործանեց ոչ միայն իրեն, այլև թագավորությունը: Պապ թագավորը, երևի այնքան էլ լավ չէր պատկերացում Տիգրան Մեծի՝ այդ **երկաթե բռունցքի** պատգամը, և ավելի մեղմ գտնվեց դավաճանների հանդեպ. հոգևորականները, որոնք խարխլում էին թագավորության հիմքերը, չպատժվեցին որպես դավադրության հրահրողներ: Լրտեսներն ու դավադիր իշխանները չպատժվեցին ամբողջությամբ, չնայած Պապը հասցրեց իր հոր դեմ ըմբոստացած իշխաններին պատժել, սակայն դա քիչ էր, որովհետև այդ ցեցը ներսից սկսել էր հոշոտել՝ դավաճանության սարդոստայնն արդեն արքունիքում էր բույն հյուսել:
Ու այդպես, օտարամոլությունն ու օտարին ապավինելու աղետը՝ արդեն հոշոտում էր իշխանների ու հոգևորականների հոգին, որն էլ դարերի ընթացքում պետք է կործանարար դառնար պետության ու ժողովրդի համար, պետք է դառնար գենետիկական փոխանցվող մի արատ, որը կոչվելու էր ստրկամտություն:
Հանդուրժողականությունը ծնեց դավաճանություն, որն էլ դարձավ ստրկամտության տեսակ: Ստրկամտությունը դարձավ չարիք, որովհետև ուրիշին ապավինելու միտքը մարդուն դարձնում է իմպոտենտ՝ ոչ պիտանի պետությանը, դարձնում է նրան

գործիք՝ ուրիշի ձեռքին: Այդպիսով, ժամանակներն ու դարերն անցան, ու ի հայտ եկան գենետիկական « **ուռողներ** », որոնք սեփական ուղեղից զուրկ են, սակայն ունեն որովայն ու ամորձիներ՝ լափում են ու բազմանում, արյունածուծ լվերի պես հասարակության ու պետության համար դառնում են չարիք, բոլոր ժամանակներում ու դարերում:

Մեծ Եղեռնին նպաստեց ստրկամտությունն ու հանդուրժողականությունը, որովհետև ընդունակ չեղանք ինքներս մեզ պաշտպանելու: « **Մեր բարյացակամ չեզոքության դեպքում իսկ, թուրքությունը պիտի վարվեր մեզ հետ ճիշտ այն ձևով, ինչպես որ վարվեց** »: **ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ**

Մեր Ֆիդայինները, Սասունի ու Զեյթունի հերոսական ժողովուրդը, դարերով պայքարեցին Օսմանյան կայսրության դեմ, որովհետև գիտեին **Երկաթե շերեփի** բանաձևը, որովհետև գիտեին՝ մեր Արքաների պատժի ու ներման չափը, որովհետև գիտեին, որ դավաճանի ձեռքով կարող է օտար թշնամին կազմալուծել իրենց դիմադրությունը: « *ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄԻՆ ՉԻՆԱԿԻՑ Է ՈՒ ԵՂԲԱՅՐ՝ ԱՐՏԱՔԻՆ ԹՇՆԱՄՈՒ* »: *Գ. ՆԺԴԵՀ:*

Նրանք դավաճանին ի ցույց՝ բարձրացնում էին ցցի վրա, անկախ նրանից՝ թե քրիստոնեական հավատքը դա թույլ էր տալիս, թե՞ ոչ: Դավաճանի գերդաստանը՝ մեծից փոքր, պատասխան էր տալիս՝ իրենց սեփական տանն այրվելով: Զեյթունի հոգևորականներն այլ կերպ էին, նրանք խաչի կողքին խենջար էին կրում, վախը նրանց համար չէր, քանի որ նախընտրում էին « թասակ » կրել, ոչ թե վեղար: Նախընտրում էին զենքը ձեռքին մեռնել, ոչ թե խաչը ձեռքին՝ գլխիկոր: Այդպես, հոգևոր հայրերը կռում էին սերունդ, որը պաշտպանվել ու կռվել գիտեր, որը պատիվ ու ըմբոստություն ուներ: Իզուր չէր, Սասունի Սուրբ Առաքելոց վանքը Ֆիդայիների համար սրբատեղի,

որովհետև այնտեղ Ֆիդային երդվում էր սուրբ զենքի վրա, որը պետք է նրան դարձներ արքայական պատվիրանի տերը: Հայաստանի անկախության հռչակումից ամիջապես հետո` 1991 թվականին իշխանության եկան այդ ստրկամիտների ոհմակը` Լևոն Տեր-Պետրոսյանի ղեկավարությամբ, որը պետք է երկիրը հասցներ կործանման, որից հետո փոխանցեր իշխանությունն իրենց հաջորդներին, որ շարունակում են առ այսօր:
*(« **Գիտակից ստրուկին հանցագործի մեջ չկա տարբերություն »: Գարեգին Նժդեհ** )* Իսկ Արցախյան ռազմաճակատում կռվող ազատամարտիկները մոռացան Արքաների թողած պատվիրանը, մոռացան հանդուրժելով, մոռացան կարծելով, թե ժամանակը կգա պատժելու դավաճանին, սակայն ուշացան, սխալվեցին հանդուրժելով: *(« **Հայոց պատմությունը մեզ մի բան է սովորեցնում, այն, որ հայն իր պատմությունից բնավ չի սովորում »: Գարեգին Նժդեհ.** )* Ժողովրդի հանդուրժողականությունը ստիպեց, որպեսզի երկրում ծաղկեն կոռուպցիան ու անարխիան: Մինչդեռ, Ռումինիայում տարիներ առաջ երկրի ղեկավար` Չաուշեսկու հաշվեհարդարը պայմանավորված էր ժողովրդի անհանդուրժողականությամբ. Գնդակահարված բռնակալի ու նրա կնոջ դիակների վրա միզում էին ազգովի, մեկ շաբաթ անընդհատ գալիս էին ու միզում: Ողջ քաղաքակիրթ մարդկությունը լռեց, որովհետև գիտեին, որ բռնակալին դա հասնում է, ժողովրդի ցասումն էր դա, ատելությունը իրեն սպանողի ու խոշտանգողի հանդեպ: (**« Ազգերն ամենից շատ տառապել են և կտառապեն իրենց տականքների երեսից »: ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ** )
Իսկ մենք հանդուրժող ենք, ոչինչ, մենք սովոր ենք հարյուր հազար անգամ խաչվել: *(« Մեր քարոզած ճշմարտութիւնը գուցէ թէ կտրատում է ազգի սիրտը, բայց այդ սուրը միակ հնարն է` փտած ու ճարպակած խոցն առողջ մասերից բաժանելու եւ*

*հեռացնելու համար»: Միքայել Նալբանդեան )* Քրիստոսը մեկ անգամ խաչ բարձրացավ, սակայն մեզ ամեն օր են խաչին գամում: Այն փարիսեցիները, որոնք ժողովրդին քերթում են, արդեն քանիհինգ տարի է: ***(«Հայությունը փայտե ժողովուրդ է՝ անընդունակ նույնիսկ զգալու և երազելու լավ օրերի մասին»: ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ)***

Մի՞թե մենք դառնալու ենք այդքան անընդունակ, որ մեզ հարվածող մահակը համբուրենք, մի՞թե չգտնվեց Տիգրան արքայի ժառանգներից մեկը, որն իր անհանդուրժողականությամբ կարողանա ոտքի ելնել **բռնակալի** դեմ, որը սահմանագծին մեր զինվորներին է մատաղ անում, որ մեր որդեկորույս մայրերին է քաշ տալիս ասֆալտի վրա: Մի՞թե բարոյականությունը մըղված է վերջին պլան: ***(«Թշնամուն մի հանցանքներել՝ նշանակում է նորե՜րն արտոնել»: Գարեգին Նժդեհ. )***

Ես գիտեմ, որ դեռ կան հայորդիներ, որոնք կարող են երկնքից աստղեր ցած բերել, բայց խուսափում են, որովհետև չեն հավատում իրենց առաջնորդներին դավաճանած ժողովրդին, ինչպես եղավ Նաիրի Հունանյանի, Շանթ Հարությունյանի ու Վոլոդյա Ավետիսյանի տարբերակում: Ի՞նչ է, կնշանակի՝ մենք սիրում ենք մեզ առաջնորդող հայրենասերներին զոհաբերել նըմակին: Ահա, այս դավաճանությունը վարձատրվում է բռնակալի կողմից: ***( «Թուրքն ավելի դրական կարծիք ուներ և ունի հայ ցեղի մասին, քան մեր հայանուն ստրկամիտները»: Գարեգին ՆԺԴԵՀ )***

Տիգրան Մեծը գիտեր, որ դավաճանի գենետիկական տեսակը հնարավոր չէ փոխել, ու միայն արմատախիլ պետք է անել այդ չարորակ ուռուցքը: ***( Միևնույն մարդու մեջ չեն ապրում միաժամանակ ստրկամիտն ու ազատատենչը: Նա կամ մեկն է, կամ՝ մյուսը: Գարեգին Նժդեհ )***

Եվ Պապ թագավորի ներողամտությունը կործանեց պետությունը: Հայ հոգևորականները դարերով ժողովրդին հորդորել են՝ ներողամիտ ու հանդուրժող լինել անգամ թշնամու հանդեպ, արդյունքում՝ մեզ կոտորեցին բոլոր ազգերը, անգամ ներքին թշնամին: Արքաների պատվիրանը մոռացանք, որովհետև չգրեցինք թղթի վրա, չգրեցինք քարին կամ հոգում: Դավաճանների տեսակը բազմացավ, աճեց ու աճեց բոլոր ժամանակներում, որովհետև նրանց պատժող չեղավ, որովհետև ամեն ինչ մնաց որպես լեգենդ, բայց ոչ պատմություն, մոռացվեց պատվիրանը, որովհետև այն իմաստազրկվեց՝ չդառնալով գաղափար. «***Մինչև որ չկարողանանք ներքին թշնամուն սպանել, անկարելի է, որ արտաքին թշնամուց ազատվել կարողանանք***»: ***Գ. Նժդեհ:***

Եթե պատվիրանը մնում է որպես գիր ու կյանքի չի կոչվում, ապա դա դառնում է **աղետ**: Քսանհինգ տարի շարունակ ժողովուրդն ու երկիրը դարձավ ազգադավների թիրախ, դարձավ կեղտարյունների բազմացման «ինկուբատոր», դավաճանությունը դարձավ մտածելակերպ ու անգամ գաղափար: Դավաճանություն, որի արմատը դրվել է վաղուց, սակայն դրանք աճեցին ու բազմացան 1990 թվականից: Դավաճանության անկյունաքարը եղավ Շահումյանն ու Արծվաշենը, իսկ դրա կրնքահայրը եղավ բոլոր ժամանակների ամենամեծ ոճրագործը՝ **Ազգադավ Վազգեն Սարգսյանը**: Նրա ոհմակը, արդեն քսան տարուց ավելի է, հոշոտում է ու ասպատակում Հայաստանը: Իզուր չէր որ որոշ դավաճաններ Հայաստանը անվանում են **«Քոսոտ»,** իսկ կորցրած 800 հեկտար հողն ազատամարտիկների ու զինվորների թափած արյունը անպետք ու ոչ պիտանի: Դա նրանից է, որ Արքայական պատվիրանը մոռացանք, Մոռացանք խոսել Արցախի պատերազմի դավաճանների մասին, որոնք դառնալու էին չարիք հետագայում՝ այսօր:

*«Տարիներ են անցել Կարսի անկման օրից, տարիներ, և… այդ բերդի շուրջը տեղի ունեցած ողբերգության մասին հրապարակում կա ամեն ինչ, միայն ոչ ճշմարտություն: Մի նշան անգամ: Շատ բան գրվեց, ավելի շատ խոսվեց, և դեռ գրում են, խոսում Կարսի անկման պատճառների մասին, բայց ոչ ճշմարտությունը երևան հանելու մտահոգությամբ»: Գարեգին Նժդեհ:*

Ինչու՞ ենք վախենում դավաճաններից, երբ նրանք ավելի վախեցած են, վախեցած են իրենց գործած հանցանքների ու մեղքերի համար, դրա համար են իրենց դղյակների բարձր պարիսպերը, դրա համար են իրենց զրահապատ մեքենաներն ու մեծ թիկնազորը: Գիտեք ազնիվ մարդը վախենալու ոչինչ չունի, քանի որ ինչպես ասաց Մեյրան Սարոյնն «Հարուստի տղաները ավելի շատ բան ունեն կորցնելու քան քյասիբի տղաները»: Ուրեմն մի կյանք է տրված, մեզ, այնպես անենք որ իրենք կորցնեն, ոչ թե մենք, այնպես անենք որ իրեց թույլերը մեռնեն, ոչ թե մեր զավակները:

**«Այլ կերպ հայությունը կմնա մեկն այն դժբախտ ժողովուրդներից, որոնք գոյություն ունեն, բայց չեն ապրում, որոնք աշխարհում են, բայց աշխարհից չեն»: Գարեգին Նժդեհ**

Գեհենի Առաքել 20 /05/2016

*« Այս և այսպես են թշվառաբանում հայրերիցդ ոմանք, որոնք կեղծում են, թե չգիտեն, որ ազգերը երկաթով ու արյունով են հարթել իրենց պատմական ճամփան, որ ազգերի բարօրությունը ձեռք է բերվում արյունով ու արցունքով, որ ազգերի անցած ճամփաները շարունակում են ծածկված մնալ մարդկային գանգերով: « Հաղթությունը չի պտղաբերի, մինչև որ դաշտերը չոռոգվեն արյամբ»: Արյան հեղեղներով են ներկված բոլոր հայրենիքները: Անհաշիվ է զոհերի թիվը, անչափելի՝ ժողովուրդների թափած արյունը հանուն անկախության »:*

Գարեգին Նժդեհ

*« Քանի Ավետարանի ճշմարիտ լույսը չէ ծագում մեր ազգի վրա, քանի նա հայերի համար դրված է գրվանի տակ, քանի ճշգրիտ ուսում և գիտությունը անմերձենալի են հասարակ ժողովրդին, և քանի նրանք՝ թողնելով սուրբ գրքերի ճշմարտաքարոզ վարդապետությունը, կհետևեն հայրապետական մոլորություններին — ճշմարիտ եմ ասում, ո՜րքան ժամանակ կապրեն նրանք իբրև լոկ նյութական մարմիններ, զուրկ մարդկության հոգևոր մասնից »:*

Րաֆֆի

*« Բայց մինչև երբ. պիտի ծածկենք մեր կեղտերը: Դա նույնը կլիներ, ինչպես մի հիվանդ ամաչելով թաքցներ այն վերքերը, որոնք օրըստօրե ավելի փտելով, նեխելով վարակումեն մարմնի ամբողջ կազմվածքը...»:*

Րաֆֆի

# ԻՆՉՊԵՍ ԿԱՌՈՒՑԵԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

***« Ճանաչի՛ր թշնամուդ:***
***Այդ երկու բառն էլ գրիր հոգուդ մեջ,***
***որ չմոռանաս երբեք »:***
***Գարեգին Նժդեհ***




Երբ հարց է գնում թե ինչու՞ եմ միշտ քննադատում ու գրում **Ազգադավների** ու **դավաճանների** մասին ու չեմ գրում լավ բաների մասին, կամ արդյոք ո՞րն է ելքը, կամ ինչպե՞ս կարելի է ազատվել այդ երևույթներից: Իմ բարեկամներից շատերը որոնք կարդացել են իմ գրքերը լավ տեղյակ են, որ լավի մասին նույնպես գրել եմ: Օրինակի համար իմ « ԹԻՐԱԽԻՆ ԱՖՈՐԻԶՄՆԵՐ » գրքում համառոտ ներկայացրել եմ այն ամենը, ինչը կատարվել է և կատարվում է անցյալում և հիմա: Այդպիսով կփորձեմ գրքից մեջ բերված շեշտադրումները ներկայացնել այս ակնարկում: Կարծում եմ շատերը կարդացել են Մովսես Խորենացու « ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ » - որտեղ քրեթողահայրը **Ողբում է,** նրանց համար դժվար չի լինի ավելի հստակ պատկերացնել այս ողբերգությունը: *( ՈՂԲ՝ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՑԵՂԻՑ ԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅԱՆ՝ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ՏՈՀՄԻՑ ԴԱԴԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ Մովսես Խորենացի )* « **Ամենամեծ կույրը նա է, ով չի ուզում տեսնել** »: **-Ջոնաթան Սվիֆթ**:

Պարույր Հայրիկյանը վերջին տարիներին ներկայացրել էր իր « Իդեալական պետություն » աշխատությունը, համոզված լինելով, որ կարելի է կառուցել այդպիսի պետություն: Սակայն նա չար-աչար սխալվում է, քանի որ աշխատությունը ամբողջական չէ և իրականացնելը անհնար, նկատի ունենալով մեր հասարակ-ության մեջ ձևավոևված խմորումները: Վերցնեմ « Թիրախին » գրքի բանաձևերից մեկը, *« Ամուր պետությունը կառուցում են բարոյականության հիմքի վրա, ոչ թե անբարոյականության »: ԳՀ © ԱՌ 2014* Եթե հաշվի առնենք որ մեր մեծերից շատերի պատվիրանը եղել է հենց այս սկզբունքով, արդարություն ու բարոյականություն: *( « - Պիտ պարտվի, պիտ մեռնի կեղծիքը մեր կյանքում, որ ապրի մեր ժողովուրդը »: Գարեգին )* Այդպիսով ինչու հնարավոր չէ պետություն կառուցել ստի ու կեղծիքի վրա, քանի որ ինչպես կասեր անգլիացի գրող Ջորջ Օուրելը, միայն բռնակալներն են իրենց իշխանությունը կառուցում ստի ու կեղծիքի վրա: *( « Ամեն ոք, ով երբևէ հռչակել է բռնության իր մեթոդը, անխախտորեն պիտի ընտրի սուտը, որպես իր սկզբունք »: Ալեքսանդր Սոլժենիցին: )* Եվ այդ սուտը հետագայ-ում դառնում է չարիք ոչ միայն ժողովրդի համար այլև եկող սերունդների: *( « Բայց երբ ճշմարտությունը վարագուրվում է խաբեությամբ և արդար իրավունքը փշրվում է հաղթահարու-թյան ու բռնության ոտքի տակ, այն ժամանակ մարդը յուր իրավունքը առաջ տանելու համար պարտավորվում է գործ դնել յուր ֆիզիկական զորությունը —յուր թուրը »: 182 ՐԱՖՖԻ )* Ուրեմն ի՞նչ ստացվեց մեզ մոտ 1988-1990-ին աշխարհով մեկ բարձրաձայնեցինք ու աղաղակեցինք, թե Հայաստանում իշխա-նափոխություն է եղել, շատերը նույնիսկ հայտարարում էին հեղափոխություն ու **անկախություն:** Քչերը գիտեն, որ դա մի մեծ սուտ էր, որը փչեցին աշխարհի ու մանավանդ ըսփ-

յուռքի աչքերին: Իրականում իշխանափոխություն չի եղել: Անգամ սահմանադրությունը ու օրենքները չփոխվեցին, ինչպես մնացել էր կոմունիստական կուսակցության ժամանակ, այդպես էլ մնաց, նույնիսկ ավելի վատացավ քան կար: Իսկ դրա հիմնական պատճառը այն որ կոմունիստական մանուկլյատուրայի թափթփուկները, որոնք աչքի էին ընկնում կաշառակերության, անբարոյականության ու պետական միջոցների թալանի մեջ, հանկարծ նշանակվեցին բարձր պաշտոնների ու սկսեցին արագ բարձրանալ իշխանական սանդուխքով, իզուր չէին քողարկվում ու ծածկվում իրենց հանցագործ անցյալը: Սեփականաշնորհման գործընթացը հնարավորություն տվեց արագությամբ իրականացնել պետական միջոցների փոշիացումը ու ոչնչացնելով Խորհրդային Հայաստանի տնտեսությունը, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը կրթական ու մշակույթային ճջախները, ճարտարապետական ու պատմական հուշարձանները: ( ***« Ով որ տրնտեսում է դպրոցների վրա, կկառուցի բանտեր »: Օտտո Բիսմարկ:*** ) Ինչ հնարավոր էր կողոպտել կողոպտեցին, պատճառաբանելով, որ երկրիր գտնվում է պատերազմի ու շրջափակման մեջ, արդյունքում ամենը սուտ էր, պատերազմը իշխանությունները շրջանցեցին իսկ շրջափակումը դա **մեծ միֆ** էր, որը իշխանությունները հորինեցին **« Ցուրտ ու Մութ »** տարիների լեգենդի հիման վրա:

Իրանով ճանապարհները հնարավորություն էին տալիս Հայաստանին դուրս գալ միջազգային շուկաններ: Իրանը երբեք ճանապարհները չի փակել Հայաստանի առջև, այդ ճանապարհներից միայն օգտվում էր իշխանական էլիտան: Իսկ ժողովուրդը ցրտի ու մթության մեջ կարողացավ դիմակայել ու հոգալ իր հանապազորյա հացը: Իրականում ՀՀ իշխանությունը կարող էր բնակչությանը անխափան շուրջօրյա ապահովվել հոսանքա-

մատակարումը կոմունալ մյուս սպասարկումը, ներառյալ գործարանների ու արդյունաբերության անխափան աշխատանքը: Սակայն ինչպես մեծարգո Վանո Սիրադեղյանն էր ասել, *« Պետք է, որ ժողովրդին պահել ցրտի ու սովի մեջ, որպեսզի իշխանափոխության մասին անգամ չկարողանա մտածել »:*

Նորից ստեցին, որ ժողովրդին հնազանդ պահեն, որպեսզի հեշտ լինի նրանց կառավարել, հասկանալով, որ սովահար մարդը ընդունակ է միայն իր օրվա հացի մասին մտածել: Իսկ սփյուռքը տեսնում էր, սակայն չէր գիտակցում, որ Հայաստանի **ԱԶԳԱԴԱՎ** իշխանությունները ընդունակ են պատերազմի ու աղետի գոտու համար նախատեսված նվիրատվությունները յուրացնել: *( « **Ազգային բանակի վրա տնտեսելը, նշանակում է գերեզմանաշինություն** » **Օտտո Բիսմարկ** )*

Ընդհականակը սփյուռքահայ համայնքները ամենուրեք մեծ ուրախությամբ են դիմավորել Հայաստանի բարձրաստիճան իշխանավորներին: Արցախյան պատերազմի անվան տակ թալանվում ու խոշտանգվում էին ժողովուրդը, թիկունքից աննկատ ոչնչացվում էին հերոս հայորդիները որոնք կենաց ու մահու կռիվ էին տալիս ճակատում, իսկ թիկունքում նորից կոմունիստական աղբը քրեածին հանցագործների հետ ձեռ ձեռքի տված կողոպտում էր երկիրը ու ժողովրդին: *( « ՉԿԱՆ ԱՆՏԱԿԱՆՔ ԱԶԳԵՐ, ԲԱՅՑ ՀԱՅ ՏԱԿԱՆՔԸ ԿՄՆԱ ԱՆՍՄՐՑԵԼԻ » : Գ. ՆԺԴԵՀ )*

Այդ կոմունիստական ժամանակների թափթփուկները սկսած գեներալ Կառլոս Ղազարյանից, որը ՆԳՆ- ի նախարարն էր, վերջացրած Գագիկ Հարությունյանով ու Հրանուշ Հակոբյանով: Չհաշված, որ ուժային ու դատական կառույցներում աշխատող կադրերին, որոնք իրենց էությամբ ու տեսակով հավատարիմ էին լենինյան գաղափարներին:

Բոլոր իշխանական կառույցները 99 % կադրերը կոմունիստներ

էին, իսկ այդ 1% կոմունիստական կուսակցության կամակատարներ կամ քրածին տարրեր, որոնք իրենց կուսակցական տոմսերը գրպանում դարձել էին Նժդեհական գաղափարակիր: Ինչպես օրինակ՝ **կոմսոմոլ** Վազգեն Սարգսյանը, Վանո Սիրադեղյանը ու Լևոն Տեր-Պետրոսյանը: Ինչու՞ ստացվեց այդպես, ինչու՞ չկարողացանք ստեղծել լիարժեք անկախություն ինչպես արեցին Մերձբալթյան երկրներում: *( « Ազգերն ամենից շատ տառապել են և կտառապեն իրենց տականքների երեսից: Պատմության մեջ նախընթացը չունեցող մի ողբերգություն է խաղացվում Հայոց աշխարհում, մի արնոտ խաղ, որի գործող անձինք, որի դերակատարներն են բռնությունը, բռնության կենդանի գործիքները՝ հայ ժողովրդի տականքը, և բռնության զոհերը ինքը՝ հայ ժողովուրդը »: Գ. ՆԺԴԵՀ )*

Ի տարբերություն մեզ Մերձբալթյան երկրները իրենց ԿԳԲ -ի արխիվները բացեցին ու բացահայտեցին թե ովքեր են իրենց պետության թշնամիները ու լրտեսները, որոնք իրենց գործունեությամբ վնասել են պետությանն ու ժողովրդին: Օրինակի համար կարող եք ասել թե ովքեր հիմա քաղաքական էլիտայի ամենագլխավոր դեմքերը: Մենակ չասեք թե Հանրապետականները... Շատերը չգիտեն, որ Հանրապետական կուսակցությունը ապականվեց հենց սկզբից, երբ Աշոտ Նավասարդյանը այնտեղ սկսեց հավաքագրել այդպես ասած նախկին կոմունիստներին: Այո մի զարմացեք հենց Աշոտ Նավասարդյանը ուրացավ իր գաղափարակից ընկերներից շատերին, որոնք քրեական տարբեր մեղադրանքներով հայտնվեցին ճաղավանդակների ետևում: Նա անգամ մատը մատին չտվեց, հայրենասեր ազատամարտիկներին հեռու պահելու կոմունիստական ՀՀՇ -ի խոշտանգումներից: Իսկ հետո Հանրապետական կուսակցության արդեն դարձավ կոմունիստական ու լենինյան գաղափարներով թրծված սրի-

կանների որջ, որոնք հայտնեցին թե իրենք նժդեհական գաղափարախոսության մարտիկներ են, մանավանդ Սերժիկ Նարիմանովը, Վովա Գասպարյանը, ու Աղվան Հովսեփյանը, մոռանալով այն փաստը, որ դրանց կուսակցական ընկերները ժամանակին ԿԳԲ -ի նկուղներում խոշտանգել են Գարեգին Նժդեհին, Չարենցին ու Տեյրանին ներառյալ մյուս հերոսներին: Բոլշևիկ չեկիստների կողմից Հայկական բանակի սպաների հալածանքները հաշվեհարդարը ու կացնահարումները չյաշված:
*( Բոլշևիկները Սարդարաբադի հայ 1200 սպաների աքսորեցին Բաքու ճանապարհին մուսաթաֆայականները կոտորեցին նրանց: )*
Հայաստանի անկախությունը դա խաբկանք էր սփյուռքահայերի աչքերին փոխելով երկրի դրոշի գույնը ու զինանշանը, սակայն ամենը մնաց նույնը ավելի ճիշտ վատացավ ու դարձավ իսկականից **դժոխք**, որովհետև կոմունիստները քրեածին հանցագործների միջոցով թալանեցին ու կողոպտեցին ոչ միայն պետական միջոցները այլև ժողովրդին ու անգամ սփյուռքահայերին: ՈՒ իզուր չէր, որ Արտաշատցի քրեածին Մուկը ու իր նման աղբի հետ հայտնվեցին իշխանության վերին օղակներում ստանալով պատգամավորական անձեռնամխելիություն: Քրեական աղբը տեսնելով իշխանության համն ու անպատժելիության իրենց հնարավորությունը սկսեց ավելի ընդարձակվել ու հզորանալ ժողովրդի ու պետական միջոցների հաշվին: Ինչպես ասում է անգլիացի գրող Ջորջ Օուրելը Բռնակալը պետք է կառուցեին իրենց ստի ու կեղծիքի կայսրությունը, պետք է իրենց սուտը դարձնեին գաղափարախոսություն, պետք է այդ սուտը դարձնեին իրենց անվտանգությունը ապահովվող վահան ու սուտը դարձավ պետության անկյունաքարը: *( « Ստել նշանակում է հայհոյել ճշմարիտը, ուրանալ նշանակում է դադարել մարդ լինել »: Գարեգին Նժդեհ )* Սերունդներին պետք է ներար-

կեին իրենց սուտը, որ Վազգենը սպարապետ է իսկ Վանոն Մեծությունը, իսկ Մանվելն Էլ զորավար: Չհաշված պատերազ-մի հաղթանակներին վերաբերվող սուտ լեգենդները որոնք հյու-սվեցին քրեածինների կենսագրական պատմության մեջ:
*( « Միևնույն մարդու մեջ չեն ապրում միաժամանակ ստրկամ-իտն ու ազատատենչը: Նա կամ մեկն է կամ մյուսը »: Գ. Նժդեհ )*
Նրանց անցյալի մութ ու սև օրերը ջնջեցին ամբողջությամբ, իրենց քրեական ու կուսակցական գործունեությունից ոչինչ չմնաց, միայն մնաց իրենց սուտ տիտղոսները ու « արքայակ-ան » ժառանգական գենը: Մի տեսեք ամեն փնթի ունի իր տիտղոսը ու անգամ **արիստոկրատական** գերդաստանի զին-անշանը: Մուկ Աբրահամյանը իր դդյակի ճակատին Արծիվը խորհրդանշող զինանշան է դրել՝ իրեն համարելով Արտաշես-յան դինաստիայի արժանի ժառանգորդը: Իսկ Փնթի Դոդի Գա-գո Ծառուկյանը իր առյուծի զինանշանով, իրեն համարում է Տիգրան Մեծի շառավիղը: Իսկ մնացածի մասին չեմ խոսում, անգամ ՕԵԿ - ի Արթուրիկը ու Կռազի շոֆեռ Մանվելի որոնք իրենց յուրահատուկ ընտանեկան գերբերը ունեն:
Ի՞նչ է ստացվում... Ուզում ենք պետություն կառուցել այդ աղ-բի ու կեղտի վրա, նույնիսկ ավազի վրա տան հիմք չեն դըն-ում, իսկ մենք աղբի վրա ուզում ենք պետություն կառուցել... Սփյուռքը նույնպես ապականվեց, քանի որ այդ փնթիները այն-տեղ նույնպես շատացան, քանի որ սուտը այնտեղ թագավոր-ում էր ու բարգավաճում: Դաշնակցությունը փոխարեն խոստ-ովաներ անցյալում գործած իր մեղքերը ու դավաճանություննե-րը, իրենց կոմունիստ գործակալներին դարձրեցին դաշնակցակ-ան էլիտայի մաս: Փոխարենը ինքնամաքրվելու, նրանք արդար-ացրեցին իրենց հանցագործ ու դավաճան ընկերներին:
Իրենց հանցանքների մասին լռեցին՝ քողարկելով ու ցեխ

շպրտելով իրենց սխալները մատնացույց անողների վրա: *( « Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս »: Հովհաննես Քաջազնունու՝ ՀՅԴ 1923թ )* Չարենցի ասած խոսքերը չեմ գրում կարծում եմ ծանոթ եք: Մենակ չասեք թե այդպես չէ… քանի որ Երիտ-թուրքերի հետ միասին ձեռք- ձեռքի տված դաշնակցությունը զինաթափում է հայ ռանչպարներին ու ֆիդայիններին: Անգամ փորձում էր զինաթափել Անդրանիկ Զորավարին ու Գարեգին Նժդեհին: *( « Քաղաքական ստախօսութիւն, հայհոյանք, կեղծիք, բանսարկութիւն, դաւեր - ահա՛ սրա « կուսակցաշէն գործունէութիւնը »: Ամէն ինչ կուսակցութեանս համար - ահա՛ սրա հասարակական բարոյականը: Անվերջ բարի խօսել իր կուսակցութեան եւ չար այլոց մասին – ե՛ւ ծիծաղելի է, ե՛ւ անարդար: Հոգեպէս անառողջ է նմանը: Չկայ աւելի մեծ չարիք, աւելի մեծ աղէտ ժողովրդի համար - մասնաւորապէս մեզ նման փոքրիկ ժողովրդի համար քան կույր կուսակցամոլութիւնը: Կուսակցամոլութեան չար ոգին աստիճանաբար մթագնում է սրանց բանականութիւնը, կլանում խիղճը, եւ, վերջ ի վերջոյ, ի սպառ սպանելով այդ դժբախտի բարոյական կարողութիւնները, դարձնում է սրան բարոյական ապուշ : Գարեգին Նժդեհ )* Ու ահա այս բոլոր սուտը ու կողծիքը հավաքվեց ու ինչպես ասում էր Վարդան Այգեկցին « Այրի կնոջ ու իր որդին » առակում: Այդ ամենը հավաքվեց դարձավ հեղեղ, եկավ ու թափվեց ժողովրդի գլխին:

Չէ մենք հայերս երբեք **Անկախ պետություն** չենք կարող ունենալ, քանի դեռ այս վիճակում ենք մնալու: Քանի դեռ չեն բացահայտվել ու պատժվել կեղծիքն ու սուտը: *( « Ամուր պետությունը կառուցում են բարոյականության հիմքի վրա, ոչ թե անբարոյականության »: ԳՀ )*

Իսկ գիտե՞ք ինչու Գերմանիան ու Ճապոնիան համաշխարային

պատերազմից հետո սկսեցին արագ զարգանալ… Որովհետև ժողովուրդները գիտակցեցին, որ իրենց բռնակալները ոչ միայն չարիք են եղել հարևան պետությունների ու ժողովուրդների համար, այլև իրենց սեփական ժողովրդի: Նրանք քննադատեցին ու անարգանքի սյունին գամեցին ժողովրդի գլխին չարիք դարձած իշխանավորներին: Իսկ մենք ինչ արեցինք, Վազգենի նման մոլագարին դարձրեցինք սպարապետ, Դեմիրճյանի պես սրիկային՝ ազգային հերոս, Մանվելի պես փնթի «Կոազի» շոֆեռին էլ զորավար, անգամ Արցախի հերոս: Գագիկ Հարությունյանի պես ճիճույին Սահմանադրական դատարանի դատավոր, սփյուռքահայերից գարշող Հրանուշ Հակոբյանին՝ Սփյուռքի նախարար, Հայ ժողովրդի մեծագույն **Թշնամի** Լևոն Տեր-Պետրոսյանին էլ դարձրեցինք ազգի փրկիչ… Այդ թվում, Հաստագլուխ Անդրանիկ Մարգարյանի պես անկուշտ կաշառակերին դարձնելով երջանկահիշատակ մեռել իսկ մանուկներ բռնաբարող հոգևորականին էլ Բարեհիշատակ՝ Դավիթ սրբազան:

Ու այդ ամենը մոռացանք, մոռացանք Գարեգին Նժդեհի խոսքերը. *«ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄԻՆ ՁԻՆԱԿԻՑ Է ՈՒ ԵՂԲԱՅՐ ԱՐՏԱՔԻՆ ԹՇՆԱՄՈՒ»:* Մոռացանք ճակատում որ ճակատում զոհվում էին ազնիվ հայորդիները, իսկ Նժդեհի ասած **Ազգի Տականքը** թիկունքից նրանց էր խփում, ներքին թշնամին ամեն ինչ արեց ոչնչացնելու ազատատենչ ազատամարտիկներին:

*( «ՀԵՐՈՍՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՁՈՀՎԵՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏՈՒՄ, ՀԱԿԱՌԱԿ ԴԵՊՔՈՒՄ ՆՐԱՆՔ ԱՆՏԱՆԵԼԻ ԵՆ ԴԱՌՆՈՒՄ»: վազգեն Սարգսյան Վիքիպեդիա )*

Ազգադավները ոչնչացրեցին ազատամարտիկներին որպեսզի անխոչնդոտ թալանեն ու կողոպտեն երկիրն ու ժողովրդին, արեցին ինչպես երիտթուրքերը՝ սկզբից աննկատ ոչնչացրեցին ժողովրդի պաշտպաններին, հետո անցան ժողովրդին: ՀՀ իշխա-

անությունները ազատամարտիկներին ոչնչացնում էին ժողովրդի լուռ անտարբերության ու համաձայնության ներքո:
*( « **Մեր բարյացակամ չեզոքության դեպքում իսկ, թրքությունը պիտ վարվեր մեզ հետ ճիշտ այն ձևով, ինչպես որ վարվեց** »: **Գարեգին Նժդեհ** )*
Եվ մենք այս ամենը անտեսելով փորձում ենք պետություն կառուցել, որտեղ իբր թե ժողովուրդը կարող է երջանիկ ապրել: Մինչև չմաքրվի այս աղբը, ոչ մեկ չի կարող երազել հզոր ու անկախ հայրենիքի մասին, քանի դեռ քաղաքական գործիչները ու հասարակությունը սա է, ապա երբեք էլ հնարավոր չի լինելու պետություն կառուցել: Իսկ այն ինչ ունենք հիմա դա պետություն չէ այլ սպանդանոց ու կառափնարան...
Ազնիվ ու արդար մարդիկ կարող են պետություն կառուցել ու այդպիսի մարդիկ կան ու շատ են թե հայրենիքում և թե սփյուռքում, սակայն նրանց պետք է միավորել և դա շատ դըժվար է, քանի որ Փնթիները ամեն ինչ անում են, որպեսզի այդ որակի մարդկանց ոչնչացնեն թե բարոյապես, թե ֆիզիկապես: Մենք գնալով ավելի ենք գլորվում անդունդը և այնտեղից ելնելը կպահանջվի հարյուրամյակներ, քանի որ եկող սերունդը այդ էլ ստրկամտության գաղափարը որդեգրում է սիրահոժար: Ինչպես ասում էր Ջորջ Օուրելը. « **Ավելի լավ է չորս ոտքի վրա, քան երկու** »: Իրենց տերերի համար դառնալով գործիք, իզուր չէ որ պատանի երկրապահներին երդվել են տալիս ոճրագործի շիրիմին, ստիպում են պատանիներին ծնկի գալ փնթի Կոազի շոֆեռի առջև, նրան համարելով հերոս ու զորավար: Այս տարբերակում մանուկները մեղավոր չեն, այլ մեղավոր են նրանց ծնողները, որովհետև իրենք լավ գիտեն, որ Մանվելը անտառաճանաչ ու փնթի ոչնչություն է, այնուամենայնիվ նրանք թույլ են տալիս **կոտել** իրենց զավակներին:

*(« **Գիտակից ստրուկի և հանցագործի մեջ չկա տարբերություն** »: **Գարեգին Նժդեհ** )* Իզուր չէ որ այդ փնթի Կռազի շոֆեռի լամուկները արագ զբաղեցնում են պետական բարձր պաշտոններ, իզուր չէ որ նրանք փորձում են իրենց ժառանգներին տեղավորել իշխանական բարձրունքներում, ապահովվելով նրանց բարեկեցին ու շռայլ կյանքը:

**ՆԵՊՈՏԻԶՄ** *(* [https://ru.m.wikipedia.org/wiki/Непотизм](https://ru.m.wikipedia.org/wiki/Непотизм) *)* այս բառը երևի գործածական չէ Հայաստանում, քանի որ այն նույնպես փորձում են արգելել ու դուրս շպրտել գործածությունից, որովհետև իրենց ձեռք չի տալիս: **Նեպոտիզմը** դա չարիք է ժողովրդի ու պետության համար: Շատերը չգիտեն թե իրենից ինչ է ներկայացնում Նեպոտիզմը: Դա նշանակում է Իշխանությունը հորից որդուն փոխանցել: Այսինքն հայրը որդուն փոխանցում է **<u>պետական պաշտոնը</u>**: *( Ոչ միայն հայր և որդի այլ մտերիմ բարեկամ, խնամի, քավոր ու սանիկ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՔԱՎՈՐ- ԽՆԱՄԻԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ, ՊԵՏՔ Է ՎԵՐ ԴԱՍԵԼ ԵՐԿՐԻ ՇԱՀԻՑ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀԻՑ »: ( ԱՐՍԵՆ ՁԱՎԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ 2015 © )* Իզուր չէ. որ ընդգծել եմ Պետական պաշտոն բառը, նորմալ պետության և հասարակության մեջ դա համարվում է արատավոր երևույթներից մեկը, քանի որ միայն թագավորական դինաստիաներում է ընդունված գահակալական տիտղոսը փոխանցել որդուն, սակայն պետական պաշտոնը երբեք: Իսկ Հայաստանի տարբերակում դա կոչվում է առաջընթաց, երբ հաստագլուխ Անդրանիկ Մարգարյանի տըխմար որդին՝ Տարոն Մարգարյանը ժամանակից շուտ՝ ԷՔՍՏԵՌՆ կարգով ավարտելով դպրոցը, վարչապետ պապայի հովանավորությամբ հասցրեց արագ մագլցել իշխանական սանդուխքով մինչև Երևանի քաղաքապետի պաշտոնին: Չհաշված, որ բանակ չծառայելով արժանացավ Պաշտպանության նախարարի

կողմից մեղալների ու պատվոգրերի չմոռացան անգամ ԵԿՄ - ի գլխավոր ենիչերի կողմից արժանացավ պատվավոր Երկրապահ տիտղոսին, երբ այս դեպքում Արցախում մարտնչած շատ ազատամարտիկներ անգամ հասարակ տեղեկանք չունեն, որ մասնակցել են պատերազմին: ( *Միևնույն մարդու մեջ չեն ապրում միաժամանակ ստրկամիտն ու ազատատենչը: Նա կամ մեկն է կամ մյուսը: Գարեգին Նժդեհ* )

Ի՞նչ է նշանակում սա պետական դավաճանություն չէ, ասացեք այսպես կվարվեր միայն երկրի ու ժողովրդի թշնամին միայն, կեղծելով նորօրյա պատմությունը, ջնջելով իրենց հանցանքի արյունոտ էջերը: ՈՒ այդ կեղծիքը ու խաբեությունը շարունակվում է արդեն քանիհինգ տարուց ի վեր, սերունդներ են մեծացել այդ ստի ու կեղծիքի վրա, և դժվար է լինելու հետագայում ապացուցել որ մանկելի ու վազգենի պես տականքները ժողովրդի ու պետության թշնամիներն են, ոչ թե հերոսները: Իզուր չէր, որ Վազգենի հանցագործ եղբորը` Արմեն Սարգսյանին դարձրեցին Պաշտպանության նախարարի խորհրդական ու անգամ ազատամարտիկ, երբ նրա հոգուն կան անմեղ զոհեր ու հսկայական հանցանքների մի շարք, որոնց մեջ էր ամենածանր հանցանքներից մեկը` պետական դավաճանությունը: ( ***« Երկրի քրեական օրենսգրքում չկա որեւէ հոդված, որին հանցակից չէր Վազգենի կեղտոտ ձեռքը: « Մտորումներ « Պազոլինի » -ից հետո » գրքից Արտյոմ Խաչատրյան*** ) Սակայն նրանք իրենց հանցանքները պարտակում են ինչպես ասում էր Վազգեն Սարգսյանը « **ՄԵՐ ԴԵՄ ԽԱՂ ՉԿԱ** »: Այո նրանց դեմ խաղ չկա քանի որ իրենց ճանապարհին կանգնող մարդկանց այդ թվում Մոնթե Մելքոնյանին ու ԱՍԱԼԱ-յի մի շարք մարտիկների ոչնչացրեցին դաժանաբար:

Այդպես անում են առ այսօր իզուր չէ, որ շարունակվում են

տիտղոսներ ու մեդալներ տալ Մուկ Աբրահամյանի, Լիսկա Խաչ-ատրյանի, Գալուստ Սահակյանի, Մանվելի ու Սեյրան Սարոյա-նի թուլերին ու ամենակարևորը, որ ամիջապես կարճ ժաման-ակում պետական սանդուխքով հասնում բարձր պաշտոնների կազմելով իշխանական էլիտայի մաս:
Ի՞նչ է նշանակում, Վազգենի ասած խոսքը հիշելով, *«ՈՐ ԸՆԴ-ԻՄՈՒԹՅՈՒՆԸ 100 ՏՈԿՈՍ ՁԱՅՆ ԷԼ ՍՏԱՆԱՐ, ՆՐԱՆ ԻՇԽԱ-ՆՈՒԹՅՈՒՆ ՏՎՈՂ ՉԿԱՐ»*: *( 1996 Թ )*
Ինչպես տեսնում ենք **Նեպոտիզմը** խոր արմատներ է գցել մեր երկրում, ինչպես կասեր Արմեն Զավենովիչ Սարգսյանը. *«ԸՆՏԱՆԵԿԱՆ ՔԱՎՈՐ- ԽՆԱՄԻԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ, ՊԵՏՔ Է ՎԵՐ ԴԱՍԵԼ ԵՐԿՐԻ ՇԱՀԻՑ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀԻՑ»*: *( ԱՐՄԵՆ ԶԱՎԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ 2015 ©)*
Խորհրդային միության ժամանակներում **Նեպոտիզմը** գործում էր, սակայն դա պետության մեջ համակարգված չէր ինչպես եղավ 1990 թվականից հետո: ՀՀՇ վերնախավի եռյակը՝ Լևոն Տեր-Պետրոսյանի, Վանո Սիրադեղյանի ու Վազգեն Սարգսյանի եղել են երիտթուրքերի եռյակի՝ Էնվերի, Թալիաթի ու Ջեմալի գործի շարունակողները, ժամանակը հաստատեց, որ դրանք նույն ոճրագործներն են ինչ եղել են անցած դարասկզբին: 1990 -1993 ԹԹ հատվածում մեկ միլիոնից ավելի հայեր տար-ագիր եղան ենթարկվելով **սպիտակ սպանդի**:
Իսկ իշխանական էլիտան խրախճանքների մեջ էր իր ձեռքին կենտրոնացնելով պետության ու ժողովրդի ռեսուրսները: Վազգեն Սարգսյանի եղբայրեների ու մտերիմների արագ հարստանալու փաստերը, Լևոն Տեր-Պետրոսյանի ու Վանո Սիրադեղյանի հար-ազատների մտերիմների անպատիժ գործելու իրավունքները՝ ան-ձեռնամխելիությունը: Եթե կազմենք Հայաստանի սոցիալտնտե-սական ատլասը կստացվի հետևյալ պատկերը: Լևոն Տեր-Պետ-

րոսյան եղբայրները Թելման և Պետրոս Տեր-Պետրոսյանները իրենց ձեռքին էին կենտրոնացրել Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր խոշոր գործարանները սկսած հաստոցաշինական ու մեքենաշինական գործարանները այդ թվում գիտահետազոտական ինսիտուտներն ու լաբորոտորիաններ:

Միայն Նաիրիտ Գործարանի փակման համար միայն Թելման Տեր-Պետրոսյան ԱՄՆ « Դյուպոն » ընկերությունից 400 միլիոն դոլար է վերցրել: Այդ թվում բանկային ու տարադրամի փոխանակման մենաշնորհը, արտաքին ներկրման ու արտահանման որոշ ապրանքատեսակների մենաշնորհները սփյուռքի բարերարների կողմից փոխանցվող գումարների ու հասարակական, բարեգործական հիմնարկների շահույթը:

Վանո Սիրադեղյանի « Կլանը » հանձինս Գրզո՝ Խաչատուր Սուքիասյանը իր ձեռքին էր պահում Երևանի կենտրոնի տոնավաճառների ու կայանատեղերիների ռեկետը՝ մենաշնորհը, այդ թըվում նրան տրված էր որոշ տնտեսական ու կենցաղային ապրանքատեսակների ներկրման մենաշնորհները, մոնոպոլիզացված մի քանի ճյուղերը արագ եկամուտ էին բերում, Վանո Սիրադեղյանի հովանավորության տակ էին նաև որոշ քրեական հեղինակություններ որոնք զբաղվում էին ռեկետով ու կողոպուտով: Չհաշված այն որ Սիրադեղյանի « **կլանի** » ձեռքին էր Հայաստանի հյուսիսարևմտյան ողջ հատվածը՝ իրենց գործարաններով պանրի ու պահածոնների գործարաններով, Բագրատաշենի անցակետը նույնպես պատկանում էր նրան անցակետով ներմուծվող հարկերը այդ կլանին էր: Վանո Սիրադեղյանը պետական իշխանական լծակները օգտագործում էր որպեսզի արագ եկամուտներ ստանան, քանի որ դատական ու ուժային կառույցներում բոլորը Կոմունիստական կուսակցական նախկին կադրերն էին, ուստի Վանոն նրանց տալիս էր մեծ հնարա-

վորություններ, հասկանալով, որ ինքը անզոր է կոմունիստական- ան կադրերի դեմ պայքարել: Վազգեն Սարգսյանի « **կլանը** » հիմնականում Երկրապահ Կամավորականների վրա էր հիմնված, ՀՀՇ -ական երկրապահ ջոկատների քրեական անցյալ ունեցող մարդիկ էին, որոնց հայրենասիրությունը սկսում էր ամորձիներից և վերջանում էր որովայնով: Այդ փնթի տեսակն էր, որ պետք է դառնար հայկական բանակի նոր գեներալիտետի հիմնայունը: Վազգենի կլանին էր պատկանում պաշտպանության համակարգի ողջ միջոցները, այդ թվում նաև ազատագրված տարածքների թալանը, նրա ընտանիքի անդամներին ու մտերիմներին էին պատկանում Արարատյան դաշտավայրի բոլոր խոշոր գործարանները ու հիմնարկությունները՝ Արարատի ցեմենտի գործարանից սկսած վերջացրած պահածոների ու գինեգործական գործարանները: Դրան կարելի գումարել Արմավիրի մարզը, Վայքը ու Սյունիքի ողջ հատվածը, այդ թվում նաև Մեղրի -Իրան անցակետը: Վազգենի կլանին ձեռքին էր Իրան արտահանվող գունավոր և անգույն մետաղների մենաշնորհը, Իրանից ներկրվող՝ Մեղրու անցակետով ներկրվող բոլորը ապրանքատեսակների հարկերը ու եկամուտները: Ի տարբերություն Վազգենը ավելի անկուշտ էր ու դաժան քան Լևոն Տեր-Պետրոսյան ու Վանո Սիրադեղյանը, իզուր չէր Վանո Սրիադեղյանը ասել. « Որ եթե ես բերանս բացեմ, կստացվի, որ ես Վազգենի համեմատ անմեղ հրեշտակ եմ »: Վանոն նկատի ուներ Վազգենի կողմից կազմակերպված **ազատամարտիկների սպանդը**, և դա որպես գլխավոր խաղաքարտ էր պահում իր ձեռքնի, այդ էր պատճառը, որ Վազգեն Սարգսյանը ամեն ինչ անում էր, որպեսզի Վանոն չխոսի:

Իսկ կհարցնեք թե ինչու՞ Վանո Սիրադեղյանը Վազգենի մահից հետո չխոսեց: Չմոռանանք, որ Վազգենի բացահայտումը ժողո-

վրդին կարող է շուռ տալ ողջ **իշխանական էլիտայի** դեմ, քանի որ հենց Արմեն Սարգսյանի ասած Քավոր-խնամիական կապերով շաղգապված այդ քրեածին էլիտան Վանոյին թույլ չի տալիս խոսել: Մենաշնորհները որոնք գտնվում էին էլիտայի ձեռքում արվում էր հենց **Նեպոտիզմի** սկզբունքով, իզուր չէ, որ նախկին ու ներկա պաշտոնյաների թույլերը ամուսնական ու քավոր սանիկական կապով շաղգապված են միմյանց հետ, դա հնարավորություն է տալիս միշտ մնալ իշխանության վերին օղակներում: Իզուր չէ, որ պաշտոնյաների զավակները ապահովված են առանձնատներով ու սեփական շահույթաբեր բիզնեսներով, բանկային խոշոր հաշիվներով, անգամ օտարերկրյա անձնագրերով:

Մինչ ժողովուրդը տառապում է **Ծահագործող դասակարգի** ճիրաններում՝ իրենց հանապազորյա հացը մուրալով, իշխանական էլիտան զբաղված է սահմանադրության փոփոխություններով հաստատել Նեպոտիզմի օրինականացումը ու նրա անձեռնամխելիությունը ապահովվելու համար: Այսինքն օրենքի ուժով ամրագրել իրենց և իրենց ժառանգների իրավունքները, թալանված և կողոպտված միջոցների անձեռնամխելիությունը: Իսկ չքավորների զավակները զոհվում են սահմանին, ժողովուրդը խոշտանգվում է ու հալածվում:

Ասացեք արդյոք հնարավո՞ր է երկիր կառուցել այս խաբկանքի ու գարշանքի վրա... Ինչպես կասեր օղորմածիկ Գագիկ Ծամշյանը. « Այս ճիվաղները ոչնչի ընդունակ չեն, բացի սպանելուց ու հաճույք ստանալուց »: Իմիջայլոց այս փնթի Ծամշյանը եթե համարվում է լրագրող, ապա հենց այդ աղբակույտի շնորհիվ, քանի որ նրանք փորձում են այս տեսակ փնթի լրագրող կոչվածների շնորհիվ ժողովրդի աչքին թոզ փչեն, որ մեր պետությունը հզոր է իսկ բանակը անպարտելի:

Իրականում այդ ամենը սուտ է, ոչինչ է քան մի փուչիկ, որը օրերից մի օր պայթելու է: Իսկ գիտե՞ք թե այդ սուտ պետության մեջ ամենավտանգավոր երևույթը որն է... Դա Մտավոռականությու՛նն է... Ճիշտ է գրված, մի մտածեք թե սխալ եմ գրել բառը: Քանի որ Մտավորականությունը բառիս բուն իմաստով վաղուց դարձել է **Մտավոռական,** այն օրից երբ Հրանտ Մաթևոսյանի պես տխմարը Վազգենի ու Վանոյի մասին գովերգեց. « **Թե սիրում է Վազգենին, իսկ Վանոն Էլ իր երկրորդ սերն է** »: Ինչևիցէ մտավորականների հետ կարելի է գումարել աստվածապիղծ հոգևորականությանը, որը Հուդայի նման երեսուն արծաթով հոգին ծախեց սատանային: Ճիշտ ասած Կաթողիկոս Գարգին - Բ ն Վազգեն Սարգսյանին 30 հազար դոլար էր խոստացել կաթողիկոսական գահը ժառանգելու համար, դրա փաստագրական տեսանյութերը անգամ համացանցում կան: Չհաշված այն փաստերը, որոնք համոզում էին Վեհարը կրող այդ փնթիներին արատավորել ու պղծել ոչ միայն հայկական եկեղեցին այլև հավատը: Աստվածապիղծ հոգևորականները ետ չէին մնում **Ազգադավ** իշխանավորներից... Սկսած մանուկների բռնաբարությունից, վերջացրած փողերի լվացումով ու օվշորային խարդախություններով: Բոլոր բնագավառներում նրանց կեղտոտ ձեռքն էր, արտասահմանյան բանկերում միլիոնները թաքցնելով ժողովրդից, երբ հազարավոր մանուկներ լուսացնում են բաց երկնքի տակ, երբ դեռ 1988 -ի երկրաշարժի աղետյալները բնակվում են թիթեղապատ հյուղակներում: Չհաշված Բաքվի ու Սումգայիթի, Շահումյանի ու Արծվաշենի փախստականները, որոնք արդեն քանիհինգ տարի է մոռացված են ու մատնված անտարբերության: Իսկ եկեղեցաշինությանը հորդորող հոգևորականներից ոչ մեկ, չմտածեց, որ ժողովուրդը ավելի շատ հացի ու տանիքի կարիք ունի քան

եկեղեցիների, որ ժողովուրդը ավելի շատ Աստծո սիրո կարիք ունի, քան թե անտաշ թալանչիների: ( *Փողի մեռած հոգևորական-անը, հոգեպես մեռած է: Ազգադավ իշխանություններին սատարող եկեղեցին, աստվածապիղծների որջն է: ԳՀ © ԱՌ 2014* ) Եկեղեցին նույնպես թևակոխեց **Նեոպոտիզմի** դարաշրջան, Գարեգին Բ -ն Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի նախկին առաջնորդ Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանին ( *ավազանի անունը՝ Ղազարոս Կյուրեղյան* ) 17/06/ 2001 գահընկեց արեց, իսկ փոխարենը այնտեղ նշանակեց իր հարազատ եղբորը՝ Եզրաս արք. Ներսիսյանի:

Շատերը հիշում են 1996-09- 25 Ռազմական հեղաշրջում իրականացնելուց հետո, Վազգեն Սարգսյանը հայտարարել էր. « *ԸՆԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ 100 ՏՈԿՈՍ ՁԱՅՆ ԷԼ ՍՏԱՆԱՐ, ՆՐԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՎՈՂ ՉԿԱՐ* »: Առհասարակ նա այդպես էլ նախատեսել էր, չնայած մոռացել էր որ հայ ժողովրդի ցասումը ու ատելությունը կարող էր Վրիժառու Նաիրի Հունանյան ծնել: Մի խոսքով այն ինչ եղավ հոկտեմբերի 27 - ին ոչինչ չփոխեց. քանի որ մնացին նույն խաղացողները, նույն կանոնները ու նույն ոճը: Նեոպոտիզմը դարձավ պետական իշխանության գլխավոր առաքելությունը վերարտադրվել ու պահել իրենց իշխանությունը անկախ թե ինչպես այլ կդրսևորվի՝ անգամ կրակելով ժողովրդի վրա: ( « *Հայոց պատմությունը մեզ մի բան է սովորեցնում, այն որ հայը իր պատմությունից բնավ չի սովորում* »: *Գարեգին Նժդեհ* ) Շատերը հիշում են 2008 թվականի մարտի մեկը. Սակայն մոռանում են, որ այդ ավանդույթ դրեց ինքը՝ Վազգեն Սարգսյանը 1996 թվականների սեպտեմբերի – 25 ին Բաղրամյան պողոտայի վրա բանակը ու Երկրապահը կրակեց ժողովրդի վրա: ( *Ով են գեներալներ մանկլեները ու սեյրաները: Սրանք այն տականքներն են, որոնք ղեկավարվում էին բռնար-*

*արված ընտրությունների ապետ սարգսյան վազգենի կողմից: ԻՆՉՈՒ ՍՊԱՆԵՑԻՆ ՄՈՆԹԵԻՆ, ԲԱՅՑ ԿԵՆԴԱՆԻ ԹՈՂԵՑԻՆ « ԳԵՆԵՐԱԼ» ՄԱՆՎԵԼԻՆ հոդվածից « Լույս Աշխարհ » ԿԱՅՔ )*

Նորից զոհեր ու արյուն... Սակայն իշխանությունները մաքրեցին իրենց կեղտերը ու հետքերը: Այնպես ջնջեցին, որ ժողովուրդը չհիշեց Վազգենի **ՈՉ ՎԱՂ ԱՆՑՅԱԼՈՒՄ** գործած ոճիրները, անգամ հոկտեմբերի 27 - ին արտասվում էին ազգովի Վազգենի դիակի առջև: Այնպես ջնջեցին, որ ազգովի 2008 -ին գոռում էինք « **Լևոն նախագահ** »: *( Չնայած մինչև հիմա էլ շարունակում են գոռալ: )* Մի խոսքով, այն ինչ եղավ, շարունակվում է հիմա, ինչպես ասում են ՀԻՆԸ՝ ՆՈՐՈՎԻ:

*( « Դա մի սարսափելի եղեռնագործություն է, սպանել պատմությո՜ւնը: Դա ամենամեծն է բոլոր հանցանքներից: Նրանք կամենում են ոչնչացնել մեր նախնյաց գործերը և հավիտենական մոռացությա՞ն մե՞ջ թողնել մեր հայրենիքի հիշատակները, որպեսզի իրանց վատ գործերն էլ նրանց հետ ծածկվեն, մոռացվեն և ապագայի համար ամոթի ու նախատինքի առարկա չդառնան: « Դուք արժանի՜ եք ձեր վիճակին, որ ինքներդ եք պատրաստել ձեր համար... Նա մեղավոր չէ, որ այրում է և մորթում է... Կամ մահ և կամ կյանք... » Րաֆֆի Ջալալեդի )*

Նույն կեղտը, նույն աղբը, նույն գաղշահոտությունը սփյուռքում ու հայրենիքում, նույն քաղաքական էլիտան, նույն սատվածապիղծ հոգևորականները և նույն տառապյալ ժողովուրդը:

Իսկ գիտե՞ք թե այդ համակարգի թշնամին ովքեր են. **Ճշմարտությունը, Վկաները, Պատմությունը ու Արդարադատություն պահանջողները**: Դե դրան գումարած նաև ես՝ Առաքելը որը համարվում է Ադրբեջանի գործակալ, Թուրքիայի դիվերսանտ ու անգամ Մասսոնական Ձհուդ: Ճնայած, որ ՀՀ բարձրաստիճան պաշտոնյա այդ թվում նախկին վարչապետ Տիգրան

Սարգսյանը ու կաթողիկոս Գարեգին Բ-ն, երջանիկ ժպիտով լուսանկարվում են Թուրքական « Գորշ Գայլերի » ահաբեկիչնե-րի հետ ու իրենք դավաճան չեն, դավաճան են Շանթ Հարու-թյունյանը, Վոլոդիա Ավետիսյանը, Վարդգես Գասպարին ու ինչու չէ ե՛ս:



Վերջերս դիտում էի Ադրբեջան փախած Վահան Մարտիրոսյա-նին վերաբերող նյութերը համացանցում, ողջ մեդիան գրում է, որ նա դավաճան է ու Ադրբեջանի գործակալ...
Գիտե՞ք թե ինչու, որովհետև մարդը փորձում էր ժողովրդի ճիշտն առաջ տանել, ինչպես ասում էր փնթի կռազի շոֆեռը, « իրենցից Աչոտ էր ուզում »: Իսկ գիտեք՞ որ ժամանակին ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը անձամբ է նրան Շնորհակալական պատվոգիր տվել, անգամ նրան հայտ-արարել են ազատամարտիկ « Հայկական Լեգիոն » ջոկատի ան-դամ, ( *Չնայած պատերազմի ժամանակ առհասարակ այդպիսի ջոկատ չի էլ եղել:* ) չհաշված, որ նրա մեջքին կանգնած են եղել « Լեգենդ » դարձած Աղասի Կարապետյանը, նորին մեծու-թյուն՝ ազգային ժողովի պատգամավոր Աշոտ Աղաբաբյանը

( Բուռնաշը ) Չհաշված, որ Վահան Մարտիրոսյանը քաղաքական դաշտում շփվել էր բարձրաստիճան պաշտոնյաների հետ:
Ու հանկարծ միանգամից նա դարձավ ադրբեջանցի գործակալ: Նրա Ադրբեջան փախնելը նշանակում է, որ Հայաստանում չըգտնվեց գեթ մի մարդ, որը կարող էր պաշտպանել նրա երեխայի ու կնոջ անվտանգությունը: Դա հայ ժողովրդի անտարբերության ու առհամարանքի պատասխանն էր, որոնք չցանկացավ պաշտպանել հայ կնոջը ու երեխային, սակայն քարկոծելուց լավ քարկոծում ենք: *( « Մեր բարյացակամ չեզոքության դեպքում իսկ, թրքությունը պիտ վարվէր մեզ հետ ճիշտ այն ձևով, ինչպես որ վարվեց »: Գարեգին Նժդեհ )* Հասարակությունը անտարբեր գտնվեց Վահանի կնոջ ու երխայի հանդեպ, անտարբեր եղան նույնիսկ Շանթ Հարութունյանի անչափահաս որդու՝ Շահեն Հարութունյանի նկատմամբ իրականացված հանցագործության դեմ, անտարբեր եղան ազատամարտիկներ՝ Վոլոդիա Ավետիսյանի ու Սուսաննա Մարգարյանի, այդ թվում Վարդգես Գասպարի դեմ իրականացրած խոշտանգումների դեմ, այդպես անտարբեր եղավ երբ պատերազմի տարիներին թիկունքից ՀՀ իշխանությունները բարբարոսաբար ոչնչացնում էին ազգի հերոս տղաներին: Հասարակությունը անտարբեր եղավ երբ Նաիրի Հունանյանը գնում էր հանուն ժողովրդի ինքնագոհաբերության: Իզուր չէր Գարեգին Նժդեհը ասում. որ **Ապերախտ** ժողովուրդ ենք, որովհետև գնահատել չգիտենք նույնիսկ հերոսներին ու նահատակների շիրիմները անգամ պատմությունը, մեր մեծերին: *( « Ապերախտ ժողովուրդ » ՆԺԴԵՀԻ ԽՈՍՔԸ ՈՒՂՂՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԻՆ, 1920թ.-ի սեպտեմբերի 17-ին )*
Սակայն անտարբեր չենք բայաթի կանչող Արմենչիկին ժողովրդական արտիստի կոչում ստանալուց, անտարբեր չենք երբ Լևոն Տեր-Պետրոսյանի ու Դոդի Գագոն իրենց թուղթերին հարսան-

իք են անում, Միրուշոյի ու իր լամուկի մասին գովերգելով: Սակայն անտարբերության են վերաբերվում, երբ կռացի շոֆե-ռը իր փնթի հալով Զորավար Անդրանիկին էր նվաստացնում ու ծաղրում մոլագարի մեղալ տալով:

Հիմա ասացեք այս ընդհանուր պատկերի վրա իմաստ ունի՞ Վահան Մարտիրոսյանին դավաճան անվանել երբ ՊՆ նախար-արության բոլոր գեներալները ներառյալ ՊՆ նախարարով մի-իոններ են դիզել մեր զինվորների, որդեկորույս մայրերի արյան հաշվին, երբ քաղաքական ճիվաղները ( *Ըստ Գ. Ծամշյանի* ) միլի-ոնների մեջ լող են տալիս, Դուբայում ու Եվրոպական երկրնե-րում շքեղ առանձնատներ կառուցում, իսկ Հայաստանում ամ-են հինգերորդ երեխա թերաճ է, որովհետև տարվա մեջ անգ-ամ լիարժեք չեն սնվում: *( « Մի ժողովուրդ, որի որդիները հա-վասար չեն օրենքի եւ մահվան առջև՝ հաղթական հայրենիք չի ունենա »: Գարեգին Նժդեհ )* Երբ երկու տասնամյակից ավե-լի է երկրաշարժի գոտու աղետյալները թիթեղյա հյուղակների մեջ են ապրում: Իսկ Բաքվի Շահումյանի ու Արծվաշենի փա-խստականների մասին վաղուց արդեն մոռացել են: Իսկ Սիրա-յի պատերազմից մազապուրծ փախած Սիրիահայերին Հայաս-տանում կողոպտում են ու խոշտանգում, նույն այն կոմսոմոլի վիժվածքի ձեռքով, որը տասնամյակներ առաջ, հայտարարում էր թե. « Սփյուռքահայերին չպետ է Հայաստան թողնել »:

Հիմա ասացեք դավաճանը ո՞վ է Վահանը Մարտիրոսյանը թե՞ ե՞ս Առաքելը... Շանթը թե Վոլոդիա Ավետիսյանը, որոնք փորձում են ժողովրդին հասկացնել, որ ԹՇՆԱՄԻՆ ներսում է: Այնքար տխմար գտնվեցինք, որ նույնիսկ չկարողացանք հասկ-անալ, որ թշնամու դուդուկի տակ պար ենք գալիս ու մեր զավակներին էլ պատանի երկրապահ դարձնելով մատաղ ենք անում ԵԿՄ - ի ենիչերին:

*( « Մեր պատմությունը լեցուն է դավաճանության փաստերով: Պարսիկների, հույների, արաբների, սելջուկների կամ մոնղոլների բանակները մեզ նվաճելուց առաջնորդվել են միշտ հայի ղեկավարությամբ: Հայերը միշտ կռվել են թշնամու հետ ուս-ուսի սեփական ժողովրդի դեմ »: ՐԱՖՖԻ )*

« **Վերջին Բոլշևիկի** » ոհմակը ինչպես արել էր մեկ դար առաջ, շարունակում է հիմա նույն ոճով, նույն դավադրությամբ, կոմսոմոլ Վազգեն ու Հրանուշ, Կոմունիստ Սերժիկ ու Գագիկ Հարութևնյան ու Աղվան Հովսեփյան ու Ռոբերտ Քոչարյան:

*( « Էսօր ով հելնում ա Սերժի դեմ, ուրեմն հելնումա Վազգենի դեմ »: Մանվել Գրիգորյան © 31/12/2014 )* ( ***« Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը « սպարապետի » հետ համեմատած հիրավի հրեշտակներ են »: « Ազգային գաղափար » ամսագիր:*** )

Նույն բոլշևիկներն ու չեկիստները իրենց կեղծիքով ու ստով...

***« Փնտրեք հայի սուրն այնտեղ որտեղ հայի արյուն է թափվել »: Րաֆֆի***

Ասացեք մի՞թե հնարավոր է երկիր կառուցել, երբ արդարությունը բարձրաձայնող մարդուն դավաճանի պիտակ են կպցնում, մի՞թե հնարավոր է պետություն կառուցել այդ ստրկամիտ հասարակության հետ, մի՞թե հնարավոր է խոսել ճշմարտությունից երբ գիտենք, որ այդ ամենը սուտ է, որ փարիսեցիների պես իրար են ծախում ու դավաճանում, երբ արդարությունը դառնում է արդեն դատապարտելի ու վտանգավոր: Երբ ժողովուրդը անտարբեր է որդեկորույս մայրերի արցունքը ու տառապանքը տեսնելիս, անտարբեր է ամեն օր սպանվող զինվորների հանդեպ, անտարբեր է խոշտանգվող մանուկների ու երկիրը թալանող անպատիժ իշխաններ հանդեպ: Անտարբեր են երբ թշնամին ոչնչացնում է մեր մշակույթը ու արվեստը, լեզուն ու գրականություն:

Նորը կառուցելու համար հարկավոր է հին աղբից ազատվենք, մաքուր էջից պետք է սկսելով, նոր հիմք է պետք, արդարության ու ազնվության վրա, նոր մարդիկ ազնիվ ու բարեխիղճ, Նալբանդյանը ասում էր. « Մեր քարոզած ճշմարտութիւնը փուշէ թէ կտրատում է ազգի սիրտը, բայց այդ սուրը միակ հնարն է փտած ու ճարակած խոցը առողջ մասերից բաժանելու եւ հեռացնելու համար »:

Գեհենի Առաքել 31/03/2016

*« Մինչեւ որ չկարողանանք ներքին թշնամին սպանել, անկարելի է, որ արտաքին թշնամուց ազատվել կարողանանք »:*
*Գարեգին Նժդեհ*

*« Այնտեղ որտեղ ճնշում կա, կլինեն նաեւ վախկոտություններ, ամբարտավանություններ ու զազրախոսությունը: Մարդը կարիք ունի ազատության որպեսզի հասկանա ազատության օգտակարությունը »:*
*Րաֆֆի*

*« Բաւական չէ՛ իր ազգի զաւակը լինել, պէտք է նաե՛ւ նրա հրաշունչ զինուորը լինել »:*
*Գարեգին Նժդեհ*

# ՀԱՅԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ ԼՈՒՍԱՎՈՐ ՄԱՐԴԻԿ

***« Մեր ժամանակներում աշխարհը ղեկավարում են անհատականությունները և ոչ թե գաղափարները »:***

***Ջորջ Օրուելի***

Ինձ միշտ հետաքրքրել է, թե ինչու՞ են հայերը բոլոր ժամանակներում եղել օտարների լծի տակ՝ Հույների, հռեոմեացիների, արաբների, թուրքերի և ռուսների: Որպես հոգեբան ուսումնասիրել եմ բոլոր հնարավոր աղբյուրները՝ փորձելով գտնել հարցի պատասխանը, սակայն հարցի պատասխանը տվեց ժամանակը, որպես ականատես ու վկա կարողացա համեմատել այն փաստագրությունը, ինչ ժառանգություն եմ ստացել մեծ ու հզոր բարեկամներից: Այո, ինչպես է, որ այսքան դարեր ապրել ենք օտարի լծի տակ, ու չենք փորձել կերտել ազատ անկախ պետություն կամ թագավորություն: Չնայած պատմությունը ուսումնասիրելիս չի երևում պատճառները: Փաստագրության մեջ չի նշվում էթնիկական ու ազգագրական տեսակի մասին, չի գրվում հոգեբանական խառնվածքի մասին: Չնայած հայ գրականությունը ուսումնասիրելիս կարող ենք եզրահանգումներ անել, քանի որ գրականության Տիտանների թողածը բավարար է հաստատելու ներկայացրածս գիտական փաստը: Այս գիտական թաստաթուղթը, որը ներկայացնում եմ, ոչ միայն իմ հայտնագործությունն է, այլ սա բացահայտումն է այն փաստագրության, որի ականատեսը եղել է Նարեկացին ու Խորենացին, Րաֆֆին ու Թումանյանը, Նժդեհն ու Անդրանիկը այդ թվում և մյուսները: Այդպես նրանց թողած ժառանգությունը վերաբերվում է

**Ազգային հոգեբանությանը**, հայի տեսակին, ներքին հուզումներին ու բնավորությանը, որը և բնորոշում է, թե ինչու ենք այդպես **Տխմա՛ր:**
Խնդրում եմ չվիրավորվել այս բառերց, քանի որ դա ասել է Թումանյանը և Իսահակյանը: Ինչևիցէ, այն որ տխմար ենք՝ փաստ է, սակայն Րաֆֆին ու Գարեգին Նժդեհը վստահ էին, որ այդ մռայլ տխմարության մեջ կան **Լուսավոր** դեմքեր, որ այդ լուսավոր դեմքերը կարող են կրթել ու սովորեցնել ժողովրդին ու ազգին ճիշտ ապրել: Ավելի ճիշտ կառուցել երկիրը ու պետությունը: Այնպես որ երևի մեր ազգին ոչ մեկ ավելի լավ չի ճանաչում, քան ես:
Այդպիսով հիմա ինքս ականատես եմ լինում Րաֆֆու ու Թումանյանի թողած ժառանգության փաստագրությանը:
Հետաքրքիրը, որ ներկայացնելով արձանագրված փաստաթղթերը, կարելի է հետադարձ հայացքով նայել մեր անցած ողջ պատմությանը:
*Փաստագրություն* Ա. Ինչու՞ ենք դարերով մնացել օտար ժողովուրդների ու ցեղերի լծի տակ, ինչու՞ չի եղել պայքար, նկատի ունեմ ժողովրդական պայքար:
Հիմա կրկին մեջ բերեմ Րաֆֆու ներկայացրած պատճառները իր ժամանակահատվածի և անցյալի մասին: Վիպասանը ներկայացնում էր, որ տգիտությունը ու կղերապաշտությունն էր ժողովրդին դարձրել ստրկամիտ: Սնահավատությունը ու վախը նրան դարձրել էր բթամիտ:
Ահա միայն սա, չնայած կրկնում եմ Թումանյանը, Գարեգին Նժդեհը անգամ Նարեկացին ու Խորենացին, Չարենցը ու Սևակն գրել են այս թվարկածս փաստերի մասին: Ուրեմն այսօրվա իրականության ականատեսը բոլորս ենք, « Սասնա Ծռերի » տղաները այն լուսավոր դեմքերն են, որոնց մասին հիշ-

ատակում էին մեր Մեծերը: Իսկ հայ ժողովուրդը, որը չի կարողանում ճշմարիտ ճանապարհով գնալ, որովհետև պակասում է գիտելիքը ու կրթությունը, սնահավատները նստած համակարգիչների դեմ պայքարի կոչեր են անում, չհաշված վախեցած ամբոխը գոռում է. « *Ամոթ ոստիկաններին* » իսկ ազգի տականքը մահակներով ժողովրդին է ահ ու սարսափի մեջ պահում: Չհաշված ներքին Թշնամին, որի մասին ասում էր Գարեգին Նժդեհը. « **Ներքին թշնամին զինակիցն է ու եղբայրը արտաքին թշնամու** »: Հենց այդ **Ներքին թշնամին** է, որը բազմել է իշխանական բուրգի վերին մասում, ու փորձում է տականքների ձեռքով սպանել ու խոշտանգել ժողովրդին: Չնայած ոչ թե փորձում է, այլ խոշտանգում է ու սպանում արդեն քանիհինգ տարուց ավելի է: Այդպիսով ժողովրդի **Տգիտությունը** ( ըստ Րաֆֆու ), թույլ չի տալիս կողմնորոշվել, թե ինչպես կարելի է թոթափել օտարի լուծը, իսկ կղերական անասունները, այս դեպքում օլիգարխիկ հոգևորականությունը, ( *այն ժամանակ նույնպես, գրում է Րաֆֆին* ), ժողովրդի հոտը ուղեկցելու փոխարեն, կառուցում էին վանքեր ու եկեղեցիներ, փնթի իշխանները ու մելիքները՝ ամրոցներ ու ճանապարհներ կառուցելու փոխարեն նորից եկեղեցի էին կառուցում ինչպես հիմա: Հենց այդ աստվածապիղծ հոգևոր հայերը ամեն հնարք գործի էին դնում, ժողովրդին խավարի, տգիտության ու հնազանդության մեջ պահելու համար: « **ՀԱՅԸ ՀԱՅԻ ԱՐՅՈՒՆԸ ՉԻ ԹԱՓԻ** »: Այս տխմար կարգախոսը հենց նրանց ապուշությունն է: Իսկ ինչ է նշանակում այս հիմարությունը: Ուրեմն կարելի է օտարի արյունը թափել, բայց սեփական ժողովրդի արյունը լափող իշխանինը՝ ո՛չ: Լավ, եթե այդպես է, ինչու՞ այդ դեպքում օտարների արյունը նույնպես չփորձեցիք թափել, քանի որ այդ կարգախոսը արդեն իմաստազրկված է եղել

բոլոր ժամանակներում, սակայն տգիտությունը մեր պարանոց-
ին է փաթաթել այդ անասունների ասած էշությունը: Րաֆֆին
ասում էր. « **Փնտրեք հայի սուրն այնտեղ, որտեղ հայի արյուն
է թափվել** »: Կնշանակի օտարը ավելի լավ է մեզ ճանաչում,
գիտի մեր կղերական անասունների կարգախոսը, ու իր սև
գործը անելու համար, օգտագործում է մեր ներքին թշնամուն՝
այդ վայ հայերի ձեռքով է անում այն, ինչ պետք է աներ ինքը,
ու գիտեն որ մենք ուղղորդվում ենք. « ՀԱՅԸ ՀԱՅԻ ԱՐՅՈՒՆԸ
ՉԻ ԹԱՓԻ » կարգախոսով: *( « Ներքին թշնամին զինակիցն է ու
եղբայրը արտաքին թշնամու »: Գարեգին Նժդեհ )* Ինքներդ տես-
եք, հիմա նույն պատկերն է, **Ներքին թշնամին**՝ այս դեպքում
իշխանական ողջ **Էլիտան,** վերից - վար, այդ թվում նաև հոգև-
որականությունն ու մտավորականությունը, որը խոշտանգում է
ու սպանում ժողովրդին, արդարացնում է իր ոճիրները՝ փորձել-
ով հաճոյանալ ռուսներին: Սարի Թաղի բախումների ժաման-
ակ իզուր չէր ոստիկանը մեծ ոգևորությամբ ասում որ. « Ռուս-
ները գալու են, որ Սասնա Ծռերին փրթեն »: *( « Չկան անտակ-
անք ազգեր, բայց հայ տականքը կմնա անմրցելի »: Գարեգին
Նժդեհ )* Իսկ մենք մտածում ենք, թե Հայը հայի արյուն չի
թափի: Նրանք մեզ սպանում են ու մենք « **Ամոթ** » գոռալուց
ոչնչի ընդունակ չենք, Ու այդպես ամբողջ դարաշրջաններում,
ասել ենք « Ամոթ » ու մնացել ենք օտարների լծի տակ:
*( « Մեր պատմությունը լեցուն է դավաճանության փաստերով:
Պարսիկների, հույների, արաբների, սելջուկների կամ մոնղոլների
բանակները մեզ նվաճելուց առաջնորդվել են միշտ հայի դեկա-
վարությամբ: Հայերը միշտ կռվել են թշնամու հետ ուս-ուսի
սեփական ժողովրդի դեմ »: ՐԱՖՖԻ )* Թոխմախի միհրների ու
Ծմայսներին օգտագործելով սեփական ժողովրդի դեմ, բռնակալ-
ները ժողովրդին հյուծեցին ու հալածեցին բոլոր դարերում, մեզ

արգելեցին արյուն թափել, որովհետև իրենք կարող էին ժողովրդի արյունը թափել ու անպատիժ մնալ, իսկ ժողովուրդը իրավունք չուներ հակառակը անելու: Ժողովուրդը անգամ իրավունք չուներ արդարություն ու ազատություն պահանջել, որովհետև **տերերը** արգելեցին նրան զենք վերցնել ու պայքարել:
Դարեր են անցել, սակայն մեր ժողովրդը մնացել է նույն հոգևարքի մեջ, մի պահ Խորհրդային Հայաաստանում մեծացած և կրթություն ստացած սերունդը հասկացավ որ, իրենց պապերը սխալ են ապրել, տգիտությունը պապերին հնարավորություն չի տվել ազատության բերկրանքը զգալ: Այդ պատճառով էլ Արցախյան պատերազմը հաղթեցին՝ գիտակցելով, որ թշնամուն կարող են հաղթել իրենց գաղափարով ու կամքով: Սակայն Հայաստանի անկախությունից հետո, Հայաստանի իշխանությունները ամեն ինչ արեցին ժողովրդին վերադարձնելու միջնադարի խավարն ու տգիտությունը, սնահավատությունն ու վախը: Այդպես համատարած տգիտության մեջ փնթիները կարող էին ավելի հեշտ կառավարել ժողովրդին, ինչն էլ և արեցին: Խեղաթյուրելով մեր պատմությունը, հերոսներին ու ամեն ինչ գլխիվայր ներկայացրեցին եկող սերունդներին: Ու համատարած տգիտության արդյունքում ունենք այն, ինչ կա « **Ամոթ Ոստիկանին** », ահա այս բառը, որը կրկնեցինք բոլոր դարերում, « **Սերժիկ Հեռացի՛ր** » այս բառը նույնպես մնաց ժառանգություն անցյալ դարերից: ( « **Այնտեղ որտեղ ճնշում կա, կլինեն նաեւ վախկոտությունն, ամբարտավանությունն ու զազրախոսությունը: Մարդը կարիք ունի ազատության, որպեսզի հասկանա ազատության օգտակարությունը** »: **Րաֆֆի** ) Ու այդպես հավիտենական պայքարը ոչինչ չի ծնում, միայն ստրկամիտ ու հուսալքված սերունդ, որը համակերպվում է իր վիճակին, որը դառնում է համբակ, բառիս բուն իմաստով, որը և ինքնստինք-

յան մարմնավաճառից ոչնչով չի տարբերվում, նույնիսկ ավելի վատը: Մեր անցած դարերի պատմության նկարագիրը տեսնում ենք հիմա, որովհետև Պավլիկյան ու Թոնդրակյան շարժումները կոչեցին աղանդավորական, մինչդեռ նրանք պայքարում էին ազատ ապրելու համար, պայքարում էին մարդավայել ապրելու համար: Կանցնեն ժամանակներ ու կեղտարյուն պատմաբանները այս « **Սասնա Ծռերի** » **ապստամբությունը** կանվանեն ահաբեկչական, չնայած արդեն այդպես են կոչում, իսկ Ժողովրդի այս ցասումը կկոչեն աղանդավորական, մնում է որ հիմա **աղվեսադրոշմ** խարանեն ակտիվիստների ու բերման ենթարկվածների ճակատներին: Իսկ փնթի ու պոռնիկ մտավորականները սազերը առած իրենց **տիրոջը** գովաբանելով փորձում են ավելի արտահայտիչ երևալ: ( « **Գիտակից ստրուկի և հանցագործի մեջ չկա տարբերություն** »: **Գարեգին Նժդեհ** )
Հենց այդ **ներքին թշնամին** այդ մտավորականն է, կուսակցականն ու հոգևորականը, քաղաքական գործիչը ու ոստիկանը, անգամ նրանց ծնող մայրերն են թշնամի, քանի որ իրենց արգանդից ծնված հրեշին կարող են միայն կանգնեցնել նրանք, սակայն նրանք չեն կանգնեցնում, ուրեմն համագործակցում են չարիքի հետ, չարիքը պետք է արմատախիլ արվի, անկախ թե նրա երակներում ինչ գույնի արյուն է հոսում, Գարեգին Նժդեհը իզուր չէր կտակել իմաստուն խոսքերը.
« **Մինչև որ չկարողանանք ներքին թշնամին սպանել, անկարելի է, որ արտաքին թշնամուց ազատվել կարողանանք** »:
Ուրեմն եկեք ձեռքազատվենք դարերի խորքից եկած այդ ստրկամտության բեռից, պայքարենք, որպեսզի մեր զավակների պարանոցին չլինի օտարի լուծը, որպեսզի մեր զավակները համբակ չդառնան: Աստված մարդուն ստեղծել է ազատ ու հպարտ, ովքեր Աստծո այս խոսքը առհամարում են ու ոտնա-

տակ տալիս, կնշանակի չարիք են շրջապատի համար, դրանց պետք է այրել, այրել բառիս բուն իմաստով, կլինի ոստիկան, թե՛ պատգամավոր: *( « Աստված ստեղծել է մեր գլուխը ուղղաբարձ դեպ վեր, ամոթ է մեզ, երբ մենք, անասուններին հավասարվելով ընդունենք այդ անարգությունը, մեր գլուխը խոնարհեցնելով և ուրիշի ոտքի տակը տալով »: Րաֆֆի )*
Հիսուս Քրիստոսը ասում էր « *Այն ծառը, որը պտուղ չի տալիս պետք է կտրվի ու կրակը նետվի, Քանզի ամեն մարդ կրակով պիտի աղվի եւ ամեն զոհ աղով պիտի աղվի »: ( Ավետարան ըստ Մարկոսի )*
Կրակն է, որ պետք է մաքարզերծի նրանց մեղավոր հոգիները: Ամեն միջոց արդարացի է, քանզի նրանք ամեն միջոց օգտագործում են ժողովրդին ոչնչացնելու համար: Հարկավոր է հիշել, որ **« Ինքնուրոյնութիւնից զուրկ ժողովուրդները չեն կարող պետութիւն ստեղծել »: Գարեգին Նժդեհ**

Գեհենի Առաքել 29/072016

*« Մարսափից ազատագրուած հոգին միայն ընդունակ է աշխարհն առարկայօրէն տեսնել, պատկերացնել »:*
*Գարեգին Նժդեհ*

*« Հայաստա՛ն, ով վտանգի ժամանակ քեզ համար մեռնել չգիտցաւ եւ վաղը պիտի չուզենայ մեռնել՝ հայ չէ՛, քո զաւակը չէ՛ »:*
*Գարեգին Նժդեհ*

# ՆԺԴԵՀԻ ՆԶՈՎՔԸ

***« Այս դաժան օրերի մթնում մահաբեր,***
***Արնոտ խինջույքի այս սեւ զնդանում***
***Դավաճա՛ն է նա, ով լռում է դեռ,***
***Մատնի՛չ է, ով իր սուրը չի հանում...»:***



***Վահան Տերյան***

Իսկ ո՞վ ասաց, որ նահատակները չեն տեսնում և լսում... Նրանք ո՛չ միայն տեսնում և լսում են, այլև տառապում են և նզովում... Ուրախանում են, և հրճվում ժողովրդի հետ միասին: Մեր նզովքը հենց այնպես չէ, քանի որ դուք դա վաստակել եք ու արժանացաք դրան, հենց ձեր պահվածքով, ու որովհետև ուրացաք ձեր մեծերի պատգամն ու թողած ժառանգությունը, և նույնիսկ ձեր զավակներն են լինելու այդ նզովքի գերին, Դու՛ք էիք, որ ուրացաք ձեր նահատակներին ու մեծերին, Աստծո և ճշմարտության խոսքը... Հիմա կասեք, թե ժողովուրդը քնած է ու միասնություն չկա, ու էլի նման հիմարություններ... Ի՞նչ միասնություն, երբ ձեր հոգին մեռած է, մեռած է, ոչ թե քնած: Մեռած մարդուց ոչինչ մի սպասեք, մանավանդ նզոված: Նզոված, որովհետև ուրացաք Աստծո ամենասուրբ պատվիրանը՝ Ազատություն ու մարդ մընալու վեհ գաղափարը, հիմա էլ հույսներդ դրել եք մի Առաքելի վրա, որը իրեն դրել է առաքելի տեղ, շեփորահարելով ու թըմբկահարելով ուզում է ժողովրդին արթնացնել: Ժողովուրդը վաղուց արդեն մեռած է արդեն քսան տարուց ավելի է, այդպես

քնել չի լինում... Ազգի թշնամին տզրուկի պես կպել է կենդանի երակին ու ծծում է նրա արյունը, ուղեղն սնուցող երակն է ծծում... Գիտե՞ք տզրուկը նույնիսկ իր չափը գիտի, երբ հագենում է պոկվում է ու ընկնում, սակայն այս հրեշները ինչքան ծծում են, այնքան ավելի է ախորժակները բացվում... Ծծում են, ծծում... Չեմ հասկանում, էս ժողովրդի մեջ մենակ մնացել են ծծողներն ու մեռածները, մեկը չկա՞, որ մի շիկացած շամփուր հետևին կպցնի, որպեսզի, ոչ թե արթնանա այլ հոգեդարձ լինի ու հոգեդարձ լինելով կարողանա գոնե գիտակցել, թե իր թշնամին որտեղ է: Հարյուր հազար անգամ թուխթ ու պատգամ գրեցի, ես էլ, Խորենացին ու Բյուզանդը, Րաֆֆին էլ Նալբանդյանը, Չարենցն ու Տերյանը, Սևակն ու Շիրազը, մի՞թե այդ ամենը քիչ էր սովորելու համար, մի՞թե այդ ամենը իզուր է ասվել ու գրվել: Ո՞վ է տեսել, որ կոմսոմոլի վիժվածքը դառնա իմ գաղափարախոսության կրողը, բավական չէր սպարապետ դարձրեցիք, հիմա էլ դարձնում եք Նժդեհի գաղափարակիցը, էլ չասեմ որ էն վիժվածքին՝ Վերջին Բոլշևիկին, որ իր չեկիստ հայրով դարձել է իմ գաղափարի ժառանգորդը: Չեմ հասկանում այս մեռելների մեջ մի կենդանի մարդ չկա՞, որ ասի. « Ա՜յ սերունդ, ինչու՞ ես տխմարացել, չե՞ս տեսնում, թե ովքեր են քո սնուցող երակից օգտվում... Մինչև ե՞րբ կեղտոտ արգանդի դուրսպրծուկ, կռազի շոֆեռը պետք է սերունդներ կրթի, երբ ինքը անտառաճանաչ է ու անգրագետ, մինչև ե՞րբ պետք է նա անպատիժ մնա, երբ մեզ՝ նախատակներիս շիրիմները պղծում, իր մոլագար քավորի մեղալները շնորհելով: Իսկ ամենամեծ ապուշի մասին չեմ ասում, որ « Դուն » ու « Դուքը » իրարից չի տարբերում, վարունգն էլ խիյարից, մեկը չկա, որ է՛դ իր ասած թարս աճած խիյարը հետևը մտցնի ու թքի երեսին ու ասի, ա՜յ թորվածք, դու

ո՞վ եղար, որ Պարույր Սևակի սուրբ խոսքերը քո պիղծ շուրթերով ես արտասանում, դու ո՞վ ես, որ անկախությունից ու ազատությունից ես խոսում, երբ քո կուսակցական եղբայրները հարյուր հազարավոր ազատության դրոշակակիրներին խոշտանգում էին ու Սիբիր աքսորում: Մի՞թե հոգեդարձ չեք լինելու ձեր հանդերձյալ վիճակից... Ու մի ասեք, թե դժոխքը երկրի վրա է, որովհետև դուք թույլատրեցիք, որ չարիքը ձեզ իշխի, դուք ինքնակամ ընդունեցիք չարիքի իշխանությունը: Ձեր կարծիքով դավաճանների մասին հենց այնպես ենք գրել, ես էլ, Րաֆֆին էլ, մնացածների մասին չասեմ: Ու չեք ազատվելու... Մնալու եք նզովքի մեջ այնքան ժամանակ, մինչև հոգեդարձ չլինեք ու չհասկանաք որ, «Մինչև չկարողանանք ներքին թշնամին սպանել, անկարելի է, որ արտաքին թշնամուց ազատվել կարողանանք»: Եթե հույսներդ դրել եք, թե երկնքից մանանա կթափվի ձեր հնազանդության համար, ապա սխալվում եք: Ժողովուրդը Դեր- Զոր ճամփա ընկավ այդ մըտքով, ու տեսանք, թե ուր հասան... Զեյթունցու ու Սասունցու պես պետք է Աստվածավախ լինել ու հասկանալ, որ Աստված վախկոտներին ու տկարամիտներից երես է թեքում, նրանց համար անգամ դրախտի դռներն են փակ, ուրեմն հասկացեք որ գոնե մեկ անգամ, Աստծո անունով զենք վերցրեք ու ապրեք մարդավայել, ոչ թե ստրուկի պես տառապանքների ու արցունքների մեջ: «Փրկւելու համար պէտք է նաեւ արիանալ, այսինքն՝ յաղթահարել սեփական սարսափը: Սարսափից ազատագրւած հոգին միայն ընդունակ է աշխարհին առարկայօրէն տեսնել, պատկերացնել: Պատերազմների մէջ յաղթանակում է արին — այս նշանակում է՝ յաղթում է նա, ով սանձահարել է իր սեփական սարսափը, ով թշնամու հետ չափւելուց առաջ կառուցել է յաղթանակի շէնքն իր հոգում»: Ոչ թե անտարբեր

նայեք, թե ինչպես են ձեր զինվոր զավակներին խոշտանգում ու ինքնապաշտպանության հասցնում, ու հետո Է ընդունում եք, թե նա զոհվեց հանուն հայրենիքի կամ ժողովրդին պաշտպանելով: Ձեր մատաղ սերունդին մատաղ անելով այն Չարիքին, որի հպատակները դուք եք, մի՞թե մեր թողած ժառանգությունը քիչ էր հասկանալու համար, որ «Ներքին թշնամին զինակիցն է ու եղբայրը արտաքին թշնամու» ու նրան երբեք չի կարելի ներել անկախ նրանից թե ով է, ինչ սեռի ու դավանանքի է: Թշնամու մի հանցանքը ներել նշանակում է նորե՛րն արտոնել»: Սրբապիղծ հոգևորականը դավաճան է, պետք է կախաղան հանվի, անպատասխանատու հրամանատարը դավաճան է, ծախված մտավորականը դավաճան է, կույր կուսակցականամոլը դավաճան է, անգրագետ ուսուցիչը դավաճան է... Անտարբեր իշխանավորը դավաճան է ու հավատացե՛ք, որ ազգադավներով ու դավաճաններով պետություն չեն կառուցում, անգամ դրախտի դռները փակվելու են նրանց առջև, ովքեր տեսնում են ու լռում, ովքեր հանդուրժում են Չարիքի իշխանությունը: Կենսաբանօրէն անբարոյական է այն ժողովուրդը, որի մէջ զինուորը ներքին թշնամիներ ունի: «Չկան անտականք ազգեր, բայց հայ տականքը կմնա անմրցելի»: Ու այդ ամենը փոխելու համար միայն զենքը բավական չէ, հարկավոր է հավատք, «Ինքնուրոյնութիւնից զուրկ ժողովուրդները չեն կարող պետութիւն ստեղծել: Անկախութեան հաւակնութիւն ունեցող ժողովուրդները նախ պէտք է այս մտայնութիւնից ազատուին»: Արևի ու Աստծո լույսը տրված է միշտ արժանավորներին, իսկ ստրկամիտներին անգամ արևի ջերմությունը չի հասնում այդպես է ստեղծել Աստված: Աստված ուժեղներին է սիրում և իմաստուններին ու երբ հասկանաք որ դժբախտները ու մորթապաշտները տեղ չունեն երկրի վրա

նրանց տեղը դժողքն է և այն իրենց կառուցած դժողքն է որի մեջ այրվում են: Ապրելու համար « Բաւական չէ՛ իր ազգի զաւակը լինել, պէտք է նաե՛ւ նրա հրաշունչ զինուորը լինել: Հայրենիքը մեզ տրված է Բարձրյալի կողմից ու պետք է այն դարձնել դրախտ ոչ թե դժոխք...

« Եթե խոսքդ Հայրենիքի մասին է, մի խոսիր, այլ խոսեցրու Հայրենիքը: Այս ձեւով վարվիր եւ հերոսների, եւ նահատակնե-րի նկատմամբ: Մի խոսիր, այլ խոսեցրու նրանց. Խոսիր, զգա-լով նրանց սրտի զարկը, շունչը, ներկայությունը:

« Քո մեջ մի գանձարկղ կա անբավ ու անհաշիվ հարստությ-ամբ, բայց դու չես օգտվում նրանից, որովհետև քեզ պակաս-ում է այդ արկղի ոսկե բանալին` ինքնաճանաչությունը:

Ծանի՛ր քեզ... Նույնացի՛ր քո ներքին մարդու հետ, և դու պիտ զգաս քո մեջ ծովացումը հոգեկան նորանոր ուժերի, դու պիտ դառնաս ավելի քան զորեղ և ապա պիտ կարողանաս կապել բախտի անիվը և քարշ տալ ցանկացածդ ուղղությամբ »:

Բազում կարիքների տեր անհատներն ու ժողովուրդները կլան-ված են լինում ներկայով և մոռանում իրենց անցյալն ու ապ-ագան: Ունայնամտանում և տկարանում են նմանները:

Մի՛ լինիր ուրիշի ստվերը, արձագանքը, եթե այդ ուրիշը անգ-ամ աշխարհածանոթ համբավ լինի: Ստեղծագործո՛ղ, և ոչ ընդ-օրինակող: Ապրելում են ապրելու համար ոչ թե անիմաստ պայքարել մեռնելու համար... Աստված տվել է կյանքը ապրելու ու վայելելու աշխարհը, զգալ սերն ու հավատարմությունը, այլ ոչ թե դավաճանների ճիրաններում տառապելու:

« Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, մեռնում հայ-րենասիրության պակասի պատճառով...

« Մեռիր այնպես, որ մահդ անգամ ծառայի ՀԱՅՐԵՆԻՔԻԴ...»:

Քանի դեռ չենք հասկացել ճշմարտության խոսքը, միշտ մնալ-

ու եք նզովքի մեջ՝ մնալու եք դժոխքում գամված հավիտենս հավիտենից:

Գեհենի Առաքել 8/ 01 /2016

*« Անել է, թե **ներքին թշնամուց** պետք է ազատվել այնպես, ինչպես ծովն է ինքնամաքրվում՝ հորձանք տալով և ափ նետելով այն ամենը, ինչը խորթ է իր ներքին բաղադրությանը և դրսից է պարտադրված, այդպես նաև աչքն է ինքնամաքրվում արցունքով և այդ ինքնամաքրումն է գոյատևելու թիվ մեկ նախապայմանը »:*

*Հովհաննես Թումանյան*

*« Փրկվելու համար պէտք է նաեւ արիանալ, այսինքն՝ յաղթահարել սեփական սարսափը »:*

*Գարեգին Նժդեհ*

# ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ
# ՈՒ « ՄՏՔԵՐ »

Այս ենթաբաժնում ներկայացնում եմ Լուսավոր մարդկանց ու ու խավարամիտ ոհմակի արտասանած մտքերը, որոնք օգտակար են ո՛չ միայն համեմատական կարգով՝ նրանց դնելով կըշեռքի նժարներին, այլև հասկանալ իմաստուն խոսքերի ու խորհուրդների մասին: Այնպես որ իմաստունները իրենց արտահայտած մտքերում տվել են լուսավոր ճանապարհի ուղին:

***« ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ »: Մեսրոպ Մաշտոցը***

15. Զգուշացե՛ք սուտ մարգարեներից, որոնք մոտենում են ձեզ ոչխարի կերպարանքով, բայց ներսից հափշտակող գայլեր են: 16. Իրենց գործերի՛ց կճանաչեք նրանց: Մի՞թե փշից խաղող կքաղեն կամ տատասկից՝ թուզ: 17. Լավ ծառը լավ պտուղ է տալիս, իսկ վատ ծառը՝ վատ պտուղ: 18. Լավ ծառը չի կարող վատ պտուղ տալ, և ոչ էլ վատ ծառը՝ լավ պտուղ: 19. Այն ծառը, որ լավ պտուղ չի տալիս, կտրվում և կրակն է նետվում: 20. Ուրեմն իրենց պտուղից կճանաչեք նրանց: Մատթեոս 7.15-36

*« Օտարը չի հարգի և սիրի մի ժողովրդի, որը ինքնուրույն պատկեր և բովանդակություն չունի »: Հովհաննես Թումանյան*

*« Անգիտությունը, ասել է, թե սեփական ինքնությունը և օտարինը չճանաչելը, մի մութը դրություն է, իսկ ամեն չար բան մութից է ծնվում »: Հովհաննես Թումանյան*

*« Արդ՝ եթե ունենք ազգային իմաստություն, հոգու արիություն և առողջ բնազդներ, անկարելի է աչքներս փակենք մեր էս ծանր հիվանդության առաջ և չզգանք, որ մեր հոգին շատ է չարացած, մեր ներքին մարդը շատ է փչացած, և դրա դեմ կռվելու, առողջանալու առաջին պայմանը էն է, որ մենք… ճանաչենք մեր դժբախտությունը… Ուրիշ ճանապարհ չկա. ներսից է լինելու հաստատ փրկությունը, որովհետև ներսից ենք փչացած »: Հ. Թումանյան*

*« Ամեն կենդանի գոյություն, որ ոտնատակ է ընկնում, եթե չի մեռնում, այլանդակվում է, դառնանում և փչանում: Սա է բնության օրենքը »: Հովհաննես Թումանյան*

*« Էն մարդիկ, որ երկար ու լուրջ զբաղվել են մեր ժողովրդով, հայ մարդով, միշտ եկել են մի ծանր եզրակացության, թե շատ չարություն կա մեր հոգում »: Հովհաննես Թումանյան*

*« Մի լավ գիրք կարող է փրկել մի ամբողջ ազգ »: Րաֆֆի*

*« Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարիտ սիրել այն »: Րաֆֆի*

*« Կա մի բան, որ աշխարհի զանազան ծայրերից կարող է միավորել հայերը հոգվով, մտքով և արյունով. այն է՝ ազգային սերը »: Րաֆֆի*

*« Եվ աստված ինքը սառն աչքով է նայում այդ ցավալի տեսարանների վրա. Նա տեսնում է, յուր պատկերը շինել են անասուններին հավասար, բայց աչքերը խփում, երեսը շրջում, անց է կենում… »: Րաֆֆի*

*« Ուսուցիչներին տեսեք: Դասերից ավելի շատ է՛ն աշխատանքի վրա են, որ իրար ոտի տակ փորեն, և շարունակ մի որևէ չնչին դեպք, որ կարելի էր ընկերական շրջանում հեշտ վերջացնել, ազգային հարց դարձրած, տարիներով ձգտում են պաշտոնական ճանապարհով, դատարանով ու մամուլի էջերում մեկը մյուսին անվանարկել, հալածել ասպարեզից ու սպանել բարոյապես... ո՛չ մի մեղմություն, ո՛չ մի ներողամտություն, ո՛չ մի սահման չարությանը »: Հովհաննես Թումանյան*

*« կարելի է տաղանդներ ու հանճարներ ունենալ, բայց ունենալու համար պետք է ճանաչել, գնահատել ու պաշտպանել, իսկ գնահատել ու պաշտպանել, արդեն վաղուց ասված է, կնշանակի՝ ստեղծել »: Հովհաննես Թումանյան*

*« Տասնյակ տարիներով ու անհամար դեպքերով փորձված է, է՛լ հայհոյանք, է՛լ զրպարտություն, է՛լ ափաշկարա սուտ, է՛լ չարախոսություն, կեղծավորություն: Նեղ թայֆայականությունը ոչ մի գյուղում գուցե էնքան անվայել կերպարանք չի առել, որքան սրա մեջ »: Հովհաննես Թումանյան*

*« Ճշմարիտն էն է, որ մեր ամբողջությունը տառապում է մի ծանր ու խոր բարոյական հիվանդությամբ »: Հովհաննես Թումանյան*

*«Դառն ու դաժան: Եվ էս տեսակ կյանքը կունենա, այո՛, շատ բան, և՛ « հառաջադիմություն », և՛ « կուլտուրա », և՛ « մամուլ », և՛ « գրականություն », և՛ « դպրոց », և՛ « բարեգործություն », բայց էդ բոլորը ներսից ճիճվի կերած պտուղի նման են, և տառապում են հիմնական պակասություններով, մի ընդհանուր ցավով, որի ճարը դրսից անել չի կարելի »: Հովհաննես Թումանյան*

*«Թո՜ղ վրեժխնդրության աստվածը թափե իմ գլխին կայծակ, կրակ, թո՜ղ նա բանա ինձ համար դժոխքի բերանը, բայց ես պիտի գոչեմ, աղաղակեմ այս անբախտ այրիի հետ՝ վրե՜ժ, վրե՜ժ...»: Րաֆֆի*

*«Երբ ասում են նրան՝ հող էիր և հո՜ղ դարձիր»: Արդարև, մի խորհրդական խոսք հայի համար... պատճառը՝ այդ ազգը յուր կյանքում չէ ցույց տվել որևիցե հոգեկան զորություն, այլ միշտ ապրել է նա որպես հող, քար և անշունչ մարմին...»: Րաֆֆի*

*«Աստված լեզու է տվել, որ խոսե, խորհե, մտածե և յուր մտք-երն արտասանե»: Րաֆֆի*

*«Հայաստա՛ն, ով վտանգի ժամանակ քեզ համար մեռնել չգիտցաւ եւ վաղը պիտի չուզենայ մեռնել՝ հայ չէ՛, քո զաւակը չէ՛»: Գարեգին Նժդեհ*

*«Բաւական չէ՛ իր ազգի զաւակը լինել, պէտք է նաե՛ւ նրա հրաշ-ունչ զինուորը լինել»: Գարեգին Նժդեհ*

*«Անկախութեան հաւակնութիւն ունեցող ժողովուրդները նախ պէտք է այս մտայնութիւնից ազատուին: Ինքնուրոյնութիւնից զուրկ ժողովուրդները չեն կարող պետութիւն ստեղծել»: Գ Նժդեհ*

*«Փրկւելու համար պէտք է նաեւ արիանալ, այսինքն՝ յաղթահարել սեփական սարսափը: Սարսափից ազատագրւած հոգին միայն ընդունակ է աշխարհին առարկայօրէն տեսնել, պատկերացնել»: Գ Նժդեհ*

« Ինքնապաշտպանութիւնը ոչ թէ բնական իրաւունք է իւրաքանչիւր ժողովուրդի, այլ եւ պարտականութիւն դէպ մարդկութիւնը »: Գ. Նժդեհ

« Փտած են մեր հին զէնքերը, եղծանւած է հին մագաղաթը: Նոր աւետարանի խօսքը պիտ լսենք հիմա - Աւետարանը Արիութեան »: Գ. Նժդեհ

« Եղան դէպքեր, երբ մեր այս կամ այն գաւառը մենակ էր, բայց վճռական մենակի հոգեբանութեան շնորհիւ յաջող կերպով տարաւ իր ինքնապաշտպանութեան դժուարին պայքարը »: Գ. Նժդեհ

« Պարտւեցինք, որովհետեւ այսպիսի հաշիւներով ղեկավարուողը զուրկ է վճռական մենակի հոգեբանութիւնից, այսինքն՝ յաղթելու ամէն հաւանականութիւնից »: Գ. Նժդեհ

« Քաղաքական ստախօսութիւն, հայհոյանք, կեղծիք, բանսարկութիւն, դաւեր - ահա՛ սրա « կուսակցաշէն գործունէութիւնը »: Գ. Նժդեհ

« Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, մեռնում հայրենասիրության պակասի պատճառով... »: Գ. Նժդեհ

« Սակայն մոռանում, թէ մուրացկանին եւ հաշմանդամին անկելանոց են տալիս եւ ոչ **անկախ հայրենիք** »: Գ. Նժդեհ

« Հայաստա՛ն, ով վտանգի ժամանակ քեզ համար մեռնել չգիտցաւ եւ վաղը պիտի չուզենայ մեռնել՝ հայ չէ՛, քո զաւակը չէ՛»: Գարեգին Նժդեհ
« Կարևորը ապրելը չէ, այլ ապրելը որպես մարդ »: Ջորջ Օրուել

*« Անգործունակ պետությունը վաղ թե ուշ պարտվում է, իսկ գոր-ծունակությունը չի կարող հիմնվել պատրանքների վրա: Բացի այդ, գործունակ լինելու համար անհրաժեշտ էր դասեր քաղել անցյալից, նշանակում է՝ բավական ճշգրիտ գաղափար ունենալ այն մասին, թե ինչ է եղել անցյալում: Մինչև չգիտակցեն, երբ-եք չեն ապստամբի, մինչև չապստամբեն, չեն կարող գիտակից դառնալ: Ով վերահսկում է անցյալը, վերահսկում է ապագան. ով վերահսկում է ներկան, վերահսկում է անցյալը »: Ջորջ Օրուել*

*« Դրսի անասունները նայում էին մեկ խոզին, մեկ՝ մարդուն, ապա նորից խոզին ու նորից՝ մարդուն, սակայն անկարող էին արդեն մեկին մյուսից տարբերել »: Ջորջ Օրուել*

*« Մատաղ սերնդի դաստիարակությունը շատ ավելի կարևոր խըն-դիր է, քան այն, ինչ կարելի է անել արդեն հասունացածների հա-մար »: Ջորջ Օրուել*

*« Մինչև չգիտակցեն, երբեք չեն ապստամբի, մինչև չապստամբ-են, չեն կարող գիտակից դառնալ »: Ջորջ Օրուել*

*« Եթե գործողությունն արդյունք չունի, ապա անիմաստ է »: Ջորջ Օրուել*

*Անգործունակ պետությունը վաղ թե ուշ պարտվում է, իսկ գործու-նակությունը չի կարող հիմնվել պատրանքների վրա: Բացի այդ, գործունակ լինելու համար անհրաժեշտ էր դասեր քաղել անցյալ-ից, նշանակում է՝ բավական ճշգրիտ գաղափար ունենալ այն մասին, թե ինչ է եղել անցյալում:*



*Իսկ չար լեզուներն ասում են, որ անգամ սպանություններ կան նրա խղճի վրա, ավելի՛ն՝ առավել համարձակ չար լեզուներն անգամ հավաստիացնում են, որ Եռաբլուրում թաղվածների 20%-ը կյանքից հեռացել է նրա անմիջական աջակցությամբ »: « Մտորումներ « Պազոլինի »-ից հետո » գրքից*

*« Որքան շատ եմ ճանաչում Վազգենին, այնքան շատ եմ հարգում Սերժին »: « Ազգային գաղափար » ամսագիր Արտյոմ Խաչատրյան*

*« Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը « սպարապետի հետ համեմատած հիրավի հրեշտակներ են » « Ազգային գաղափար » ամսագիր*

*« Ով փորձի ինձնից պատասխան պահանջի, թուրքից էլ փիսն ա, սապյյակ թուրք ա: Եթե էս հանրապետության մեջ մեկը կա, որ ինձնից պատասխան պահանջի, ուրեմն՝ թուրքից էլ փիսն ա, էղա՞վ »: « գեներալ » Մանվել Գրիգորյան 25 Փետրվար 2015*

*« Մանվելին վիրավորողը վիրավորում է բոլոր նրանց, ովքեր կռվել են և այդպիսի հայտարարություններ անողը թուրք է »: Պատգամավոր Առաքել Մովսեսյան` Շմայս ©*

*« Զորավար Մանվել Գրիգորյանը սպարապետ Վազգեն Սարգսյանի գործի արժանի շարունակողն է »: Սեյրան Սարոյան ©*

*« Ինչպես Ջուզեպպե Գարիբալդին, այնպես էլ Վազգեն Սարգսյանը իր մարտական ընկերների համար կմնա որպես մի թանկ հասկացություն և անմոռաց մեր բոլորի հիշողության մեջ »: գրականագետ Վարդան Դևրիկյան ©*

*« Ընդդիմությունը 100 տոկոս ձայն էլ ստանար, նրան իշխանություն տվող չկար »: Վազգեն Սարգսյան 1996 Թ*

*« Մինչև Վազգեն Սարգսյան լինելը նա Հուլիոս Կեսար է եղել »: ( երկրապահ պաշտոնաթերթ 5 մարտի 2006 թ.)*

*« Ընձի հայհոյողը հայհոյում է Արցախին, հայհոյում է զոհված տղերքին »: Մանվել Գրիգորյան 16 Փետրվարի 2010*

*« Որ Վազգենն ըլներ, դուք տենց էվելնորդ խոսքեր չէիք կարա... հակապետական, սրան նենց ասեիք, նրան նենց ասեք: Էս երկրում ոչ մեկը չէր կարա Վազգենի ներկայությամբ ձեր պես հարցեր տար »: Մանվել Գրիգորյան 16 Փետրվարի 2010*

*« Հերոսները պետք է զոհվեն պատերազմի դաշտում, հակառակ դեպքում նրանք անտանելի են դառնում »: Վ. Սարգսյան Վիք.*

*« ԵԿՄ-ն մեր ազգային հրաշափառ տաճարն է, իսկ Մանվել Գրի-գորյանն այդ տաճարի ոչ թե քուրմը, այլ քրմապետը »: ԼՂՀ պատգամավոր Արզիկ Մխիթարյան 2016.05.18*

*« Վազգենին պաշտպանողները կամ իսկական ԿԳԲ -ականներ են կամ էլ անգետ դդումներ »: Արծրունի Ավետիսյան Քահանա Ազատամարտիկ © 2015*

*« վազգեն սարգսյանն ազգի դավաճան է և կգա ժամանակը, որ նրան հետմահու կզնդակահարեն »: Արծրունի Ավետիսյան Քահանա Ազատամարտիկ © 2015*

*« Համ չագուչն ա Ձեր ձեռքը, համ մեխը, համ նալը, ոնց ուզում եք արեք, մենք ձեր կողքին ենք »: մանվել գրիգորյան Փետրվար 12- 2015*

*« Մեր քարոզած ճշմարտութիւնը գուցէ թէ կտրատում է ազգի սիրտը, բայց այդ սուրը միակ հնարն է փտած ու ճարակած խոցը առողջ մասերից բաժանելու եւ հեռացնելու համար »: Միքայել Նալբանդեան*

*« Նախ, նա գեներալ չէ, Մանվելը բանակում չի ծառայում: Ոնց որ ինքն է, այդպես էլ իր տղան է: Սրիկայի զավակն էլ սրիկա է »: Գուրգեն Դալիբալթայան 09.12.2010*

***« Ու՜մ ուզենք, Ինչքա՜ն ուզենք կխփենք »:***
***Գերագույն Չարիք***

# ԽՃԱՆԿԱՐ

Չկարողացանք անցյալից դասեր քաղել, որովհետև մոռացանք անցած իրականության փաստերը, մոռացանք անցած հանցանք-ներն ու ոճիրները: Մոռացանք Արմեն Զավենիչի ոճիրները, Խոսրով Հարությունյանի, Հրանտ Բագրատյանի, Գագիկ Ծառուկ-յանի ու Արմեն Դարբինյանի, Լևոնի Տեր-Պետրոսյանի ու Ռոբ-երտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի, Տիգրան Սարգսյանի հանց-անքները: Մոռացանք մեր Ոճրագործ սաղ ու սատկած «Հեր-ոսներին» Վազգեն Սարգսյանին ու Կարեն Դեմիրճյանին, Անդ-րանիկ Մարգարյանին ու Մանվել Գրիգորյանին, Սարոյանին ու Զաղոյանին: Երկիր ու պետություն կառուցելու համար պետք է նախ մաքրագործվենք ինքներս, մաքրելով մեր անցյալի կեղ-տոտ էջերը, մաքրելով մեր հասարակությունն ու պատմությունը, մեր հերոսներին, անգամ պանթեոններն ու հերոսներին, պետք է մաքրենք Եռաբլուրն ու ենթագիտակցությունը:

25.10.2016

Քանի դեռ մոռացված են այդ հանցանքների ու ոճիրների կա-տարողները, որոնք հիմա քաղաքական այրեր են ու կեղծ հար-գանք են վայելում, ոչինչ չի կարող փոխվել: Եթե քաղաքակիրթ ու իմաստուն ժողովուրդ լինեինք, ապա վաղուց այդ թվարկա-ծըս հրեշները պետք է կախաղանաձողի վրա փտած լինեին, իսկ մենք ի՞նչ արեցինք... Ճիշտ հակառակը՝ մեծ Մարգարենե-րի՝ Թումանյանի, Րաֆֆու, Մուրացանի, Գարեգին Նժդեհի պատ-վիրանները մոռացանք ու ընկղմվեցինք միջնադարի տգիտութ-յան խավարում, որպեսզի դառնանք ստրկամիտ ու անընդուն-ակ, ծույլ ու անպետք:

Բռնատիրական համակարգը այնքան է կատարելագործվել, որ ընդդիմությունը կամ ընդդիմադիր առաջնորդը պատվիրվում է Բռնակալի կողմից: Իսկ եթե պատվիրված էլ չէ, ապա միևնույն է, կատարում է նրա պատվերը, այստեղ կարելի է ասել, որ խնամի-բարեկամ անմիջական կապը դա է համոզում: Վովա Գասպարյանի թիկնազորի պետի ու քրեական հեղինակություն Չապի մտերմությունը միակը չէ, ողջ համակարգն է փոխկապակցված ու սերտաճած իրար, մեկի պոչը մյուսի ոտքի տակ է: Այսպես իշխանությունը գոյատևում և գործում է այս կանոնակարգով, **վախ, ահ ու սարսափ** սերմանելով:

*« Անգործունակ պետությունը վաղ թե ուշ պարտվում է, իսկ գործունակությունը չի կարող հիմնվել պատրանքների վրա: Բացի այդ, գործունակ լինելու համար անհրաժեշտ էր դասեր քաղել անցյալից, նշանակում է՝ բավական ճշգրիտ գաղափար ունենալ այն մասին, թե ինչ է եղել անցյալում: Մինչև չգիտակցեն, երբեք չեն ապստամբի, մինչև չապստամբեն, չեն կարող գիտակից դառնալ: Ով վերահսկում է անցյալը, վերահսկում է ապագան. ով վերահսկում է ներկան, վերահսկում է անցյալը »:*

***Ջորջ Օրուել***

# ՆՅՈՒԹԵՐԻ ԱՂԲՅՈՒՐԸ

Այս բաժնում սովորաբար նշվում է փաստագրական նյութերի աղբյուրը, սակայն ես խուսափել եմ էջերի մանր տողով կամ առանձին հավելվածում ներկայացնել վերոհիշյալ նյութերի աղբյուրը: Սովորաբար մանր տառերով գրվածքները առանձնապես չեն կարդացվում, նյութերի աղբյուրը նույնպես, ուստի այն մարդիկ, որոնց հետաքրքրում է աղբյուրը կարող են գտնել տեքստում: Ընդհանուր գրքում ընդգծված տողով ներկայացված են հղումները և աղբյուրը: Այն որ գրքում օգտագործվել են տարբեր հեղինակների ու գրողների ստեղծագործություններից կամ մտքերից, նույնպես փորձել եմ ներկայացնել ընդհանուր էջերի վրա, այնպես որ դրանք գտնելու համար հարկավոր է ընթերցել գիրքը ամբողջությամբ:

Գեհենի Առաքել

Լռել են արդեն երգերը հզոր,
Ու էլ չեն հնչում խոսքերը հպարտ,
Խավարն է գերել մեր հոգին այսօր
Եվ լռությունը հավետ մահապարտ:

Սև գնդերն ահա կազմել են շարքեր
Արյունված երկրում, ուր երեկ այնպես
Շաչում էիք դուք, հրեղեն երգեր,
Եվ ալեկոծում փողոց ու կրկես:

Դաժան ցնծությամբ թշնամին ահա
Իր սև հաղթության խնջույքն է տոնում,
Հռհռում է մեր տանջանքի վրա,
Արյունով հարբած՝ արյուն է խմում...

Լցված է արդեն բաժակը թունոտ,
Համբերելու ժամն անցել է արդեն.
Ելնե՜նք ճչալու խնդությամբ քինոտ
Ու հպարտ կանգնենք մութ բռնության դեմ:

Այս դառն օրերի մթնում մահաբեր,
Արնոտ խնջույքի այս սև զնդանում
Դավաճա՜ն է նա, ով լռում է դեռ,
Մատնի՛չ է, ով իր սուրը չի հանում...

Վահան Տերյան

**Շնորհակալություն** եմ ուզում հայտնել այն բոլոր մարդկանց, որոնք օգնեցին ավարտելու այս կարևոր փաստագրական **Ձեռնարկը:** Առանձնակի շնորհակալություն խմբագրական ողջ խմբին, որոնց քրտնաջան աշխատանքի արդյունքում կարողացանք կարճ ժամանակահատվածում խմբագրել և ներկայացնել ընթերցողի դատին: Այնպես որ Հույսով եմ, որ ժողովուրդը ու ժամանակը արժանավույնս կգնահատի նրանց կատարած մեծ աշխատանքը: *Ավարտելով մեծ իմաստունի խոսքերով.* ***« Մի լավ գիրք կարող է փրկել մի ամբողջ ազգ »: Րաֆֆի***

Շնորհակալություն Խմբագրական ողջ անձնակազմին՝ անուն առ անուն Տ . Արարատյան, Ս. Կոստանյան, Տ. Բաբայան,
Թ. Ալեքսանյան, Մ . Վարդանյան. Վ. Հովհաննիսյան, Ա. Առաքելյան,

Գեհենի Առաքել

***« Կա մի բան, որ աշխարհի զանազան ծայրերից կարող է միավորել հայերը հոգվով, մտքով և արյունով. այն է՝ ազգային սերը »: Րաֆֆի***



WELCOME TO
ARMENIA
WELCOME TO
ARMENIA


ԱԶԳԱԴԱՎԸ
ՊԱՏՄԱՎԵՊ
ԳԵՂԵՆԻ ԱՌԱՔԵԼ
Armenian Girls

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔԸ ................................................ 1 էջ
ԱՌԱՋԱԲԱՆ ............................................................ 4
ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԽԱՎԱՐԱՄՏՈՒԹՅՈՒՆ ............... 36
ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ..... 42
ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՉԱՐԻՔԸ ....................................... 84
ԿԵՂՏԱՐՅՈՒՆ ԳՐԱԳԵՏ ՓՆԹԻՆԵՐ ........................... 88
ԿԵՂՏԱՐՅՈՒՆ ՓՆԹԻՆԵՐ............................................ 91
ԿԼԱՆԱՅԻՆ ՕԼԻԳԱՐԽԻԱ ........................................ 103
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ( ՄՈՆՈՊՈԼՅԱ ) .................144
ԿՈՄՍՈՄՈԼԻ ՓՈԽԱՆՑԻԿ ԴՐՈՇ ............................ 159
ԱԶԳԱՅՆԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ՝ ՇՈՎԻՆԻԶՄ ..................... 162
ԱՊԵՐԱԽՏՈՒԹՅՈՒՆ ԻՆՔՆԱԶՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ....172
ՈՐԱԿՈՒՄ ՈՒ ԹԻՐԱԽԱՎՈՐՈՒՄ .............................. 189
ՊԵՏԱԿԱՆ ԱՀԱԲԵԿՈՒԹՅՈՒՆ ................................ 206
ԵՐՋԱՆԻԿ ԱՊՈՒՇՆԵՐԸ .............................................. 211
ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՆՈՖՈՆԴԻ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ ............... 221
« ՌԱՍԿԻՐՈՎԿԱ » .................................................... 238
ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ
ԺԱՄԿԵՏ ՉՈՒՆԻ ......................................................... 256
ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ............................................................ 266
ՆԱՄԱԿ ՀՌՈՄԻ ՊԱՊ ՖՐԱՆՑԻՍԿՈՍԻՆ .................. 268
ՄԵՌԵԼՆԵՐ ԿԱՆ, ՈՐՈՆՑ ՊԵՏՔ Է ՍՊԱՆԵԼ .......... 271
« ԵՐԿՐԱՊԱՀ » ԵՆԻՉԵՐԸ ....................................... 279
ՎԱԽԵՑԱԾ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ .................................. 287
ՀԱՅՈՑ ԱՐՔԱՆԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ..................... 299
ԻՆՉՊԵՍ ԿԱՌՈՒՑԵԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ .......................... 312
ՀԱՅԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ .................................................. 336
ՆԺԴԵՀԻ ՆԶՈՎՔԸ ................................................ 343
ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՈՒ « ՄՏՔԵՐ » ......... 349

ԽՃԱՆԿԱՐ ........................................................................ 358
ՆՅՈՒԹԵՐԻ ԱՂԲՅՈՒՐԸ ........................................... 360
Վահան Տեյրան ............................................................... 361
Շնորհակալություն ........................................................ 362

**Խմբագիրներ:** Տ. Արարատյան, Մ. Կոստանյան, Տ. Բաբայան, Թ. Ալեքսանյան, Մ. Վարդանյան. Վ. Հովհաննիսյան, Ա. Առաքելյան,

Գեղ ձևավորող Բ. ՕԳԱՆԵՍ

geheniaraqel@gmail.com

ԳԵՀԵՆԻ ԱՌԱՔԵԼ © 2016
**GEHENI ARAQEL © 2016**

Ով որ նույնիսկ ինքն իրեն է դավաճանում, այս աշխարհում ոչ որի չի սիրում...
Շեքսպիր

Դավաճաններին արհամարում են նաև նրանք, ում նրանք ծառայություն են մատուցել...
Տացետ

Մեծ ստորությունները արվում են ատելությունից դրդված, իսկ փոքրերը՝ վախից...
Շարլ Մոնտեսքյո

Դավաճանությունը ներում են, բայց չեն մոռանում...
Լաֆայետ

Հեղինակային իրավունքները պատկանում են դրա հեղինակին՝ Գեհենի Առաքելին: Գրքում տեղ գտած նյութերը պաշտպանված են Հեղինակային իրավունքով GEHENI ARAQEL © 2016
geheniaraqel@gmail.com


Գեհեճի Առաքել